




I-482







ԱՐԱՔՍ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԵՍ

1887

ԳԻՐՔ Ա

ՆՈՅՆՄԲԵՐ

Ս. ՊԵՏԵՐ ԲՈՒՐԴ
ՏՊԱՐԱՆ Ի. Ն. ՍԿՐԻՊՆԻՔԻ

174
1744

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

«Արատի» երևան դալը յանկարծակի չէ, նա պտուղ է, Երկարամեայ մտածմունքների:

«Արատը» ոռոգելով հայ աշխարհը՝ անշուշտ զիտէ նա և ճանաչում է այդտեղ բնակուող իր հարազատ ժողովրդին, նրա վիճակն ու կենցաղը, կարիքն ու պահանջը:

«Արատը» բարոյական պարտականութիւն է համարում բովանդակ Տաճկաստանի հայ ժողովրդի վիճակի ուսումնասիրութեան վերայ առանձնապէս ուշադրութիւն դարձնել, քանի որ թուրքիաբնակ հայերի մամուլին այդ յոյժ կենսական խնդրի ուսումնասիրութիւնը այսպէս թէ այնպէս չէ հետաքրքրում: «Արատը» նոյնպէս հեռեկրու է այլ երկրներում ցրուած հայերի բարոյական և կրթական վիճակը ուսումնասիրելու, կարողացածին չափ ճիշտ և մանրամասնորէն: Այս անտակէտով, մենք աշխատելու ենք որ ըստ օրէ, «Արատի» մէջ աւելի կօծուած ու մշակուած գրութիւններ տեղաւորել, իսկ թէ որքան էյաջողուի մեզ, դա ապագան յոյս կ'տայ:

Խմբագրութիւնս՝ միջոցը ներածին չափ՝ ցանկութիւն ունի «Արատի» ծաւալը բնդարձակելու, առաջին կարգի նկարներ տալու, գլխաւորապէս հայ աշխարհից, հայ կեանքից և թէ նորա ծրարիրը բազմակողմանի դարձնելուց զատ՝ բովանդակութիւնն էլ լաւացնելու, սակայն այս բոլորը կախուած է սոսկ ժողովրդի ուշադրութիւնից, թէ արդեօք նա ծախսի համեմատ մեզ միջոց կ'տայ կատարելու մեր խոստմունքը:

Կալով այս առաջին դրքին՝ հարկ ենք համարում ասելու, որ անշուշտ նա, որպէս նոր երևան եկող հրատարակութիւն՝ կռնենաց թերեւս և ոչ մի պակասութիւն, այլ շատ, որի մասին կանխօրէն ընթերցող հասարակութեան ներողամտութիւնն ենք խնդրում: Այստեղ յիշելու ենք, որ պատկերազարդ տպագրութիւնն ունի բազմաթիւ դժուարութիւններ և ամեն մի պատկեր փորագրել տալու համար, շատ անգամ


ամիսներով պէտք է մեծ հողացողութիւններ անել և եթէ ըստ երևոյթին ամեն մի պատկերը, ընթերցողի համար մի առանձին նշանակութիւն չունենայ էլ՝ սակայն իմանալու է որ ամեն մի պատկերը շատ տասնեակ ուրբլիների ծախսի է կարօտում:

Մենք ասացինք, որ պատկերադարդ Հրատարակութիւնն ունի իր դժուարութիւնները ի միջև այլոց նորա համար, որ Պետերբուրգում լաւ փորագրութեան գործարան չ'զանուելու համար, մինչև անգամ այստեղի առաջնակարգ պատկերադարդ հանդիսի խմբագրութիւնները պատկերների մի մասը ուղարկում են Վլենայ աշխարհահռչակ Միլեգէնբախ, Մնդէրի և Վէշէլի գործարանները, որի պատճառաւ մի ամիս ու կիսի չափ ժամանակ է կորսվում:

Մենք «Արատ» բաժանորդագրութիւնը բացած ենք սոսկ երկու դրքի համար, ինչպէս որ քանիցս անգամ յայտարարած ենք: Մենք ներկայ տարում ձեռնարկեցինք փորձի համար երկու դրքի Հրատարակութեան ղլխաւորապէս նորա համար, որ եթէ բաժանորդագրութիւնը յաջող գնար, յառաջիկայ տարում նորան ամսական դարձնէինք. սակայն մինչ այժմ բաժանորդագրութիւնն այնչափ թոյլ է ընթանում, որ դորա մասին խօսիլն անգամ աւելորդ ենք համարում:

Ի նկատի առնելով որ խմբագրութեանս մէջ բաւականին պատրաստի հետաքրքիր նիւթեր կան և թէ նոր և միևնոյն ժամանակ շատ կենսական խնդիրներ յարուցանելու անհրաժեշտութիւն է զգացվում, մենք ուրախութեամբ երկրորդ գիրքը 12 թերթի փոխարէն դուրս կ'թողնէինք 25—30 թերթից, և 20—25 նկարներից, եթէ միայն այդ ծախսերը ծածկող բաժանորդներ ունենայինք:

«Արատ» խմբագրութեան հետ գործ ունեցողները գիմելում են Ս. Պուլամիրևանցին այս հասցէիւ. С.-Петербургъ, С. Гудамрашцу, Графскій переулокъ, д. № 7, кв. № 22.





ԱՐՆԱՊԱՏԻՍ Զ. ՅԱՐՈՒԹԻՆՆ
ՊԱՏՐԻԱՐԷ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԹՈՒՐԷՆՈՑ

Այժմ Ամերիկայի և Եւրոպայի մէջ ոչ միայն լուսաւորուած պարզ մարդիկ, անջատ դիւնական ընկերութիւններ և որոշ հասարակական հիմնարկութիւններ, այլ նա և ամբողջ ժողովուրդներ ու ազգութիւններ դարերէ ի վեր ոչ միայն հետաքրքրվում ու ամեն կարգի տեղեկութիւններ կն ձեռք բերում իրենց շքապատող երկիրների և բազմացեղ ազգութիւնների վերայ, այլ նաև օրէ ցօր մանրամասնօրէն քննում ու սումնասիրում են այն հեռաւոր երկիրները, անջուր, անուղի հրատապ անապատները այնտեղ ապրող վայրենի բնակիչների առանին կեանքով, որ մինչև անգամ լուսաւորուած հայ մարդի ուշ ու միտքը չի հասած և չի էլ հասնի:

Եւ այս բոլորը անշուշտ առանց հետեանքի չէ:

Այժմեան ժամանակները երկիրներին իրապէս տիրապետելու, նուաճելու և ժողովրդները ձուլելու և անհետացնելու համար երկրիս երեսից, որպէս առանձնակի տարրերի՝ հողով և կուլտուրայով զօրեղ ազգութիւնները առաջուան պէս զէնքի ու թնթանթների չեն գիմում խիսապէս, այլ այդ բոլորը գլուխ բերելու համար հանդարտ քայլերով բարոյական, կուլտուրական պատերազներ են մղում և շարունակ յաջողութեամբ գլուխ տանում:

Հէնց իսկ այս տեսակէտով այսօր շատ երկիրներ Ասիոյ և Փոքր Ասիոյ մէջ, կարելի է ասել իսկապէս պատկանում են ոչ թէ այդ երկիրների այժմ տիրապետողներին, այլ Անգղիային. ինչու որ այսօրուան օրս հէնց Փոքր Ասիային գործնականապէս տիրապետելու համար բարոյական պատերազմի միջոցները առանց մի գժուարութիւնների Տայմզի եղերքներումն են փնտովում ու յարմարեցվում, շնորհիւ այն մանրաքննին ճիշտ վիճակագրական, տեղագրական, տնտեսական և այլ տեղեկութիւններին, որոնք Անգղիոյ թէ գործակալների և թէ անհատ գիտնականների միջոցաւ մինը միւսի յետևից հաս-

նում են Վիկտորիա թագուհու կառավարութեան ձեռքը։ Սորանից յետոյ, մի թէ զարմանալի պէտք է կրեայ այն պարզ երևոյթը, որ Անգղիոյ ամեն մի գործող պետական անձը Տայնզի եղերքից աւելի մօտ զիսէ և ճանաչում է Փոքր Մսիոյ և այլ ասիական երկիրների ամեն քունջ ու պուճախը աշխարհագրական տեսակէտից, բնակիչների կարիքը, օրուան հոգս ու մտածմունքը, քան երկրի de facto տիրապետողը և նորա այն մի կարգ պաշտոնեաները, որոնք կոչուած են ուղղակի կառավարելու իրենց յանձնուած այդ դժբաղդ երկիրը։ Այս բուրբի վերայ մի թոյլ զաղափար կազմելու համար հարկուոր է միայն ամեն տարեշրջանի վերջը տեսնել թէ ինչպիսի բազմակողմանի կերպիւ մշակուած մանրազնին տեղեկութիւններ են ներկայացվում Փոքր Մսիոյ արդի վիճակի նկատմամբ Անգղիոյ գործակալներից Անգղիոյ արաաբին գործոց նախարարութեանը։

Սակայն ինչու միայն կանգ առնել անգղիացոց վերայ։ Մի թեթեւ հայեացք ձգեցէք բովանդակ Փոքր Մսիոյ և մասնաւորապէս Հայկական Ալիւիիոյ և Տաճկական Հայաստանի վերայ, և աւանց երկար դժուարութիւնների ձեր աչքի սուաջ կ'պատկերանայ այդ երկրների յոյժ աննախանձելի վիճակը իր բոլոր մերկութեան մէջ։ Ահա այդտեղ կ'տեսնէք օրն ի բուն գործի վրայ՝ հեռաւոր ամերիկացուն, անգղիացուն, Ֆրանսիացուն, գերմանացուն և այլ ազգութիւններին։ Որքա այսօր զանազան անունների տակ քողարկուած՝ ոչ միայն անհատներով, այլ և խմբերով, աջ ու ձախ ոտի տակ տրորելով հայի նուիրական աշխարհը, մարեխի նման շրջում, թափառում են քաղաքից քաղաք, զիւղից զիւղ, դաշտից դաշտ, և ինչ նպատակներով, բայց սա շատ պարզ է, ապագայ դալքի կարապետները, առաջնորդներն են դոքա զանազան ասպարէզներում։

Ղոքա պոռոյաներ են անում, շրջաններ կատարում հայի երկրում, նորան օր օրի վերայ աւելի ճանաչելու, մօտից քննելու, մանում ու դուրս են գալիս ամեն մի տնկիւն, զընում ու գործադրում ամեն ինչ, որ պատկանում է երկրին, ժողովրդի ստանին և պատմական կենացը, և եթէ իրաց վիճակը այսպէս զնայ, ըստ երևոյթին այս ամեն մի չնչին երևոյթի վերայ հիմնուելու են ապագայում այն սոսկալի նախա-

գիծների տարերքները որոնք վերջ ի վերջոյ թոյլ ու անտարբեր ազգերի գոյութեանը վերջ են դնում, ու նոցա անուանները ջնջում աշխարհիս երեսից:

Հայ մարդը քնած է Տաճկահայրաստանում, բայց աւելի անհոգ ու քաղցր քնով քնած են պօլսեցիք և արևմտեան այն հայերը, որոնք իրենց դեռ հետու չեն կարծում հայ կեանքից: Մոքա կարծէք թէ չե՞ն էլ նշմարում, թէ ի՞նչպէս ապարայ տնտեսական, կուլտուրական, անշուշտ և քաղաքական մեծամեծ դէպքերի առաջնորդները հիմնականից իսկ պատրաստութիւններ են տեսնում և յեղաշրջում, թէև հանդարտ բայց հաստատուն քայլերով, ժողովրդի մտածման կղանակը, անտեսական վիճակը, բնիկ ազգութիւնների առանձնայատկութիւնները ևչն:

Մի տեղ, օրինակի համար Մճրին, Ամասիա, օր օրի վրայ առանեակ, հարիւրաւոր դերաստաններով գերմանական դադթականութիւններ են հաստատուում և զանազան գործարաններ հիմնում (օճառի, լուցիկի, բրդեղէնի, շաքարի ևչն) և այդպիսով երկրի արդիւնաբերութեան շոշափելի ձիւկերը օր առաջ իրենց ձեռքը ձգում, որոնք անշուշտ փոքր ինչ ուշ բնիկների սեպհակամութիւններն էին գտնաւորու միւս կողմը ի փաստ տեղական բերքերին, անգղիական վաճառականութիւնն է ծագկում, և դոքա (օր. Աինչ) են այսօր երկրի (գետերի՝ Տիգրիս, Եփրատ) նաւարկութեան արտօնատէրերը ներկայանում իսկ որ աւելի սարսափելին է՝ այդ այն է, որ Հայաստանի, Միլիկիոյ զանազան աննշան և նշանաւոր անկիւններում հայերի մէջ մարդորս զիշատիչ կզուխաներն և այլ կրօնի քարոզիչ միսիոնարներն են բուն գրեկ ուր զանազան դպրոցական և այլ կարգի հիմնարկութիւններ հիմնելով՝ Ս. Առուսուորչի հօտի պատատակըն ու վերացնելուն են շարունակ չհատմուտ: Աւ իրաւ, ի՞նչպէս չյուզուելի հայի սիրտը, երբ նորա նուիրական երկրում այսօր մոլի ու անկրօն զիշատիչներն են պատում ու նորա մատաղ սերունդը դատախարակում:

Սակայն այս բոլորի հանդէպ ի՞նչ են անում, ի՞նչ են մտածում երկրի միամիտ և Պօլսի մեծամիտ հայերը: Մոքա, ինչպէս ձիշտ փաստերը ցոյց են ապլիս՝ ձեռք ձեռքի տուած՝ յօղուտ անխնայ թշամիներին են գործում: Ահա ի՞նչպէս.

Հայրենիքում ապրող բնիկ Հայերը ահա ի՛նչ միջոցների կն դիմում: մի կողմից՝ երկրի առողջ և թարմ համարուած ոյժերը՝ ընտանիք, տուն ու տեղ, նուիրական վայրերը երեսի վրայ թողած կամ աւելի ճիշան ասած, թշնամուն յանձնած՝ հարիւրներով, հազարներով, Տէր Աստուած, չուում են պանդրխտութեան և դաղթականութեան, ուր նոցա միայն նեղութիւն, ծայրայեղ թշուառութիւն և կորուստ է սպառնում: միւս կողմից ոյժ ու կարողութեան տէր մի կարգ վաշխառուներ, նիւթական փոխարինութիւնների տակ, ամենուրեք կեղեքում ու սոսկալի կերպով հարուածում են Հայրենիքում ապաստանող անօգնական հողագործին և անտուն ու անտէր խեղճ ընտանիքներին, և այդպիսով կենդանի անդամալոյժ դարձնում ժողովրդի մի ստուար մասին իր մայրենի հողի վերայ: մի այլ կողմում զանազան թաղական ժողովուրդի վարչական եղանակների կառավարելու համար, միմեանց միմն են ուտում և արիւնը ծծում, մասնութիւնների և դաւաճանութիւնների ասպարէզ բանում և իրար տուն քանդում: և այս աննախանձելի վիճակը աւելի կատարեալ ու ներբաշնակ դարձնելու համար՝ շատ տեղեր հոգեւոր Հայրերն էլ ոչ պակաս նպաստում են իրենց յանձնուած հօտի բարեխառութեան պատկամանը և քայքայմանը:

Ահա ի՛նչ պատկեր են ներկայացնում մեր ազգայինները բուն Տաճկահայաստանում, ուր ամեն կողմից ազդի և եկեղեցու թշնամիք առանց այս էլ զգալի հարուածներ են տեղացնում Հայութեան ամենանուրբ շահերին: Այս այսպէս, բայց ի՛նչ են անում տաճկահայ գիւղացուն բարոյապէս փրկելու համար Պօլսի գործիչները, ի՛նչ միջոցների և եղանակների են դիմում նոքա իրենց թշուառ ազգակիցների վիճակը բարեշրջելու համար, և վերջապէս ի՛նչ են անում տաճկահայատակ Հայերի 25 թերթից բաղկացած մամուլը և նորան ղեկավարող հրապարակախօսները:

Ղշմարիան ասած, մենք այս հարցերը առաջարկելուս՝ չենք էլ իմանում իսկապէս որ կողմից սկսեք մեր շջապիած հարցերի մասին խօսել և քննել, ինչու որ մեր կարծիքով, մինչև այսօր ոչ մի դործ ոչ թէ չէ կատարուած, այլ թէ չէ էլ սխտուած, ուստի բովանդակ Տաճկահայաստանն այսօր մի կող-

մից նոյն նախնական, անհոգ վիճակի մէջ է դտնւում, ինչպէս տորանից շատ տասնհակ տարիներ առաջ, իսկ միւս կողմից աւելի թշուառացած, շնորհիւ Պօլսի ամեն կարգ զործիչների, ինտելլիգենցիայի՝ նոցա ձեռնթափութեան պատճառաւ:

Սկսենք մամուլից: Մամուլի կոչումը պարզ է, նա ժողովրդի առաջնորդն է նրա հասարակական մանաւանդ կենսական կարևորութիւն ունեցող խնդիրներում, նա ժողովրդի շահերի պահպան հրեշտակը պէտք է լինի և է իսկպպէս ճշմարիտ մամուլը: Մամուլի գլուխը կանգնող մարդիկը, նորան կեանք և ուղղութիւն տուող զործիչները, անտարակոյս, պէտք է իմանան և ճանաչեն այն հասարակութիւնն, երկիրը, որի համար զործում ու հրատարակում են, թափանցելու են ժամանակի ողուն, ժողովրդի ներքին կեանքին, նորա կազմութեան մէջ և հետևապէս հետամուտ են լինելու ուսումնասիրել նորան այնպէս, ինչպէս կայ, որ կարող լինին իրենց զործունէութեամբ օղտակար լինել, այլապէս նոքա կորցնում են միանգամայն իրենց նշանակութիւնը և դադարում են առաջնորդ լինելուց ժողովրդին նրա բազմակողմանի կեանքում:

Սակայն գէթ մտամբ այսպէս է տաճկահայ մամուլը և այսպէս են նորա ներկայացուցիչները: Մորան պատասխանելու համար հարկաւոր չէ մտածել: Ով որ փոքր ի շատէ ծանօթ է և հետևած տաճկահայ մամուլին, կարգացած է նորա ղեկավարիչներին՝ անտարակոյս, նա այս հարցերին միայն և եթ բացասական պատասխան կտայ, զալով մեզ, մենք կարնդենք որ մեր առաջարկած հարցերի նկատմամբ, տաճկահայ մամուլը ոչինչ չէ արել իր երկարամեայ գոյութեամբ և ոչ էլ մտադիր է անելու: Սախ որ տաճկահայ մամուլը չէ ճանաչում տաճկահայ ժողովրդին, և կարող էլ չէ ճանաչել քանի որ նա այդ ցանկութիւնը չունի, և, որ զլիսուորն է, նորա ղեկավարող, ուղղութիւն տուող մարդիկ ընդհանրապէս այնչափ մեծամիտ են, որ կարողութիւն էլ չունին լսեմունելու այս մի ամենատարրական ճշմարտութիւնը, թէ մամուլը ժողովրդի իսկական և կենսական շահերի համար է և հետևապէս մամուլը պարտաւոր է նախ ճանաչել և ուսումնասիրել այդ ժողովրդի կեանքը և նորա բնակած երկիրը, և այնպէս սխի զործելու: Աթէ այդպէս չէ և այդպէս էլ չէ եղած տաճկա-

Հայ մամուլը՝ խնդրում ենք ասացէք, մի քանի տասնեակ տարիներէ ընթացքում դէժ որ և իցէ թիրթում երբ և իցէ Տաճկահայաստանի ուսումնասիրութեան վերայ տեսած էք խմբագրական յօդուածներ, տեսած և լսած էք արդեօք, որ այդ մամուլը ուշ գարձրած լինէր և զբաղուէր խեղճ ժողովրդի կեանքի ուսումնասիրութիւնով, ինչ տեսակէտից էլ որ լինէր. բնաւ երբէք:

Պէտք է յայտնի լինի յարգելի ընթերցողներին, որ պօլ-տաբնակ Հայերը մինչ 79 թուականը, ժամանակներ է եղած՝ որ խօսելու, զրկու, ճառելու ամենամեծ ազատութիւններ են վայելած. նոյն իսկ այժմեան նեղ պայմաններում ևս նոքա համարձակ միջոց ունին մասամբ վայելելու այդ ազատութիւնն: Այս պայպէս:

Այժմ պատեղ ևս Հետաքրքիր է նոյն Հարցերը առաջարկել: Արդեօք որ և է մի գործիչ, որ և է մի պօլսեցի, լինի նա զբազէս էՖէնդի կամ «տիանաւոր տիրացու» կամ վերջապէս որ և է մի հոգեւորական—(բացի միակ Խրիմեան Հայրիկից, սակայն մէկ մարդը պատերազմի դաշտում դեռ ևս մտաբիկ չէ, և թէ Հայրիկը պօլսեցի չէ, այլ վանեցի, որտեղից է և բացառութիւն կազմող նորա աշակերտ սրբազան Արուանձտեանցը)—երբ և իցէ նպատակ դրած է ճանապարհորդել Հայաստան, ուսումնասիրել Հայ ժողովուրդը, նրա առօրեայ մտաւորական կեանքը, ապրելու և մտածելու եղանակը, որ այնպէս վերագտնար Պօլիս ու սկսէր ճառելու, որին արդէն մեծ սէր ունին պօլսեցիք, Հասարակական շրջաններում, ուր պօլտաբնակ ժողովրդին հաղորդէր իր ապաւորութիւնները, տեսած լսածը Հայ դիւղացու, Հայ դեղջիւհու մասին, երկրի ընդհանուր վիճակի վերայ, և այլն:

Ահա այսպիսի գործիչների, Հրապարակախօսների, գրագէտների միակ յանցանքն և մեղքն է այն, որ այսօրուան օրս պօլսի ազգաբնակիւթիւնը սառած ու հոգացած է իսկական Հայ կեանքից, և ամեն տեղ անտարբերութիւն և սառնասրբաւորութիւն է տիրում դէպի Հայաստանը: Մորա հետեանքն է, որ այժմ ոչ մի լրագրական լուրջ գրութիւն, ոչ մի քարոզ Հայաստանի ժողովրդի վիճակի նկատմամբ անկարող է պօլսեցուն սթափեցնել տալ և աղբել նորա սրտին և հոգուն վրայ:

Սիրելի ընթերցող, չեմ խմանում զու ինչպէս եւ վերաբերվում դէպի այս գրութիւնը, սակայն եւ հարկաւոր եմ համարում ասել, որ յիրաւի սոսկալի է տեսնել զանազան ազգերի լեզուներով յաճախակի գրութիւններ Հայաստանի ու նորա ժողովրդի վերայ, այն ինչ հայ ժողովուրդը, հայ հասարակութիւնները իրենց ջանասերովը հանդերձ՝ զուրկ են դէժ յարմարաւիժ միջոցներով օտար լեզուներով կարգալ իրենց երկրի վերայ:

Յաւալի երևոյթ. ինչո՞ւ դէժ այժմ տաճկաբնակ հայերի հրատարակութիւնների մեջ տարին առ սակաւն մի կամ երկու օրինաւոր դրքեր, ճանապարհորդութիւններ չտեսնել հրատարակուած Տաճկահայաստանի հայ ժողովրդի նկատմամբ. ինչո՞ւ տարին դէժ երկու — երեք զրագէտներ ճանապարհորդութիւնների չձեռնարկին դէպի Հայաստան՝ ուսումնասիրելու երկիրը եւ զանազան հրատարակութիւններով հայրենիքից հեռու ապրող ժողովրդին եւ գործիչներին ծանօթացնելու իրաց վիճակին հետ: Ահրջապէս, մի՞ թէ Պօլսի հայ հասարակութիւնը այն աստիճան արդէն անոյժ է, որ մօտ քաւորդ միլիոն անձինքների մէջ չի գտնվում մի լուսաւ որուած երիտասարդ, որ այդ բարոյական պարտականութիւնը կատարէր թէ յօգուտ ժողովրդի եւ թէ իր հոշակի համար, որը պօլսեցուն այնչափ ցանկալի է: Աւղիղ որ ախուր եւ օտարտար երևոյթ. եւրոպացի մի որ եւ է կին կամ օրիորդ, մի թոյլ արարած կ'երթայ, կպատէ ամբողջ աշխարհ, հեռաւոր երկիրներ, իսկ հայը, մեծամիտ պօլսեցին չէ ուզում ճանաչել չէ ուզում ճանապարհորդել իր երկիրը: Վէհ, սորանից յետոյ եկէք եւ սպասեցէք հայի մտաւոր, բարոյական եւ անտեսական վերածնութեանը:

Պաղթականութիւնը օրէ ցօր մեծ կերպարանք է աւնում. պանդխտութիւնը երկրի արդիւնաբերող ոյժերն սպանում է, զիշատիչ միսիօնարների գործունէութիւնը ազգային եկեղեցու եւ հեռաւապէս ազգի գոյութեանն հարուածներ է տեղացնում. անտեսական ճգնաժամն հոգեմաշ է անում հայ գիւղացուն. քուրդի ասպատակութիւնը դժբաղդների թիւն է աւելացնում ու հային աւելի եւս ազքատացնում. իսկ սորա հանդէպ՝ ոչինչ, ոչ միջոց եւ ոչ մի դիմադրութիւն:

Այս բոլորի առաջը առնելու հնարը մենք, գէթ այժմ, միմիայն երկրի ու ժողովրդի օրինաւոր ուսումնասիրութեան մէջ ենք դանոււմ: Աւսումնասիրելով մեր երկիրը և ազգակիցների վիճակը՝ կտեղեկանանք մեր ցաւերի, վէրքերի հետ և այնուհետև հաստատ միջոցներով կարող կլինինք վերացնել մեր երկրից կարողացածներին չափ տեղացող մահալից հարուածը:

Առանց օրինաւոր ուսումնասիրութեան՝ մեր կարծիքով չկայ փրկութիւն իրաց արդի վիճակից...: Արբ բովանդակ երկրի ու ժողովրդի կենդանի պատկերը ներկայացուի ամենայն մանրամասնութիւններով, հայ ժողովրդի ամեն դասակարգերին, խաւերին՝ մենք հաւատացած ենք, այն ժամանակ և հայ ժողովուրդը միջոց կտայ, որով կդանուին եղանակներ օգնութեան ձեռք հասցնելու հայ ժողովրդին: Սա կարծում է՝ք որ շատ պարզ է:

Ի՞նչպէս կարելի է նորոգել մի տուն, երբ նորա խալտուկ կողմերը յայտնի չեն. ի՞նչպէս կարելի է բժշկել մի հիւանդ, երբ չգիտես թէ ինչու՞ն է կայանում նորա հիւանդութիւնը:

Բ.

Նայի նուիրական սուրբ վայրը, որը տասն և վեց դարերի ընթացքում հայ մարդի ազգային-եկեղեցական կեանքի հիմնաքարն է եղած և որտեղից տարածվել է Նայաստան աշխարհի մէջ քրիստոնէական սուրբ կրօնը՝ վերանորոգութեան է կարօտ:

Այո, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի շինութիւնն այժմ այն վիճակի մէջ է դանվում, որ ամեն անգամ նորան տեսնելիս ճշմարիտ հայ մարդի աչքերիցն արտասուք է կաթում և նորա հոգին ու սիրտը յուզվում:

Սէ իրաւ, հայր, որի պատմական և ներկայ կեանքում Ս. Էջմիածինն այն աստիճան ամենակենսական դեր է խաղացել և խաղում, որ առանց Ս. Էջմիածնի մենք հայի զոյութիւնն անգամ չգիտենք՝ արժանի է մեր կողմից մեծ և ամենալուրջ ուշադրութեան:

Ամեն մի ազգ, ամեն մի հասարակութիւն ունի իր կրօ-

նական սրբավայրը, որը թէ ներքին և թէ արտաքին կողմից պահպանվում է այնչափ ճոխ ու փառաւոր, որ մնում է միայն սքանչանալ և զարմանալ այդ սրբավայրերը պահպանող պարտաձանանչ ազգի ազգային կրօնական զգացմունքի վերայ:

Այսպէս են համարեա բոլոր ազգերի սրբավայրերը, դեռ չլիշած մի քանի ազգերի կենդրոնական տաճարները, որոնք իրենց շքեղ ու ճոխ շինութեամբ, մեծ ազատութեամբ կարող են մրցիլ աշխարհիս նոյն իսկ ամենանշանաւոր շինութիւնների հետ:

Ազա հայի Մայր Աթոռը, Ս. Եջմիածինը, այն նուիրական կենդրոնը, ուր ամեն հայ դարձրած է իր աչքերը և ուշ ու միտքը... ասուր պատկեր. փոխանակ Ս. Եջմիածնի շինութիւնը տեսնելու այնքան փառաւոր, որքան նա նուիրական է մեզ համար՝ ցաւօք սրտի տեսնում ենք որ այսօր այդ տաճարը շինութեան կողմից գտնվում է ողորմելի վիճակի մէջ: Մի՞թէ սորանից յետոյ հայ հասարակութեանը հրաւէր է հարկաւոր իր Վահափառ Պետից՝ Ս. Գրիգոր Լուսաւորչի հիմնարկած տաճարը վերանորոգելու համար. մի՞թէ նա դեռ սպասելու է ուրիշների նախաձեռնութեանը որ իր մասը հանէ Մայր Աթոռի վերանորոգութեանը...:

Մեր կարծիքով, ամեն մի մարդ, որը հայ անունն է կրում՝ գէթ ազգային-եկեղեցական զգացմունքից շտապելու է իր առատ նուէրով նպաստելու Ս. Եջմիածնի վերաշինութեանը:

Եթէ այս կենսական խնդրում ամեն մի հայ մարդ զանայ իր առատ նուէրը, հարուստը իր հազարները, չքաւորը իր կոպէկները՝ այն ժամանակ չենք խմանում ինչ անուան է արժանի հայ ժողովուրդը:

Ասում են՝ հայը կրօնական ժողովուրդ է, նա ընդհանրապէս բարոյական մի հասարակութիւն է, ունի իր ազգային և եկեղեցական ազնիւ ձգտումները, և այլն. շատ զեղեցիկ, եթէ իրաւ այդպէս է, ուրեմն թող նա գործով ցոյց ապ գէթ դուրս մի նշոյլը իր հասարակային մի կենսական խնդրում:

Աւ մի՞թէ մի ազգ, որը մի քանի միլլիոն անհատներից է բազկանում և որը քաղաքակրթութեան մեծ յաւակնու-

Թիւններ ունի՝ մի թէ այդ ակզը այնքան ստոր պէտք է լինի, որ նորա մէջ չգտնուին գէթ մի քանի Բարեբարներ, որոնք իրենց առատ նուէրներով բարի և նախանձելի օրինակ դառնան Հասարակութեանը Ս. Լշմիածնի վերաշինութեան խնդրում:

Այս անգամ ահա սորանով ենք վերջացնում մեր ասիւիքը, յուսալով որ Հայ մարդը նախ քան իր Հայրապետի հրաւերը կշտապի իր նուիրական պարտքը հասուցանել Մայր Աթոռին, ուր Նորին Վեհափառութիւնը սիսելու է Ս. Լշմիածնի վերաշինութեան գործը:

4.

Արկիկիա, Տաւրոսի լեռներ, Օւէյթուն . . . ուր ապրում են մօտ քառորդ միլիոն Հայ մարդիկ, այս այն վայրերն են, որոնց անունները շարունակ լսում է ամեն մի Հայ մարդ. սակայն հակասակ սորան համարեա բովանդակ Հայ ժողովուրդը մինչև այժմ ոչ մի գաղափար չունի ոչ այս երկիրների վերայ և ոչ էլ տեղւոյն բնակիչների ընդհանրապէս և մեր արգակիցների վերայ առանձնապէս: Անհասկած սա մի տխուր երևոյթ է որպիսին այսօր մեր կեանքում կարելի է հարիւրներով հաշուել:

Մեր խօսքը այստեղ չ'երկարացնելու համար, մանաւանդ որ հանդիսի ոչ զիւքն է ներում և ոչ ժամանակը, սխիւք խօսիլ այն բանից, որի վերայ է լինելու մեր խօսքը:

Այսօր բոլոր Հայերի թիւը, ինչպէս վերևում յիշեցինք, այդ երկրում հասնում է մօտաւորապէս քառորդ միլիոնի: Այսպիսի մի բազմաթիւ Հասարակութիւն անշուշտ ունի իր բարոյական և մատուր կարիքը. դեռ թող մի կողմը նորա անտեսականը, բայց թէ, ո՞վ է հող տանում այդ Հասարակութեան թէ բարոյական և թէ, մատուրական կողմերին վրայ, դա է հետաքրքիրը:

Սորա վերայ հոգացողը բառ օրինի և ըստ պարտականութեան պէտք է լինէին թէ Պօլսը իր պատրիարքարանով

և թէ Սոց Հոգևորականութիւնը իր կաթողիկոսով Հանգերձ, սակայն այսպէս թէ այնպէս այս Հոգացողութիւնը այնչափ աննշմարելի և ճշին է, որ այսօրուան օրս Արլիկիան իր բնակիչներով Հանգերձ թէ օտարախօս է և թէ զուրկ կարևոր թուով կրթական Հաստատութիւններից: Ահա ինչպէս.

Արլիկիոյ այս ժողովուրդը Տօրոս լեւան Հարաւային և արևելեան կողմերից սարածուելով մինչ Ափրատայ Հոսանքը, Սուրիոյ Հիւսիսային սահմանը և Միջերկրական ծովի ափերը, Համարեա ամենամեծն ընդհանուրութեամբ զրկուած է այսօր իր մայրենի լեզուի դիտութիւնից և օր ըստ օրէ երկրի ազգաութեան և Պօլսի դործիչների ձեռնընթացութեան պատճառաւ՝ ստիպուած է Հեռանալու իր ազգային շրջանակից և մանկու օտար կրօնական փարախը:

Ահա՛ երկրի այս ցաւալի վեճակի առթիւ է, որ այսօր բովանդակ Ասիական Տաճկաստանի ոչ մի զաւառում և ոչ մի կենդրոնում օտար կրօնական վարդապետութիւնը—պրօպագանդան—այնչափ յաջող ասպարէզ չէ գտած, որքան այս անբաղկ երկրում:

Այսօր կաթողիկոսութիւնը, բողոքականութիւնը, անգլիականութիւնը և այլ մանր ու մոլոր ազանդները աւելի շատ այստեղ են բուն դրած և Հաստատուած, սոցա զործունէութեան վրայ մի պարզ գաղափար կազմելու Համար՝ բաւական է միայն մի Հայեացք ձգել այն վարժարանների, կղերանոցների, կոլեճների, ազջիանց դպրոցների, բաղմութիւ կրթական այլ և այլ Հաստատութիւնների վերայ, որոնք ցաւօք սրախ զանազան քարոզիչներ Հաստատած են Հայիական Արլիկիոյ այս ու այն նշանաւոր և աննշան կենդրոններում: Այս բոլորը առնելով և մինչև անգամ լսելով, մարդս կամայ ահամայ Արլիկիան մի մոլեռանդ կաթողիկ երկիր է ներկայացնում, ուր ամեն մի քայլափոխում Հանդիպածդ Աւրուպայից վաճառուած գիշառիչ կըրէթ միսիօնարներն են և դոցա օրնօական մայրապետները: Աւ իրաւ, վերջին երկու տասնեակ տարիներում շորհիւ այս քարոզիչների վարդապետութեանն, երկրի բնիկ ժողովրդի Հայեացքները մինչ այն ատիճան բնտեղացել են զանազան կրօնների վարդապետութիւններին՝ որ մեր Հայերին, մանաւանդ մտապ սերունդին այս ազգեցու-

Թիւններից ազատ պահելու համար՝ մեծ և մասնաւոր գործունէութիւն է հարկաւոր: Այս չարիքի առաջը ոչ մասնաւոր ոյժերը կարող են առնել և ոչ էլ միայն հայ հոգեւորականների քարոզութիւնները, այլ միմիայն հաստատա ոյժերի վերայ հիմնուած մի ընկերութիւն, որ կարող լինի Արլիկիոյ ամեն մի քաղաքում և պիւղում տղայոց և օրիորդաց դպրոցներ բանալով, մրցիլ միսիօնարաց գործունէութեան դէմ:

Աւրեմն քանի որ այսօր ազատ համարձակ զանազան միսիօնարներն են գործում Արլիկիայում և ռամիկ դասակարգին հրապօրելով՝ հեռացնում նորան հայութեան միակ կապից— եկեղեցական իշխանութիւնից, և քանի որ իրաց այս օխտուր կացութեան վրայ մասնաւոր ուշադրութիւն չեն դարձնում՝ Պօլիսը ու Սոջ կաթողիկոսարանն, որոնք նուիրական պարտք ունին սորա վերայ անմիջապէս մտածելու՝ կարծում ենք, զէթ հասարակութիւնը այս խնդրում անտարբեր և անուշադիր չէ մնալու ու իր բարոյական պարտականութիւնն շտապելու է կատարելու: Տարակոյս չկայ, որ եթէ Արլիկիոյ ժողովուրդը ունենայ անկեղծ գործողներ և ինամատար առաջնորդներ, նա օր ըստ օրէ կը զարգանայ հայ ազգային-եկեղեցական կեանքի մէջ և յուսալի յառաջադիմութիւններ կանէ զանազան ասպարէզներում:

Այսպէս եթէ մենք իսկապէս կամենում ենք մեր կլիկիցի եղբայրներին ազատելու զիշատիչ միսիօնարների ճանկերից և ցանկանում ենք մեր հայրենակիցների վիճակը ապահովելով՝ հաստատ հողի վերայ դնել նոցա եկեղեցականազգային կեանքը՝ պէտք է որ մասնաւոր ուշադրութիւն դարձնենք Արլիկիոյ մատաղ սերունդի կրթութեան վերայ:

Այսօր Արլիկիոյ մօտ 250,000 հայերի ուսանողների թիւը հասնում է միայն 2,500 հոգու, որոնց կրթութիւնը թէ ամենաթոյլ մեղրտի վերայ է հիմնուած, և թէ միւլնոյն ժամանակ նոցա ամենատարրական առարկաներ են աւանդվում: Անտարակոյս եթէ մենք ունենանք մի որոշ կրթական մարմին, որը ամենայն եռանդով զբաղուէր այս հայ լեռնականների վիճակով, այն ժամանակ մենք կարձ ժամանակամիջոցում կունենանք մի որոշ թիւ կրթուած հասարակութիւն, որին չեն կարող բնաւ քնաս հոսցնել զանազան միսիօնարներ, որոնք

Հաստատուելով Արևիկոյ մէջ, անշուշտ միշտ դրական շահեր ունին: Այս Հայերի կրթութեան գործին օգնութիւն Հասնիլը, խիստ դիւրին է, միայն թէ մենք ունենանք Հաստատանկութիւն և Հաւատ դէպի այդ նուիրական գործը:

Սորանից դեռ շատ տարիներ առաջ, այս Հայերի կրթական վիճակը բաւական զբաղեցրել էր արժանայիշատակ Աարապետ վարդապետ Շահնազարեանցին, որը վախճանելիս՝ իր բոլոր նիւթական կարողութիւնը Արևիկոյ Համար կտակած էր. — այստեղ պէտք է Հաստատուել վարժարանը, սակայն, չենք իմանում, ի՞նչ տեսակէտներով պոլսեցիք Հանդուղէ պէ կամքը չ'յարգելով, վարժարանը Հիմնում են Պօլսու Անկասկած, եթէ Հանգուցեալ վարդապետի կամքը կատարուէր ամենայն ճշտութեամբ՝ այսօր Արևիկոյ մէջ երգեհաները չէին կարողանար այնքան մեծ ազատութեամբ և յաջողութեամբ որսալ մեր զաւակներին և այդպիսով մուսուլմանները տալ նոցա սուրբ Առասուրջու աջն ու Սիսի կաթողիկէի խաչը: Այս վարժարանը ամենայն դիւրութեամբ Հասած կլինէր իր նպատակին, ինչու որ Արևիկոյ մէջ ծախսերը Համեմատաբար նուազ են լինում:

Այսպէս, Արևիկոյ Հայերի կրթական գործին նպաստելու Համար, որ ոչ ժամանակի և ոչ գումարի կորուստ լինի՝ մենք կարծում ենք, նպատակայարմար կը լինէր գործի սկսելու որոշ պայմաններով կամ Միացեալ Բնկերութեանց կամ Վարդանեան ընկերութեան միջոցաւ:

Ինչպէս յայտնի է Հայ Հասարակութեանը, Միացեալ Բնկերութիւնը Հաստատուած է Պօլսում կրթութիւն տարածելու նպատանի մէջ:

Այս ընկերութեան գործունէութիւնը ծանօթ լինելով Հայ Հասարակութեան, մենք աւելորդ ենք Համարում մասնաճանաչութիւնների մէջ մտնել, սակայն այսքան միայն կասենք, որ այս ընկերութիւնն եղակի լինելով իր տեսակին մէջ, մասնաւոր Համակրութեան է կարօտ Համայն Հայ ժողովրդի կողմից. և քանի որ չկայ մի ուրիշ ընկերութիւն աւելի յաջող պայմանների մէջ՝ ուրեմն պարտական ենք սորանով բաւականանալ և սորան աջակցելով՝ աւելի յաջող Հանգամանքների մէջ դնել սորան: Միացեալ Բնկերութիւնը այսօր նպաստ-

տանում ունի 29 արական և 7 իգական վարժարան 2,250 աշակերտներով և 645 աշակերտուհիներով: Այս վարժարաններից Հինգր, ինչպէս ընթերցողը կտեսնի 154 երեսում տրպած աղիւսակից՝ հաստատուած են Սիլիկիոյ մէջ, ուր եզուխաների դպրոցաց թուի հետ բաղդատելով, մի խելճ թիւ է ներկայացնում: Այս է Միացեալ Անկերութիւնը:

Այժմ անցնինք Վարդանեան ընկերութեան: Այս ընկերութիւնն, որը իր գոյութեամբը, շատ քիչ ծանօթ է նոյն իսկ հայ հասարակութեան փոքրամասնութեանը՝ հաստատուած է Սիլիկիոյ նշանաւոր Այնթապ քաղաքում:

Վարդանեան ընկերութիւնը հաստատուած է հայէպցի Օհաննէս էֆէնտի Քիւրքչեանի նախաձեռնութեամբ և պարիարքական փոխանորդ-առաջնորդ արժանապատիւ Աբարդեան Քրիզոր վարդապետի օրով 1867 թուին, Վարդանանց զորավարաց հինգշաբթի օրը: Այս ընկերութիւնն հաստատած է Այնթապում մի բարձրագոյն նախակրթարան մտաւորապէս 80 աշակերտներով, որը քաղաքի հայոց դրեթէ միակ պարծանքն է: Վարդանանց ընկերութիւնը զանազան ներկայացումներով և կրթական հասարակային հիմնարկութիւններով կարողացած է եղիլ միշտ վառ պահել տեղւոյն հայ հասարակութեան ազգային-եկեղեցական զրացումը և այս ուղղութեամբ շարունակել է միշտ նշանաւոր գերկատարի: Այժմ այս ընկերութիւն հրատարակում է Մէֆոյ անունով կիսամնայ հանդէսը, որը աւայժմ տպագրվում է Պոլսում: Մի քանի տարի սորանից առաջ, այս ընկերութիւնը հիմնարկած է վարժարանի համար մի հոյակապ շինութիւն, սակայն զրամի պատճառաւ մինչ այժմ անկարող լինելով վերջացնել այս հոյակապ վարժարանի շէնքը՝ ստիպուած է ներքին յարկը գործածել իբր ուսումնարան և հարկադրուած է տեղի պահասութեան պատճառաւ մերժել այն հայ մանուկների ընդունելութիւնները, որոնք Սիլիկիայի զանազան քաղաքներից ուղարկվում են այս վարժարանը կրթութիւն ստանալու համար:

Նշմարիտն ասած, այս վարժարանի գէթ շինութեան այսպիսի վիճակը խիստ վատ տպաւորութիւն է թողնում հայ մարդի վերայ, ինչու որ հայը նոյն իսկ իր երկրում չէ

կարողանում վերջնականապէս կանգնեցնել մի շինութիւն, այն ինչ օտարներն այդտեղ իսկ մէկի փոխարէն մինը միւսի ետեւից տաննեակ փառաւոր հաստատութիւններ են հիմնարկում:

Այս շինութիւնը աւարտուելուց յետոյ քաղաքի կեդրոնական վարժարանն է դառնալու իր մէջ պարունակելու է նոյնպէս լսարան, գրատուն և Մեհարջի խմբադաստունը: Բնկերութիւնը այս տարի, կարծեօք, մի տպարան ունենալու աշխատում է մեծ ջանքով ուր տպագրուելու են Արլիկիոյ ժողովրդի համար հարկաւոր գրքեր, թերթեր, տետրակներ, և այս միջոցաւ ընկերութիւնը յոյս ունի մաքրել ազգային հրատարակիչ բողոքականների ու լատինների հրատարակութիւններից:

Յաւալի է, որ այս ազգօգուտ ընկերութիւնը, որը արժանահաւատ հոգեւորական և աշխարհական անձինքներից է կառավարվում, նիւթական սուղ միջոցի պատճառաւ անկարող է սպասած ծառայութիւնն անել. նոյն իսկ այժմ փոքր շրջանակի մէջ գործելով, ընկերութիւնը մեծ դժուարութիւնների է հանդիպում. սակայն ընկերութիւնն ամեն տարի Միացեալ Բնկերութիւնից որպէս քաջալերութիւն 100—200 կոտր դասադրքեր է ընդունում, ինչպէս նաև Ալիանս Փրանսէզ ընկերութեան կողմից Փրանսերէն լեզուն ուսուցանելու համար տարեկան ստանում է 300 Փրանքի նպաստ:

Ահա այն երկու ընկերութիւնները, որոնք փոքր ժամանակում և փոքր դրամազլխով անմիջապէս կարող են մեծ ծառայութիւն անել երկրի հայ ժողովրդի կրթական և հետեւապէս բարոյական գործին:

Չնայելով, որ այս երկու ընկերութիւններն էլ պարտաճանաչութեամբ և մեծ եռանդով կարող են մեծ օգնութիւն ցոյց տալ Արլիկիոյ կրթական վիճակին, սակայն մենք այս գործում մի փոքր աւելի առաւելութիւն կենք տալիս Աւարդանեան ընկերութեանը սորա համար, որ այդ մարմինը հաստատուած լինելով Արլիկիոյ գլխաւոր քաղաքում և այնպիսի մի կենդրոնում, ուր զանազան ազգերի քարոզիչները իրենց գործը առաջ տանելու համար մեծ եռանդ ու կորով են ցոյց տալիս՝ բնական է, որ աւելի գիտակցօրէն և զգուշութեամբ կատարէ իրեն յանձնուած նուիրական գործը:

Յարգելի ընթերցողը պէտք է խմանայ, որ Այնթապ

*

քաղաքն, ուր հաստատուած է Վարդանեան ընկերութիւնը, թէև աշխարհագրորէն Վիլիկիոյ կեդրոններից փոքր ինչ հեռու է դէպի հարաւ-արևելք, սակայն շատ անսակէտներով, այսօրուան օրս ամենանպատակայարմար կեդրոնն է գործելու համար: Այնթապ քաղաքը ունի 42,000 բնակիչ, որոնցից 8,000ը հայ ուղղափառներ են, իսկ 4 հազարը՝ հայ կաթողիկէ, հայ բողոքական և հայ անգլիականներ են: Այս քաղաքը Օւէյթունի և Հաճընի պէս բնաւ կասկած չէ հրաւիրած իր վրայ, որը ոչ պակաս երաշխաւորութիւն է գործի յաջող ընթացքին: Ամբողջ Վիլիկիոյ մէջ, Այնթապը յայտնի է որպէս օտար կրօնական մրցումների յաջող կենդրոն. ուստի և սա ոչ պակաս ցաւալի պարագայ է ներկայացնում ամբողջ երկրի համար, ինչու որ հակառակ Անգղիայից, Բոսնիայից, Ամերիկայից ստացուած ահագին գումարներին, որոնք հային միայն իր եկեղեցական-ազգային կապից հեռացնելու են ծառայում՝ դեռ անգի հայ հասարակութիւնը ոչ միայն անկարող է իր շրջակայքի հայերի կրթական վիճակի վերայ նայիլ, այլ նոյն իսկ կարողութիւնից զուրկ է փոքր ի շատէ մի կանոնաւոր դպրոց ունենալ: Այն ինչ խիստ բնական էր և յոյժ ցանկալի, որ Այնթապը բացի յաջողապէս իր գործը առաջ տանելուց և մրցելուց օտարակրօն հաստատութիւնների դէմ, նաև իր կրթական գործունէութեամբ կարողանար ներգործել Մարաշի, Օւէյթունի, Հաճընի, Սիսի, Ատանայի, Վիւրխի և Հայլերան գիւղերու վերայ:

Մեր կարծիքով, Այնթապը բացի կրթական ներգործութիւնից, պէտք է և պարտական է այդ երկրի ազգայինների արհեստական և երկրագործական կարիքներն հոգալու նախաձեռնութիւնն ևս ունենար. այլապէս հայ տարրի գոյութիւնը Վիլիկիայում խիստ դիւրաւ վտանգաւոր վիճակ կարող է ունենալ:

Աւ այսպէս ժամանակն է արդէն, որ հայ հասարակութիւնը ստանասրտօրէն չնայի Վիլիկիոյ կրօնափոխութեան և օտար ազգեցողութիւնների վերայ, այլ այս բոլորի առաջն տանելու համար մասնաւոր ուշադրութիւն դարձնելու է Այնթապի և հետևապէս Վիլիկիոյ այլ հայաբնակ վայրերի կրթական և բարոյական գործի վերայ: Այս նպատակաւ մեր

կարծիքով լաւ կ'լինի առանց յետաձգելու հայերի մէջ կամ մի օժանդակ ընկերութիւն կազմել կամ թէ արդէն գոյութիւն ունեցող մի ընկերութեան աջակցութիւնը ձեռք բերել որ նա միշտ նիւթապէս և բարոյապէս նպաստէ Սիւլիկիոյ համար գործող ընկերութեանը, լինի դա Միացեալ Բնկերութիւնը կամ Վարդանեանը մի և նոյն է. անշուշտ համարառութեան իրաւունքը ապահովելու համար՝ կարելի կը լինի որոշ եղանակաւ պայմաններ կապել ընկերութեան հետ:

Մեր այս առաջարկութիւնը եթէ յաջողութիւն ունեցաւ, անտարակոյս հետզհետէ Սիլիկիոյ մէջ կարելի կ'լինի աւելի մեծ գործեր կատարել. զիւղային պարզ վարժարաններ, արհեստական և երկրագործական դպրոցներ և այլ կարգի օգտաւէտ հիմնարկութիւններ հաստատել: Բայց նախ և առաջ մեր ջանքը լինելու է՝ զոնէ Սիլիկիոյ օտար կողէժներէ դէմ հաստատել այնտեղ մի բարձր ուսումնարան, որտեղ կարելի լինի ուսուցանել կրօնական, բնագիտական, արհեստական հողագործական և այլ զիտութիւններ. արդէն այս ամէն ճիւղերի համար էլ մեծ յարմարութիւն ունի Նյութապը:

Մենք առաջարկում ենք մեր եղբայրներին ուշադրութեան առնել Սիլիկիոյ կրթական գործը և նիւթապէս օգնել մեր կիլիկեցի եղբայրակիցներին գլխաւորապէս նորա համար, որ ամբողջ Սիլիկիան եթէ այսօր ուղենայ էլ ինքը հողալուիր կրթական կարիքը, մնսկով իր վերջին փարսն՝ նա այնու ամենայնիւ անկարող է մինակ այդ բանը գլուխ բերելու. որովհետև Սիլիկիոյ արտաքին յարձակումներէ դէմ, միայն մասնաւոր մեծ յոյժեր ու կարողութիւններ են հարկաւոր որ կարելի լինի երկրի վիճակը ապահովել:

Գալով մասնաւորապէս քաղաքի հարուստ հայերին, ինչպէս են այնթապցիք, միշտ կարելի է մեծ զուամարներ առնել այս նպատակաւ, եթէ միայն արտաքին օգնութիւններ լինին:

Ի վերջոյ հարկ ենք համարում ասելու որ Վարդանեան ընկերութիւնը Պօլսոյ պատրիարքարանից վաւերացեալ մի մարմին է, որի բարեբարն է այժմ մեծ. պ. Գալուստ Ղազարեան Նյս անձը իր սահմանափակ հարստութեամբ հանդերձ մեծ գործ է կատարել Նյութապի կրթական շարժման մէջ:

Արժանագատիւ Խորէն ծայրագոյն վարդապետ Ատե-
 փանէի խմբագրութեամբ հրատարակուող «Մանկավարժանոց»
 ամսագրի Մարտ ամսի գրքոյի մէջ մենք հրատարակել էինք
 ի միջի այլոց և մի յօդուած Հնդկաստանի և Բիրմանիոյ
 հայերի նկատմամբ: Հրատարակելով այդ համառօտ գրութիւնը,
 մեր միակ նպատակն էր հայ հասարակութեան ուշադրութիւնը
 հրաւիրել այդ երկիրներում ապրող դաղթական հայերի վի-
 ճակին վերայ, որոնց դեռ ծնողները մօտիկ անցեալում բաւա-
 կանին նշանաւոր դեր խաղացած լինելով հայի մտաւոր և բա-
 րոյշական խնդիրներում՝ ամեն կողմից արժանի են հայ ժողովրդի
 մասնաւոր ուշադրութեան:

Մեր այս ցանկութիւնը՝ հայ ժողովրդի և մամուլի ու-
 շադրութիւնը դարձնել հնդկաբնակ և բիրմանիաբնակ հայերի
 վերայ, հարկ է ասել որ սպասածից աւելի շատ արձագանք
 գտաւ թէ ժողովրդի մէջ և թէ մամուլի: Այս առթիւ այս-
 տեղ բաւական է միայն յիշել որ մեր յօդուածը ոչ միայն ամ-
 բողջովին արտասպուռեցաւ արեւմտեան հայերի մի քանի գլխա-
 ւոր թերթերում և դորան շարունակ մօտ տասն նամակներ
 ստացուեցան այստեղ այդ յօդուածում յուզուած խնդրի առի-
 թով, այլ մինչև անգամ այժմ ևս նա դեռ չէ դադարում
 յուզել հասարակաց միտքը, որի հետեանքն է թէ մի հնդկա-
 հայի երկարուձիգ յօդուածը արտասահմանի մի թերթի 8 և
 9-երորդ համարներում Սակիա ստորագրութեամբ, որից մի
 կտոր արտասպուռեցաւ «Արձագանքի» № 33ի մէջ և թէ
 Հնդկաստանի և Պարսկաստանի Հայոց առաջնորդ Պրիդո-
 րիս սրբազանի գրութիւնը, որը վերջինս անցեալ ամսին ու-
 զակել է «Մանկավարժանոցի» խմբագրութեան անունով:

Մեր յարուցած խնդրի այս կերպարանք առնելը, կար-
 ծում ենք, ինքնին պարզ ցոյց է տալիս, որ թէ հնդկաբնակ և
 թէ բիրմանիաբնակ հայերի այժմեան վիճակը արդարև կա-

բօս է հայ ժողովրդի մասնաւոր ուշադրութեան, և հայի օրուան խնդիրներէց մէկն էլ զա է նկատուելու, ինչպէս որ և մենք հասկացել ենք և բարձրացրել այդ խնդիրը: Այժմ անցնենք բուն խնդրին:

Մենք մեր յօդուածում «Մանկավարժանոցի» մէջ ցոյց էինք տուած ընթերցող հայ հասարակութեանը հնդկաբնակ և բիրմանաբնակ երբեմն փարթամ հայ զազթականութեան մնացորդի տխուր կացութիւնն ազգային—եկեղեցական կեանքի կողմից և այս առթիւ գրած էինք, որ հայ ազգի այս կարևոր զազթականութեան մնացորդը իր աւանդութիւններով ու մասամբ նաև կալուածներով իսպառ կորուստից ազատելու համար ի շահ հայութեան՝ անհրաժեշտ է հնդկաբնակ հայերի առաջնորդութիւնը բաժանել Պարսկաստանի առաջնորդութիւնից, և հնդկաբնակ և բիրմանաբնակ հայերի համար ասանյին ասաջնորդութիւն կամ վերջապէս յաջորդութիւն հաստատել անյապառ:

Մեր թէ այս առաջարկութիւնն, որի անհրաժեշտութիւնը կարծում ենք անվիճելի է, և թէ մեր զիտողութիւնները այդ զազթական հայերի արդի կացութեան վերայ, սակայն բոլորովն սխալ և տարբեր կերպով է հասկացել հնդկահայ գրադէա Պ. Սակիաը, ինչպէս երևում է նորա առ. մեզ ուղղած պատասխանից: Այստեղ մենք կարևոր ենք զանում մէջ բերել Պ. Սակիաի գրութիւնից մի երկու կտորներ, որոնք աւելի քան պարզում են հնդկաբնակ և բիրմանաբնակ հայերի վիճակը և հետևապէս յարուցած կարևոր խնդիրը:

Բայց մենք չենք հասկանում, ի՞նչու Պ. Սակիաը հնդկաբնակ և բիրմանաբնակ հայերի մեր ցոյց տուած 1500 հոգու թիւը սխալ է համարում, այն ինչ ինքն ևս համարեա նոյն թիւն է առաջ բերում, այն է «զումար երկու սեռից 1480» է ցոյց տալիս:

Պ. Սակիաը իր պատասխանի մէջ, պէտք է ասել մեզնից աւելի ևս տխուր զոյներով է նկարագրում այդ զազթական հայերի վիճակը, օրինակ. նա ահա ինչպէս է պատմում հնդկաբնակ և բիրմանաբնակ հայերի արդի կացութիւնը. «որ աւուր ազգային սէրն ու կարեկցութիւնն կ'պաղի, վասն զի

նոր սերունդն Հոլանդալեզու և Անգղիենալեզու՝ ազգային եկեղեցական բովանդակ ծեսերն և արարողութիւնն կարհամարի, և իւրաքանչիւր ոք կ'ջանայ եթէ կարելի է Հոլանդացուցանել և Անգղիացուցանել զինքն: Չափահաս օրիորդներ կ'ջանան իւրեանց հօր խիստ խնայողութեամբ զիզած փարթամութեան կարողութիւնով՝ Հոլանդացուց և Անգղիացուց հետ ամուսնանալ, զո՞վ ևս լինի՝ թէև ի վերջին կարգի մարդիկներէն, չկայ փոյթ, միայն թէ փեսայն Հոլանդացի կամ Անգղիացի լինիցի. զնոյն ևս կ'ջանան մեր մանչերն, և երբեմն ևս կ'ջողն իւրեանց նիւթական կարողութեամբն:

Գալով Մատրասի հայերի զիճակին, Պ. Սակիտ գրում է. «Այժմեան տեղւոյս Հայերն, խիստ մի թշուառ մասն կկազմեն անցեալ փառաւոր բնակիչների, և ըստ մեծի մասին թոշակաւոր են տեղւոյ Որբոց սնտկի և եկեղեցւոյն որոց միացեալ գրամագրւելն կանցանի քան զ800,000 Փրանքս (որ մեր փողով կանէ կէս միլիոն ուղրը), կտակեալ ի բարեկիշատակ ազգայնէրէ: Անցեալ տարի փետր. ամսուամն կրբ շրջագայութեամբ կ'գտնուէինք աստ՝ Պ. Ծատուրն, մի ի հին աւուրց ծերունեաց և տկանատես վկայից անցեալ փառաւոր Հանգամանաց Հայկազունեաց աստ՝ ցաւ ի սիրտ պատմեաց մեզ առ այն զի եթէ ապրուստ սա ազգայնոց չնցէր կախեալ ի սնտկէ Որբոց և եկեղեցւոց Հաստատութիւններէն, շուրջ երկուսուսուսի զի արժամայն ունէին դատեալ ի կրօն և աշուղտ արանալ զապրուսիս իրեանց»: Իսկ մասնաւորապէս Ալիկաթայի հայերի ազգային կրօնական զգացմունքի թուլութիւնը, Պ. Սակիտն այսպէս է բացատրում. «Բանգալայ հայերն մի մեծ փնաս կրեցին նաև անցեալ ազգակործան երկպառակութիւնէն՝ պառաճառաւ Տ. Գրիգորիսի, այն ինչ Էջմիածնայ նուիրակութեան պաշտօնիւ ներկայ կը գտնուէր Ալիկաթայումն. յառաջ քան սոյն հովուական այցելութիւնն, զրեթէ տակաւին չէր ցամաքեալ ազգային սէրն ու կարեկցութիւն աստանօր, իսկ չնորհիւ Տէր Գրիգորիսի ոչ միայն խանգարեցաւ հնդկահայոց խաղաղութիւնն այլ և իւր անեղիսկոյրստայել ըմբացտ արեւ եզնուանայոց նոյա ի կրօնէ: Մենք սոյն ժամանակումն ներկայ էինք Ալիկաթայումն և անշուշտ սոյն ցաւալի երկպառակութեանն տկանատես, յաւէտ չերկարելոյ նպատակաւ մեր վշտա-

ցուցիչ առարկայ, մի ի թղթոց մերժման ի բաց Տէր Պրի-
գորիսի ի Սալիաթայէ, և կ'իթողնեմք ճշմարտասիրաց դատաս-
տանին՝ վճռել թէ Հնդկաստան որչափ պէտս ունի Տէր Պրի-
գորիսի պէս առաջնորդաց» Ինչպէս տեսնում է յարգելի
ընթերցողը, հայ ժողովրդի այդ կարևոր դադթականութեան
վիճակը՝ ազգային — եկեղեցական տեսակէտից խիստ ցաւալի
պատկեր է ներկայացնում, մանաւանդ նորա համար, որ այս
դադթականութիւնը հողերու կառավարութեան կողմից միան-
գամայն լքեալ ու անուշադիր վիճակի է թողած:

Մի տեղ օրինակի համար կատարեալ անտարբերութիւն
ու մոռացկութիւն է տիրում դէպի մայրենի լեզուն ու աղ-
գային եկեղեցին, մի այլ տեղ արհամարհանք դէպի ազգային
աւանդութիւնները ու սովորութիւնները, մի այլ կողմում
չնորհիւ օր օրի վերայ աճող խնամութեանն անդղեացիների
և հոլանդացիների հետ, հայ տաճարներն են մնում առանց
յաճախողների և այսու հանդերձ տեղւոյն դադթականութիւնը
հովուող առաջնորդ Պրիգորիս սրբազանն էլ, ոչ պակաս երկ-
պառակութիւնների դուռ է բաց անում իր ցրուած հօտի
մէջ և այդպիսով պատճառ դառնում նորա անդամներին մի
առ մի հեռանալու մայրենի եկեղեցու դրկից և հետևապէս
հայութիւնից:

Մենք արդէն մեր գրութեան մէջ աւելի ամփոփ ցոյց
էինք սուած ընթերցող հասարակութեանն այդ դադթական
հայերի յոյժ տխուր վիճակը և մասամբ դորա առաջն առ-
նելու համար, ինչպէս արդէն յիշեցինք վերևում, առաջարկած
էինք հնդկաբնակ և բիրմանաբնակ հայերի համար առանձին
առաջնորդութիւն կամ յաջորդութիւն հաստատել անյապաղ:

Մեր այս խօսքերի կամ առաջարկութեան աւթիթով է, որ
հնդկահայ գրագէտը հարկ է համարած մեզ պատասխանելու.
սակայն Պ. Սալիարը զրիչք ձեռքն է առել մեզ պատասխանելու
ոչ թէ նորա համար, որ նա իսկապէս դէմ է այդ մեր առար-
ջակութեանն, այլ տեսնելով Պրիգորիս սրբազանի անհեռատես
հովուութիւնը ի վնաս այդ դադթականների ազգային — եկեղե-
նական շահերին՝ մոռանալով սկզբունքը՝ նա միանգամայն անօ-
գուտ և վնասակար է համարում այդ առաջնորդութիւնը կամ
յաջորդութիւնը սոսկ նորա համար, որ Պարսկաստանի և

Հնդկաստանի ներկայ առաջնորդի օրով այդ դաղթականները աւելի փնասներ են կրել և այսպէս անկարող լինելով մասնաւորը գլխաւոր սկզբունքից ջոկել, Հնդկահայ դրագէտը սոսկ Պրիգորիս սրբազանի փնասակար գործունէութեան պատճառով դէմ է Լջմիածնայ հոգևորականի հովիւ նշանակուելուն, որովհետև նա գրում է, «փորձով զիտեմք զի Լջմիածնայ արծաթածարաւ վարդապետներ և եպիսկոպոսներն անընդունակ են այս պաշտօնին և ըստ սովորութեան յաւել պատճառ կ'ընեն փնասուց քան թէ օգտակարութեանց», ուստի այդ դաղթականների ազգային եկեղեցական պիտոյքը հողալու համար ասում է. «նկատելով մեր զեպիական հանդամանս ընդհանուր Հնդկահայոց և կշռեալ ընդ խորհրդատրեալ առաջնորդութեան կամ յաջորդութեան սոյն ազգայնոց ի Պրն. Պուլլամիրեանց, ըստ մեր կարծեաց անօգուտ և փնասակար համարելի է այդ, որպէս և Տ. Պրիգորիս առաջնորդի հովուական այցելութեամբն փորձ աւեալ եմք, ուստի ի ներքոյ հանդամանաց բաւական և մանաւանդ անփնաս իսկ՝ համարելի է առաքումն ի Հնդիկս, Հմուտ Աստուածաբան վարդապետի մի կամ ի Աոստանդուպոլսոյ Աթուէն և կամ յԵրուսաղէմոյ պատրիարքարանէն ի քարոզութիւն Հնդկահայոց առհասարակ»:

Այստեղ արդէն պարզ երևում է, որ Հնդկահայ դրագէտը այդ դաղթական հայերի համար առանձին առաջնորդութիւն կամ յաջորդութիւն կազմելու դէմ է միայն նորա համար, որ Ս. Լջմիածնից նշանակուած առաջնորդը անկարող է եղել արդարացի նորա վերայ ասծուած յոյսերը և փոխանակ օգուտ բերելու, մեծամեծ փնասներ է առաջացրել:

Անտարակոյս, այստեղ Հնդկահայ դրագէտը թէ չափազանցութիւնների մէջ է ընկնում և թէ խիստ սխալում իր ենթագրութիւնների մէջ:

Նախ ևթէ Պ. Սակիտը ընդունէր կամ չ'ընդունէր Հնդկահայերի համար առաջնորդութեան կամ յաջորդութեան անհրաժեշտութիւնը և միայն քննադատէր Պրիգորիս սրբազանի ազգամիաս վարմունքը, դա այլ խնդիր էր. բայց գլխաւոր սխալը հէնց նորա մէջ է կայանում, որ նա յանձն Պրիգորիս սրբազանի դէմ է առհասարակ Հնդկահայերի համար առաջ-

նորդ կամ յաջորդ նշանակելուն. երկրորդ. նա դէմ է մեր առաջարկութեանն և նորա համար, որ Ս. Լճմիածնայ վարդապետները և եպիսկոպոսները իբր թէ բոլորն էլ «արծաթածարա. են և անընդունակ» Սակաթայում հովուելու 1,500 հոգուց մի հասարակութիւն. զարմանալի գիտողութիւն. միթէ կարելի է մեղադրել մի ամբողջ մարմին, միաբանութիւն ծանր յանցանքների մէջ միմիայն նորա համար, որ այդ մարմնի կամ միաբանութեան անդամներիցը մի երկուսը չեն կարողացել խղճով կատարել իրենց պարտականութիւնն: (Աւելորդ չի լինի յիշել այստեղ, որ Պրիգորիս սրբազանը, որքան զիտենք, թէ և Ս. Լճմիածնից է նշանակուել՝ սակայն նա օաճկաբնակ հայերի հոգևորականներիցն է):

Պ. Սակիս իր պատասխանի մէջ ի միջի այլոց գրում է, որ մենք իբր անձանօթ գոլով հնդկահայերի կացութեանն, անշուշտ չ'գիտենք որ «Հնդկահայերն առհասարակ ուսեալ և կրթեալ գոլով անդասին ի մանկութենէ, ոչ թէ միայն ամենայն մասամբ կզերազանցին Սոսահայոց վարդապետներին, մանաւանդ և Լճմիածնայ Պրիգորիսի պէս եպիսկոպոսաց, այլ և անկարօտ են նոցա առաջնորդութեան իսկ»:

Պ. Կիւրը մենք արդէն յիշեցինք, որ Պ. Սակիսը կամ անուշադրութեամբ է կարգացել մեր յօդուածը կամ թէ սխալ ըմբռնած է մեր գրութիւնն, ինչու որ մենք քաջ ծանօթ լինելով հնդկահայերի վիճակին, Պ. Սակիսի վերև յիշածը արդէն ի նկատի էինք առած. ուստի և «Մանկավարժանոցի» 12 կրեսում 13 տողից սկսած գրած էինք.

Որովհետև այդ կողմը (Հնդկաստան) աւելի ազատ, քաղաքակրթուած երկիր է նկատուած՝ առաջնորդացուն կամ վերջապէս յաջորդացուն լինելու է լեզուադէտ, բարձր բարոյականութեան տէր, ջերմեռանդ, որ իր բոլոր ուշ ու միաբը դարձնելու է ժողովրդի մէջ վառ պահելու կամ աւելի լաւ ասած զարթեցնելու ու զօրացնելու նորա կրօնական—ազգային եռանդը:

Ինչպէս արդէն իրազեկ ընթերցող հասարակութիւնը զիտէ և աւելի ճիշտ և պարզ ատենվում է մեր այս բանահոռական գրուածքից՝ հնդկաբնակ և բիրմանաբնակ հայերի

վիճակը խօսքի բուն նշանակութեամբ ամենաաննախանձելի պատկեր է ներկայացնում:

Մի բան, որ արդէն ամեն մէկի համար անվիճելի փաստ է դարձած, դա այն է, որ այս դաղթականութեան վիճակը ներկայ անյաջող պայմանների մէջ շարունակ ընկնելու վերայ է ազգային-եկեղեցական կեանքի կողմից, և եթէ իրաց այս վիճակին զօրաւոր օգնութեան ձեռք չկարկառուի՝ նոյն իսկ մեր օրերում դռք օր ըստ օրէ ձուլուելով օտարների հետ՝ իրենց աւանդութիւններով և հարստութիւններով հանդերձ՝ եկեղեցիների աւերակներից զատ մի հեռք անգամ չեն թողնիլ իրենց փառաւոր անցեալից, նման Ահաստանի, Եմսդերտամի դաղթական և այլ երկիրների այսօր անհետացած հայերին:

Այսպիսի տխուր խորհրդածութիւնների գալիս ենք և նորա համար, որ այժմ բովանդակ հնդկահայերի մէջ չկան ու չկան գէթ երկու երեք հոգի ոչ նախկին ազգասէրներից, ոչ բարեպաշտ քահանաներից, բանիբուն գործողներից, սրտնցից ամեն մէկը իր ասպարէզում գործելով՝ եկեղեցիներ, հիւանդանոցներ էին կանգնում, մատենադարան, տպարան և լրագրեր հաստատում, ձեմարաններ հիմնում, և բայց այս բոլորը դեռ միջոց էին գտնում մեծ աշխոյժով ու եռանդով ընդհանուր հայութեան մտաւոր և բարոյական խնդիրների վերայ հոգ տանելու:

Իսկ այժմ սոցա փոխարէն հնդկաբնակ հայերի ստուար մեծամասնութիւնը թողած ազգայինը, օտար կրօնի, օտար ազգութեան մէջ է փնտռում իրեն փրկութիւնը:

Նայի քրտինքով աշխատուած փողերով 1821 թուականին մօտ կէս միլիոն ռուբլի զբամազլետով Վալիաթայում Նայիական Ղեմարան է հիմնվում, ուր այժմ հայկական լեզուով գրեթէ ոչինչ չէ աւանդվում. և ի՞նչպէս կարելի է հայ լեզուն աւանդել, երբ այդ տեղ հայ ուսուցիչ անգամ չկայ, այլ բոլորը թոկից փախած անդղիացիներ և այլ օտարազգիներ են:

Ո՞ւր էր, թէ հնդկահայոց Մարգասիրական Ղեմարան հիմնարկողը այժմ գերեզմանից դուրս գար և տեսնէր, որ այդ հայ հիմնարկութիւնում ուսանողները բոլորն էլ օտարներ են և ուր մի քանի հայ երեխայոց մինչև անգամ իրենց Ս. Աւետարցու կրօնը օտար լեզուով է աւանդվում:

Վերջապէս, կարծում ենք, հասել է արդէն ժամանակը, որ հնդկաբնակ և բիրմանաբնակ զժբազդ հայերի վիճակը լուրջ հոգացողութեան առնէ Ս. Լջմիածինը, և որպէս զի սքբա միանգամայն չհեռանան հայութեան միակ կապից— եկեղեցական իշխանութիւնից՝ մեր կարծիքով մնում է մի և եթ ելք. այն է, որ ամենայն հայոց սրբազնագոյն Սաթղիկոսը բարեհաճի կամ բաժանել հնդկաբնակ և բիրմանաբնակ հայերի առաջնորդութիւնը Պարսկաստանի առաջնորդութիւնից կամ թէ վերջապէս այդ գաղթական հայերի համար մի յաջորդութիւն հաստատել անյուպաղ Սալկաթայում, այդ պաշտօնում նշանակելով մի շնորհունակ, խաղաղարար և լիզուազէտ հոգևորական, որը կարող լինի առանց որ և է տարածայնութիւնների այդ գաղթականների ազգային-եկեղեցական վիճակը կարգադրելով հանդերձ՝ զբարոյներ և այլ կրթութեան հիմնարկութիւններ բաց անել:

Մենք մեզ թոյլ ենք տալիս յուսալ, որ Մայր Եթուըզէթ Վահագառ Մակար Սաթղիկոսի օրով լուրջ ուշադրութիւն կգարձնէ իրաց այս արտասուալից վիճակին վերայ, մանաւանդ որ Ս. Լջմիածինը սեպուհ և նուիրական պարտականութիւն ևս ունի այդ գաղթականների այժմեան անտէր ու անտիրական օրերում հսկել և այնպիսի ազգային սեփականութիւնների վերայ, ինչպէս է, ի միջի այլոց, և Սալկաթայում սուրանից հարիւր տարի առաջ Ս. Սազարէթ անունով կառուցուած հայկական հոյակապ սուրբ եկեղեցին իր մի միլիոն ոսկւրի արժողութեամբ անշարժ և շարժական ստացուածքներով, որոնց տարեկան եկամտաները միայն ահազին գումարների ևն հասնում. սակայն որոնց ելեմտական համարատուութիւնը խիստ լուրթեամբ է ընթանում, քանի որ այս անտարբեր հասարակութեան մէջ այս գործերով հետաքրքրուող անգամ չկայ: Աւելորդ չի լինի յիշել ընթերցողին, որ այս տեղ շարունակ երեք քահանայներ են գտնուում և մի երկցփոխ...:

Սիւէն Ղաթիբեանց



ԱՄԵՆԱԳԱՏԻ Տ. Տ. ՅԱՐԻԹԻՆ ԳԱՏՐԻԱՐԷ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԹՈՒՐԻՈՑ

Կոստանդնուպօլսոյ Պատրիարք Յարուժիւն արքեպիսկոպոս յԵհնապետեանը ծնած է Եզդիպոս 1824 թուին: Տղայ հասակից որբ մնալով և ուսման մէջ մեծ եռանդ ցոյց տալով՝ ուղարկուել է Երրուսաղէմ սուրբ Յակովբեանց հռչակաւոր վանքն, ուր ժառանգաւորաց վարժարանի մէջ իր նախնական ուսման շրջանն աւարտելուց յետոյ, գիմած է Պօլիս կատարելագործելու իր ուսումը: Վաստիարակութիւնն լրացնելու փափագով, Յարուժիւն պատրիարքը ուղևորուել է Եւրոպիոյ գլխաւոր կողմերը և մասնաւորապէս Լմբերիկա, ուր բաւական ժամանակ մնալով, պարապել է գիտութիւններով և մասնաւորապէս ուսումնասիրած է վարչական օրէնքները: Կորին ամենապատուութիւնը, երբ իր ուսման ասպարէզը կնքեց, բացի հայերէնից գիտէր նաև թուրքերէն, արաբերէն և անգլիերէն լեզուները. նոյնպէս մեծ հմտութիւն ունէր աստուածաբանութեան մէջ:

Յարուժիւն սրբազան 1850-ին եկեղեցական կարգ ստանալով ձեռնադրուած է վարդապետ. այդ ժամանակ նա ամենքի ուշադրութիւնը գրաւում էր իր պերճախօս և հմտալից քարոզներով:

Եւր ժամանակուայ Յակովբոս պատրիարքը, գնահատելով երիտասարդ կրօնաւորի արժանիքը, 1853 թուին կարգած է նորան պատրիարքական փոխանորդի պաշտօնի մէջ. այս պաշտօնում նա արժանանում է պատրիարքի շնորհակալութեանը և 1854 թուին ծայրագոյն վարդապետի կոչման: Փոխանորդի պաշտօնը Յարուժիւն սրբազանը վարում է մինչև 1857 թուականը, երբ նա արդէն նշանակվում է Խարբերդի ընդարձակ վիճակի առաջնորդ: Փոքր ինչ ժամանակից յետոյ, նորա բացակայութիւնը զգալի լինելով փոխանորդի պաշտօնի մէջ՝ նորից 1859 թուին նա կարգվում է այդ պաշտօնում:

Երբ Բարձր Հայոց վիճակները, որ իրենց աշխարհադրական գիրքով և հայերի բազմամարդութեամբ մեծ կարևորութիւն ունին, թափուր մնացին վիճակաւոր առաջնորդ Վրիգոր եպիսկոպոսի մահուամբ՝ պատրիարքարանը հարկադրուեցաւ իր գործօն պաշտօնեայի աշխատութիւնից զրկուել, և 1859-ին նորան յանձնեց նոյն վիճակի վարչութիւնը:

Յարուժիւն պատրիարք 1860 թուականին գնում է Ս. Լջ:

միածին, ուր Սատթէոս կաթողիկոսից ընդունելով եպիսկոպոսութեան ս. աստիճանը, վերադառնում է իր թեմը:

Որպէս թեմական առաջնորդ, նորընծայ եպիսկոպոսը մեծ ջանք է գործ դնում իր վիճակի բարգաւաճման և կարճ ժամանակում սկսում է բազմաթիւ կրթական և բարեպաշտական հիմնարկութիւնների ձեռնարկել:

Իր առաջին գործն եղաւ 1862 թուին Վարնոյ առաջնորդարանը հոյակապ կերպով վերաշինել. 1865-ին Խարբերդից Սուսիա գաղթող հազարաւոր հայերին համոզելով Վարնոյ սահմաններից իրենց երկիրը վերադարձրեց. Վարնոյ հայոց Ս. Լուսաւորչի վանուց եկեղեցին՝ որ քանդուած էր երկրաշարժից վերաշինեց, մի բարերարի (հանգուցեալ Մակարեան Յակոբ էֆէնտի) մօտ 13,000 ռուբլի ծախսով Վարնոյ խարխուլ վարժարանը նորից վերաշինել տուեց. 1866-ին մօտ 18,000 ռուբլի ծախսելով աղջկանց համար երկայարկ փառաւոր դպրոց շինել տուեց, որ չկար մինչև այն ժամանակ: Վարնոյ թեմի գիւղերի մէջ եկեղեցիներ և վարժարաններ շինել տուեց ու գոցա սեպհական կալուածները վերանորոգեց և վերջապէս 1879-ին Վարնոյ հայոց գերեզմանատան կից մի ընդարձակ և հոյակապ դպրոց կանգնել տուեց, որը առայժմ մեծանուն բարերար Սկրտիչ Սանասարեանցի գիշերօթիկ վարժարանին է յատկացրած:

Յարուժիւն սրբազան իր առաջնորդութեան ժամանակ քանիցս անգամ պատրիարքարանի կողմից որպէս պատուիրակ՝ զանազան վիճակներ է ուղարկուել սեղացիների մէջ ծագած ծանր խնդիրները խաղաղեցնելու և լուծելու, այսպէս նա ուղարկուեցաւ Բղթամար կայսերական քննիչ յանձնաժողովի հետ՝ քննելու Արաբկոս կաթողիկոսի սպանման գործը. Սուշ և Ալան գնաց քննելու տեղացիների խռովութեան պատճառները և այս բոլոր պաշտօնները կատարեց խիստ գոհացուցիչ կերպիւ:


1867ին Տ. Յարուժիւն սրբազան տաճկահայոց կողմից նորից գնաց Սուրբ Լջմիածին ի Տէր հանգուցեալ Գէորդ Գ. կաթողիկոսի օժման հանգիսին ներկայ գտնուելու համար, և այս առթիւ հանգուցեալ կայսր Բոլէքսանդր Բ հաճեցաւ պատուել նորան Ս. Լինայի Լ. կարգի պատուանշանով: Ընն մեծ դժուարութիւնները, որոնց դէմ նորին սրբազնութիւն մաքաւեցաւ իր առաջնորդական պաշտօնավարութեան միջոցին՝ տեղի ունեցան

1877-ին, վերջին ուսումնարանական պատերազմի ժամանակ: Արք
ընակիչները ապրուստի նեղութիւնից և պատերազմի երկիւղից
յուսահատութեան մէջ ընկան՝ Տ. Յարութիւն սրբազան իր հօ-
տին գլուխն անցնելով, նրան միանգամայն հոգի տուեց, կարօ-
տեալներին նպաստ հայթայթեց և վերջապէս պատերազմի բոլոր
տևողութեան ժամանակ տքնելով և աշխատելով՝ ազգը կասկա-
ծանքից և նիւթական ու բարոյական վնասներից վերժ պահեց:
Հայոց առաջնորդի այս ընթացքի պատճառաւ, օգոստոսիստ Սուլ-
թանը այս առթիւ Պ. կարգի օսմանիէ պատուանշան շնորհեց:

Յարութիւն սրբազան այս երկարամեայ բաղմամբաստակ աշխա-
տութիւններից յետոյ ցանկացաւ փոքր ինչ հանգիստ կեանք վա-
րել, ուստի և հրաժարական ուղարկեց Հայոց պատրիարքին, որը
և ընդունեց: Այդ ժամանակ Յարութիւն սրբազան քաշուեցաւ
Արուսաղէմի Ս. Յակովբեանց վանքը, ուր կարծում էր որ պիտի
կարենար վանական կեանքի անդորրութեան մէջ անցկացնել իր
մնացեալ կեանքը, և մեծ եռանդով պարապում էր նոյն վանքի
բարգաւաճման համար, նուիրելով իր մեծաքանակ գոյքն Ս. Աթո-
սին: Սակայն ինչպէս դէպքերը ցոյց տուին, վերջացած էր իր
պաշտօնավարութեան ասպարէզը և իրեն վերապահուած էին պա-
տրիարքական երկու աթոռներ:

Արք բարեյիշատակ Արքապատրիարքի մահուամբ Պօլսոյ
պատրիարքական աթոռը թափուր մնաց՝ տաճկահայերը ի նկատի
առնելով Յարութիւն սրբազանի փորձառութիւնն, անխոնջ գոր-
ծունէութիւնը, վարչական տաղանդը և տէրութեան առաջ վայել-
ած մեծ վստահութիւնը՝ իրենց ակնարկը նորա վերայ յառեցին.
այսպէս Հայոց երեսփոխանական ժողովը միաձայն քուէով 1885
թուի յունվար ամսին ընտրեց նորին ամենապատուութիւնը թուր-
քիոյ Հայոց պատրիարք: () օգոստոսիստ Սուլթանն իր կայսերական
իրատէով հաստատելով այս ընտրութիւնը՝ պատուեց նորընտիր
պատրիարքը Սէճիտէի շքանշանով:

Անցեալ տարու սկզբները՝ երբ ի Տէր հանգեաւ Արուսաղէմի
Ասայի պատրիարքը՝ Արքիսփոխական ժողովը դարձեալ Յարութիւն
սրբազանին ընտրեց գահակալ առաքելական աթոռոյն սրբոյ Արու-
սաղէմի, ուր պէտք է գնայ բազմելու մի քանի կարևոր գործեր
կարգադրելուց յետոյ, որոնք նորա ներկայութեանը պէտք ունին
Պօլսում:





ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍՈՍ ՆԱՐԻՅՑ

ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍ ԵԱՐԻՔՑ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Խորէն Արքեպիսկոպոս Վարձէյ ծնուած է Կոստանդնուպօլիս Պերա քաղաքամասում 1837 թուին. մկրտութեան անունն էր Ջիւան, որ ընդունուած էր իր ազգատոհմի մէջ պատմական հին յիշատակների վերայ հիմնուած, ինչպէս որ նոյն աւանդութիւններով միւս եղբօր մկրտութեան անունն էր Վուլիգոն:

1843 թուին ուղարկած են Ալեքսեոսիկ. հայրը կ'ուզէր ուղարկել մանուկը Պետերբուրգի զինուորական դպրոցը, բայց որովհետև մայրը կրօնով հռոմէական էր և հրապուրուած Մխիթարեան վարդապետներից, ուստի և նորա թախանձանքը յաղթող եղաւ. հօր կամքին: Ինչ ասել է մօր ազդեցութիւն. այնչափ առատ ձիրքերով օժտուած մի մանուկ, մտնելով զինուորական ասպարէզ ո՛վ գիտէ որ մեծ զօրավարի համբաւը պիտի վաստակէր, որոյ փոխարէն նա դառաւ հայ եպիսկոպոս անվերջանալի դառնութեանց խաչը միայն կրելու համար... Ի դէպ է յիշել այստեղ, որ հօր անունը Վեորդ Եռուստֆ էր, որդի Եռուստֆ Մօրի Վարձէյի, որ ծնած էր Եգիպտոս 1790 թուականին: Երբ զարբաղցի Սուրատձէյ մամլիւկների գլուխ դարձաւ, Եռուստֆ Մօրի մեծ պաշտօն ստացաւ նորա մօտ: Եւր ժամանակ էր որ նա ստացաւ արարական Վարձէյ անունը Լուսինեանի բառական թարգմանութեամբ, որ Սուրատձէյ յարմար չէր տեսել պահելու իսլամական տարրի մէջ: Եւանդութիւնը պատմում է, որ սօքա երկուսը, Սուրատձէյ և Վարձէյ երազ տեսած են ինքնագլուխ լինելու, որով մէկը տեսած է զինքը իբր տէր Եգիպտոսի և Սուրիոյ, իսկ միւսը թագաւոր Կիլիկիոյ: Եւր ժամանակներն էր որ յաղթական Բօնապարտը ունեցաւ Պիրամիդների նշանաւոր ճակատամարտը, որի մէջ վերաւորուեցան Սուրատձէյ և նորա զօրավար Վարձէյ ու գերի ընկան գաղղիացոց ձեռքը:

Վապոլէոն կ'իմանայ թէ ինչ ազգից են իր գերիները և կ'մտածէ օգտուիլ Լուսինեանից Կիլիկեան թագաւորութիւնը վերականգնելու համար, որի գաղափարը արդէն ծնած էր նորա մտքի մէջ պատնէշ դնելու համար անգլիացոց դէպի շնդկաստան:

Վապուլէոն անակնկալ կ'զառնայ Պրանսիա, թողնելով իր տեղը
Ալբերեր զօրավարը, որը կ'սպանուի մի մահամետական ասորիի ձեռ-
քով, որից կ'սպանուի և Վար-Վէյ, ինչպէս արդէն կուսակից
Պրանսիացոց: (L'histoire de l'Egypte par vicomte de Vaujeanis*).

Աւրեմն, փոքրիկ Զ իւանը մօտ 7 տարեկան կ'ուղարկուի
Ս Ենեստիկ Սիսիթարեան ճեմարանը, ուր ուսմանց մէջ յառաջադի-
մելու կողմից, ինչպէս յայտնի է ճեմարանի արձանագրութիւննե-
րից, ամեն տարի առաջին մրցանակը կ'ստանայ: Վոյնպէս առա-
ջին մրցանակը կ'ստանայ աւարտելու ժամանակ աստուածաբանա-
կան գիտութեանց մէջ, որից յետ կ'ձեռնագրուի քահանայ 1855
թուին և իսկոյն կ'նշանակուի քարտուղար Վէորդ Հիւրմիւզ
աբբաճօր, կարգուելով միանգամայն տնօրէն («Նազմավէպի») իմրա-
գրութեան:

1857 թուին Վար-Վէյ հրաժարուեցաւ Ս Ենեստիկի միաբանու-
թիւնից Կ. Պօլսի Յակոբոս Պատրիարքի հրաւիրանօք և նշանակուե-
ցաւ ուսումնապետ Փարիզի Հայկազեան վարժարանի, որի տնօրէ-
նութիւնը կ'վարէին արդէն Վարրիէլ Լոյվազովսկի, Սարգիս Թէո-
դօրեան և նորա եղբայր Լբրոսիոս, որոնք արդէն երեք տարի
առաջ էին ձգած Ս Ենեստիկի միաբանութիւնը: Լոյստեղ պէտք է
ասած, որ Խորէնին շատ էին համոզում չ'թողնել Ս Ենեստիկը
երկու Հիւրմիւզեան եպիսկոպոսներ՝ Վէորդ և Եղուարդ, նոյնպէս
և հայր Լբրսէն Բագրատունին, որի հեղինակութեանց մէջ երի-
տասարդ քահանան գործօն մաս ունէր: Խորէնը անդրդուելի
մնաց, ձգեց Ս Ենեստիկը և դնաց Փարիզ վերոյիշեալ ականաւոր
խմբին միանալու, որոնց հետ և մնաց մինչև 1860 թուականը,
երբ բռնի կերպով վարժարանը անցաւ հռոմէականաց ձեռքը: Սորանից
յետոյ նա կանչուեցաւ Կ. Պօլսի այն ժամանակուայ Վէորդ Պատ-
րիարքի կողմից (վերջը Վէորդ կաթողիկոս) և յետոյ անցաւ
Խորիմ Խալիբեան դպրոց, որից յետոյ և սկսվում է նորա հետեւեալ
հասարակական արդիւնաշահ գործունէութիւնը:



*) Վապուլէոնի այս պլանները յիշատակվում են նորա թիւղարութեամբ գրուած
Memoriale de St. Heleneի մէջ:

ԱԶԳԱՅԻՆ ՄԻ ՄԵԾ ԳՈՐԾԱԻՈՐ

Չայ ազգի քառասունգարեան կեանքը մի նշանաւոր պատմական երևոյթ է, որի ուսումնասիրելը և բացատրելը դեռ ո՛չ ոքից չը ձեռնարկուած մի խնդիր է մնացած: Չայ ուսումնականաց դասը մինչև այսօր չը հանեց իր միջից մի հետազօտող, որը բազմադիմի գիտնական քննադատութեան բովից անցնելով ազգի տարեգրութեանց հատորները, դուրս բերէր նրանցից մեր անցեալ կեանքի և քաղաքակրթութեան յատկանիշները: Այո՛, մեր բազմադարեան անցեալի գիտակցական պատմութիւնը դեռ մինչև հիմա փայլում է կատարեալ բացակայութեամբ:

Բայց որո՞նք էլ որ լինին հայութիւնը պահպանած ազգային առանձնայատկութիւններն, որո՞նք էլ որ լինին մեր հասարակային և քաղաքական անցեալի յատկանիշները, ի՞նչ ընդհանուր ուժերի և բարեմասնութիւնների շնորհիւ էլ հայի անունը չորս հազար տարի յարատեւած լինի աշխարհում, այսու հանդերձ մեր այդ զարմանալի յարատեւութեան մէջ փոքր դեր չեն ունեցած առանձին մարդիկ, որոնց տաղանդի և տոհմնութեան ուժը շատ անգամ կարողացել են նոյնչափ զօրաւոր նեցուկ լինել ազգի պահպանման վերաբերմամբ, որչափ քաջամարտիկ բանակների և անձնագոհ սպարապետների արիւնը: Բայց դու տես թէ՛ այդ տեսակ անձանց անգամ յիշատակարաններն, կենսագրութիւններն և պատկերներն նոյնպէս փայլում են մեր գրականութեան մէջ դարձեալ իրանց բացակայութեամբ...:

Չայոց ազգը՝ մինչև մեր օրերն իսկ՝ չունէ հետաքրքրութիւն՝ ո՛չ միայն դէպի որ և է հին հեղինակների կենսագրական յիշատակները, այլ և շարունակում է մոռացկոտութեամբ վերաբերուիլ դէպի այն գործիչներն ևս, որոնց գործունէութիւնը, այնչափ ճիգերով և զոհարերութիւններով, եթէ օտարների մէջ անցնէր, նրանց հրապուրիչ կենսագրութիւններն ժողովուրդային ընթերցանութեան ամենասիրած գրքերը կը լինէին, եթէ չասենք աւելին:

Պատկանելի անձանց յարգը մենք չենք ճանաչում: Այդպիսի հանգամանքը տխուր մտածութիւններ է ներշնչում մարդուս: Մեր է այն վայրկեանների նկարագիրը, որոնց մէջ Սուրատ և Աղարեան՝ ազգաշէն տաճարների առաջին քարերն են նուիրագործում...:

Չը կան և չը կան...:

Մինչդեռ իւրաքանչիւրը այս մարդկանցից իր սիրտը, միտքը և ունեցած գրամագլուխը լիովին ազգին նուիրելով, կարողացած է մի մի զօրաւոր սիւն կանգնել այն խարիուլած շինութեան, որի տխուր օրինակն է պատկերացրել հայութիւնը հինգ վեց դարերի ընթացքում:

Եւ որպիսի հրահանգիչ էջեր պիտի ունենային նրանց կենսագրութիւնները... Ա՛րջապէս դէթ այժմ հարկաւոր է պարապել այդ գործով:

Շայ երիտասարդութեանն ենք ահա՛ նուիրում է մի քանի էջեր այնպիսի մի վաստակաւորի կեանքից, որի բովանդակ կեանքը եկեղեցու պ սշտպանութեան և ազգային գործունէութեան մէջ է մաշուած:

I.

Շայ ազգի սթափման, նրա մտաւոր ու բարոյական յառաջադիմութեան գործի մէջ, նրա ընկած անունն ու պատիւը օտարների մէջ փայլեցնելու և վերականգնելու կողմից, հայ եկեղեցու ու եկեղեցականաց յարգն ու վարկը օտար նախապաշարմանց և թշնամական յարձակմանց դէմ պաշտպանելու նկատմամբ զիրը, խօսքը ու գործը ազգաշահ ասպարեզների մէջ՝ միակերպ յաջողութեամբ զուգաւորելու վերաբերմամբ՝ դժուար, խիստ դժուար կը լինի անուանել դէթ երկու երեք անհատ ներկայ դարիս համայն հայ գործողների մէջ, որոնք կարողանային դիւրութեամբ մրցիլ մեծահանձար հեղինակի, թարգմանչի, բանաստեղծի, աստուածաբանի, լեզուագէտի, հոետորի ու վեղարակիր-դիւանագէտի հետ, որով յայտնի է հայ և եւրոպայի աշխարհին Ի՛նչիքթաշի հռչակաւոր արքեպիսկոպոս Խորէն Նոր-Ի՛նչ Առսինեան, որի վրայ պիտի լինի մեր խօսքը:

Եթէ հայր ու զաւակ Պատկանեաններ ու Ի՛նչիքթաշիան

ազգի թախիծը կը ցրուեն, երիտասարդութեան սիրտը կը կազ-
դուրեն, հոգին կամրապնդեն, եթէ Վազարեան, Մշտարակեցին
և Վէորդ Վ. դաստիարակութեան կոթողներով կ'անմահանան, ե-
թէ Մբովեանց և Վազարեանց նոր գրականութեան սիւները կը
դնեն, ապագան կը բանան, յաղթանակը կաւետեն, եթէ Մովսի-
զովսկի և Մլիշան մատենագրական ճոխ յիշատակներով կը փա-
ռաւորուին, եթէ Սամուրեան, Իաֆֆի և այլք կենդանի լեզուի
զարգացումը կը յառաջացնեն, ճաշակը կազնուացնեն, եթէ, վեր-
ջապէս, Վ. Պատկանեան և Նմին հին հայութեամբ օտարները կը
հիացնեն, — մեր ազգային գործաւորը իւր հսկայական մասն է
բերել և ամեն իսկ ասպարէզի մէջ:

* * *

Սուրբատեան-Հայկազեան և Խալիբեան սերմնարանների մէջ
եռանդ ու աւիւնով համակուած ստուարաթիւ սաների անուան
ցուցակը այստեղ հարկ չը կայ մէջ բերելու, հարկ չը կայ նոյն-
պէս և հաստատելու թէ՛ արդիւնաբեր կեանքի ու գործունէու-
թեան կողմից մինչև մեր օրերն իսկ հայկական ասպարէզում յայտ-
նուածներն նրանց տսկուն և ժրաջան սաներն են եղել:

Իայց ո՞ւր է պատճառը այն հետաքրքրական երևոյթի, որ
վերոյիշեալ վարժարաններն, իրանց գոյութեան բաղադրական
կարճատեւութեան հետ միատեղ, անձնուէր պաշտօնեայներով ա-
մենայն իրաւամբ մի նոր դարապլուս են դցած արդի ընդհանուր
շարժման մէջ: Սրա մեկնութիւնը թողած են մեզ մեծավաստակ
Թէոդորեան և խորիմաստ Մովսիզովսկի. համամարդկային ազգի
հոգին ստրկացած հայ ժողովրդի սերունդներին ներշնչելու հա-
մար ուսման տաճարի մէջ Փարիզում տնօրէնի և դաստիարակի
պարտքերը ստանձնելով, երկու լուսաշաւիղ կարապետներ կանգ-
նեցրին ամբիոնի վրայ մի գեղատիպ, դեռահաս ու բոցաշունչ կը-
րօնական, ասելով նրան. «վարդապետ, մեր դասի մէջ քո կուրծ-
քի տակն է միայն այն սիրտը, որն իր խորքում հերիք ուժ ու-
նէ ներկայ և ապագայ սերունդները ոգևորելու համար: Մեն
գիտութեանց հոգը մեզ ձգիր, աւանդիր հայ մանկութեան սոսկ
մի բան, որ մեզ համար բոլոր գիտութեանց արժէքն ունէ և
բովանդակ աշխարհի դինը, դա՛ հայ լեզուն է, հայոց անցեալն,
որոնց հրահանգելու շնորհը դու միայն կը կրես...»:

Թէոդորեան և Մովսէսեան վարդապետներէ հետ դպրոցական այլ և այլ հոգսեր իր ուսերի վրայ յօժարակամ կրելով, Խորէն վարդապետը ժամանակ և տրամադրութիւն է գտնում «Սասնաց Մղաւնու» խմբագրութիւնը ևս անել ու նորա էջերը իր խանդավառ տողերով զարդարել: Դամանակ ու տրամադրութիւն է գտնում Մամարթինի վսեմ երկերը հայկականի վերածելու: Պէտք ու պարտք է զգում գիտնականաց շրջանները մտնելու, իր անբաղդ հայրենակիցների նսեմ համբաւը վերականգնելու և նըրանց ապագայ մեծ գատը նախապատրաստելու համար, այն դատը, որին ճիշդ քսան տարի յետոյ վիճակուեցաւ նախախնամութիւնից հէնց նոյն անձն ունենալ իր բարեխօս և Սան-Ստեֆանօի բանակի մէջ, և Պետերբուրգի արքունեաց:

Օտար դաւերի և հայ մեծատունների շնորհիւ Ներսէս Մի գուրգուրած արիւնքան վարդապետների աշխոյժը Փարիզ ցրտանալով, Տաւրիզի հիւրընկալ արեւրում կրկին հրահուրուեցաւ: Մովսէսեան խօսուն քնարը, նոյն քաղցրաբարբառ Խորէն վարդապետը այստեղ ևս փութաց գտնելու՝ ներշնչուելու և ներշնչելու ասպարէզ: Տեսնելով իր ամբիոնի շուրջը Ղրիմի և Կովկասի հեռուոր խորշերից ժողովուած թըրքախօս, վրացախօս հայարիւն մանուկներ, նա չը կարողացաւ շատանալ լոկ սովորական դասախօսութեան չափով, այլ ազգի պատմութիւնը և վեհապանծ գիւցազուններն մտադրաւ բանաստեղծութեան վերածելով, կենդանի պատկերների և բեմական ներկայացումների մէջ հանդէս բերելով, սկսեց խօսացնել զգայուն մանուկների հետ այն կենդանի ձայնով, այն ազգու գէմբերով, որով կը խօսէր եղբրական վայրկենի մէջ բանտամաշ Մըշակ իր անձնուէր Վրաստամատի հետ, կամ արիւնաքամ Օւարմայր իր հաւատարիմ նժոյգի առաջընկած:

* * *

Վանի որ Խալիբեան դպրոցի մէջ հայկական գիտակցութիւնը մրրիկի նման կը յուզուէր, Պօլսի ազգայինների մէջ մի ուրիշ մրրիկ կը տիրէր, մրրիկ՝ որի բորբոքայոյզ պտոյտների մէջ խեղդամահ կը լինէր ամեն սուրբ ու վսեմ զգացում՝ և՛ սէր, և՛ եղբայրութիւն, և՛ կապ: 1860 թուականը պօլսահայոց հասարա-

կային կենաց մէջ անմոռանալի տաղնապանների տարին կը համարուի. սահմանադրական կենքի երկունքն էր այն տարին, ազատականների ու ամիրանների մաքաւմանց ամենասաստիկ ժամանակը: Աղբայրը՝ եղբօր, որդին՝ հօր, ազգականը՝ ազգականի դէմ էր դաւադրում: Պօլսի թաղերը սաւառնում էր երկպառակուհի ստուածուհին ու խողտում մեր ազգայինների կիրքերը. այդ նենգապատիր չքնաղի խնձորը առատ հող էր գտել իր սերմերի համար: Աւ իրօք, հարկաւոր է ճշմարտութիւն տալ նրան. ընտանիք և արթարանք ամեն վայրկեան կուռի ու նախատանաց թատր էին ներկայացնում: Սուրբերի տօներն անգամ եկեղեցեաց մէջ ծեծերով ու անարգալից տեսարաններով էին հռչակվում: Իսկ եթէ հաշտութեան հրեշտակը մերթ ընդ մերթ այս ու այն պարագլխի աչքին երևալով, սիրոյ ու խաղաղութեան զօրջը կը պարզէր, նոյն ժամայն չարագրգիւ կրքերը՝ նոր ուժով բորբոքած՝ անհնարին կանէին հաշտութեան որ և է կարելիութիւնը, համաձայնութեան որ և է միտք: Աւ ինչպէս կարելի էր հաշտութիւնը, երբ հողեւոր հայրերի իսկ քարոզները կուսակցական անէծքներով կը շնչէին, պատրիարքների անգամ ձայնը ցասման և ստեղծութեան շեշտերով կորոշուէր:

() Գտուելով ազգին քայքայուած բարոյական վիճակից, եկեղեցու և հայութեան թշնամիները սոված գայլերի նման անտէր փարախի վրայ յարձակուելով, ճիգ կը թափէին վերջին մահարեր հարուածը հասցնել մեզ: Անողոք թշնամիների մէջ Հասունը երկրորդական տեղ էր բռնում. նրա ներշնչմամբ ոգի առած հոռմէադաւան Քարթրջեան վարդապետը հրաւէր կանչելով հայ եկեղեցու ներկայացուցիչներին, հրապարակ դրաւ մի եղուրթահիւս գիրք, որի մէջ ամփոփած թէղիսներով՝ սպառնում էր Առսաւորչական եկեղեցու ամեն սրբութիւնները «հակասութեանց ու մոլորութեանց» տակ ջախջախել: Շարտար և յախուռն գատափետութեանց տակ ընկճուած, հայ կղերը մնացել էր զլուին ի կորլուութեան մէջ:

Ամբողջովին կլանուած Եսալիբեան դպրոցում ստանձնած պարտաւորութիւններով, հայութեան քարոզիչը թէպէտ միջոց չունէր աչքը մինչև թէոդոսիայի քարափը լուացող ծովի հորիզոնը վեր բարձրացնելու, բայց իր հարազատ քաղաքից իրան հասնող բովալից լուրերը, սրտի մէջ նոր հրաբուրդի վառելով,

Տրաւէր կը կարգային իր ջանից մի մասն էլ բազմահայ մայրաքաղաքի տազնապններին նուիրել:

Վերսից գրգող զգացման պահանջին հնազանդուելով, հայր խորէնը ամառնային արձակուրդներից շահուելով, մի պարզ առաւօտ նաւ է նստում Պոլիս սլանալու:

* * *

Պոլսի բնութիւնը իր շքեղութեան մէջն էր. Տօսֆօրի գեղածիճաղ ափերը ընդունակ են, ասում են, սգւորի անգամ վիշտը ամոքելու, բայց մեր բանաստեղծի սիրտը, գրախտի հրապոյրներով պատած, անդունդ էր կրում իր մէջ... Այրա սիրած ծննդավայրը, հայ ազգի մտաւոր բարոյական զօրութեան գլխաւոր կենտրոնը, կործանիչ պառակտումների օրօրան էր դառած:

Խորէն վարդապետը Պերացի լինելով, նախ այս թաղի ազգապետներից պիտի պատուէր, պատարագիչ լինելու և քարոզ խօսելու հրաւերը ընդունելով:

Սուրբ Խաչի տօն օրն էր: Բազմութեան շատութիւնից Ս. Երրորդութեան եկեղեցւոյ մէջ ասեղ ընկնելու տեղ չը կար: Բայց ի՞նչ բազմութիւն էր դա. աղօթասէրների^օ և կրօնապաշտների^օ, կամ սիրոյ ու խաղաղութեան բարեկամների^օ, թէ՛ ո՛վ գիտէ՛ ի՞նչ գրգռիչներից թելադրուած խաժամուժ ամբոխի... այո՛, մեծագոյն մասամբ գոհճիկ ամբոխն էր եկեղեցին լցնողը, բայց միայն խորէն վարդապետը տեսնելու և նրա քարոզը լսելու փափաքը չէր նրան աղօթարան քշողը, այլ և մի շարժառիթ, որ ժողովրդի հիւանդոտ տրամադրութեան ամենալաւ արտայայտութիւնը կարող էր համարուիլ: Սրճարաններում տեղի ունեցած կուսակցական ընդհարումները հանրական և հանդիսաւոր ճակատամարտով պատկելու համար, երկու մաքառող կողմն էլ որոշած էին եկեղեցու մէջ փորձել վերջնական յաղթանակի տխուր փորձը. ուստի փոկերով ու բիրերով զինուած սուպո ջրանկիւրների խմբեր վարձելով, պատրաստել էին եկեղեցու մէջ՝ սրբազան արարողութիւնը աւարտածին պէս, իսկոյն և եթ սկսել տալու վրիժառուութեան վայրագ տեսարանները, որոնց միջամտելու ու դէմ դնելու վերաբերմամբ եկեղեցու սեամբ անբռնաբարելի էր տաճիկ ոստիկանների համար:

Սոսկալի՛ այլափոխում՝ հայի ականգական աստուածավախու-
թեան...:

Վարողչի մտքով բնաւ չէր անցնիլ, որ իր սիրեցեալ հայ-
րենակիցների կրից բռնութիւնը Մատուծու տաճարի սրբութիւնը
անգամ արհամարհելու կուրութեան կարող էր հասցնել նրանց...
ըստ որում խոսվարարների գիււային մտադրութիւնը ամենեւին չա-
կնկալելով, նա որոշած էր զուտ կրօնական և չէզոք բնաւորու-
թեամբ մի քարող խօսիլ, որի մէջ օրուայ կծու խնդիրը ոչ մի
բառով չը պիտի շոշափուէր:

Սեղան բարձրանալու հաղիւ մի քանի բոպէ էր մնացել, երբ
քահանան՝ ահի գողով բռնուած՝ կոչեց. «հայր սուրբ, արիւնա-
հեղ կռիւը պայթելու վրայ է, թէ կարող ես՝ մի ճար՝ եթէ ոչ՝
շտապենք գէպի դուրս», ծանր ու վճռողական վայրկեան էր քարող-
չի անցրածը: Տանուն Մատուծոյ և կրօնի արտասանած խօսքը,
կամ՝ չեղած տեսարանի բացման նշանակը պիտի լինէր, կամ՝
մոլեգնագոյն կրքերի փոթորիկը պիտի կասեցնէր: Մայց միակ
մի հոգու, մի հաղիւ չափահաս մարդու շունչը ի՞նչպէս պիտի
կարողանար ներգործել դարերի խրատներից անգամ չողքուած
եղբայրատեսաց սրտերի վրայ...: Մհա հէնց այսպիսի մեծա-
խորհուրդ բոպէների մէջ են միայն որոշվում եզակի ուժերը սո-
վորական թուլութիւններից: Բացառիկ ձիրքերով օժտուած էակ-
ների մէջ արդարև մի անբացադրելի կարողութիւն կայ, որի նը-
մանութիւնը կարելի է պատկերացնել այն ահեղավէժ հեղեղ-
ներին, որոնք, երկնամերձ գագաթների վրայ սահող ամպերից
ծնելով, գալիս են երբեմն ու ահուելի գղրղմամբ պատեր և վիթ-
խարի քարեր գլորում: Աուրծքի միջից բխած այսպիսի հոգեշունչ
հեղեղներ հոսած են սոսկ Աիկերոնների բերանից, որոնց խօսքը
գերբնական ազդեցութեամբ խաղաղացրած է մարդկանց կատա-
ղութեանց այնպիսի ալիքներ, որոնց գէմ անզուր են գտնուած
լէգէոնների անգամ տէգերը...:

Մարդկային բարբառի գեր ի վեր ազդեցութեան այսպիսի
օրինակներից մէկը իր վրայ փայլեցրեց Այորէն վարդապետը, հա-
զարաւոր սրտերի մէջ գիզուած անսաստ մրրիկը՝ յանպատրաստից
խօսած քարոզով՝ սիրոյ և հաշտութեան քաղցրիկ զեփիւռի փո-
խելով: Արչափ անհնարին է դիւթիչ երգի և երաժշտութեան
գործած տպաւորութիւնը ամեն նրբութիւններով արտայայտել,

նոյնքան դժուար է մի առ մի գնել այստեղ այն օրուայ քարոզը: Խորհուրթիւնը այն է միայն, որ Խորէն վարդապետը տաղանդաւոր գրագիտի անունով առաջին անգամ քարոզչի ամբիոնը բարձրանալով, իջաւ նրանից աննման ճարտասանի շնորհք ցոյց տալով: Ըսն ձեռքերը, որք կառափներ ջարդելու ամեհի գործողութեան էին պատրաստուել, այժմ՝ երկիւղած ակնածանօք հայր սուրբի փէշերը երեսներին քսելով՝ նրանից թողութիւն էին ինդրում:

Ազգային քաջագործութեան այսպիսի մի յաղթանակով արիացած, օրուայ վեղարակիր դիւցազը իր իսկական դերը գտաւ. այցելելով Պօլսի բոլոր թաղերը, նպատակ ընտրեց նա հաշտութեան հոգին ամենուրեք տարածելու: Ըմեն սեղ, ուր միայն կերուար, Պերայի զմայլումները կը նորոգուէին...:

Ազգաւէր երկպառակութեանց բորբոքը զգալապէս շիջուցանելուց յետ, հայր Խորէնը հրաժեշտ է տալիս Պօլսին, Վաթրջեանի հաշիւներն էլ հետևեալ տարուան թողնելով:

* * *

Ուշքը ու միտքը զպրոցի զբաղմանց մէջ, Խորէն վարդապետը բաւական երկար ժամանակ չը կարողացաւ թէոգոսիայից դուրս գնալ: Մինչդեռ Պօլսի գրագիտական հրապարակի վրայ Վաթրջեանը շարունակում էր միշտ անյաղթ բոյնարի գեր խաղալ: Ազդուներին յատուկ նենգամտութեամբ՝ այս դաւաճանը, ձեռնարկելով եղծել ու աղաւաղել Հայաստանեայց եկեղեցւոյ ամեն անխախտ ճշմարտութիւնները, այլ և այլ թերուս անձինքների յօրինած քրիստոնէականները խտագոյն և չարամիտ քննադատութեան ենթարկելով, նրանց արած բացատրութիւնների վրայ, ինչպէս վերը ասացինք, մի ամբողջ հատոր էր կազմել, որով տքնում էր ապացուցանելու թէ՛ այդ թերուս ուսուցիչների արած շիտթութիւններն «բուն Հայաստանեայց եկեղեցու ունեցած մոլորութիւններն են»!!!:

Որչափ էլ բացայայտ լինէր ոխերիմ թշնամիների բռնած ճանապարհի ծուռութիւնը, բայց ճարտար կապր-խաթիկայով հիւսած դատապարտութիւններն ջնջելու կարողութիւնը հայ կրօնաւորների ուժից և յաւակնութիւնից վեր լինելով, թողել էր հայ ժողովուրդը թերահաւատութեան յուսաբեկ ծփանաց մէջ: Հոռոմայ

վամպիրի ճանկից ազատուելու որոշմամբ՝ Մխիթար Սեբաստացու ուխտը արհամարհած՝ հայրենասերի համար Վաթրջեան վարդապետի հրաւերը վաղուց բաղձացեալ մի առիթ էր, որով աւելի պիտի լուծէր նա իր վրէժը Պրօպագանտայի հոգին կրող բոլոր ազգադուժ ապիրատներէից, մանաւանդ որ այդ ժամանակները ՀԱՅ կոչուելու պարտաւորութիւնը մեծ մասամբ պայմանաւորուած էր Սահակի և Սեբորքի ճանաչած եկեղեցուն հաւատարիմ մնալու պայմանից: Ուստի Վաթրջեանի գայթակղութեանց տարածումը ուրիշ բան չէր՝ բացի մի քանի հաղար հոգի ևս Փրանկուժեան գիրկը գցելը...:

* * *

Խորէն վարդապետը կարողացաւ վերջապէս նաև նստիլ դէպի Պօլիս գնալու: Իր նպատակին արագութեամբ մօտենալով, այնպիսի կորովով էր նա լցուած, որ կարող էր միայն ունենալ ամպերի բարձրութիւնից դէպի վայր սլացող արծիւը, երբ աչքերը մի կէտի վրայ յառած սլաքի պէս կտրում է նա օդը՝ մի հարուածով պատառ պատառ անելու գողութեան վարժուած այն բաղէն, որ հաւկիթներ և խեղճուկ հաւի ձագուկներ յափշտակելով կապրէ: Պէտք է այն ևս դիտած, որ բացի անհաստական համակրութիւն և գիտնական համոզում դէպի ազատամիտ եկեղեցու վարդապետութեան կատարելութիւնները, Խորէն վարդապետը, Հռոմայ դէմ դրօշակ պարզած իր միւս ընկերների հետ, Պրօպագանտայի դէմ մաքառելու մի բնական հակում ևս ունէր, որը կապ ունէր հայութեան հոգու այն յատկանիշի հետ, որով չափազանց ծանրութեան տակ գեր ի վեր ճնշման դիմանալով, նա բնաւ չէ կորցնում իր ուրոյնութեան կերպարանքը, այլ սահմանը անցածին պէս՝ նոյնպէս գեր ի վեր դիմադրական ուժով ճնշումը իր վրայից դէն մղելով, ջլածիգ կառուցուի նման դարձեալ իր յատուկ չափն ու ձևն է մտնում: Թէոդորեանի, Մովսէսի և Խորէնի բողոքալից բաժանումը Մխիթարեան ուխտից վերոյիջեալ որպիսութեան մի պերճ ապացոյցն է: Այլ յիրաւի, յայտնի է, որ Մխիթար Սեբաստացի մեծ հայր և հայասերը իր ազգի ու հայրենիքի ամենաթշուառ օրերում՝ գլուխ ծռելով Հռոմայ պապերի ամենակարող իշխանութեան առաջ՝ բնաւ չը գիջաւ ներանց պարզ գերիշխանութիւնից դէն ուրիշ իշխանութիւն և հե-

ղինակութիւն ճանաչել իր հիմնած Ուխտի և «ընդունած» կաթողիկոսութեան վրայ: Իսկ այդ չափի զոհողութիւնն էլ եթէ արեց, քաջատեղեակ լինելով Հայաստանեայց պաշտահոգի եկեղեցու առաւելութիւնները ետական ու բունակալ կաթողիկոսութեան վրայ, այդ էլ այն վեհ ազգասիրութեան զոհն էր, որով կը տենչար՝ Աշքուպայի լուսաւոր և մարդասէր կենտրոններից մէկում ապաստանած, կենսականութեան և կազդուրման պաշար մատակարարէր իր ջլատուած ու ջախջախուած հայրենիքին: Ա՛նենտիկը, որի դոժերի դարևոր բարեկամութիւններն Ուլուբինեան թագակիրների հետ և հայերին ու Կիլիկիայի վաճառաշահութեան պարգևած լայն առանձնաշնորհութիւններն սիրագորով խոր յիշատակներով թողնելով հայ աւանդութեանց մէջ, սեբաստացի աբեղայի վսեմ նպատակի համար այն ազգաւանդ և արգաւանդ վայրը պիտի լինէր, որտեղից նրա ուխտը աւելի յաջողութեամբ պիտի կարողանար՝ հայազգի հարուստ անցեալը քրիստոնեայ աշխարհի մէջ հրուշակելու, ինչպէս և հայ եկեղեցու ու ժողովրդի հարազատ յատկանիշները պարգացնելով աւանդել խաւարի ու տգիտութեան մէջ նիրհող ազգին: Ա՛յսպէ՛ս, ուրեմն՝ մի քանի զիջումներ անելով ամենազոր պապին, արթնամիտ կրօնականը այն միսթարութիւնը ունեցաւ, որ այդ զոհաբերութիւնները հարիւրապատիկ պիտի փոխարինուեն յօգուտ պաշտած ազգի իր ուխտին երզուած յետնորդներից: Ա՛րդարև էլ այդպէս եղաւ երկար ժամանակաշրջաններ, մինչև որ Ա՛տտիկանի դուռը, նկատելով Ա՛նենտիկցոց ազգային անշէջ եռանդը և գործած պրօպագանտան, միջոցների ձեռնամուխ եղաւ սրանց ազգային նախանձախնդրութիւնը կրօնականով փոխարինելու, այն ևս հարկաւ անզբալապէս՝ հայկական եկեղեցու հաւասարասէր հոգին կաթողիկական առանձնամոլութեան և ինքնապաշտութեան շուռ տալով: Իսկ այս նպատակին աւելի դիւրութեամբ հասնելու և Ա՛նենտիկցոց ընդդիմադրութիւնները ջլատելու համար, նենգամիտ Ա՛տտիկանը առանձին ուշադրութիւն դարձրեց Հռոմի մէջ բացած այն դպրոցի վրայ, որտեղ ամեն ազգութիւնների մանուկներ, իրանց մայրենի լեզուով դաստիարակուելով կաթողիկոսութեան հոգին պիտի իւրացնէին, նոյն լեզուով իւրայինների մէջ նրան արծարծելու համար ի խէթ Ա՛նենտիկից բլած վարդապետների: Ա՛յդ հուշակաւոր հաստատութիւնն է, որ սովորապէս կրում է Պրոպագանդայի կամ Պրոպագանդական Կոլլե՛ժի

անուն: Թէպէտ և Սխիթարեան Ուխտի մէջ գտնվում էին ազգադաւ մարդիկ, որոնք հակումն էին յայտնում գործիք լինելու եզուրտներին միտումներին, բայց ընդդիմադիր կամ ազգային կուսակցութիւնը միշտ շատ զօրաւոր էր: Ներքին այս խուլ մաքառումը երկար ժամանակ տևելով, բորթկաց վերջապէս այն բացարձակ բաժանմամբ, որին կը մասնակցէին՝ քարբերոցի հայի արիւն կրող Սարգիս Թէոդորեան, Թէոդոսիացի Վարբիէլ Մովսիսիան և ազգային ուրոյնութեան հոգին մարմնացնող Մարտիրոս և Կորէն վարդապետները: «Բռնութեան դարերի մէջ Սխիթար մեծ արբաշայրը կաթոլիկութիւնը ընդունեց հայութիւնը պահպանելու համար, իսկ հիմա՝ նրանից 150 տարի յետոյ, ազատութեան այս համաշխարհային ծաւալման մէջ, ինչպէս կը պահանջէք որ նրա յիշատակը յարգողները հայութիւնը մոռանան կաթոլիկութիւնը պահելու համար», բացականչեցին հայութեան խիղախ ախոյեաններն, որոնք Վապուէն Վ.ի ամենակախարհի կառավարութեան տակ անգամ սկսեց հակապապական այն մաքառումը, որի ազդեցութեան ներքոյ հայութեան զգացումները, մեր հոռոմեադաւան համարիւնների մէջ օրէ ցօր բորբոքելով, յառաջ բերաւ ազգային-գիտակցութեան այն բուռն արտայայտութիւնը, որի դրդուցներէն շատունի անգամ ջղերը կտրտուելով, ստիպեցին նրան յետո նահանջել այն քաջահոգի բանակի առաջ, որի դրօշակը գեռ մինչև այսօր անասան կը մնայ շնորհիւ հռչակաւոր հանգուցեալ Լինֆիաճեան Վրիգոր վարդապետի՝ նորա յետնորդաց և Պօլսի գրութէ ամբողջ շայ-հոռոմեական ակնուպետութեան ձեռքին, էլ չը յիշելով այնպիսի հեղինակաւոր անձանց վերադարձը նախահարց եկեղեցու ծոցը, ինչպէս ևն Սատաթիա Վարապաշեան, Վորայր Բիւղանդացի, Սուքիաս Պարոնեան, Սաղաքիա ()րմանեան, և այլն:

* * *

Վաթրջեանի և Կորէն վարդապետի պայքարը ոչ թէ երկու անհատների անձնական հետամտութեամբ սկսուած բանակուիւ պիտի լինէր, այլ պապականութեան կամ հայոսութեան յաղթանակի խնդիր:

Վզգային այս մեծ դատը պիտի վարէր հիմա Կորէնը:

Արովհետև խնդիրը հասարակաց դատաստանի առաջ պիտի պարզուէր, ուստի ամենալաւ միջոցը պիտի լինէր եկեղեցեաց մէջ

արած ատենախօսութիւններն: Ասելով քարոզչի որոշման մասին Վաթրջեանի ճակատամարտը ընդունելու վերաբերմամբ, Պերայի եկեղեցին կիսով չափ հռոմեական հայերով էր լցուած, որոնց մի մասը զայրոյթ զգալով Վաթրջեանի ծայրայեղութեան դէմ, եկել էր գոհացում ստանալու. միւս մասը՝ («անպարտելի») համարելով պապի անձնուէր արբանեակը, եկել էր քթի տակից խընդալու յանդուգը ընդդիմախօսի վրայ... բայց այդ խնդալու տրամագրութիւնը շուտով խանգարուեց, երբ քարոզչի առաջին հարուածները այն կողմը ուղղուեցան, ուր նրանք բնաւ չէին յուսար:

Վաթրջեանի համախոհները միամտաբար ենթադրել էին թէ՛ Կորէն վարդապետը պիտի վեր կենայ ու մի առ մի սկսէ հերքել այն շրջած ու խճճած տեղիները (thesise), որոնցով լցրել էր իր գիրքը խարբախ աստուածաբանը: Բայց քարոզիչը վարվում է այն ճարտար ուղղմագէտի պէս, որը յանկարծական շարժմամբ տիրապետող կէտերը գրաւելով, ստիպում է թշնամուն զինաթափ լինելու: Երդարեւ առաջի խօսքը, որ արտասանեց նա, եղաւ ջախջախիչ դատապարտութիւն այն հիմանց դէմ, որոնց վրայ հաստատել էր Վաթրջեանը իր սոփեստութեան ամբողջ շէնքը:

«Ո՞վ ասեց ձեզ թէ՛ Հայաստանեայց առաքելական եկեղեցու վարդապետութիւնները պարունակուած են այլ և այլ տիրացուների հնարած թերատպուած հաւատապատումների մէջ», իր յատուկ կորովով՝ յանկարծակի հարց է դնում քարոզիչը: — «Ո՞չ, Վաթրջեանի հաւանած անհատները չեն մեր դաւանած եկեղեցու վարդապետները, այլ աւետարանիչք և մեր հայրապետք, այլ Ս. Լուսաւորիչ, Սահակ, Մեսրոպ, Եղիշիկ, Մանդակունին, Սովսէս ու այնպիսի փիլիսոփայ Գաւիթ մինչև Ենորհալին՝ Վերսէս, և նոցա հեղինակած Մաշտոց ու Երազմանն են մեր եկեղեցու կրօնագրքերը և օրինագրքերը, որոնց գծած սահմանից դուրս մենք չենք կարող ուրիշ վարդապետութիւն ձանաչել... խօսք՝ ունի՞ք սոցա դէմ՝ յայտնեցէ՛ք, եթէ ոչ՝ էլ ինչո՞ւ կը ձգնէք սորոմելի ճամարտակութիւնները անդրդուելի ժայռեր շարժելու միջոց շինել, ո՞ր կողմից ենք...» գոչեց ատենախօսը այն ազգու ձայնով, որով կը խօսէ ինքնապատահ վարժապետը չարաճճի աշակերտների հետ: Հակառակորդի շինութեան հիմքը միանգամայն խարխուլելով, պերճախօս ատենաբանը հասնում է այն սահմաններն, ուր կը հասնեն միայն ժայռերի տակից դուրս բորթ-

կած բոցեղէն սիւնը կամ գետնի տակ խեղդուած հրանիւթ տարրերը, երբ յանկարծ ժայթքում են նրանք դէպի ազատ տարածութիւնը...:

ՂԺՈՒԱՐԻՆ չէ մահաբերել թէ՛ այս ոգևորութեամբ և հրմն սութեամբ երկու ժամի չափ արած բեմախօսութիւնը ինչ տղաւորութիւն պիտի գործէր ունկնդիրների վրայ: ՂԺՈՒԱՐ չէ նաև գուշակել թէ՛ հազարաւոր ժողովրդի վրայ թողած հիացումը ի՛նչ արագութեամբ արծարծուեց ամբողջ քաղաքի մէջ:

Վաթրջնանի գատալճիւր արդէն այդ օրից տրուեցաւ: Բայց Խորէնի գատը դեռ չէր սկսուած. նրա հաշիւները պատկաններին հետ դեռ երկար էին և չէին կարող մէկ կամ երկու քարոզով վերջանալ: Աւստի, կանոնաւոր պատերազմի յատակադիժ կազմելով, սկսեց եկեղեցիների մէջ ամբիոնի բարձրութիւնից շանթակոծել շարանխանձ հակառակորդների ջոկերը:

ԸՆԴ հոգեշունչ քարոզների բովանդակութեան վրայ գէթ բաւարար տեղեկութիւն տալը այս գրութեան անձուկ սահմանից բոլորովին դուրս է: ԸՆԴ վսեմ և միանգամայն ազգաչէն բեմբասածութիւններն՝ ամենայն հարապատութեամբ մի օր հրապարակ հանելը՝ հեղինակի անհրաժեշտ պարտաւորութիւնը պիտի լինի: ԸՆԴ ստեղ հարեանցի կերպով միայն կը յիշատակենք այն բնաբանները, որոնք նիւթ եղան նրա քարոզներին: ԸՆԴ բնաբանները երկու կարգի կարելի է բաժանել. նախ՝ Հայաստանեայց եկեղեցու ըստ ինքեան ունեցած արժանաւորութիւնները, երկրորդ՝ հոռմէական եկեղեցու հետ բաղդատմամբ իր ունեցած գերադանցութիւնները: Ա՛ անորոյ բնաբաններն այսպէս դասաւորեց.

Ա. Ա. Հայաստանեայց եկեղեցու առաքելականութիւնը, Բ. Հայաստանեայց եկեղեցու սրբութիւնը և ուղղափառութիւնը, Գ. Հայաստանեայց եկեղեցու աւետարանական ազատ հոգին, Դ. Հայաստանեայց եկեղեցու վեհութիւնը ու բարձրութիւնը լուսաւորութեան նկատմամբ:

Բ. Ա. Հռոմայ եկեղեցու վարդապետութեանց հետզհետե կրած փոփոխութիւնները, Բ. Պապական գերիշխանութեան քրիստոնէական ոգւոյն հակառակ լինելը, Գ. Պապերի նողկալի կեանք ու գործերը բաղդատմամբ հայոց հայրապետների առաքելական բնթացքի և ուղղութեան հետ, Դ. Պապական հաւատա-

քննութեան և այլ սոսկալի գործերի լուսաւորութեան և յառաջ-
դիմութեան հասցրած չարիքը:

Ահա այս նիւթերի վրայ էին խորէն վարդապետի ամիսնե-
րով խօսած քարոզները, որոնց արձագանքը և ազդեցութիւնը
այնչափ մեծ եղաւ, որ Պօղոս պատրիարքը, ինքը ևս ոգևորուե-
լով, գալիս է յատկապէս Պերայի Ս. Երրորդութեան եկեղեցին ու
խուռը բազմութեան մէջ խորէն վարդապետի արժանիքը և հայ
եկեղեցուն մատուցած ծառայութիւնները թուելով, վարձատրում
է նորան Զայրաֆոյն Լարդապետի կոչումով, որին արժանանալը
այն ժամանակներն չէր կարելի այնպիսի դիւրին միջոցներով,
ինչպէս է՝ շողոմարարութիւնը, քսութիւնը, քծնիլը և այլ այս-
պիսի բարեմասնութիւններ...:

Այս անցքը տեղի ունեցաւ 1865 թուին, Չաստի վեր-
ջերում: Պ. Ստեփան Փափաղեանի («Խամանակ») լրագիրը, որ
այն ժամանակուայ երիտասարդութեան օրգանը կարող էր համա-
րուել, շտապեց իր ջերմ համակրութիւնը յայտնել Պօղոս պատ-
րիարքի արած գնահատութեան («արժանի վարձատրութիւն») վեր-
նագրով յօգուածներ նուիրելով խորէնին, որը քիչ յետոյ ընտ-
րուեցաւ գերատեսնապետ Կրօնական ժողովի, անգամ խառն ժո-
ղովի, և այլն:

Խորէնի յաղթանակները տեսնելով, շասուն և Վաթիքեան
անգործ չը մնացին, այլ ազգային դատաստանի առաջ ջանջախ-
ուած, փորձեցին դատը վաստակիլ օտար դատաւորների ջատագո-
վութեամբ: Ուստի Ֆրանսիայի եղուխտների ազդեցութեան կըր-
թընած սկսեցին դատափետել հայոց եկեղեցին նրանց յայտնի օր-
գանի («Le Monde») ի մէջ: Եւ նորհիւ իր լեզուագիտութեան և անըս-
պառելի կորովե՝ խորէնը նետվում է լրագրական ասպարէզ շայ-
աստանեայց եղեղեցու պատիւը օտարների առաջ պաշտպանելու
համար: Իայց եղուիթական («Ալը Ս'օնտը») մերժում է տպել
նրա պատասխաններն. այն ժամանակ հայ վարդապետը Ֆրան-
սիայում ունեցած յարաբերութիւններով յաջողում է «Union Chre-
tienne» կրօնական թերթը ձեռք գցելու, որի էջերում հիւրըն-
կալուեցան նրա ամենայն պատասխաններն հայարիւն եղուխտերի
յարձակմանց դէմ, որոնք, դորանով ևս իրանց վրէժները ուզա-
ծին չափ չը կարողանալով լուծել, սկսեցին Պօլսի օտար թեր-
թերը ևս գրգռել հայոց դէմ՝ մերթ կրօնական մերթ ազգային

այլ և այլ փափուկ խնդիրներ յարուցանել տալով: Արոշելով դիմադրել ուր որ էլ լինի, Խորէնը բաւական մաքաւեց մանաւանդ Պօլսի գաղղիական և յոյն թերթերի դէմ, զանազան հարցերի մէջ բանակռիւններ վարելով, հայոց եկեղեցուն «Վրիգորեան և հերձուածող» համարելու առթիւ: Հասունը, սրտին թունաւոր սլաքների հարուած ստանալով և իր ամենազօր կարողութեամբ ուխտ զնելով՝ մի գարկով փշրել հայոց պատրիարքներին Սուլթան Մահմէտի ժամանակներից շնորհած առանձին իրաւունքները, օգուտ քաղեց առաջին պատեհ առթից իր այդ ազգանենք դիտումը իրագործելու համար:

* * *

Ընդ և Ֆուլատ փաշաների օրերն էին: Եւրոպական մեծ պետութեանց կարգի մէջ թուրքիան իր պատուաւոր տեղն ունէր: Եւրոպիկոս Վապուլէոնի ամենահզօր ժամանակն էր, երբ նա ամբողջ Եւրոպայում օրէնստու գիկտատորի դեր խաղալու յաւակնութիւն ունէր: Պապի իշխանութեան անբռնաբարելիութիւնը Հռոմի մէջ բանակ դրած, Ֆրանսիական զօրքերով ապահուած, Վապուլէոն Վըլ հանուր կաթողիկոսութեան «աստուածը սիր պաշտպանը» կը նկրտէր հանդիսանալու: Ընդրալինոնականաց հլու գործիք արեւեքում՝ քաղզէացի Հասունը յենակէտ ունենալով կաթողիկ պետութեանց դեսպանների պաշտպանութիւնը, այնպիսի ազդեցութիւն ունէր Պօլսի մէջ, որ շատ անգամ պետական յանցաւորների անգամ ներումն ստնելու երաշխաւորութիւն կը տար՝ հերիք էր միայն որ կաթողիկոսութիւն ընդունելու խոստում տային նրանք. Օւէյթունի ապստամբապետների հետ այսպէս չը վարվեցաւ...:

Իր այդ ազդեցութեամբ և Ֆրանսիայի ամենազօր դեսպան Բուրէի աջակցութեամբ, օգուտ քաղելով նոյնպէս Պօղոս պատրիարքի յանկարծահաս մահից, երբ տեղապահ էր բարեմիտ ծերունի Երիստակէս եպիսկոպոսը, Հասունը յաջողեցաւ Ընդ և Ֆուլատ փաշաների հաւանութիւնը առնելու՝ հայկաթողիկ գըլխաւորի առաջնաւորութեան համար հայոց պատրիարքի քաղաքական իրաւանց վրայ: Բայց այդ զարեւոյ առանձնաշնորհութեանց յաիշտակումը աւելի քաղաքապիտական և խոհեմ միջոց-

ներով անելու համար, պայմանաւորուած էր՝ առանց արդարասէր Սուլթան Լպտիւլ-Վելիի միտքը յիշեալ խնդրի վրայ արթնացընելու, այնպիսի մի կերպով կատարել պաշտօնական նուիրագործումը, որով ո՛չ թագաւորին դժկամակելու տեղիք լինի և ո՛չ հայ ժողովրդի խլրտման: Սուտի, որոշուած էր նախարարական ժողովի մէջ, որ այդ նուիրագործումը կատարուի թագաւորին թիւրքահայաստակ քրիստոնէից գլխաւորների ներկայանալու առաջին առիթով, երբ Ղուսաւորչական հայոց ներկայացուցիչը պիտի կանգնէր ո՛չ թէ հունաց պատրիարքի մօտ, երկրորդ տեղում; այլ Հասունից յետոյ, երրորդ աստիճանի վրայ, մինչդեռ Պօլիս նուաճող Սուլթան Սուհամեթ Ի-ի օրից ի վեր հայոց պատրիարքները երկրորդ տեղն ունէին Թիւրքիայի բոլոր այլազան կրօնապետների մէջ: Փոխել տալով հիմա այս արարողական սովորութիւնը, Հասունը կուզէր ո՛չ միայն բարոյական հարուած տալ հայոց պատրիարքի պատուին, այլ և նրա իրաւանց առաւելութիւններն սեփականէր իրան, մի տեսակ պաշտօնական վաւերացմամբ ստորագասել տալով նրան հայ կաթողիկ ինքնահայր «կաթողիկոսին»: Կորուստ՝ յաջողութեան դէպքում, անփոխարինելի պիտի լինէր հայոց համար, ուստի Խառն ժողովը շտապեց բողոքելու, թէպէտև այդ բողոքը մնաց առանց հետեանքի:

1868 թուականի յուլիս ամիսն էր և Սուլթան Լվելի գահակալութեան տարեդարձն: Թէ ի՛նչ փառաշուք հանդէսներով էր կատարւում հանգուցեալ մեծահռչակ կայսեր տօնը—աւելորդ է այդ մասին երկարել: Կայսերութեան նախարարք և աւագանիք, մեծ պետութեանց ներկայացուցիչներ և ամեն ազգի կրօնական պիտերը կը պատրաստուէին արտասովոր փայլով շնորհաւորելու Օսմանեան հլօր պետութեան գահակալը: Լմենքը արդէն պատրաստ էին Տօլմա-բախչէի հռչակաւոր պալատի մէջ փաշա-տայրէի դահլիճում, ուր օսմանեան պերճ հիւրընկալութեան սովորական արարողութիւններն կատարուելուց յետ՝ պէտք է վեր ելնէին այն մեծ սրահը, ուր թագաւորը պիտի ընդունէր: Հայ ազգի ներկայացուցիչը՝ Տեղապահ Արիստակէս եպիսկոպոսն էր, ունենալով իւր հետ միասին Խորէնը, նոյնպէս արդէն եպիսկոպոսի աստիճանով: Գերուկ հայ կրօնականը, կեանքի մէջ առաջին անգամ այսպիսի մի փառահեղ հանդէսին ներկայ գտնուելով, բնական էր որ բաւական շփոթուէր, բայց այդ շփոթումն

աւելի ևս մեծ պիտի լինէր, երբ յանկարծ հրաման եղաւ նրան՝
Թագաւորի առաջ Հասունից յետոյ կանգնիլ: Այլալուած ծերու-
նին մտածելու անգամ ժամանակ չունէր, երբ մի քանի վայրկեան
էր մնացել դէպի վեր բարձրանալու համար: ()ըհասական էին
այս վայրկեաններն, որոնց մէջ հայ ազգի բազմադարեան իրա-
ւունքները զոհ պիտի գնային որ և է մի բաղդախնդիր եզրու-
տին: Բայց Խորէնը այստեղ էր: Արիտիկական բոպէի մէջ փայ-
լակի արագութեամբ մտքի նոր շողով լուսաւորուելը արդէն նրա
հանձարի յատկանիշն էր... Բաթարեր հրամանը ստացածին պէս՝
էլ առանց տատանելու, իր քայլերը ուղղեց դէպի Ալի փա-
շան, բողոք յայտնելով անօրինակ բռնարարութեան դէմ: Արբա-
միտ դիւանագէտը առերևոյթ համակրութիւն ցոյց տալով բողոքի
օրինաւորութեան, նախարարաց ժողովի ուշադրութիւնը խոստա-
նալով, համոզել ուզեց, սակայն այս հանդիսաւոր վայրկեանի մէջ
եղած հրամանին նայիլ միայն: Խօսքը հազիւ աւարտած վրայ հա-
սաւ պալատական արարողապետը նշան տալու վեր բարձրանալու
համար: Հասունը, յաղթութեան գրօշակը ձեռին, նետի պէս դէպ
յառաջ սլացաւ: Ուժամասի խեղճ տեղապահը, հոսանքի ուժից
քաշվելով, մեքենայական շարժմամբ ինքը ևս նոյն կողմը ուղ-
ղուեցաւ. բայց մի բուն ձեռք թևից բռնելով, այնպիսի ուժով
ձգեց, որ ծերուկ Տեղապահը մի քանի քայլ յանկարծ մղուեց:
Ուշքը կորցրած, հազիւ կարողացաւ երկու խօսք ասել. «ի՛նչ
կընես, Խորէ՛ն» հարցնելով, և Ալի փաշայի դէմ մահացու
յանցանք գործելու երկիւղից դողալով: «Վո՛ւրս, սրբազան,
դո՛ւրս յետևիցս, լաւ է դատուինք ու պատժուինք, քան թէ մեր
ձեռքով ազգի և եկեղեցու նուիրական իրաւունքները զոհենք»
դարձրեց Խորէն հուժկու ձայնով:

Տեղապահը և նրա անվեհեր ուղեկիցը այսպիսով դուրս գը-
նացին, ամեն դալիք աչքի տակ առնելով, գէթ Հասունից վար
չը կանգնելու համար: Ալի փաշան, չիմանալով ինչ անել ան-
ակնունելի սկանդալը խեղդելու համար, հնար կը մտածէր: Թա-
գաւորը, դուրս գալով, կընդունէ տիեզերական պատրիարքի ող-
ջոյնը, նոյն ժամայն հարցնելով «Այրմէնի բուհանի նէրտէ»:

—Տէր, անակնկալ հիւանդութեան պատճառաւ, նա կարող
չեղաւ իր հաւատարիմ հպատակութեան զգացումները դնել Ձեր
գահոյից ոտի տակ, պատասխանեց հնարամիտ Ալի փաշան, բո-

լոր դեւերի անէծքը թափելով մտքի մէջ այդ՝ հարիւր անգամ՝
գեաւուր «րուհանիի վրայ...»:

Եւ այց եղածը եղաւ ու տաճկահայոց պատրիարքների վայելած հինգ հարիւր տարուայ իրաւունքները այսպէս ազատուեցան Հոռմայ վամպիրի բովերից:

Խորէն եպիսկոպոսի քաջագործութիւնը օրուայ զիւցալնութիւնը եղաւ, որի յիշատակը դեռ թարմ է մնացած մինչև այսօր ևս, որպէս և յաւերժացած է ժողովրդի մտքի մէջ այն անցքերի յիշատակը, որոնցից գէթ մի երկուսը մէջ կը բերենք հետեւեալ տողերում:

II.

1872 թուականն էր, դեկտեմբեր ամիսը: Նօրէյասի աղէտաձայն մունչիւններն Նօսֆօրի միացնող ծովերը ալեկոծելով, միշտ ծանր ճնշման ու տխուր նախազգացումների տակ կը պահէին փափկազգաց պօլսեցիների սիրտը: Եւ այց ծովային անբաղուածեանց համար հառաչելով, մեր խեղճ ազգայիններն չէին զգում բնաւ այն աղէտը, որ պիտի պայթէր իրանց գլխին նոյն իսկ քաղաքի մէջ և շուտով:

Նգիպտացի մեծահարուստ և եւրոպագէտ Խալիլ Հէրիֆ փաշան արտաքին գործոց նախարարն էր. նորանից էր կախեալ այլապան դաւանութեանց գործերի տնօրէնութիւններն: Այդտեղի՝ Ազիզի սիրեցեալ որդի Աբուսուֆ Ազգէտին էֆէնտին միւշիւրի՝ մարէշալի՝ տիտղոսով կայսերական թիկնապահ զօրաց վաշտը կը կառավարէր: Արա ցանկութեամբ, բայց զինուորական նախարար Հիւսէին Ալի փաշայի թեւազրուութեամբ, որոշուած էր մի մեծ զօրանոց և զօրահրատարակ շինել այն լայնատարած հողի վրայ, որը, Պերա Պանկալթիի մի մեծ մասը կաղմելով, այսօր՝ առ նուազը՝ մի միլիոն բուրլ արժողութիւն ունեցող ազգային մեծ աւանդ է, որը սակայն հայոց համար իր ունեցած նուիրական նշանակութեամբ միշտ աւելի թանկ է եղած, քան թէ մեծաքանակ ոսկու մի որ և է փոխարինութիւնը: Հազարաւոր հայերի ոսկորներ են ամիսփուած այդտեղ, որոնցից իւրաքանչիւրի վրայ հայ քահանայի ալէլուիան ու շարականն է երգուել, հազարաւոր որդոց ու ծնողների արցունքը նուիրագործել, համբոյրը գրոշմել:

Պերայի հայոց գերեզմանոցն էր դա: Հանգչած են անդ Յակոբոս Պ. կաթողիկոսն ու մի շարք եպիսկոպոսներ, ուր միակ տեղն էր հայրենագուրկ հայի՝ օտարի նախատինքից ու եղբոր նախանձից ազատ մնալու: Բաց յայդմանէ, Պերայի հանգստարանը թանգ էր տաճկահայոց համար և այնպիսի պատմական յիշատակով, որ նրա կորցնելը մի և նոյնն էր թէ՛ կորցնել օսմանեան գահին ցոյց տուած ամենամեծ հաւատարմութեան մի ապացոյցը. նա գերագոյն շնորհն էր, որ խնդրեց, չը գիտեմ որ սուլթանից նրա վանցի ծառայ՝ այվազ Վեորգը, թագաւորի կեանքը սոսկալի փորձանքից ազատելու համար:

Եւհա թէ ինչ է վկայում աւանդութիւնը: (Օսմանեան աշխարհակալութեանց սաստիկ ժամանակներն, երբ վէզիրների ահեղ բանակներն մերթ Վ իեննայի դռները կը ծեծէին, մերթ Բուդա-Պեշտի, Հունգարացոց թագաւորներից մինը մտագրուեցաւ վերջ գնել պատերազմասէր սուլթանի կեանքին հետեւալ հնարքով: Սկեղէն արկղի մէջ դարսել է տալի՝ իբր ազամանդներով լցուած՝ տուփեր, բայց որոնք կործանիչ նիւթեր էին պարունակում իրանց մէջ: Երկը բացած ու տուփերը շարժած ժամանակը սրանք պիտի պայթէին: Չարանեագ թագաւորը այս անգին գանձը՝ իբր նշան իր խոնարհ ակնածութեան՝ սուլթանին պիտի ուղարկէր: Եւստ այսմ ի մտի ունէր նա, ի հարկէ, որ օսմանեան խրոխտ գահակալը բնաւ չի զիջանի մի սինլբոր «գեաւուրի») առաջ, ինչպէս իր դեսպանն էր, բանալ արկղը ու մէջը գտնուած գանձի վրայ հիանալ: Հաշիւը գուցէ ճշգիւ արդարանար, եթէ տմարդի ձեռնարկութեան առաջը չը շտապէր առնելու Հունգարիոյ թագաւորի սենեկապետ Վրիգորը, որը նոյնպէս վանցի մի հայ էր, Վեորգ այվալի եղբայրը թէ ազգականը: Եւմանալով որ և է կերպով գիւային մեքենայութեանց խորհուրդը, և, մտածելով, որ սուրբ Վարապետ ու Վարմիր Վանք, Եւստաւորիչ և սուրբ Վարեկ իր հայրենի երկրի վրայ են, որի տէրը մուսուլմանների խալիֆն է, այլ ոչ Հունգարացոց թագաւորը, մտածելով դարձեալ, որ խալիֆի մատուցած ծառայութեան փոխարէնը պիտի ստանան իր («բիւթիւն ազգը ու իր ազգարտիքը, իր պատրիարք ու տէրտէրները»), կրօն ու հայրենիք սիրող ջերմեռանգ հայը անձնուիրական որոշումն է անում՝ թէկուզ իր գրւթի գնով՝ ջանք անել խափանելու ուխտանեագ թագաւորի մտա-

ծած չարիքը: Վախ քան անգին ընծայով դեսպանի Պօլիս ուղե-
ւորուելը, շտապում է նա իր հաւատարիմ հայ ընկերներից մէկի-
ձեռքով ըւր ուղարկել Վէորգ այվազին խալիֆի գլուխը գալիք
պատուհասը նրան շուտով իմաց տալու համար:

Հունգարական դեսպանութիւնը երբ Պօլիս է հասնում,
Վէորգ այվազը, գլխի պատասխանատուութեամբ, ամեն ինչ ար-
դէն յայտնած է լինում սուլթանին:

Հասնում է դեսպանութեան ներկայանալու օրհասական ժա-
մը: Իբր թէ թագաւորին անձամբ մատուցանելու համար, ոսկե-
ղէն արկղը ձեռին դեսպանութիւնը պալատ է ընդունվում: Վայց
ի՞նչ պատրանք, փոխանակ թագաւորին սրահը առաջնորդելու,
տանում են նրանց մի առանձին հրապարակ և ստիպում են դես-
պանին՝ թագաւորի համար բերած ընծան՝ նախ իր ձեռքով այն
տեղ բանալու: Տիրանուէր Հունգարացին այլայլման նշոյլ անգամ
ցոյց չէ տալի: Աստահ քայլերով գնում կանգնում է նշանակած
տեղը, և, բանալին գծոխային մեքենային տանելով, իր ամբողջ
դասի հետ օդը բարձրանում...: Աղերական գէպքը դղրդեցնում
է ամբողջ արքունիքը: Վէորգ այվազը սուլթանի ազատիչն է
լինում:

— Ինչ որ ուզում ես, խնդրիր ինձանից, իր մօտ կանչելով
Վէորգ այվազին, ասում է սուլթանը:

— Տէ՛ր արքայ, ուզածս միայն երկար կեանքդ էր, պա-
տասխանում է Վէորգը, — իսկ եթէ հրամանդ լինի, ազգային-
ներիս համար հանգստավայր գետնի շնորհումն կը խնդրեմ:

— Տուայ, առ միշտ տուայ, վճիռ է արձակում սուլթանը,
հայ ազգի սեփականութիւն դարձնելով քաղաքի փառաւորագոյն
թաղին կից մի լայնածաւալ գետին, որի տարածութեան վրայ մի
մեծ աւան կարելի էր հիմնել:

Եւս կերպով են ձեռք բերում հայերը Պերայի նշանաւոր
գերեզմանոցը:

Պատում են թէ՛ այս օրուայ գերեզմանոցը, չը նայելով
իր այնչափ մեծութեան, Վէորգին ընծայած հողի գէթ հինգե-
րորդ մասն է ներկայացնում: Չը գիտեմ որ թուականին մեր միա-
միտ ազգայինները իրանց հանգստարանի մի մասը փոխ են տալիս
լատիններին՝ իբր նշան եղբայրական հաւասարութեան: Եւս բա-
րի պտուղներն էլ, հազիւ մի քանի ննջեցեալ թաղելուց յետոյ,

աէր կանգնելով հայոց սեփականութեանը, վեր են առնում՝ բըռնաբար՝ մեծաքանակ գումարով կառավարութեանը ծախում, որը և կառուցանում է այդտեղ Պանկալթիի այժմեան մեծաշէն զինուորական գպրոցը, զինուորական ձեւարանը, զօրանոցը, մանէժը հրապարակներով ու պարտէզներով շրջապատուած: Հաղորդում են նոյնպէս և այն թէ՝ Պերայի կողմը ընկնող գերեզմանոցի միւս մասը, որի վրայ շինուած են երկու ահագին զօրանոցներ իրանց հրապարակներով, նոյնպէս և հասարակաց պարտէզը, բոլորովին կամայական տնօրինութեամբ ընծայուած են (Իրզա փաշային՝ մի եկեղեցական վատ ամիրայի քմահաճութեամբ:

Եւհա թէ ազգային ո՞ր գոյքի մնացորդը ազատելու վրայ էր հիմա խօսքը, երբ Խալիլ Շէրիֆ փաշայի խստապինդ հրամանագրով յայտարարուեց հայոց պատրիարքին՝ կամ որոշեալ ժամանակամիջոցի մէջ գուրս տանել գերեզմանաքարերը ու ոսկրները, կամ թէ չէ՝ սպասել, որ զինուորների բրիչով այդ կատարուի: Խրիմեանի օրովն էր այդ: Եւզգային ժողովի կողմից գրուած բողոքագիրը ձեռին պատրիարքը դիմում է Խալիլ Շէրիֆին: Բայց սա յայտ է կացուցանում թէ՝ գերեզմանոցը մաքրելու համար վերջին պայմանաժամը՝ երեք օր է միայն տրվում...:

Եւլայլուած դէմքով ու արտասունքը աչքին յետ է դալիս Խրիմեանը դաժան վճիռը ժողովին յայտնելու: Պատրիարքարանը ժողովուած կրօնաւորների գլխին ջուր է մաղվում, լուռ վշտակրութեան անձնատուր, մնացել էին ամենքը սուգի մէջ նստած...:

Ծանր լուծիւնը ընդհատելով, հնչում է մի ձայն, կասես՝ քարանձաւներից եկող կախարդական գոչում լինէր նա, որ դէպի ճանապարհ կուզէ ուղղել խաւար գիշեր վիհերի մէջ իր հօտով մոլորուած հովիւին:

— Սրբազան հայր, ասաց Խորէնը, դիմելով պատրիարքին, — դուք ձեր գերը կատարեցիք արդէն... Յանուն Եստուծոյ ու կայսեր, յանուն մեր դարեւոր իրաւանց նախարարին՝ ձեզ ձեռքով մատուցած՝ մեր աղերսագիրը խրոխտ արհամարհանաց հանդիպեցաւ... բայց արդեօք դորանով պիտի վհատի՞նք, արդեօք ՚՞վ կարող երգնուլ. որ՝ Խալիլ Շէրիֆ փաշայի սուած՝ այդ հրամանը մեր ողորմած կայսեր գիտութեամբ ու հաւանութեամբ է: Գոնէ իմ մասիս՝ ներքին մի անդրդուելի համոզմամբ ոյժ

կառնեմ պնդելու թէ՛ կայսրը բնաւ երբէք տեղեկութիւն չը պիտի ունենայ մեզ մինչև այս յուսահատութիւնը հասցնող պարագայներու վրայ: Կայսրութեան հինգ հարիւրամեայ պատմութիւնը չէ տալիս մեզ և ոչ մի օրինակ, որի մէջ տեսած լինէինք, որ օսմանեան օգոստափառ վեհապետք մեր ազգի ու եկեղեցու իրաւունքները բռնաբարէին. ընդհակառակն՝ իւրաքանչիւրը նոցանից միշտ փառաւորած է իր անունը մեր կրօնին ու կրօնաւորաց ցոյց տուած մեծամեծ շնորհներով ու հովանաւորութեամբ: Մեր օգոստափառ տէր Ապտ-իւլ-Աղիզ խան մի՞ թէ քիչ աւելի է տուած մեզ իր հայրական սիրոյ ու հոգածութեան: Այլ թէ այս ամենը գէթ բացայայտ իրողութիւններ են, հապա էլ ինչո՞ւ վհատինք, Խալիլ Շէրիֆ փաշայի արած տնօրէնութիւնը էլ ինչո՞ւ կայսեր աչքից մեր ընկնելու ապացոյցը համարինք... թէ, թէ... կայսրը միշտ ողորմած է գէպի մեզ, միշտ բարեհաճ մեր աղաչանքը լսելու և մեր իրաւունքները իր հզօր հովանաւորութեան տակ պահելու: Աւստի, փոխանակ յուսաբեկ նոտելու, զօրանանք հաւատով ու կայսեր գթասիրութեան վստահ, այժմ և եթ ամենքիս ստորագրութեամբ մի աղերսագիր պատրաստենք նորա անուն և ի գիմաց իր հաւատարիմ հայ ազգի, իրան մատուցանելով, նորա հայրական խնամքին յանձնենք և գերեզմանոցի բազդը և եկեղեցու:

Առաջարկութիւնը տրամաբանական և համոզիչ դատողութիւնների վրայ էր հիմնուած և աւելորդ էր ասել, որ լաւ ընդունելութիւն է գտնում: Եւ այց թէ ի՞նչ էր նշանակում ազգի կողմից կայսեր աղերսագիր մատուցանել, դրա ազդեցութիւնը շատ լաւ էր ըմբռնում նրանցից ամեն մէկը, երբ հարիւրաւոր կրօնականներից առաջնորդուած գոնէ տասը հազար բեռնակիրների աղաղակը Տօլմա-բախչէի պալատը պիտի թնդացնէր: Միաձայն հաւանութեամբ որոշուեցաւ պետք եղածը իսկոյն ձեռնարկել: Արեք օր էր մնացել Խալիլ Շէրիֆ փաշայի տուած պայմանաժամը լրանալուն, չորեքշաբթի էր արդէն՝ ուրբաթ օրը հեռուէր: Այդ վերջին օրը միայն կարելի պիտի լինէր սուլթանին աղերսագիր տալ, որովհետեւ Եւլաֆօղի (մզկիթ աղօթքի) գնալու և ինդրագրերը առնելու միակ օրն էր այդ: Աղերսագիրը նոյն ժամայն այնտեղ խմբագրուելուց յետ, որոշուեցաւ հետեւեալ օրը եկեղեցիների մէջ աղօթքի հրաւիրել ժողովուրդը, ուրիշ խօսքով՝

Պօլսում մշտապէս գտնուող քսան հազարի չափ բեռնակիրները օգնութեան կանչել էր նշանակում այդ հրաւերը:

* * *

Միւս օրը Ղալաթիոյ Լուսաւորիչ եկեղեցու մէջ ասեղ ընկնելու տեղ չը կար, ներսը լիքը, դուրսը լիքը, փողոցները լիքը, առ քիչը տասը հազար հաճախ կար, նոյնպէս և Պերայի եկեղեցու շուրջը, նոյնպէս և գերեզմանոցի փոքրիկ եկեղեցու մէջ: Հայաստանի հաւատարիմ որդիքը եկել էին նախ իրանց հոգեւոր հայրերի հետ ազգի պահպանման համար Սիմէոն կաթուղիկոսի հոգեշունչ («տէր ողորմեան») երգելու, իսկ յետոյ ուխտ դնելու՝ միւս առաւօտ գերեզմանոցի վրայ սուրհմնների դէմ կուրծք տալու, եթէ փորձ փորձուի ազգային սեփականութիւնը բռնութեամբ խլելու: Բեռնակրութեան դաժան վիճակը չէր համապատասխանում բոլորովին նրանց հոգարտ ձեւերին: Հսկայօր այդ մարդկանց մեծ մասը Սեբաստիայիցն էր:

Ինչպէս ասում են, ընդհանրապէս Սեբաստացի պանդուխտները, թէ դէմքի վեհութեամբ, թէ ուժով և թէ հասակի բարձրութեամբ, տարբերվում են շատ զգալի կերպով վանցի, մըշեցի և բաղէշցի բեռնակիրներից: Այլ հիանալին այն է, որ ներանք շատ լաւ պահած են աւանդութեամբ պատմական իրողութեան այն յիշատակը, որով Սեբաստիայի հայերը Սենեքերիմ Ըրծրունու հետ Հայաստանի այլ և այլ տեղերից այդ տեղ գաղթած նախարարների սերունդներն են, երբ Ըրծրունեաց թագաւորը ստացաւ այդ երկիրը յունաց կայսրներից ի փոխարինութիւն նրանց տուած մի հայարնակ այլ գաւառի: Այսպիսի փոխարինութեան մէջ վաստակողը Ըրծրունին եղաւ, որովհետեւ հայաբնակ գաւառը յունաց ձեռքին ևս միշտ հայաբնակ մնաց, մինչդեռ Սեբաստիայի նահանգը բոլորովին օտար և հայազուրկ լինելով, գաղթականութեան շնորհիւ գարձաւ շուտով հայկական աշխարհ, եթէ չենք սխալվում, — Չորրորդ Հայոց մի մասը: Աւենալով քաջամարտիկ և պատերազմասէր ոգի, Սեբաստիայի հայերը մեծ թուով մտնում էին բիւզանդացուց ծառայութիւնը, կազմելով առանձին գունդեր Ղանուբի ափերը սլաւ ու բոլղար շահատակութեանց դէմ պաշտպանելու համար: Այլ այսօր իսկ, ինչպէս հաւաստացնում են ի մտոյ իմացողները, սուլթանի թիկ-

նապահ գունդերի կարգը գլխավորապէս Սերաստիայի և Ղախարէքի կողմերի մուսուլմաններիցն են: Ահա այս մարդկանց հայ արիւնակիցներն պիտի ուղեկցէին ուրբաթ օրը եկեղեցականաց պատգամաւորութիւնը դէպի Տօլմա-բախէի պալատը:

* * *

Այնպէս յիշեալ օրը պատգամաւորութեանը առաջնորդում էր գործի սկզբնապատճառ՝ Խորէն Վար-Վէյը, ունենալով իր հետ թէքիրդաղցի ծերունի թագէտու եպիսկոպոսը, ուրիշ շատ կրօնաւորների հետ միասին: Մի ծայրը թափախանէի մօտ, միւս ծայրը դեռ Ղալաթիայի փողոցներում, գրեթէ մի վերստ տարածութիւն բռնած, շարժուն ամբոխը թէ ինչ սպաւորութիւն պիտի գործէր անցանողի վրայ, — հասկանալի է ինքն ըստ ինքեան: Բայց սպաւորութիւնը անկարագրելի եղաւ, երբ այս խուռն բազմութիւնը, կանգ առնելով մի ապարանքի առաջ Սալը-բազարի ու թափախանէի մէջ տեղը, յանկարծ սոսկալի որոտմամբ գզրդեցրեց օդը («անիծեալ լիցիս, անիծեալ լիցիս») խօսքերով, որոնց մէջ տեղ տեղ լսելի էր լինում և յունարէն անթեման: Բայց որի գլխին էր հազար բերանից մի ձայնով դուրս թռած այդ անէծքը...: Այդ՝ Խալիլ Շէրիֆի գլխին էր թափվում, որի պալատի առաջ և կանգնեց ժողովուրդը Խորէնի նշանով: Հայ ազգը իր առաջնորդի հետ կանիծէր այն անձը, որը մեռեալների հոգին անգամ կը սպառնար վրդովել: Հայրենասիրական ցոյցը անելով շարունակեց ժողովուրդը քայլերը դէպի յառաջ: Ճանապարհի քարափի վրայ յուզուած Բօսֆօրի փրփրադէզ կոհակներ փշրուելով, ներկայ գտնուողի մտքի մէջ պիտի յիշեցնէին Սովսէսին Փարաւոնների հալածանքներից իր ժողովուրդը դէպի Վարմիր ծով տանելիս:

Ահա և Տօլմա-բախէն, որի դռներից սկսած մինչև մզկիթը երկու կարգ սուլիսաւոր զօրքեր են կանգնած, թագաւորի ակաբաբի ողջոյնը ընդունելու համար: Այդպէս պատգամաւորները առաջ մղուեցին թագաւորին դէմ առ դէմ կանգնելու մտօք: Բայց գնդապետներից մինը, մտենալով իսկոյն, բռնեց առաջին պատահած վարդապետի թևից դէն հրելու համար: Չեղբը դեռ վրան, վրայ հասաւ Խորէնը ու գոռաց ցամփալից ձայնով. ի՞նչ իրաւունքով կը յանդգնիս ճարտարասին հրելու. ի՞նչ,

կուզես արդիլե՞լ մեզ մեր թագաւորի առաջ աղօթելու...: Շուա-
րած գնդապետը հեռանում է պատգամաւորներից: Քայց իսկոյն
երևան է դալի ոստիկանութեան նախարար Խամայիլ փաշան, իր
հերթով ևս, հետևեալ հետաքրքրաշարժ ընդդիմադարձութեան
մտնելով Խորէնի հետ, սրը նրան արդէն ծանօթ էր: Խօսակցու-
թիւնը ֆրանսերէն էր:

— Եմինանս, դիմում է Խորէնին Խամայիլ փաշան, — սրանք
(պատգամաւորութեան վրայ ցոյց տալով) խօսք չեն հասկանում,
դուք ցրեցէք նրանց, հասկացնելով որ այստեղ չէ կարելի կենալ:

— Ի՞նչպէս կարող եմ ցրել սրանց, երբ սրանք իմ ընկեր-
ներս են. և եկած են հետոս ամենակարևոր ազգային պաշտօ-
նով: Մի՞թէ կարող էք, փաշայ, թագաւորի հաւատարիմ հպա-
տակներին հրամայել, որ իրանց օգոստափառ Վայսեր չը տեսնեն
ու նորան չ'օրհնեն: Խնդրեմ, փաշայ, հանգիստ թողնէք մեզ,
որ նուիրական պարտքերս կատարենք:

— Ընկարելի է, սրբազան, միայն ի շնորհս ձեր այսչափը
կարող եմ անել, որ թող տամ ձեզանից գէթ մի քանիսին այս
տեղ մնալու, այն էլ երբ միայն կը ցրուի ձեզ շրջապատած այս
խուռն ամբոխը: Ընտրեցէք ուրեմն սրանց միջից մի քանի խե-
լահաս անձինք թագաւորին աղերսագիրը ներկայացնելու, իսկ
մնացեալներին «հայտէ» ասեցէք:

— Սրանք ամենքն էլ, փաշայ, խելահաս են և լաւ գիտեն
իրանց կատարելիքը... ես սրանց ստորնագոյններից մէկն եմ...
մի բռնաբարիք մեզ, մեր սիրտերը լիքն է ցաւով, ուրեմն մի ա-
ւելցնէք մեր ցաւը:

— Ա՛յ, բայց ի՞նչպէս կարելի է, էմինանս, որ այսչափ բազ-
մութիւն թագաւորին դիմէ, մի՞թէ անտեղեակ էք այս կարգերին:

— Շատ բարի, բերէք ուրեմն մի բատարէա մեզ այստեղից
ցրելու... մենք պատրաստ ենք արիւններս այստեղ թափելու,
եթէ մեզ թող չը տրուի թագաւորի գթութիւնը խնդրելու:

— Եթէ այդպէս է՝ ուրեմն՝ ձեր բաղբը ձեր ձեռքին և
Լստուծոյ կը թողնեմ: Ինչ պիտի լինի՝ թող լինի՝ Լալահի կամ-
քը կատարուի:

Փաշան՝ հազիւ վերջացրած էր այս խօսքերը՝ ձին դարձրեց,
նշան տուաւ փողահարներին, և, արքունական դուռը իսկոյն բա-
ցուելով, թագաւորը դուրս եկաւ:

«Փատիշահըմըդ չօգ եաշա՛, էֆէնտիմիլ պին եաշա՛», արձագանք տուաւ օդը տասնեակ հազար բեռնակիրների որոտալից ձայներին:

— Ի՞նչ է սրանց խնդիրքը, հարցրեց թագաւորը նախարարին: Թէքիրդաղցի ալեզարդ եպիսկոպոսը աղերսագիրը գլխի վրայ բռնած, թագաւորին ներկայացրեց, որն իսկոյն հրաման տուեց փաշային առնուլ թուղթը:

Փատիշահըմըդ չօգ եաշա՛, էֆէնտիմիլ պին եաշա՛, շարունակեց թնդալ օդը ամբողջ քառորդ ժամ:

Սուլթանը մտաւ մզկիթ: Խորէն եպիսկոպոսը մի երկու ընկերներով, մզկիթի դրան մօտ, սպասոււմ էր աղօթքի վերջին, որից յետոյ սովորաբար աղերսատուների խնդիրն է տեսնվում: սէլամըզի աղօթքը Սուլթանը աւարտոււմ է: Մեր պատգամաւորաց ամեն ուշադրութիւնը մզկիթի կողմն էր:

Սուլթանի որոտաձայն խօսքերից հետեւալ բառերն է լրսվում: «...Իմ ահագին տէրութեանս մէջ հո՞ղ պակաս էր, որ խեղճ հայերի մի թիւ հողին էիք աչք տնկել... Ի՞նչ, մեռեալներն անգամ կուզէք իմ դէմ յարուցանել... գնացէք, ասացէք, որ հանգիստ լինեն, ես հաստատեցի նրանց իրաւունքները...»:

Իսմայիլ փաշան հաղորդում է եղբւրթիւնը Խորէնին...:

Կարծես մոգական գաւազանի շարժմամբ բիւր մարդիկ մի ձայնով կեցցէ՛ աղաղակեցին սուլթանին, որը կառքի մէջ կամաց կամաց ձեղքելով հիացմամբ լեցուած ժողովրդի ալիքները, զուարթ դէմքով քանիցս բարև է տալի:

Պատգամաւորութիւնը փառաւոր յաղթանակով աճապարոււմ է դէպի գերեզմանոցը, որտեղ մի քանի հազար բեռնակիրներ՝ ժողովուած՝ որոշել են արիւն թափել, եթէ գերեզմանոցը յափըշտակելու գան:

* * *

Լյստեղ հարկաւոր ենք տեսնում մի քանի տողով ընդհատել մեր պատմութիւնը, ընթերցողի ուշադրութիւնը դարձնելով այն հետաքրքիր և միանգամայն հայրենասիրական դերի վրայ, որ ունեցաւ յիշեալ գործի յաջողութիւնը պատրաստելու մէջ հայ խաթունների հարազատ տիպար մի կին՝ Սաննիկ Ֆեմբէ հանրմ

Բալեան: Սա, լինելով արքունի ճարտարագետ մեծահանձար Յակոբ բէյ Բալեանի երիտասարդ կինը, ուրեմն և մեծ շնորհ ունենալով Սուլթան Լազիզի հուշակաւոր մայր՝ Ալալիտէ Սուլթանի առջ, գերեզմանատան առիթով և դաժ բռնութիւններն յայտնում է նրան և սաստիկ կենդանի գոյներով նկարագրում՝ այն յուսահատութիւնը, որ տիրել էր ազգի մէջ և՛ մանաւանդ՝ մեռելատէրերի ընտանեաց մէջ, ըստ որում «ննջեցեալների ոսկրներ հանել դէն զցելը՝ հազարաւոր հոգիների անէծքը գրգռել ասել էր...»:

Ալալիտէ Սուլթանը, որ իր որդու կեանքի վրայ պահապան հրեշտակի պէս հոգ էր տանում, սրտին է առնում գերեզմանոցի գործը: Հեշտ է ասել, «մեռելների զայրոյթը գրգռել, և ո՞ւմ դէմ, — իր հարազատ որդո՞ւ...»:

Գիշերը Ալալիտէ Սուլթանը երազ է տեսնում, որ հայոց գերեզմանոցի բոլոր մեռեալները վեր են կացել գերեզմաններից ու շրջապատել պալատը ու կովում են նրա որդու հետ: Սոսկալով տեսածից, առաւօտը մայրը պատմում է որդուն երազը: Լճի հանգամանքը սուլթանի զիւրաբորբոք երեւակայութեան վրայ ծանր սպաւորութիւն է գործում, և նա մտքին դնում է մի որ և է՝ յարաբերութիւն ունեցող այդ երազի հետ դէպքում բոլոր ինչ զիջանիլ: Երբեք այդ էր պատճառը, որ նա մղկիթի մէջ նախաբարներին ասաց, «ի՞նչ, մեռեալներն անգամ կուզէք իմ դէմ յարուցանել...»:

* * *

Խորէն եպիսկոպոսը, պատգամաւորութեան առջ, նախ Պերայի գերեզմանոցը պիտի գնար՝ ժողովուրդը մխիթարելու և հանգստացնելու համար, իսկ յետոյ՝ պատրիարքարան հաշիւ ներկայացնելու: Բայց ոտը հազիւ փոխած, կենդանի հեռագիրը արդէն հասել էր գերեզմանոց և ամբողջ քաղաքի մասերը:

Հանգստարան հասածին պէս, իսկոյն պատարագիչ կանգնելով այն տեղ Առասաւորչայ փոքրիկ ժամի մէջ, Խորէն եպիսկոպոսը քարոզի է դուրս գալի պատարագը վերջանալուց յետոյ: Եւ չարամիտ հակառակորդաց բռնասրկութեան տեղի չը տալու համար, կանխապէս հրաւիրած էր Պերայի ոստիկանագետը «ժողովրդեան ուրախութեանց» ներկայ գտնուելու: Յակոբոս կա-


(Թուղիկոսի*) դամբանի մօտ մի բարձր տեղ կանգնելով, բանաստեղծական ոգևորութեան մէջ, դիմելով դէպի Հայրապետի գերեզմանը, ասում է. «սէր, միութիւն Վրո ազգիդ ներշնչելու համար, զուամ տարիքով վեր կացար Լջմիածնից մինչև Պօլիս եկար... բայց պանդխտութեան մէջ Վրո հոգին փչելով, ոսկորներդ թողեցիր մեզ յաւիտենական աւանդ, որի ամփոփուած վայրը այնչափ սուրբ է մեզ, որչափ սուրբ էին Վրո գործերը...»):

Երկար ատենախօսութիւնից յետոյ, թողնում է ժողովուրդը իւր աղաղակների մէջ ու շտապում դէպի Պատրիարքարան:

* * *

Շետեւեալ օրը Պատրիարքարանը ստանում է սատրազամ Միւթէրճիմ Մէհէմէտ Իււշտի փաշայից թագաւորական Իրապէն, որով հաստատում է Սուլթանը հայոց անբռնաբարելի երանանքները Պերայի գերեզմանոցի վրայ, որին ձեռք տալը խստիւ արգելում է միանգամ առ յաւէտ:

ԵՄԱԿԱՆ



*) Եյս լուսահոգի հայրապետը, որ եկած է եղել Պօլիս 1600 թուականներին ազգային չը գիտեմ որ երկպառակութիւնը խղաղացնելու համար, մեռնելով և թաղուելով պատեղ, ժողովրդի մէջ իր բարեպաշտ և ազգասիրական գործերի համար, սուրբի ազդեցութիւն է վայելում: Պատմում են թէ՛ հանգուցեալ Մատթէոս կաթողիկոսը, երբ դեռ երեխայ էր, ստերը և ձեռները կուշ եկած, ծանր հիւանդութեամբ տառապում էր: Սրա ազգասիրիկ մայրը ուխտ է անում և գալիս է Յակոբոս կաթողիկոսի գերեզմանին ու շուտով կատարեալ առողջութիւն է գտնում իր սիրեցեալ սորոս համար, որն այդ օրից ամեն կիւրակէ հրաշագործ հայրապետի գերեզմանին երկրպագութեան գալով, ազաչելիս է եղել նրան, որ հայոց կաթողիկոս լինելու շնորհը ստանայ:

ՏԱՃԿԱՀԱՅՔ

Ե Ի

ՆՈՑԱ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Ա. Պօլսոյ պատրիարքութիւնը հաստատուելէն ի վեր՝ տաճկահայոց պատրիարքութիւնը՝ միապետական էր, կենդրոնական էր:

Պատրիարքներն՝ միահեծան տէրն էին ազգային իշխանութեան, իբրև միջնորդ՝ ի մէջ ազգին և տէրութեան:

Պատրիարքաց այդ միապետական գրութիւնը՝ ժամանակին հարուստ ամիրայները, սկսան հակակշռել. անանկ որ ժամանակ եղաւ, որ ամիրայներն սկսան պատրիարքական իշխանութիւնը գործնականապէս վարել:

Ո՛վ որ պաշտօնի վերայ գտնուող եպարքոսին սարաֆն էր, պատրիարքական զսպանակը՝ այդ սարաֆ-ամիրային ձեռքն էր, որ քմածին կը տնօրինէր ազգին գործերը: Նա կը գնէր զպատրիարքն և կը հանէր, առանց ժողովրդեան կամօցը և ընտրական մասնակցութեանը:

Սոյն կառավարական շարաշար կիրառութիւնը այնչափ ծայրայեղութեան գնաց, որ 1840ի տեսնները խորհող ազգայիններ, ինչպէս եաղրճի Պօղոս աղայն (Օտեանի հայրն), Արճիկեան Յակօր Էֆէնտին և Տիվիթեան Յակօր Էֆէնտին, գաղտնի սկսան սահմանադրութիւն մը ծրագրել:

Նոյն թուականին՝ ժողովրդեան արհեստաւոր մասն սկսաւ խլրտիլ: Ժողովրդական ցոյցեր եղան ի Բ. Գաւուն՝ ընդգէմ ամիրայից բռնապետութեան, Իւսկիւտարու Շ'եմարանի բացման և փակման ու քմածին յանձանձման խնդիրն պատրուակելով: Սոյն միջոցին էր, որ ժողովրդեան առաջնորդող զլիսաւոր դրօշակակիրն՝ Սէյիտանէճի Իսկէնտէրն և այլք աքսորուեցան հեռու և մօտա՝ որ քաղաքներ՝ յօրաւոր ամիրայից լնկադրութեամբը:

Արքայապետ Ռ. Վուռը ժողովրդեան ձայնը լսեց և ազգային ուրոյն վարչութիւն մը հաստատեց, կէսն ամիրայական և կէսն էսնաֆներէ խառն կազմեալ աշխարհականաց ժողով մը, որոնց ամենը՝ 20 հոգիէ կը բաղկանային: Յետոյ հաստատուեցան **Գերագոյն և հոգեւոր** ժողով ըսուած մարմինները: **Վերագոյն ժողովը՝** էսնաֆ և ամիրայ խառն՝ 20 հոգիէ բաղկացեալ, և **Հոգևոր ժողովը՝** 14 եկեղեցականներէ: Ըսոնց գործադիր գրուեցաւ պատրիարքին քովն լրբֆէր անուանով մեկը, որ Արճիկեան **Յակոբ Էֆէնտին** էր: Այն կազմակերպումէն յետոյ ալ ամիրայներն չկրցին մարտել ժողովրդեան հաւասար կենալն ազգին առջև, զի պատրիարքարանի նիւթական պիտոյքն՝ ամիրայներն կը հոգային:

Ճամանակակից պատրիարքներն՝ այդ ատեններ՝ միշտ երկու սուրի մէջտեղը կը մնային: Եթէ դահակալող պատրիարքը՝ ամիրայից կողմը բռնէր, ժողովուրդը չէր սիրէր, և եթէ պատրիարքը ժողովրդեան կողմը տաչէր, ամիրայներն չէին ուզեր:

Ըզգն՝ ամիրայից սոյն բացարձակ զիկտատորութենէն ազատուելու համար միջոցներ չմնաց, որ չիորձէր:

1854ին լռին կերպիւ սկսաւ մարմնանալ սահմանադրութիւնը, հանգուցեալ Պալեան **Աիկողայոսի** նախաձեռնութեամբ և սօքթ. **Սուսինեանի**, **()տեան** **Վրիգորի**, **Օօրայեան** **Աիկողայոսի** և այլոց խորհրդակցութեամբ:

Արագրութիւնը նոր ծաղկած էր, և ազգեցիկ գիրք ունէր ազգին մէջ գաղափարներ կազմելու և շինելու համար: Ըմեն օր առաջնորդող յօդուածներով լուսաբանեցին ժողովուրդը: **Կ. Պօլսոյ Սեղը**՝ լրագիրն՝ այդ միջոցին անստորագիր՝ **()տեան Էֆէնտին** կը խմբագրէր: Սահմանադրութեան սգին և տրամադրութիւնները, և ազգին ընծայելիք անհուն օգուտներն բացատրող գեղեցիկ յօդուածներ կը գրէր շարունակ, որ ժողովուրդն լափելով կը կարգար, և ազգին մէջ սկսաւ մեկ կողմէն կրթութեան ինդիրն յառաջանալ, և միւս կողմանէ ամեն թաղերու մէջ և ի դաւառոս, այլ և այլ ազգօգուտ ու հայրենասիրական ընկերութիւններ կազմուեցան:

Արքայապետ 1860 մայիս 24ին նախ ազգային սահմանադրութիւնը հաստատուեցաւ, և ապա **Ըդրիանուպօլսեցի Սարգիս** եպիսկոպոսն պատրիարք ընտրուեցաւ: Հաստատուած սահմանադրութիւնը ազգովին էր, տէրութենէն վաւերացեալ չէր: Ըմիր

րայից բեկորներն՝ դեռ կը խլրտէին: Դողովրդականութիւնը գահակալած է:

Ամիրայից հսկայ մարմինը հակաշոնեյրը համար, ժողովուրդական անկախ և զօրաւոր մարմին մը պէտք էր, որ Վործադիր իշխանութեան և Ռեզահանուր ժողովոյն պետ լինէր: Այդ պետն՝ ընտրուեցաւ տօքթ. Մերվիչէն էֆէնտին, որ իւր ճարտարութեանը համար՝ այն ատեն լրագրաց մէջ հայոց Մէթէրնիկն ըսուեցաւ և ծափահարուեցաւ: Այլ իրօք շատ լաւ վարեց իւր պաշտօնը:

Սահմանադրութեամբ՝ հոգևոր իշխանութիւնը նուստացած էր, պատրիարքական իշխանութիւնը — որ կայսերական պէրախով մինչև իսկ ուղածն աքսորելու արտօնեալ է — սանձահարուեցաւ ազգին ընտրած ժողովրդական տարերքներովն:

Այս միջոցին Արուստղեմայ Յովհաննէս պատրիարքը վախճանեցաւ, և երբ պատրիարքական նոր ընտրութիւն պիտի կատարուէր, ներսի-դրսի, այսինքն միաբանութենէն, թէ դուրէն պատրիարք ընտրելու հարցն յուզուեցաւ, և ազգային ժողովն երկպառակեցաւ և սահմանադրութիւնը տապալեցաւ ամիրայից կողմն յարող ազգայնոց ոմանց մատնութեամբն: Այլ որովհետև Ռ. Վուռն վաւերացուցած չէր սահմանադրութիւնը, իսկոյն դադրեցուց զայն, և ազգին երեսփոխանութեան կողմէն ընտրուած Վործադիր իշխանութիւնը ցրուեց, և Ռ. Վուռն իւր կողմէն՝ եկեղեցականներէ և աշխարհականներէ բաղկացեալ առժամեայ խառն ժողով մը հաստատեց եպարքոսական հրամանագրով:

Դողովուրդն գլխաւորապէս երկուքի բաժնուեցաւ: Սահմանադրութիւնը ուզող և չուզող: Աւզողներն՝ լրաստորեալ կը յորջորջուէին, չուզողներն՝ խաւարեալ:

Այս խառնակութեան մէջ՝ Սարգիս պատրիարքն ժողովրդական ցոյցերով հրաժարեցաւ: Արկովիդիոյ առաջնորդ Ստեփանն եպիսկոպոսն պատրիարքական Տեղապահ ընտրուեցաւ:

Հակառակ կուսակցութիւններն հանդարտ չէին կենար:

Ամեն օր՝ նորանոր ժողովրդական յայտարարութիւններ կը ցրուէին:

Դողովրդին մեծ մասն՝ այնչափ սէր և հաւատք ունէր սահմանադրութեան վրայ, որ քարէքարջի օրն սահմանեց մայիս 24ին, և առաջին անգամ 1861 մայիս 24, յատուկ շուբենաւներով — զարդարեալ զափնիներով և գոյնզգոյն դրօշակներով — նմանը

չտեսնուած հոծ թափորով առաջնորդուեցաւ ի Պէյկող՝ Հինքար-խսէէէսի ընդարձակ և գեղածիծաղ դաշտը:

Ոքևորեալ ժողովուրդն նկատելով որ սահմանադրութեան հաստատութեան վերադարձը՝ Ռ. Գուռնէն կ'երկարէր, ծայրայեղութեան դիմեց, և խուժեց ի պատրիարքարան, և պաշտօնեայներն բռնելով գուրս վռնտեց և պատրիարքարանի դռներն կղպելով, բանալին տարին ի Ռ. Գուռն հազարաւոր՝ ժողովրդեան պատգամաւորութեամբ:

Սեբեաստիոս, 1863 մարտ 17ին կայսերական Խորհրդով վաւերացեալ՝ ազգային սահմանադրութիւնը վերադարձաւ ի պատրիարքարան:

Իզմիրի Պողոս Թազթագեան եպիսկոպոսը պատրիարք ընտրուեցաւ, և եկաւ ի մայրաքաղաք և բազմեցաւ իւր պատրիարքական աթոռն և սահմանադրական ուխտն հանգիստապէս կատարեց Մայր եկեղեցւոյ մէջ:

Յետոյ պիտի բացատրեմ, սահմանադրութեան ստորագիւլքն:

Մինչդեռ ազգն ըստ սահմանադրութեան, կը պարտաւորէր իւր իրաւանց կիրառութեանը հետ, նաև պարտուց վճարումն կատարել շատ անգամ կը զլանար: Այս ազգային ժողովէն ընտրեալ ժողովականք և երեսփոխանք՝ գումարման համար իրենց եղած պատրիարքական հրաւերներուն ներկայութեամբ չէին պատասխաներ:

Պատրիարքն յուսահատած, իւր խորհրդակիցներով, Ռ. Գրան կը դիմէ, և 1866 մարտ 20ին պետական հարուած մը կուտայ սահմանադրութեան, պաշտօնական յատուկ հրամանագրով, որ սահմանադրութիւնը կը դադրի իսկոյն:

Ռ. Գուռն դարձեալ կը միջամտէ, և իւր կողմէն եկեղեցականներէ և աշխարհականներէ կազմեալ Գործադիր մարմին մը կ'ընտրէ, մինչև ցնոր տնօրէնութիւն:

Խրիմեան սրբազանի օրով, 1869ին ()տեան Գրիգոր Էֆէնտիի բարեխօսութեամբ դարձեալ կը վերադառնայ սահմանադրութիւնն՝ ազգին:

Խրիմեան սրբազան՝ սահմանադրութեան տրամադրութեան համաձայն ընտրուեցաւ, բայց սահմանադրութեան մէջ գծուած բանաձևին համեմատ չուզեց ուխտել, այլ սահմանադրութեան սփռն վերայ ուխտեց:

1872ին Վերսէս պատրիարքն՝ սահմանադրութեան մէկ քանի մասերն բարեփոխել տալով՝ ընդունեց պատրիարքութիւնը:

Ուստի նեան էֆէնտին՝ իւր առանձին խմբագրութեամբ և Վերսէս պատրիարքի յանձնարարութեամբն ազգային ներքին կանոնադրո-ւթիւն մը խմբագրեց 1874ին, որ թէև ինչ ինչ յօդուածներով սահմանադրութեան տրամադրութեան հետ կը հակադասուէին, բայց իրար չէին վաներ: Ուստի ի փորձ, առանց քննադատութեան՝ միաձայն հաւանութեամբ ընդունուեցաւ և վաւերացաւ ազգային ժողովոյ կողմանէ, որ մինչև ցարգ ի գործ կը դրուի, և սակայն կառավարութեան կողմանէ դեռ վաւերացեալ չէ: Վարսաքննիչ զիւսններու կազմութեան հեղինակութիւնը՝ Ուստի նեանի այդ շինած ներքին կանոնադրութենէն ծնունդ առած է:

1880ին, Վերսէս պատրիարքի առաջարկութեան պաշտօնակա-նան դրո-ւթիւնը հաստատուեցաւ Վարչութեան մէջ՝ 7 անդամներէ բաղկացեալ, իւրաքանչիւրին համար բաժնուած գործերն՝ իրենց անհատական պատասխանատուութեան տակ, և ամենքը մէկէն հաւաքաբար առ ազդն պատասխանատու:

Մյուս պաշտօնականան դրո-ւթիւնը՝ տեսակ մը զիկտատորութիւն էր: Մյուս գրութեամբ, պատրիարքն վարչապետ մը պիտի ընտրէր, և այդ պետն՝ իւր խորհրդական ընկերներն, զոր օրինակ — յարաբերութեանց խորհրդական, կրթական խորհրդական, դատական խորհրդական, տնտեսական խորհրդական, ևլն:

Արդու տարուան փորձէ մը յետոյ, լքեցին այդ պաշտօնակա-նան դրութիւնը, և դարձեալ սահմանադրութեան վերագործան:

Սահմանադրութեան վերաքննութեան գործն՝ Պօղոս, խորի-մեան, Վերսէս և այժմ՝ Յարութիւն պատրիարքաց օրով քահանայի խնդիր է, բայց մինչև ցարգ անլոյժ խնդրոց մէջ՝ անլուծանելի առեղծուած մը դարձած է:

Ըսել կուզեմ, 20 տարի առաջ՝ գործն ուր որ էր, դարձեալ հոն է:

Հիմա ամիսօրինք սահմանադրութեան որոշ տրամադրութիւն-ները:

1.—Պատրիարք եղող անձը՝ Ս. Աջմիածնէն ձեռնադրեալ եպիս-կոպոս լինելէ զատ, իւր հօրմէն սկսեալ՝ օսմանեան հպատակ և 35 տարին լրացուցած լինելու է:

2.—Այլ Պօղոս պատրիարքը՝ բոլոր ազգային ժողովոց նախա-գահն է, և անոնց գործադիր իշխանութիւնը կը վարէ, և մաս-

նաւոր պարագայից մէջ՝ տէրութեան հրամանաց գործադրութեան միջնորդն է:

3.—Բնդհանուր ժողովը կրնորէ զպատրիարքը՝ գաղտնի քուէարկութեամբ և բացարձակ առաւելութեամբ քուէից:

Պատրիարքական ընտրելեաց ցուցակը՝ նախ համագործակց կրօնական ժողովը կը պատրաստէ գաղտնի քուէարկութեամբ և կը յղէ առ Վաղարքական ժողովն, և սա ալ՝ ներկայացման ցուցակով մը՝ ընտրելեաց նկատմամբ իւր կարծիքն կը յայտնէ, համագումարի պատրաստած ցուցակէն՝ 5 եկեղեցականաց անունները կը զատէ, և այս ցուցակին հետ մէկտեղ՝ համագումարի պատրաստած ցուցակէն ալ կը ներկայէ Ազգային Ժողովոյն:

4.—Բնդհանուր ժողովը՝ կրնայ Վաղարքական ժողովոյն ներկայացուցած ցուցակէն դուրս անձի մը վրայ քուէ տալ. բայց պէտք է որ այն անձին անունը նշանակուած ըլլայ Եկեղեցական համագումար ժողովոյն պատրաստած ցուցակին մէջ, վասն զի եկեղեցական ցուցակէն դուրս մնացած անձի վրայ ընտրութիւն չկրնար ըլլալ:

5.—Եթէ առաջին անգամ քուէից բացարձակ առաւելութիւն չգոյանայ, երկու առաւելագոյն քուէ ստացողաց անունները Տեղապահին կողմէն Բնդհանուր ժողովոյ անդամներուն կը ծանուցուի, և երկրորդ քուէարկութիւնը օրինաւորապէս այն երկուքին վրայ կըլլայ:

6.—Եթէ պատահի որ երկրորդ անգամ քուէարկութեան մէջ երկու անձանց հաւասար քուէ ելնէ, այն ատեն երկուքէն մէկը վիճակաւ կընտրուի:

7.—Ընտրութիւնը կատարուելէն ետքը տեղեկագիր մը կը շինուի՝ զոր բոլոր բաղմականք կըստորագրեն, և պատրիարքական Տեղապահին միջնորդութեամբ Բ. Պարան կը մատուցուի ի վաւերացումն:

8.—Յետոյ պատրիարքը պիտի ուխտէ Սայր եկեղեցւոյն մէջ՝ Ուխտագրին օրինակն այս է.

«Առաջի Աստուծոյ և ի ներկայութեան Ազգային Ժողովոյն՝
«հրապարակաւ ուխտեմ հաւատարիմ մնալ Տէրութեան և Ազգիս,
«և ճշմարտապէս հսկել ազգային սահմանադրութեան անթերի
«գործադրութեանը»:

9.—Այս ուխտէն ետքը, Տեղապահին պաշտօնը կը դադրի,

և նորընտիր պատրիարքը Ռ. Պարան հրաւերին վրայ՝ ուղղակի
() գոստափառ կայսեր կը ներկայանայ, պաշտօնական կերպիւ իւր
պաշտօնը կը հաստատուի, և Ռ. Պառն երթալով՝ կը ծանուցուի:

10.— Եթէ պատրիարքը սահմանադրութեան տրամադրու-
թեանցը հակառակ շարժի կամ վարուի, ամբաստանութեան տակ
կ'ընկնի, և եթէ հաստատուի, կը հրաժարեցուցուի:

Թէև մինչև ցարդ 3—4 հատ պատրիարքներ ընտրուեցան
սահմանադրութեան օրինօք, բայց և ո՛չ մէկն նոյն օրինաց ոյ-
ժով հրաժարեցուցուած են:

Վանք պատրիարքական պարտաւորութեանց:

1.— Պատրիարքին պարտաւորութիւնքն են սահմանադրու-
թեան սկզբանց համեմատ վարուիլ, և անոր ամեն կէտերուն ճշգիւ
գործադրութեանը ուշի ուշով հսկել:

2.— Պատրիարքը՝ իրեն եկած գործերը ո՛ր ժողովոյ կը վե-
րաբերի, այն ժողովոյն կը յանձնէ՝ քննութեան և որոշման համար:

3.— Պատրիարքական Լազրիները՝ պատրիարքէն զատ, ո-
րոշող ժողովոյն կողմէն ալ կնքեալ և ստորագրեալ լինելու է:
Լ, պա թէ ոչ՝ անվաւեր կը նկատուին ըստ սահմանադրութեան:

4.— Ստիպողական պարագայից մէջ՝ պատրիարքն՝ իւր պա-
տասխանատուութեանը տակ կարող է գործել, սա պայմանաւ որ՝
եղելութիւնը արձանագրել տայ, և որ ժողովոյն կը վերաբերինէ՝
անոր յաջորդ նիստին ներկայացնելու է ի վաւերացումն:

5.— Պատրիարքը իւր բացակայութեան ատեն՝ ազգային ժո-
ղովներու մէջ տրուած որոշումները պարունակող թուղթը գեւ
չստորագրած, կարող է անոնց վրայ իւր դիտողութիւններն յայտ-
նելով, ինդիրը կրկին քննութեան յանձնել:

6.— Պատրիարքը իրաւունք չունի ինքնին լուծել և փոխել
Արօնական և Քաղաքական ժողովները և անոնց վերաբերեալ
խորհուրդները:

Արօնական ժողովը՝ ըստ սահմանադրութեան, 14 անձերէ
կը բաղկանայ, և Լ, զգային Ժողովէն գաղսնի քուէարկութեամբ
կընտրուին, և երկու տարի շրջան ունին, առանց վերընտրելի լի-
նելու յաջորդ շրջանի համար:

Լ, յս Արօնական ժողովը կը սնօրինէ ազգային կրօնական
գործոց ընդհանուր տեսչութեան վերաբերեալ բոլոր գործերը:

Արօնական ժողովոյ ձեռնհասութեանէն վեր եղած ինդիր-

ներն՝ նախ Համագումար ժողովոյն կը տարուի, և անդ՝ երբ չը կրնայ լուծուիլ, ընդհանրական կաթողիկոսին կը դիմէ:

* * *

Վաղաքական ժողովը՝ որ ըստ սահմանադրութեան 20 անդամներէ պէտք էր բաղկանալ, վերջին բարեփոխութեամբ՝ 14 անդամներէ կը կազմուին, և նոյնպէս երկու տարուան շրջան ունին, և յաջորդ շրջանի համար վերընարելի չեն:

Վաղաքական ժողովոյ պաշտօնն է ազգային քաղաքական գործոց ընդհանուր տեսչութիւնը:

Երբ Վաղաքական ժողովը իրեն եկած քաղաքական գործերէն կարևոր խնդրոյ մը լուծումը իր ձեռնհասութենէն վեր դատէ, Ընդհանուր ժողովոյն կը դիմէ:

Վաղաքական ժողովն՝ իրեն օժանդակ խորհուրդներ և հոգաբարձութիւններ ունի.

1. Ոստանական խորհուրդ, որոյ պաշտօնն է, ազգային դատարակութեան խնդիրը:

2. Տնտեսական խորհուրդ, որոյ պաշտօնն է Վր. Պօլոյ մէջ դանուած ազգային բոլոր հաստատութեանց և անոնց կալուածներուն մատակարարութեան ընդհանուր տեսչութիւնը:

3. Վարտապահական խորհուրդ, որոյ նախագահն է՝ պատրիարքական փոխանորդը, և որոյ պաշտօնն է, ընտանեկան վէճերը լուծել, և Բ. Վրան կողմէ ի պատրիարքարան յանձնուած դատերը՝ յանձնարարութեան համեմատ քննել և որոշել:

4. Սանտրէի խորհուրդ, որոյ պաշտօնն ու պարտաւորութիւնն է՝ իւրաքանչիւր վանքի կանոնաց գործադրութեանը հրահանգել և վերատեսչութիւն ընել, եկամուտներն ու հասոյթները ըստուգել, և ծախքերը քննել ու կանոնաւորել:

5. Երկրային հոգաբարձութիւն, որոյ պաշտօնն է, ազգային կեդրոնական սնտուկին տնտեսութիւնն ու համարակալութիւնը:

6. Կրօնային հոգաբարձութիւն, որոյ պաշտօնն է՝ ազգային կտակաց տնօրէնութիւնը: Իր պարտաւորութիւնն է՝ կտակաց օրինաւոր կերպիւ և կտակարարին նպատակին և գիտաւորութեանը համեմատ գործադրութեանը հսկել:

7. Հիւանդանոցի հոգաբարձութիւն, որոյ պաշտօնն է՝ ազ-

գային հիւանդանոցը և անոր սեպհական կալուածներն ու եկամուտները անտեսել, և անոնց հասոյթովն ու ազգային մտուկին նպաստելը մատակարարել զայն:


Ց. Ամեն թաղ՝ իւր թաղական խորհուրդն ունի, որոյ պաշտօնն է՝ թաղին ժողովրդեան ազգային գործոց մատակարարութիւնը, եկեղեցւոյ և դպրատան հոգաբարձութիւնը, աղքատաց խնամակալութիւնը, և ազգայնոց մէջ պատահած վէճերուն քննութիւնն ու խաղաղարարութիւնը:

* * *

Ազգային Բնդհանուր ժողովը 140 երեսփոխաններէ կը կազմուի, որոց 20ը եկեղեցական երեսփոխաններ են, 40ը՝ գաւառներէն կընտրուին, և 80ը Կ. Պօլսոյ թաղերէն ընտրուած երեսփոխանքն են:

Վաւառներն յատուկ սահմանադրութեան հրահանգներ զըրկուած և ընտրութիւններ կատարուած են:

Վրազիւր



ՀԱՅՈՒՅԻ^{*)}

Մեր ազգի պատմութեան ամենահին շրջաններից սկսած մինչև մեր իսկ ժամանակները, հայ կենը գրեթէ համայն կանանց ցեղի մէջ մի բացառիկ և զարմանալի տիպար կը ներկայացնէ. մի կողմից տնարարական ու տնտեսաշահական գործունէութեան մէջ, միւս կողմից հոգեկան արիութեան ու հաստատամիտ աւանդապահութեան: Թէպէտ մեր ազգի տնտեսական ու արուեստագիտական բարգաւաճման մասին չունինք գրեթէ ոչինչ օրինավայել յիշատակութիւններ, ինչպէս և չունինք անուններն այն հարիւրաւոր ճարտարապետների և արուեստագէտների, որոնք կառուցել են Եւրմալի, Գուին, Լշտաշատ, Տիգրանակերտ, Լըծն ու Լնի, այսու ամենայնիւ հայ ճարտարարուեստի մասին կը տեսնենք ազատ յիշատակութիւններ դեռ մեր նահապետաց ժամանակների համար, երբ կը կարդանք, օրինակ, այն ոսկէհիւս ու շքեղ զգեստների մասին, որ կողպտելով կը տանին Հայաստանից Շամիրամի կամ Սեզոտրիսի զօրքերը: Ըհա այստեղ ինքնիրեն հարց է առջ գալիս. որոնց աշխատութիւնն է այդ հարստութիւնը, եթէ ոչ հայ կնկայ ձեռանց, որ իր բնատուր ճարտարութեան շնորհիւ կարողացել է այնչափ աշխատել ու արդիւնագործել, որ նորա ձեռակերտը վաճառելով, ոչ միայն հայ մարդն ու հայ ժողովուրդն է հարստացել, քաղաքներ քաղաքների ետեից կառուցել, իր տնային ապրուստը բարելաւել, այլ ևս այնչափ աչքի զարնող ճոխութիւն է ձեռք բերել, որ օտար աշխարհակալներն, Եգիպտոսից սկսած մինչև Միջին Լսիան, Հնդկաստանն ու Բալկանները նայել են Հայաստանի վրայ ինչպէս ճոխութեան աղբիւրի ու անհատնում գանձարանի վրայ:

*) Տպագրութեան համար մեզ ուղարկուած է Պարոն Գրիգոր Նիկողոսեանի մի բանաստեղծութիւն, որը նա արտասանած է Պօլսում Պէշիքթաշի օրհորդաց դպրոցի մրցանակաբաշխութեան հանդիսին սրբազան նախագահի հրաւիրածօր: Տպում ենք այստեղ ատենաբանութեան այն մի մասը, որը իր հետաքրքրութեամբ հանդերձ իգական սեռի դաստիարակութեան խնդրին է վերաբերում:

Ահա թէ որի՛ շնորհիւ է կանգնել և Անին ո՛ր և է 150—200 տարիների մէջ. ո՛րի հրաշքով են կրկին վերականգնել հայոց մի շարք հարստութիւնները յետ ջարդվելուց ջախջախվելու ու շատ անգամ խոտի պէս հնձվելու: Ահա թէ որին է պարտական հայ պատմագիրն իրաւունք ունենալով կոչել մի ժամանակուայ ճոխ ու զարդարուն հայ ժողովուրդը «վեհագոյնն հանուրց հիւսիսականաց»:

Այո՛, հայ կինն է եղել այն միակ թալիսմանը, որով մեր ազգը արեան գետերի միջով անցնելով, երբեք խեղդամահ չէ եղել, այլ դարերի արանքներով անցած, դարձեալ ափ է եղել կուշտ, ճոխ, զուարթ ու առոյգ: Հայ կինն է եղել հայ ազգի քառասուն դարեան պահպան հրեշտակը, ահա թէ ո՛ր էութիւնիցն է բազկացած այն մետաղը, որի պնդութեան համեմատ ո՛չ մի ուրիշ մետաղ գեռ չէ գտնուած, ո՛չ երկաթ, ո՛չ պղինձ, ո՛չ պողպատ և ո՛չ պլատին, այդ անմաշ, անհալ և աննման մետաղը հայ մարդն է հարկաւ, հայ կնիանից ժառանգած իր ամէն հոգեկան ու Փիղիկական մասնայատկութիւնները:

Թէպէտ արդիւնաբերութեան ոգին և տնտեսական ուժը իւրաքանչիւր ազգի յարատուութեան մեծագոյն նեցուկներից մինն է, սակայն ինչպէս գիտե՞ք, բարոյական յատկանիշներն էլ երկրորդականներից չեն: Իսկ գալով այդ առանձնայատկութեանց, նորէն հայ կինն իր կոչման ամենաբարձր աստիճանի վրայ է եղած միշտ. ըստ որում եթէ հին և նոր ազգեր (Յուդիթներ, Սաֆոներ, Արիպինաներ, Յովհաննաներ են յաւերժացրել իրենց պատմութեան էջերում, մենք ամենքից էլ աւելի ենք ունեցել այդպիսի անձնուրաց գիւցազնուհիներ:

Թողնենք մի կողմ պատմութեան մեզ աւանդած Վուարդները, Սանդուխտներն ու Խոսրովանոյշներն, այլ գնանք մտնենք կործանուած Անին և տեսնենք թէ քանի քանի խաթունների անուններ կան արձանագրուած այլ և այլ աւերակ հնձանների, բուրգերի, մարտկոցների և ամրոցների վրայ: Հարկաւ, եթէ գոցանից հէնց մէկն ունենային ուրիշ ազգեր, մեծահատոր գիւցազներ գութիւններ հիւսած, անմահութեան յիշատակ կը թողնէին յետագայ դարերին, մինչդեռ հայերս այդ կողմից միշտ անփոյ՛ ենք եղել. ինչպէս որ մնացել ենք և հիմայ:

Այս ամէնը յիշեցնելովս, ես բնաւ միտք չ'ունիմ պատմութեան դասախօսութիւն անել ձեզ, այլ ցանկացածս գէթ այնչափն է, որ կարելիոյն չափ պարզ կացուցանեմ ձեր առաջ այն մեծ դերը, որ ունեցած է հայուհին մեր ազգի գոյութեան խնդրի մէջ: Իսկ այս հարցի պարզաբանութեան հետ անմիջական կապ ունէ մեր իգական զպրօցների ունենալիք ուղղութիւնը, որը կարող է տանել մեզ և դէպի բարելաուութիւն՝ եթէ համապատասխան լինի հայ իգական սեռի բարոյական և մտաւոր յատկանիշների հետ, և դէպի անդունդ՝ եթէ կոյր հետեւութիւն և փոխառութիւն լինի օտար և խառնաղանձ ուղղութիւններից:

Բայց կարելի է աւարկողներ լինին թէ՛ ժամանակակից հայուհին այլ ևս վերև մեր նկարագրած հայուհին չէ մնացած, թէ այժմեան հայ կիներ և օրիորդը կորցրել են իրանց նախորդների ընդածին յատկութիւնները, ցեղային գծերը, այլ փոխուել են, այլասեռուել և խոպանացել են, ուստի ինչ եղանակաւ, և ինչ կերպ և իցէ աւանդելով նոցա եւրոպական ո՛ր և է ծրագրով ուսում, մեծ ծառայութիւն արած կը լինինք մեր ապագայի գործին: — Ա՛յ, պարօններ և տիկիներ, եթէ եւրոպական նորաձևութեան մէջ ամբողջելով ձեր մարմինն և երկու երեք օտար լեզուներ իմանալով կը կարծէք թէ հասած էք այն կատարելութեան, որ այլ ևս անմատչելի է սոգէտ, բայց իր ազգային աւանդական յատկանիշները պահած քոյրերին, չարաչար կերպով կը խաբէք ձեզ, որովհետև արտաքին ձևերի բարեփոխումը զեռ ոչինչ ասել է. գլխաւոր բանը առանձնայատկութեանց պահպանման մէջ է, որոնց կողմից նոյնչափ բարձր են քաղաքաբնակ հայուհիներից նոցա գաւառաբնակ քոյրերը, որչափ առաջիններն աւելի կարող են փայլիլ արտաքին և սնոտի տեսքով ու ցոյցերով: Թոյլ տուէք որ օրինակներով, ապացոյցներով խօսեմ, այն էլ այնպիսի օրինակներով, որոնց նմանները հաւաստի եմ, իւրաքանչիւրը ձեզնից կարող է իր սեփական տեսածներից և լսածներից բերել, ինչպէս որ նոյնը կ'անեմ և ես:

Ազգարէվ Հասան՝ Ալայից Այրզում ելած կ'իջնէ Վուրուչուխ կոչուած թրքաբնակ գիւղի մօտ նախաճաշելու: Թուրք, քիւրտ, հայ գիւղացիք կը սարսին մօտենալու վիթխարի և խոժոռագէմ դիւցազնին, որի մուսլ հայեացքներից ջղակտոր եղած

գետինը կ'ընկնէին ամենայանդուզներն անգամ: Չօրավարի սեղան բաղմած ժամանակ գիւղից կ'ելնէ, ուղղելով քայլերը դէպի Վազարէվը, մի նիհար, զառամ, թիկնակոր և ոտաբոբիկ ծեր կին, երկար ձեռնափայտի վրայ յենուած, ունենալով հետը ցնցոտիննուով պատած երկու փոքրիկ մանուկներ: Ա'երեւայ որ պառաւին կ'ուղեկցին իր որբ թոռները: Գողգոջուն քայլերով կ'գայ կը մօտենայ Վազարէվին և կանգ առած կը նայէ զօրավարին արձանի նման անշարժ պառաւը: Վազարէվը իսկոյն նկատելով նորան՝ կը թնդայ իր որոտալից ձայնով.

— Աննի (մայրիկ), դու հայ ես:

— Հայ, հայ եմ. կը պատասխանէ մենակերպ և հանդարտ ձայնով պառաւը:

— Այ, ես էլ եմ հայ, սերտարն եմ, կը տեսնե՞ս զօրքերս, կ'երթամ...

Անշարժ կերպով Վազարէվի բոմբիւնը լսելուց յետ, պառաւը կը հարցնէ թէ՛ պիտի մնայ նա Այրզրում:

— Ա'երջը պիտի նորէն յետ դառնամ, կը պատասխանէ Վազարէվը:

— Այ, եթէ այդպէս է, և մեզ մենակ պիտի ձգես ու յետ երթաս, հապա դու հայ չես, կը դարձնէ պառաւը ամենայանդուզն կերպով և իսկոյն և եթ բոբիկ մանուկների ձեռքից բռնելով, յետ կը դարձնէ նոցա, արհամարհական հայեացք ձգելով առիւծատիպ զօրավարի վրայ: Վազարէվը փոքր ինչ ապշած կը մնայ, արտասովոր կնոջ յանդուգն խօսքերից ու յետոյ նայելով քովը նստած մի ուռս ժէնէրալի, կ'ասէ առանձին պարծանքով.

— Գեռ մի մարդ չէ եղած մինչև հիմա որ թթու երեսով նայած լինէր աչքերիս մէջ, բայց այս պառաւ հայ կինը կուգայ նոյն իսկ վրանիս մէջ նախատելու զիս:

Գուցէ դուք ասէք թէ պառաւը չէր կարող երկիւղ կրել Վազարէվից, իմանալով որ նա հայ է և այնչափ հայրենասէր մէկը: Բայց ասեցէք, կ'աղաչեմ, ո՞վ կարող է ասել որ թրքաբնակ գիւղի մի յետնեալ ու աղքատ հայ մուրացիկն ամէն ինչի տեղեակ լինէր կամ թէ իմանար էլ, միթէ սովորական արիութիւն է նոյն իսկ իր ամենահարազատ մէկի երեսին անգամ այդպէս կանգնել, երբ նա Վազարէվի նման սարսափ ազդող մէկն է:

Այս մէջ բերելով ուզեցի ցոյց տալ ձեզ բուն հայ կնոջ

զարմանալի արիհոգութեան մի օրինակն, որից շատ աւելի փայլունները կարող էի մէջ բերել, եթէ այս մի հատի պէսները չի մանար գրեթէ իւրաքանչիւրը ձեզնից:

Իսկ թէ որ աստիճան իդէալականութեան է հասած նոյն բնական ու ինքնակաց հայ կնոջ մէջ առաքինութեան ու բարոյականութեան զգացումն, ահա մի ուրիշ օրինակ, զարծեալ այն ժամանակուայ անցքերից:

Սուսների Աշգրումից ելնելու ժամանակներն է. Ազարէվի յորդորը և մի քանի անձանց ջանքերը Աշգրումի հայ գիւղացւոց գաղթելու առաջը առնելու համար գրեթէ ապարդիւն կը մնան: Շարահատեալ, բռնի կերպով կը ժողովն հայ գիւղացիներին բոլոր նոցա սայլերը ուստի հիւանդներին Ղարս տեղափոխելու համար, մի հնար, որով կարելի լինէր գաղթելու միջոցներից զրկել սայլատէրերի ընտանիքները: Չը նայելով սորան, ուսաց սահմաններից մօտիկ հայ գիւղերը տուն տեղ ժողոված արդէն ճանապարհ են ընկել: Սահմանագլխի վրայ երեք հայ պաշտօնատարներ կտրել են առաջը ու կ'ստիպեն յետ դառնալ: Աչինչ համոզում և յորդոր ազդեցութիւն չի աներ: ()ըը տարածում է, պաշտօնեայներից երկուսը գրեթէ կը լան խեղճերի հետ միատեղ, որոնք կ'ուզեն մեռնիլ, բայց յետ չը գնալ: Երրորդը, աւելի զօրաւոր կամք ունեցողը, կը վճռէ ծեծի տակ մի քանիսը մեռնել քան թէ հարիւրաւոր ընտանեաց թշուառութեան պատճառ լինել: Ասկսին կողակները ծեծել մի երկու առաջ ընկածներին: Այց, ողբ, զժոխային տեսարան: Այս ժամանակ անիծող կանանց կարգից մի հրաշատիպ ու մատաղահաս աղջկէ կ'ելնէ քիչ առաջ ու աչքերից արտասուաց առու վազցնելով այսպէս կը գոչէ, «Աֆէնդի, Աստուած վկայ, մեր կեանքից չենք վախենար, մեռնիլը գիւրին է մեզ համար, մեր պատուից կը վախենանք, որովհետև պատիւներս առնելով, հոգեստաններս (կեանք ասել կ'ուզէ) էլ չեն առներ...»: Խօսքերը հազիւ աւարտած ուժակտուր կ'ընկնի գետին ու հեծեծանաց մէջ կը մարի:—Ասեցէք խնդրեմ պատուազգացութեան այսպիսի հրեղէն խօսքեր որ ողբերգութեան հեղինակի միտքը կարող է հնարել:

Ահա մի ուրիշ օրինակ հայու հուանդրուելի հաստատամտութեան, որ ապացոյց է նորա յարատեութեան և անվատ բնաւորութեան:

Թիֆլիսի մօտաւոր գիւղերից մէկից մի աղքատ կնոջ միակ զաւակը ձիւն ձմեռը էջը հեծած կը գայ Թիֆլիս ո՛ւր և է մի դպրոց մտնելու և բաւական ժամանակ պատսպարուելով այս ինչ այն ինչ համագիւղացիների մօտ, վերջապէս կը մնայ նա վերջին թշուառութեան մէջ, չը կարողանալով մի կայան գտնել: Կը գրէ իր մօրը իր կրած տաժանելի զոկանաց համար և հրաման կը խնդրէ յետ գալ գիւղը, սովամահի վտանգը ունենալով հակառակ գէպքում աչքի առաջ: 'Նամակը կարգալով մայրը կ'աօէ գիւղական քահանային.

— Տէր տէ՛ր ջան, գրի՛ր ինչ որ քեզ կ'ասեմ:

Քահանայն կը պատրաստուի գրել. թշուառ մօր աչքերը կը լցուին և մի վայրկեան, ներքին յուզմունքից, կը մնայ շնչափակ, բայց խիղջն կարգուրուելով կը գոչէ արիաբար.

— Արթին ջան,ան (կամ) մարդ դառ եկ, ան սովից մեռիր:

Այդ մօր զաւակը, պարոններ, հիմա եղակի հայազն գիտնականներից մինն է Աշուրպայի ծոցում (դա Հիւրիխի պրօֆէսոր Հարութիւն Արեւեանցն է):

Գալով նորագոյն ժամանակի հայուհեաց ունեցած պաշտօնին ժողովուրդի անտեսական ասպարէզի մէջ, դորա մասին դէժ մի համառօտ յիշատակութիւններ անելն արդէն ամբողջ ժամեր կարող է զբաղել մեզ, ուստի զանց անենք այդ մասին խօսելը. հերիք է միայն ցոյց տալ որ Հայաստանի գաւառաց մեծագոյն մասի մէջ, ուր դեռ մնատ չէ գործել եւրոպական գործարանների գործունէութիւնը, այդ գործարանների դերը դեռ մինչև այսօր լիովին և մեծ յաջողութեամբ կը կատարուի հայ կնկանով: 'Նոյն է եղել և ամենամօտաւոր անցեալի մէջ, մասամբ և այժմ նոյն իսկ Աովկասի հայաբնակ գաւառաց մէջ, ինչպէս Ղարաբաղ, Գանձակ, 'Նուխի, Արևան, Ախալցխայ, Շամախի ևլն. ուր հայ կինը հակայական մաս է ունեցել և մետաքսահանութեան մէջ, և երկրագործութեան արգիւնքների մշակման և խաշնարածութեան արտադրութեան՝ կաթի, բրդի ևայլն. որոնցից կամ տան պաշարն է մատակարարել այդ արիաջան և չգնահատուած մեղուն, կամ թէ վաճառի ապրանքներ՝ գորգերի, կապերանների և այլ և այլ հիւսուածների ձեով:

Ուրեմն, զուք տեսաք թէ ամենահեռու անցեալի մէջ և թէ մօտաւոր, հայուհին ինչ մեծ և անփոխարինելի դեր է ունեցել

Հայ ազգի պահպանման և յարատևութեան խնդրի մէջ, թէ՛ նիւթապէս աջակցելով էրիկ մարդուն և թէ՛ բարոյապէս: Ղուբ տեսաք, որ առանց այսօրուան դպրոցների նման դպրոցներ ունենալու, Հայուհին սակայն կարողացել է Կուցէ աւելին ներշնչել իր որդուն և ընձեռել իր եղբօր ու էրկան, քան թէ նաև այժմու Աւրուպական բարեկարգ դպրոցները կը կարողանան անել: Ղուբ տեսաք, որ Հայ կինը և Հայ գերդաստանը ազգի փրկութեան գործի մէջ կատարել է և՛ դաստիարակների ու մանկավարժների պաշտօնը, և՛ զինագործների և զինուորների: Աթէ այսչափը նա տուել է մեր ազգին չորս հազար տարուան փորձերով, ուրեմն դատապարտելի և նաև ծաղրելի չը պիտի լինի հիմա, որ այդ ամէնի վրայ աչք դրելով, այդ ամէնը մոռանալով, վեր կենանք ասենք թէ՛ «որովհետև աշխարհիս ստեղծելուց մինչև այսօր Հայ կինը միայն կապիկ և արջ է եղել, ուստի մայրեր պատրաստելու համար պէտք է, որ մենք ամէն կերպ ուժ տանք մեր դպրոցներին»: — Այս ասելովս, ի սէր Աստուծոյ, դարձեալ թարս չը հասկանաք խոսքերս, դարձեալ չը մեկնէք, որ ես դպրոցների կարևորութեան դէմ կը խօսիմ, ո՛չ, քա՛ւ լիցի, այլ այսչափ երկար բացատրութիւններովս, կ'ուզեմ սոսկ այն մտքի մէջ համոզել ձեզ, բայց մանաւանդ մեր այժմեան մանկավարժներին, որ մեր դպրոցները կարող են արգարև ազգին օգտակար լինիլ, եթէ նոցա ուղղութիւնը և ծրագիրը համապատասխան լինի Հայուհու աւանդական յատկանիշներուն, և մեր դպրոցները կարող են ազգը կործանել եթէ նոցա ուղղութիւնը անգիտակցական ընդօրինակումն լինի եւրոպական դպրոցների ու եւրոպացւոց պահանջների:

Սա է միայն իմ նախաբանս և վերջաբանս, սա է միայն իմ տենչանաց և աշխատութեան միակ նպատակակէտը և սա է իմ կենաց ամենամեծ փառքը, եթէ միայն վաղ թէ անագան մարդիկ ելնեն, նուիրելով իրենց ոյժերը Հայուհու յատկանիշների ուսումնասիրութեան, փոխանակ Աւրուպայի փողոցներում թափթփած գաղափարաց բեկորները մեզ ինչպէս հրաշալիք տալու:

Աթէ այս ընթացքով չ'երթանք, եթէ այս կերպով չը տանենք մեր ազգի դաստիարակութեան գործը, այլ ամէն ինչ երկրպագութեամբ ընդունինք, ինչ միայն Աւրուպայից կ'գայ, հաւատացէք որ մեր դագաղը մեր ձեռքով է պատրաստուած, և մեր մեր կորուստն անխուսափելի է:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՄՏԱՆՈՒՔԻՆ

(Լերմոսովից)

Մաքամոլոր, կորած սրտով
Նայում եմ ձեզ՝ նոր սերունդ.
Պատարկ, անյայտ նպատակով
Ընթանում էք դէպ անդունդ:

Աւամունք, կասկածք, լուծ են դառել՝
Ծանր լծակ ձեր վզին.
Ենթան, անգործ է ձեզ արել,
Ծերուկ գործրել բնաւին:

Օրօրոցում թիւր օրինակ
Ձեր առաջ միշտ ունէիք.
Ձեր պապերից դուք շարունակ
Սխալմունք միայն տեսնէիք:

Ձեզ նորանց դարձ իւրացրեցիք՝
Պարձ ուշացած անագան.
Եշխարհումը որոշեցիք
Պժուժ ապրիլ յաւիտեան:

Որպէս ուզին աննպատակ,
Ելժամ ճնշէ ձեզ ձեր կեանք,
Որպէս օտար նախատօնակ
Ճնշէ, զի չէք կոչնականք:

Պեռ չը գործած, դուք յոգնում էք,
Յետոյ խօսում տարիներ:
Լաւին, վատին դուք նայում էք
Միշտ ստանաակրտ անտարբեր:

Փոքրողութիւն, տմարդութիւն՝
Սորանք են ձեր սոսկ հնար,
Վտանգներից խուսափութիւն,
Երբ տալիս էք չարաչար:

Ենհամ քմաց, անդուրեկան,
Ենխտողիչ ու նիհար՝
Դուք վաղահաս պողի նման
Օտուից կախուած էք շուար:

Նժդեհներ էք միանգամայն
Վալարիներ ազեղացնում,
Բայց որ ընկնէք, նոյն իսկ ժամայն,
Օագիւունք գեղով են պճնում:

Վօղերի տակ ծաղրածեալ կրից
Չքնալ յոյսեր, ձայնք աղնիւ
Թաքցնում էք բարեկամից,
Որ չը կորցնէք ձեր պատիւ:

Վեռ նոր հպարդ դուք բաժակին՝
Եյն բաժակին փափկութեան —
Ոյժեր, աշխոյժ զուարթագին
Սորան ընդ միշտ յաւխտեան:

Յափրանքը չէր ձեր ցանկութիւն,
Եւ ակամայ յափրեցիք,
Իսկ խնդութեան հիւթեր սիրուն
Դուք ստորակայ արեցիք:

Ձեր սրտերը չեն բաբախում
Հրճուանօք բերկրական,
Երբ հրաշակիրա էք դուք տեսնում,
Վամ լսում երգ գերական:

Դուք ատում էք, կամ հէնց սիրում
Միշտ պատահմամբ՝ ըստ դիպաց՝
Սիրոյն ոչ մի զոհ չէք բերում
Եւ ատում էք անխմաց:

Երբ ձեր արիւնն եռ է գալի՝
Հրով բոցով ջերմացած,
Ձեր հոգւոյ մէջ անկիպելի
Սառոյցներ կան գաղանացած:

Նախնիների զբօսանք կենցաղ
Չանձրալի է ձեզ համար,
Խղձնտալից թէ բանախաղ,
Թէ նոցա կեանք ապիկար:

Սանհետանաք դուք աշխարհից՝
Բաղդից փառքից զրկուած,
Եւ միահաղ կատակալից
Յեա կը նայէք զարմացած:

Ոչ մի իմաստ և ոչ հանձար
Ձէք նուիրի դարերին,
Լոյս աշխարհից պանդխտաբար
Գուրք կանցանէք խմբովին:

Գժեհատեսիլ այդ խումբ տգեղ
Սանցնի անհետ, անշշունջ:
Որպէս էր նա անհանձարեղ,
Նոյնպէս կանցնի լուռ ու մունջ:

Բայց կը հասնի և այն իսկ օր,
Երբ ձեր յետնորդ՝ սթափեալ՝
Աը դայ, որպէս խիստ դատաւոր,
Որպէս զաւակ զայրացեալ...

Նա ձեր նշխարք պիտ անգոսնէ,
Ենդոսնէ հօր յիշատակ...
Սրտնեղու թեամբ միտք կը բերէ
Ձեր բարք ու վարք խայտառակ:

Օխական

Պետերգոֆ

1887 թ. 2 1/2 յուլիս



ՏԵՍԱՐԱՆ ԿԻՆԿԻՈՅ



Աղանա նոր ժայրաքաղաք Կիլիկիոյ.

THE HOUSE



ՍԶԳԱԳՐԱԿԱՆ

ԿԻԼԻԿԻԱ

Ա.

Թէ Կիլիկիա դարերէ ի վեր կարևոր դեր է ունեցած ընդհանուր ազգերու և մասնաւորապէս հայ ժողովրդի պատմութեան մէջ՝ սա մի ստոյգ ճշմարտութիւն է:

Ըստ աշխարհագրութեան՝ Կիլիկեան գաւառը լայնութեան 36—37 և երկայնութեան 32—37 աստիճաններուն վրայ, Սիւլերկրականի ծովափը տարածուած, 300 մղոն երկայնութեամբ ցամաք մ'է, որ հազիւ 60—70 մղոն լայնութիւն ունի: Ըրեմտեան կողմէն լեռներու գօտիներով պարփակուած և արևմուտքէն բերրի դաշտերով զարգարուած՝ հին դարերէ ի վեր ծանօթ է իր Cilicia-Trachea և Cilicia-Pedias անուանեալ երկու բաժանումներովը:

Երկիրը կ'ոռոգուի Տաւրոսեան ցրտաշունչ բարձունքէն խոնարհող չորս գետերով, որք են, Սարոս (Սիհուն), Պիլամնոս (Տ'իհան), Կալիփապնոս (Կէօք-սու) և պատմական Կիւրնոս՝ (Թարսուս չայը), որ թէև երբեմն իր վճիտ հոսանքովը զՆղեքսանդր վտանգաւոր արկածի մը կը հրաւիրէր և արծաթ ալիքներովը Կէոպատրայի ոսկի նաւակը կը ծեծէր, սակայն այսօր այնքան պղտոր է ու տղմուտ՝ որ գուցէ մի օր, իր կաւովն ու խիճով Կիլիկեան աշխարհը միացնէ Կիպրոսի հետ և իրականացնէ դարաւոր հարցուկներու պատգամը:

Կիլիկիա այժմ կ'արտադրէ գլխաւորապէս խաղող, ցորեն, դարի, կորեկ, շուշմա, բամպակ, պիստակ, բրինձ, փայտ, և շն: Երկրին հին անտառները ահագին քանակութեամբ նիւթ կը մատակարարէին երբեմն, մինչև իսկ Սողոմոնի տաճարին ատաղձները կիլիկեցի վաճառականներէ գնուած են ըստ ավանդութեան:

Պատմութեան մէջ Կիլիկիա կը յիշուի երբ Փիւնիկեցին Քիլիկիա կը հաստատուի երկրին մէջ, և իր անուամբ այս աշխարհը կը կոչուի Քիլիկիա: Յաջորդաբար յոյները և պարսիկները կը տիրեն երկրին, բայց տեղական լեռները յառաջ կը բերեն միշտ ազատ

*

իշխաններ, որոցմէ Սելենեա ընտանեաց անունը կը յիշատակուի Վարեհի և Վսերքսեսի ժամանակ:

Արիւնիոյ ժողովուրդը ճանչցուած է ի հնումն որպէս յանդուգն ծովահէն, և իրօք, իր բաղդախնդիր արշաւանքով սարսափ ազդած է մինչև Խտալիոյ սահմանները: Վրիստոսէ կէս դարու չափ առաջ Պոմպէոսի յաղթանակներէն անմիջապէս վերջն իսկ, Արիւնոն, որ Արիւնիոյ կառավարիչն էր (proconsul), միշտ կը գանգատէր այս անդուսպ լեռնականներուն դէմ: Արիւնոսի ատեն բնիկ իշխաններու և ()գոստոսի ատեն վեց ապստամբաբարքներու գոյութիւնն ալ կը ցուցնեն այն հոգին, որ երկար դարերու շրջանին մէջ վառ մնացած է Արիւնիոյ բնակչաց սրտին մէջ:

Այսու հանդերձ պէտք է յիշել նաև որ, Արիւնիա, գիտութեանց և դպրութեանց մէջ ալ նշանաւոր հանդիսացած է: Տարսոն քաղաքը, Վրիստոսի ատեններն իսկ ծանօթ էր որպէս մի կարևոր կեդրոն հեթանոս փիլիսոփայութեան և Արիւնիցի հռչակաւոր անձեր են Վրիստոսի ստոյիկեան փիլիսոփայն, Արադոս բանաստեղծն և Ս. Պօղոս առաքեալն:

Արիւնիոյ որ խիստ պիտի երկարի խօսիլ Արիւնիոյ պատմական բոլոր անցքերուն և ասորական, հայկական, արաբական, եգիպտական և օսմանեան գրաւումներուն վրայ, կ'անցնիմ անցողակի կերպով ներկայացնելու Արիւնիոյ հայոց արդի կացութիւնը:

Բ.

Ազգային-եկեղեցական տեսակէտով, այժմ Արիւնիա աւելի ընդարձակ է դէպի արևելեան հիւսիս և հարաւ, ուր հայ ժողովրդի մի ստուար բազմութիւն կը բնակի դարերէ ի վեր և ըստ այնմ Արիւնի կաթողիկոսական թեմը շատ աւելի ընդարձակ է քան բուն աշխարհագրական Արիւնիան:

Աւելի որոշ գաղափար մը տալու համար, կը նշանակեմ ի ստորև Արիւնիոյ կաթողիկոսութեան ենթարկուած քաղաքները՝ իրենց հայ բնակիչներու թիւերովն հանդերձ, ինչպէս նաև բաժանումներն բուն Արիւնիոյ, Փոքր-Ասիոյ և Սուրիոյ մէջ:

Կ Ի Լ Ի Կ Ի Ս

Արիւն	վիճակը, իր գիւղերով	հոգի	10,000
Ատանայի	» (Մէրսին, Տարսոն, ևլն)	»	30,000

Հաճընի	»	իր գիւղերով)	Հոգի	24,000
Հայ-լեռան	»	(Կեալուր տաղ գիւղերը).	»	12,000
ԼՆԽԹապ քաղաքը	»	13,000
Սարաշի	»	իր գիւղերով	»	13,000
Օւշթունի	»	»	»	20,000
Ֆրանուզի	»	»	»	12,000
				<hr/>
				134,000

Փ Ո Ք Ր - Ա Ս Ի Ա

Կիւրիների վիճակը, իր գիւղերով	Հոգի	9,000
Տարէնտէի » »	»	3,000
Տիվրիկի » »	»	10,000
Սանճըլըգի » »	»	16,000
Սալաթիայի » »	»	14,000
Լտի-եամանի » »	»	6,000
Եօզկատի » »	»	35,000
		<hr/>
		93,000

Ս Ո Ւ Ր Ի Ա

Հալէպի վիճակը (Բիլիս քաղաք և ըն)	Հոգի	5,000
Լնտիոքի » (Պէյլան, Լէքսանդրէթ) »	»	7,000
		<hr/>
		12,000
Բնգհանուր գումար	»	239,000
ԼՆՍ Թուոյն վրայ գումարելով մերձաւորապէս		21,000
		<hr/>
		260,000

Հայեր՝ բողոքական, կաթոլիկ, անկլիքան, գումար » 260,000
 Թէև կարելի չէ երաշխաւորել սոյն հաշիւներու կատարեալ ստուգութիւնը, բայց և այնպէս կրնանք զանոնք ընդունիլ ամենահաւանական թիւեր:

Վերոյիշեալ քաղաքներու մի քանին միայն, մեծամասնութեամբ կամ ամբողջութեամբ հայերէ կը բաղկանայ, իսկ մնացածներուն մէջ մեծամասնութիւնը կը կազմուի մահմետականներէ, որոնք օսմանեան պետութեան խնամքներուն շնորհիւ սիրով կը վարուին հայերու հետ:

Կիլիկիոյ մէջ հայ ժողովուրդը, իր գտնուած բնակավայրին համաձայն, մտաւորական և բարոյական կարողութիւններով, զբաղ-

մունքով ու լեզուով զանազան վիճակներ կը ներկայացնէ: Չոր օրինակ, երբ Սարաչի, Լտանայի և Լայնթապի բնակիչ հայը արհեստով և վաճառականութեամբ կ'գրադի, թուրքերէն կը խօսի և միտքով ճարպիկ՝ այլ հոգով տկար կը տեսնուի, անդին, լեռնային գիւղերու և քաղաքներու մէջ՝ երկրագործութեամբ կը պարպի, գէթ աղաւաղեալ հայերէն մը կը խօսի և կը սփռէ աւանդական սովորութիւններ ու բարքեր, որոց մէջ խառն են սէգ խտութիւն և անքաղաքաւար վարմունք միանգամայն...:

Լյս գաւառին մէջ գործածուած հայ բարբառներն ալ իրարմէ տարբեր են և ստորաբաժանումներ ունին: Քաղաքներու մէջ մայրենի լեզուին մոռացումը կարծեմ հազիւ մէկ դարէ ի վեր սկսած է, որմէ առաջ, տակաւին օսմանեան կառավարութիւնը Արիւկիոյ մէջ հաստատուած չը լինելով՝ երկիրը թուրք, թիւրք մէն, եգիպտացի և եէնիչէրի բռնակորներու յարձակումներուն ենթարկուած էր և տեղացի հայ ժողովուրդն ալ ճնշումներու ներքեւ ընկճուած՝ կ'ստիպուէր հայերէն չը խօսիլ: Ուրախալի է սակայն, որ այժմ օսմանեան Ահհաիառ Սուլթանին ազատամտութեան շնորհիւ, նոր սերունդը վարժարաններու մէջ կ'ուսանի մաքուր աշխարհաբար լեզուն*):

Արիւկիոյ ժողովրդի տնտեսական կացութեան վրայ մանրամասնօրէն խօսիլն ուրիշ առթի թողլով, առայժմ այսչափ միայն կ'ըսեմ, որ երկրին ծովեզերեայ դիրքը, արտաքին և ներքին առևտուրը, բնական և արհեստական արտադրութիւնները և նմանօրինակ առաւելութիւնները բաւական են ամենափոքր միջոցի մէջ ծաղկեցնելու Արիւկեան աշխարհը՝ թէ երկրագործութեան, թէ արհեստից և թէ վաճառականութեան մէջ, այն միակ պայմանաւ, որ զօրաւոր անկցութեամբ և ընկերական գործակցութեամբ քաջալերուի տեղացի ժողովրդին բնական ընդունակութիւնը:

*) Մասնաւորապէս նկատել արժան է որ մինչև մտ ժամանակներս երկրին հայերը, թէ ընդհանուր վարչութեան և թէ արտաքին կռիւներու մէջ, թուրք տիրակեաներու գործակից գտնուած են: Եյս մի տեսակ ինքնավարական վարչութեան ստեղծման, մի և նոյն ժողովի մէջ կը բազմէին մահմետական իշխանն ու հայ (մահրասան) առաջնորդ, Լաիսկուպոս): Իսկ երկրին վարչական կազմակերպութեան յետոյ, հայերը, որպէս հաւատարիմ հզատակ օսմանեան բարիքնամ կայսրութեան, հրաժարած են ցեղակառ իշխաններու լազակցելէ: «Գօզան օղլու» նշանաւոր աստամբապետը որ վերոյիշեալ կերպով մինչև 15-20 տարի առաջ կ'իշխէր Հաճընի մէջ տեղացի հայերու ձեռք ձեռքակալուեցաւ:

Գ.

Մասնաւորելով մեր տեսութիւնը Կիլիկիոյ կրթական վիճակին վրայ՝ ամեն լաւատեսական նկատումներով հանդերձ, չէ կարելի տխուր տպաւորութենէ մը զերծ մնալ: Այս տպաւորութիւնը այնքան ցաւ կը պատճառէ, որքան կը տեսնենք մէկ կողմէ եւրոպացի և ամերիկացի միսիոնարներու յաջող ջանքերը և միւս կողմէ հազարաւոր հայ ընտանիքներու բարոյական թշուառութիւնը:

Երեւակայել բազմաթիւ ընտանիքներ Տաւրոսի և Ամանոսի ճիւղերուն վրայ սփռուած, որոնք տարիներով զուրկ կը մնան հայ հոգեւորականի մը այցելութենէն, որոնք չեն ճանչեր իրենց ազգն ու եկեղեցին, երեւակայել հարիւրաւոր քաղաքաբնակ ընտանիքներ, որոնք մոռցած ազգային լեզուն, և հեռացած մայրնի եկեղեցիէն՝ հազիւ կը ներկայացնեն ուրոյն ցեղային գոյութիւն մը, երեւակայել պատմական վանքեր ու եկեղեցիներ անխնամ և աներակ, վերջապէս հարիւրաւոր հայ կղերականներ անուս, ապիկար, որոնք ժողովրդին բարի տրամադրութիւնները միան սպաննել գիտեն...—ահա ինչ որ բաւական է մեր Կիլիկիցի եղբայրներուն արգի կացութիւնը պատկերացնելու:

...Եւ այց այս ամենուն դէմ Կիլիկիոյ վիճակը յուսահատական չէ տակաւին: Օգորաւոր տարրեր կան տեղական ժողովրդին զգացմանց և կարողութեանց մէջ, որոնք մշակուելով անտարակոյս մեծ արգիւնքներ կրնան արտադրել: Արդէն Միացեալ-Ղնկերութիւնք վարժարաններ հաստատած են Հաճընի, Օէյթունի և Սիսի մէջ, որոնք երկրին մեծ օգուտներ կը խոստանան: Տեղական շարժումներ ալ պակաս չեն միշտ՝ կրթութիւն ծաւալելու համար: Ատանայի, Հաճընի, Մարաշի, Քիլիսի, Այնթապի և ուրիշ քաղաքներու մէջ ընկերութիւններ կազմուած, լուծուած, վերակազմուած և վերջապէս — թէև անյաջող — միշտ ջանքեր անպակաս եղած են 15 տարիներէ ի վեր: Սակայն անհրաժեշտ կերպով պէտք է մի գործուոր, կապմակերպեալ ճարմին, որ կարող ըլլայ սուղ միջոցի մէջ արտաքոյ կարգի գործունէութիւն ցոյց տալու և գործնական մղում մը տալու Կիլիկիոյ ազգայնոց արհեստական, երկրագործական ու աււետրական գործունէութեան և մասնաւանդ. ապահովելու ազգային եկեղեցական — կեանք:

Արմէն

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԳԱՒԱՌԻՆ ԵՒԴՈՎԻՈՑ

Ազգուկիան մի բաւական ընդարձակ գաւառ է. լայնածաւալ հովտի մը մէջ է զետեղուած քաղաքն. իւր բոլորտիք կը շրջապատեն դալարագեղ պարտէզներ և այգիներ. բլուրներն սակայն լերկ են և զուրկ հրապոյրէ: Իրմէ 8—10 ժամ հեռաւորութեամբ կը տեսնուին նահանգներն Հերեկ, Օւիլէ և Աէօկեսարիա, որոց իւրաքանչիւրն ունի բազմաթիւ գիւղեր: Հիւսիսային կողմը կը տարածուի ընդարձակ դաշտ մը Պազովա և հարաւային կողմն ընդարձակագոյն մը Արզովա, որք կը մատակարարեն գաւառին ամբողջ ցորեանն: Քաղաքին և դաշտերուն մէջէն օձապտոյտ կ'անցնի Իրիս գետին մէկ ճիւղն: Գաւառին հողն բաւական բարեբեր է. կրնայ արտադրել բարեխառն կլիմայի մը բոլոր արմառքն ու պտուղներն խիստ առատ կերպով. սակայն երկրագործութիւնն, ինչպէս Թուրքիոյ բոլոր գաւառներուն մէջ, հոս ևս իր նախնական վիճակին մէջ կը գտնուի: Ազգուկիոյ միջօրէականն քիչ տարբերութիւն ունենալով Ա. Պօլսոյ միջօրէականէն, քաղաքին մթնոլորտական վիճակն ալ գրեթէ նոյնն է Ա. Պօլսոյ վիճակին: Գաւառին ջրերն շատ առատ են, թէ քաղաքին մէջ, թէ նահանգներն և թէ գիւղերն. ամեն տուն ունի մշտահոս աղբիւրներ, միայն թէ մաքուր ջուր գտնելն շատ դժուար է աստ, զի աղտոտ պողոտաներու մէջէն անցնելով կը բաժնուի քաղաքին զանազան թաղերն: Քաղաքն ունի 7,000 տունի մօտ բնակիչ որոց 1,500ն հայ են, 5,000ն թուրք և մնացեալքն յոյն և հրէայ: Արկրագործութեամբ կը պարապին մեծաւ մասամբ թուրքերն, իսկ արհեստով և վաճառականութեամբ հայերն: Հայերն ունին 7 եկեղեցիք, Ս. Լստուածածին (մայր եկեղեցին), Ս. Արարողութիւն (Ս. Սարգիս), Ս. Ստեփաննոս, Ս. Մինաս, Ս. Գէորգ, Ս. Գ. Առաքելիչ և Քառասուն Մանկունք. ասոնք մեծ մասամբ վայելուչ շէնքեր են. քաղաքէն մէկ ժամ հեռաւորու-

Թեամբ կառուցեալ է Յովակիմ Աննայի վանքն, ուր կայ մի ծերուկ վարդապետ Սարտիրոս անուամբ, և մի քանի սպասաւոր. վանքն այժմ անխնամ թողուած է. ունի եղեր ժամանակաւ ժառանգաւորաց վարժարան մը որ լաւական թուով աշակերտներ է դաստիարակած. ունի այժմ ընդարձակ հողեր, որք եթէ լաւ մշակուին կրնան բաւական արդիւնք արտադրել: Քաղաքէն 4 ժամ հեռաւորութեամբ կայ մի ուրիշ վանք յանուն Ս. Յովհանն Ասկերբերանի, սա ևս ունի մի Սանուէլ վարդապետ և մի քանի տիրացու. սորա վիճակ ևս նախանձելի չէ: Քաղաքիս հայերն ունին ազգային վարժարան մը, որ վերջերս գրեթէ ծաղկոցի վերածուեցաւ. օրիորդաց վարժարան մը Արդուհեան անուամբ, որոյ աշակերտուհիք դժբաղդաբար այնչափ նուազեցան որ փակուելու հարկին մէջ կը գտնուի, ասոնց մէջ մխիթարական է տեսնել Վերսիսեան մասնաւոր վարժարանն, կառուցեալ յանուն երջանկայիշատակ Վերսէս պատրիարքին, որ քանի մը բարեկեցիկ անձանց օժանդակութեան պտուղն է, և որ իւր այժմեան վիճակին մէջ բաւական բարեկարգ է: Թուրքերն ունին 46ի մօտ մեծ և փոքր մզկիթներ, որոց ոմանք զմրէթաւոր են և հոյակապ, ունին բազում ծաղկոցներ, բայց ոչ բարձրագոյն վարժարան. վերջերս որոշում տուին բարձրագոյն նախակրթարան մը (իտատիէ) հիմնելու, բայց գեռ գործի ձեռնարկած չեն: Ըստ կը գտնուին 200 տունի մօտ հայ-հոսովեականք, որք ունին եպիսկոպոս, եկեղեցի և վարժարան: Ան մի քանի տուն հայ-բողոքականք մի փոքր ժողովարանով և ծաղկոցով: Յոյներ 200 տունի մօտ, շատ ետ մնացած են դաստիարակութեան մէջ, ունին մի եկեղեցի և մի վանք, չունին վարժարան և թրքախօս են: Էրէայներ 100 տունի մօտ, ունին սինակոկ և վարժարան, կան նաևս ժէզուիթներ վարժարանով և եկեղեցիով. պէտք է գիտնալ սակայն որ օտար եկեղեցին գրեթէ ընաւ ազգեցութիւն չէ ունեցած դաւառին հայոց վրայ: Էայոց առաջնորդարանն ունի կազմակերպեալ սահմանադրական ժողովներ, որոց նիստեր տեղի կունենան դիւանական բարեկարգութեամբ. իւրաքանչիւր եկեղեցի ունի իւր թաղական խորհուրդն, իւր քահանայքն և դպիրքն: Վահանգեորուն մէջ ամենէն մեծն է Օխլէ որ քաղաքին հիւսիսային արևմտեան կողմը կիյնայ, ունի 2,500ի տունի մօտ բնակիչ, որոցմէ 250 տունն հայ են. սոքա ունին Ս. Յակոբ անուամբ եկեղեցի մը և վար-

ժարան մը. հայերն թրքախօս են: Օլիէ ունի 120 գիւղ իւր շրջակայքը, որոց բոլորն ալ թուրք են: Լսիէ վերջը կուգայ Վէօկեսարիա որ Եւզոկիոյ արևելեան կողմը կիյնայ. սա ունի մի պատմական բերդ, ուրիէ շատ հնութիւններ են դանուած, ընտիր մարմարեայ արձաններ, որք սակայն փշրուած են շէնքերու գործածութեան համար: Վէօկեսարիա ունի 1,800 տունի մօտ բնակիչ, որոց 200 տունն հայ են մեծաւ մասամբ թրքախօս. սորա ունին Ս. Լստուածածին անուամբ եկեղեցի մը և վարժարան: Քաղաքին մօտ կան 80 գիւղեր, որոց մին Ղաբոււազըը հայ գիւղ մ'է ամբողջ 60 տուն բնակչօք. ունի Ս. Լստուածածին անուամբ եկեղեցի. մնացեալ բոլոր գիւղերն թրքաց են: Վահանգաց երրորդն է Հերեկ որ Եւզոկիոյ հիւսիսային արևելեան կողմը կիյնայ, ունի 250 տուն բնակիչ, որոց կէսն հայերէ կը բաղկանայ. սորա հայերէն կը խօսին. ունին Ս. Ստեփաննոս անուամբ եկեղեցի մը և վարժարան: Հերեկի շրջակայքը կան 125 գիւղ, որոցմէ մին Տաղըը հայոց է մի փոքրիկ եկեղեցեալ: Լոյժմ անցնինք Եւզոկիոյ քաղաքին գիւղերուն: Լոբովաի դաշտն ունի 100 գիւղ, որոց վեցն ամբողջովին հայոց են. սոցա աւուանքն են Չիֆթիք 60 տուն, Ս. Յակոբ եկեղեցի. Գետաղաղ 28 տուն, Ս. Սարգիս եկեղեցի. Քէրվանսէրայ 56 տուն, Ս. Լստուածածին եկեղեցի. Եարթմըը 60 տուն, Ս. Գէորգ եկեղեցի. Պոլիս 35 տուն, Ս. Լուսաւորիչ եկեղեցի. Թախթիպա 35 տուն, Ս. Լստուածածին եկեղեցի: Ղազովա ունի 120 գիւղ. ասոնց մեջէն Պիւսկիւճիւք հայ գիւղ մ'է ամբողջովին, ունի Ս. Յակոբ անուամբ եկեղեցի. Լնտիզ թրքախօսն է, կան 15 հայոց տուներ որք Ս. Փրկիչ անուն եկեղեցի մը ունին. Գրիգորէս ամբողջ հայ, 50 տուն, Ս. Յակոբ եկեղեցի. Սարազ թրքախօսն, 8 տուն հայ, Ս. Սարգիս եկեղեցի. Կիւրճի գիւղ բոլորն ալ հայ, 6 տուն, Ս. Սարգիս եկեղեցի: Սեւմի լեռնադաշտն քաղաքին արևելեան կողմը կիյնայ. ունի 65 գիւղ, որոց երկուքն յոյն են և մնացեալք թուրք: Կոմանա, Եւզոկիոյ հիւսիսային արևելեան կողմը. սա մի աւերակներով լի դաշտ է, կը կարծուի թէ հին Եւզոկիան հոս կառուցուած էր. ունի 65 գիւղ, որոց բոլորն ալ թուրք են: Լոյժմ անցնինք քաղաքին վաճառականական և արհեստական վիճակին:

	Ուկ
Եղաճա (աս բարակ շղարչ է սահմանաւոր մեծու- թեամբ, որու վրայ կան բանուած գոյնզգոյն ծաղիկ- ներ, արևելքցիք և պարթևացիք շատ կը գործածեն: Եւզոկիոյ եղաճան կ'երթայ Փոքր-Մսիոյ գրեթէ բոլոր քաղաքներն, նաև Կոստանդնուպոլիս)	20,000
100,000 Զրայ (մէկ Զրայ 20 Էարսա)	
Կարմիր կտաւ, 1,000 քիւլչէ (մէկ քիւլչէ 20 ծրար, սորա մէկ ծրարն 20 Էարսա): Մ,յս կտաւին մէկ մասն կը գործուի տեղական թելով զոր մանած կ'անուանեն և միւս մասն եւրոպական թելով	1,500
Պղնձեղէն զանազան անօթներ 300,000 օխա (պղինձն կուգայ Եւզոկիոյ հարաւային արևելեան կողմը գըտ- նուող և չորս օր հեռաւորութեամբ հանքէ մը, զոր Մ,րղն կ'անուանեն, տարին 200,000 օխա խառն պղինձ կուգայ Եւզոկիա, ուր կը գտուի արքունի ձուլարանին մէջ. իսկ 100.000 օխա կ'երթայ Եւրոպա, հոն լա- ւագոյն կերպով կը գտուի և վերստին կուգայ Եւզո- կիա, ուր պղնձագործաց ձեռամբ գործուելով կը զըր- կուի շայաստանի և Փոքր-Մսիոյ զանազան կողմեր:	35,000
Վաւառէն կ'ելնէ նաև բաւական քանակութեամբ ցորեն և գարի որք կ'արժեն մինչև 300,000 ոսկի, բայց տեղացիք կը սպառեն զայնս ամբողջովին:	
Ոչխարի բուրդ կ'արտահանուի մինչև 15,000 ոսկւոյ արժու- ութեամբ:	
Շամադումար (առանց ցորենան և գարին ի հաշիւ առնե- լու)	115,000 ոսկի:

ԱՐՅԵՍՏՔ

Պղնձագործ, 150 խանութ, գրեթէ ամենքն ալ հայ. Էր-
լախագործ 50 խանութ, 40ը թուրք և մնացեալք հայ. սպաղ-
նագործ 20 խանութ, 15ը հայ և մնացեալք յոյն. Բնիկագործ
10 խանութ, 3ը հայ և միւսներն հրէայ. անագագործ 30 խա-
նութ, կէսն հայ և կէսն թուրք. դերձակ 25 եւրոպական որոց
24ը հայ և մնացեալը յոյն, արևելեան 50 խանութ, 41ն հայ,

9ն յոյն. քարահատ 10 անձ, բոլորն ալ հայ. որմնագիր 100 անձ, հայ, յոյն և թուրք հաւասար թուով. ոսկերիչ 10 անձ, բոլորն ալ հայ. ժամագործ 20 խանութ, 17ն հայ, 3ն յոյն. Երոս 10 հոգի, 3 հայ մնացեալք յոյն: Ազգմաի գործարան 120 փոքր շէնքեր, իւրաքանչիւրն ունի իւր մէջ 8—10 գործաւոր, բոլորն ալ հայոց են և աղքատներ կերակրելու մեծ ասպարէզ կը բանան. ներկարար 5 հատ բոլորն ալ հայ, կտաւ ներկելու գործարան 20 հատ, բոլորն ալ հայ. կտաւն կը գործեն կանայք հարիւր ճախարակի վրայ. կօշկակար 20 խանութ եւրոպական որոց 15ն հայ և մնացեալք յոյն. 50 արևելեան մեծաւ մասամբ թուրք. հողատնակառուի 25 խանութ, բոլորն ալ հայ. թամբագործ, սանձագործ, պարանագործ և պայտառ ընդ ամենը 150 խանութ, գրեթէ բոլորն ալ թուրք. վարսավիրայ 10 հատ, բոլորն ալ հայ. վիրաբոյժ 1 հայ. բժիշկք 2 հայ, 1 յոյն և 1 իտալացի (գեղագործներն բժիշկներն են, յատուկ գեղարաններ չկան). փաստաբանք 2 հայ, 1 յոյն: Վաղաքն ունի նաև կաշիի աննշան գործարան որ կ'արտագրէ տարեկան 1,000—1,500 ոսկոյ արժողութեամբ կաշի և զոր պէտք է յաւելուլ վերոյիշեալ 115,000 ոսկոյ գումարին վրայ:

ԽԱՆՈՒԹՊԱՆՔ

Մանիֆաթուրա 200 խանութ, հայ և յոյն կէս առ կէս. փերեզակ 60 խանութ, 30 հրէայ, 15 թուրք և մնացեալքն հայ և յոյն. սրճարան 50 խանութ, 20 հայ, մնացեալքն թուրք. գինետուն 2 խանութ (պէտք է գիտնալ սակայն որ Աշղոկիա գրեթէ ամեն տուն գինետուն է, զի կը գտնուի առատ օղի և գինի). նպարավաճառ 150 խանութ, 100 թուրք, մնացեալքն հայ և յոյն. մնավաճառ 20 խանութ, 17 թուրք, 3 հայ. հացագործ 20 խանութ, բոլորն ալ թուրք:

Պլխաւոր վաճառականներն գրեթէ բոլորն ալ հայ են. որոնցից մինն է Պ. Տիգրան Ղաֆնաւորեան, հիմնագիր Արսիսեան տղայոց վարժարանի, որ մի շատ ուղղամիտ և ազնիւ հայ երիտասարդ է:

ՀՆԱԳՐԱԿԱՆ

Վաղաքիս (Եւգոկիոյ) արևմտեան կողմն, շուկային մօտ, կը գտնուի «ՎՔԸՔ-ՎՂԳՂար» (քառասուն կուսանք) անունով եւրեւելի հնութիւն մը: Սա մի շատ գեղեցիկ ամփիթատորոնի ձեւով երկյարկ շէնք է, որ արևելեան ճարտարապետութեան կատարելութիւններէն մին կրնայ համարուիլ. դժուար է տեղացիներէն մի ստոյգ տեղեկութիւն քաղել այս մասին, այլ թուրք պատմութիւնն կը յիշատակէ նմանօրինակ շէնքեր թէ աստ և թէ ի Սեբաստիա, որք շինուած ըլլան Վոնիայի սուլթան Վէյ-Վիւսրէվէն ասկէ 650—700 տարի առաջ: Սերոյիշեալ շէնքն ունի սպիտակ և կարմիր մարմարիոնով քանդակեալ գեղեցիկ դուռ մը, ուրկէ անցնելով կը հասնինք գրեթէ քառակուսի հրապարակ մը, որուն չորս բոլորը կան սենեակներ կամարակապ, այս կամարներ կը բռնեն 12 մարմարեայ միակտուր սիւներ իւրաքանչիւրն 3 մետր բարձրութեամբ. շէնքին ճակատն կայ մի հոյակապ տաճար, ուր կը տեսնուին գեղեցկակերտ մարմարեայ քանդակներ, իսկ պատերն կը ծածկեն կապոյտ և կանաչ յախճապակիէ շինուած ճարտար մօզաիքներ և արաբական արձանագրութիւններ: Երկու յարկերու սենեկաց թիւն է 40, սակայն յայտնի կերևայ թէ ի հնումն կայ եղեր երրորդ յարկ մը ևս որ այժմ քանդուած է: Ստորնայարկին սենեակներէն միոյն մէջ կան 21 դամբարաններ, առանց որ և է արձանագրութեան: Եյս դամբարանաց շէնքն և դիրքն միանգամայն մեզ կարծել կուտան թէ քրիստոնէից կը պատկանին, զի ուղղուած են դէպի արևելք, որք եթէ մահմետականաց լինէին՝ պարտ էին նայել դէպի հարաւ, ի Մէքքէ: Երգէն աւանդութիւն մ'ալ կայ թէ քառասուն քրիստոնեայ կուսանք (որ ազգի վերաբերելին չգիտենք) նահատակուած և հոն թաղուած են, ուրկէ շէնքն առած է իւր անուն «ՎՔԸՔ-ՎՂԳՂար»: Եյսու հանգերձ շէնք կրնար խորհիլ թէ մահմետականաց ձեռօք հիմնուած շէնք մը, քրիստոնեայ կուսանաց դամբարանի տեղ ծառայելու նպատակաւ շինուած ըլլայ, այլ պարզապէս մօտ


ժամանակներս, շէնքն լքեալ տեսնելով, քրիստոնեայք հոն թաղած են իրենց մեռելներ: Թուրքերուն մէջ կարծիք կայ թէ այդ շէնք ժամանակաւ երևելի ճեմարան մ'էր ուր մասնաւորապէս կրօնականներ ուսում կ'առնէին. Թուրք բառով «մէտրէսէ» կը կոչեն զայն. այժմու ամբողջ շէնքին բարձրութիւնն է 8 մեթր, իսկ տարածութիւնը գրեթէ 960 քառակուսի մեթր:

Վաղաքիս ժայռոտ բլուրներէն միոյն վրայ կը գտնուի նաև բերդ մը, որ վերջին խաչակիրներէն շինուած ըլլալ կը կարծուի, այս բերդ չէ այնչափ ճարտարագործ, որչափ Մասիայինը, այլ ունի ռազմագիտական կարևոր գիրք. բերդին որմերուն մէջ կը գտնուին հայկական նշանագրով տապանաքարեր: Այլ երջերս կառավարութեան շէնքին համար քարեր որոնելու ժամանակ՝ հայ տապանաքար մը գտնուած է, որ կը կրէր 1260 թուականը: Այս տապանաքար, եթէ ոչ այնչափ շէնքին հնութիւնը, գէթ հայոց ՎՊ. գարուն յԱղոկի կամ անոր մօտերը բնակելին յայտնի կը ցուցնէ. ցայժմ յայտնի կը տեսնուի բերդին պատերէն միոյն մէջ հայերէն արձանագրութեամբ տապանագիր մը, սա կերպով. դժբաղդաբար թուականին տեղը կոտորած է և արձանագրութիւնը կիսկատար:

	+	■	■
ՏԵՐ		ՄԾ	■
ՈՂՈՐՄԵՍ ԵՌՆ			

Մամնապէս քաղաքին նեղ փողոցներուն միոյն մէջ, պատի մը վրայ հիւսուած կայ, կնոջ մը կիսարձանը, որ արհեստի մասին շատ կոշտ է և անշահ, սակայն երևելի հնութիւն մ'ըլլալ կը թուի: Վժբաղդաբար անկարելի եղաւ ինձ ասոր ծագման մասին որ և է բանաւոր տեղեկութիւն ստանալ. խիստ այլանդակ աւանդութիւն մը կը տիրէ այս մասին ռամիկ դասուն մէջ. կըսեն թէ, այդ կին, որ նախապէս մեզ նման մահկանացու էր, օր մը իւր տղուն լացը դադրեցնելու համար լաւաշը (հացը) մանկիկին նստատեղւոյն ներքևը դրաւ, և ի պատուհաս իւր յանցանաց այսպէս քարացաւ:

1. Մ.



ՀԱՐՍԱՆԵԱՅ ՀԱՆԳԻՆՍ ՅԵՒԻՈՎԻՒԱ

Չեզ խոստացած էի գրել Եւգոկեցւոց ընկերական վիճակին վրայ, ահա այս անգամ խոստումս մասամբ կը կատարեմ:

Եւգոկիացիք շատ զբօսասէր ժողովուրդ են, գաղափար մը տալու համար իրենց ընկերական հանդէսներուն վրայ, այս անգամ նկարագրեմ հարսանիքներն. իբր նախաբան, պարտիմ ըսել թէ, Եւգոկիոյ մէջ կատարեալ ընկերական երջանկութիւն — ընտանեկան կեանք — չ'կայ: Ինչպէս արեւելքի ուրիշ քաղաքաց մէջ նոյնպէս և հոս կ'ինն միշտ անմասն է հանդէսներէ, ժողովներէ և խնճոյքներէ: Արեւելքցիք չ'են ճանչնար այն պարկեշտ ազատութիւնն՝ զորս Եւրոպացիք կ'ուտան իրենց կանանց և որ այնքան նպաստաւոր է բարոյականութեան և ընկերականութեան զարգացման. միշտ կոշտ գաղափարներով տոգորեալ կը կարծեն գիտնալ թէ անողոք բռնութեան ներքև կրնան կ'ինն պահել բարոյականութեան մէջ. Երանի՜ թէ յաջողէին. ես իմ ունեցած բաւականին փորձառութեամբս կրնամ դատել, թէ արեւելքցի կ'ինն ընդհանրապէս աւելի անբարոյական է քան Եւրոպացի: Ա՛ և է, դառնանք մեր բուն խնդրոյն: Հարսանիքն տարբեր երևոյթներ կ'ընծայէ փեսին և հարսին տունը. նախ ընթերցողն առաջնորդ ենք փեսայի մը տունը: Կեռ հարսանեաց հանդէս չը կատարուած՝ հրաւիրանաց նամակներ կը բաշխուին երկուստեք առ ազգականս և բարեկամս ներկայ գտնուելու «հայր մեր» ի և նշանի օրհնութեան. այս հրաւիրագրերէն մին ներփակեալ Չեզ կ'ըլլեմ: Նշանախօսութեան երեկոյին, հարսնէորք կը հրաւիրուին փեսին տունը. ընդարձակ սենեակի մը մէջ կը հաւաքուեն կանայք, և ուրիշ սենեակի մը մէջ ալ արք: Սենեակներն կահաւորուած են բազմոցներով և երբեմն ալ գորգերով, դուռնուրեք կը տեսնուին աթոռներ, պատկերներ բնաւ չ'կան պատերուն վրայ. երկու մեծ պղնձեայ աշտանակներ կը վառին սենեկին մէջ տեղն և ուրիշ քարիւղի ճրագներ ու մոմեր սենեկին միւս կողմերն. տեղւոյ խնդիրն խիստ մեծ կարևորութիւն ունի, վեր նստիլ վար նստիլ, եթէ հրաւիրեալ

մը սենեակէն ներս մտնէ, ներկայք բոլոր ոտքի կ'երնեն և յետ երկար ձևակերպութեանց հազիւ ուրեմն նորեկն կը հաճի տեղ մը որոշել և նստել, հինգ վայրկենի չափ հանդիսականները ոտքի վրայ սպասեցնելէ վերջ: Ամենէն յարգի մեծարանքն է օղին, զոր գոյնզգոյն կը ներկեն ծաղիկներով, մոռցայ ըսելու թէ ամեն տան մի գլխաւոր զարդը սեղան մ'է, որու վրայ գեղեցիք շիշերու մէջ կը շողան գոյնզգոյն օղիներ: Ամեն օղիի գաւաթի կ'ընկերանայ բարեմաղթուածեանց շարք մը, զորս իրենք «եարէնուծիւն» կ'անուանեն, ով որ առանց բարեմաղթուածեան բաժակ խմէ, անքաղաքավար կը համարուի: «Մուսաբաճուաց խումբ մը սենեակին մի անկիւնը կ'երգէ ու կ'ածէ. նուագներն են ջուլթակ, քնար և սաղ (տեսակ մը փանթիւն), եղանակներն շատ անձաշակ են, իսկ երգիչք բոլորովին անյարմար են իրենց ճիւղին, ժողովուրդն չը սիրէր հայկական երգերն, որոց շատեր կը զուգեն եւրոպական եղանակն ընդ հայկականին և այսպէս ախորժելի կը հանդիսացնեն զայնս լսելաց, բայց սոքա նախապատիւ կը համարեն տեղական թուրքերէն երգերն, որոցմէ աւելի անձաշակ բան կարելի չէ երեւակայել: Վիշերուան ժամը 2¹/₂ ի (ըստ թրքաց) ատեններն ձայնաւոր տղայք, մոմեր ի ձեռին սենեակէն ներս կը մտնեն իրենց հետ ունենալով փեսին հագուստներն (վերարկուն և ֆէսը): Վահանայք զգեստաւորուելով հալաֆը կ'օրհնեն, ապա երգեցիկ մանկունք սենեակէն դուրս ելնելով կ'երթան փեսայն բերել շարականներով, փեսին երկու քովերը կը կենան մէյմէկ վայելուչ երիտասարդներ, գեղեցիկ մոմեր 'ի ձեռին, փեսայն ուղղակի կ'երթայ համբուրել վարդապետին կամ քահանային ձեռքն, որ այս առթիւ կ'ըսէ անոր պահպանիչ, յետ որոյ բոլոր ներկայից ներկայանալով մի գլխանակ կամ շնորհակալութիւն կ'ընէ, որու իւրաքանչիւր ոք կը պատասխանէ («Մտուած շնորհաւոր արասցէ»): Եւ դպիրք կ'երգեն բարձրաձայն («Մտուած շնորհաւոր արասցէ»): Յետոյ օղի և սիկար կը մեծարուին հանդիսականաց, բարեմաղթութիւնք կ'ուղղուին ո՛չ թէ փեսին՝ այլ իւր հօր կամ եթէ հայր չունի՝ ամենէն ծերունի ազգականին: ()ղի կը մեծարեն նաև փեսին և իւր քովի երկու երիտասարդաց, յայնժամ նա հարիւր նազանքներէ վերջ հազիւ կը յօժարի գաւաթն առնուլ 'ի ձեռին, գեղեցկաձայն դպիր մը կ'երգէ «Մնոյշ անոյշ նոր փեսային») յետ որոյ առանց օղին խմելու խոնարհութիւն կ'ընէ փեսայն հանդի-

սահանաց և դաւաթը ետ կը դարձնէ: Դամը Ծին ատեններն կը պատրաստուին թափորն կազմել հարսնաւ երթալու. ամեն ոք հետիոտն կ'երթայ. հարսին համար կը պատրաստեն մի գեղեցիկ ձի, վայելուչ կազմած քով. նախապէս ձիուն օղի կը խմցնեն կամ շաքար կը կերցնեն որպէս զի դինովնալով քալած ժամանակը հոս հոս ճօճէ. թափորին առջևէն կ'երթան նուազածուք, և եթէ հարսանեաց տէրն հարուստ է՝ մի քանի ոստիկաններ, մի մեծ ջահ, որ կը բաղկանայ փայտեայ ձողի մը վրայ ցցուած երկաթեայ լապտերէ մը և որու մէջ կը վառեն մարխ, կ'երթայ առջևէն, ապա արք. իւրաքանչիւրի կ'ընկերանայ մի մեծ լապտեր. ասոնցմէ վերջ կուգան 6—8 հաս պղտիկ աղջկունք պսակ 'ի գլուխ և դեղեցիկ մոմեր 'ի ձեռին, ասկէ վերջ փեսայն, որու առջևէն կ'երթայ մի ուրիշ մեծ ջահ. վերջ նկարագրուածին պէս, ամենէն վերջ կուգան կանայք, սպիտակ սաւաններով ծածկուած: Հարսին տունը արք և կանայք դարձեալ բաժնուած կը նստին: Անք կը տիրէ տիրութիւն, զի հարսն պիտի յանձնեն օտարաց, այս տիրութիւն կանւելնայ հարսնաւ եկողներուն անվայել խօսքերովն, որք ամեն ջանք 'ի գործ կը դնեն յուսահատեցնելու հարսին ծնողքն ու աղգականներն. հոս երկու ժամու չափ կը նստին, և մի քանի օղի ու սուրճ խմելէ վերջ կը պատրաստուեն երթալ, նուազածուք մասնաւոր երգեր ունին զորս կ'երգեն թուրք լեզուաւ մեկնման պահուն տիրեցնելու համար հարսն ու ծնողքը. նոյն թափորը կ'առաջնորդուի եկեղեցին, հարսն ունենալով ձիուն վրայ, պսակի արարողութիւնը կատարուելէ վերջ, փեսայն կը կենայ քահանային քով որ ունի 'ի ձեռին աւետարան: Երողութիւն կը համբուրէ աւետարանն ու փեսին ալ կ'ըսէ «Աստուած շնորհաւոր արասցէ»:

Թափորն ապա կ'երթայ փեսին տուն և կ'գրօնուին մինչև առաւօտ: Հարսին տունը հրաւիրեալք կը բաժնուին առանձինն սենեակներու մէջ, ունենալով նուազածուաց խումբ. և հարսն ո՛չ կանանց մէջ կ'ըլտնուի, ոչ ալ արանց մէջ, այլ զատ սենեակ մը: Շաշէն վերջ արք և կանայք կը միանան, յայնժամ հայուհիք կը հիւրամեծարեն ամենայն եռանդեամբ արու հիւրերն: Դամը Ծին (ըստ թրքաց) նուազածուք կ'երթան հարսն բերել, պարզ եւրոպական շրջագոստ կը հագնի, երեսն թանձր քօղ կամ լաչակ ծածկած, թէ ամառ և թէ ձմեռ անպատճառ պիտի հագնի ծանրագին մուշտակ թաւշապատ, գլուխն կը դնէ թանձր թղթէ շինուած մի տձև բեղըր զոր պսակ

Պ'անուանեն, և անոր վրայէն ալ կը ձգէ ոսկեղէն կամ արծաթի թելերու փունջ մը. հարսին քոյրն թուէն մտած կը բերէ կը կանգնեցնէ գնէ սենեկին մէջ տեղ, ուր պիտի կենայ մինչև որ հրաման չը տայ մայրն նստելու. նստելէ առաջ կարգաւ պիտի համբուրէ բոլոր հրաւիրելոց ձեռքն մինչև իսկ 10—8—6—5—3 տարեկան երախայից ձեռքերն. քանիցս զիտողութիւն ըրի թէ անվայել էր որ հարսն երախայից իսկ առջև խոնարհէր, թէ իր արժանապատուութիւնը վերաւորուած կ'ըլլար, բայց իրենք հակառակը կը պնդէին ըսելով թէ թող խոնարհութիւն սորվի: Ասկէ վերջ սենեկին մէջ կը դնեն սեղան, պնակի մը մէջ հինա և շիշ մը անուշահոտ ջուր, քովն ալ մի ուրիշ պնակ, ուր ստակ պիտի ձգէ այն որ հինա կը քսուի. երէցկիներ սեղանին քով կը նստի, նէ ինքն է որ հինա պիտի գնէ և անուշահոտ ջուր պիտի քսէ աղջկանց ձեռքն. նուագածուք կ'սկսին. հարսն նախ կը ներկայանայ երէցկեան, կամ հինա կը զրուի, կամ անուշահոտ ջուր կը սուի, յետ որոյ անգամ մալ ձեռք կը համբուրէ, իրմէ վերջ կարգաւ կը ներկայանան դեռատի աղջկունք և իւրաքանչիւրն ձեռք կը համբուրէ հինա զրուելէ վերջ: Ապա հանգէսն կը շարունակուի այս կերպ մինչև որ հարսն առ գան, յետ որոյ տեղի ունեցած հանգէս արդէն վերը նկարագրեցինք: Շաբաթ մը վերջ փեսան ու հարսն ինամի տուն կը բերեն, ուր փեսայն պարտաւոր է իր զոքանչին ձեռքն համբուրել, և այս վերջինը այն ատեն կը նուիրէ փեսին մատանի մը. միւս շաբաթն զոքանչն կ'երթայ փեսին տունն և դիշերն կ'անցունեն մեծ զուարճութեամբ: Յաջորդ անգամ նկարագրեմ թուրքերու հարսանեկան թափօրն որ շատ աւելի անձաշակ է քան հայոցն: Պէտք է խաստովանիլ որ հայկական հարսանիքն ունի իր մէջ ազգային ոգի, նահապետական երևոյթ, մանաւանդ եթէ թուրք երգերուն տեղն անցնին հայկականներն. յայնժամ իսկ որ բաւական ձաշակաւոր հանգէս մը կը գառնայ:

||—տ—մատէր



*

ԵՒԴՈՎԻՈՑ ԳԱՒԱՌԻՆ ԶԱՆՔԵՐՆ

Այս անգամ կ'ուզեմ գրել ձեզ Եւրոպիոյ գաւառին հանքերուն վրայ, զորս մինչև հիմա տեսնել և փորձել կարող եղայ:

Եւրոպիան ունի բաւական թուով հանքեր, որք տակաւին անգործ մնացած են, կամ տեղական ինչ ինչ դժուարութեանց և կամ ժողովրդեան տգիտութեան պատճառաւ. ասոնց վրայ կ'արժէ խօսիլ համառօտիւ:

Ինչպէս գրեթէ ամեն տեղ նոյնպէս և հոս կը գտնուի «միքա» (mica) մեծ առատութեամբ, որը ատենօք Ռուսիոյ մէջ ապակիի տեղ կը գործածուէր. ժողովուրդն նորա փայլուն տեսքէն խարուելով, կը կարծէ թէ մի թանկագին մետաղ կը պարունակէ իր մէջ:

Ինչպէս ինչպէս աւազաքար մեծ քանակութեամբ, որու մէջ է նաև վարդագոյն քուարց (rose quartz):

Որչափայ (granit), որոյ բաղադրութիւնն է միքա (mica) ֆէլտսպազ (feldspatz) և քուարց (quartz):

Ածխաքար կրոյ (carbonate de calcium) իւր տեսակներովն, որոց մէջ կը գտնուի ընտիր գեղին և կապոյտ մարմարիոն:

Ալյումինիում (aluminium) որ կը գտնուի շատ մը հողերու բաղադրութեան մէջ:

Սևանյան կարմիր սև ոքսիտ (oxide noir de manganèse) սորա հանքը թէպէտ գտնուած, բայց յատուկ ձուլարան հաստատելու և գործաւորաց համար պէտք եղած ծախքն մեծ շահ չը թողուր հանքագործին:

Օքսիդիտ երկաթի (sulfure de fer) որոյ 100 մասին մէջ 53 ծծումբ և 47 երկաթ, սորա հանքեր ժողովուրդն չէր ճանչցած մինչև հիմա, այժմ շատ տեղեր գտնուած են այս մետաղէն, բայց կը վախցուի թէ արտօնագրի և ձուլարանի ծախքերու հազիւ բաւէ հանքն:

Օքսիդիտ երկաթի և կոպրիտի (sulfure de fer et de cuivre, pyrite de cuivre) սա ևս գտնուած է մի քանի տեղ, բայց վերոյիշեալ պատճառաւ չէ գործուած:

Նիւթային (charbon bitumineux) որոյ 100ին քսանն կազային նիւթ է, իսկ մնացեալին 70ն ածուխ և միւսն մոխիր (բոգաս, սօտա, և այլն), աս դեռ նոր գտնուած է քաղաքէն 18 ժամ հեռու, զոր ձուլարանին մէջ պիտի գործածեն պղինձ հալեցնելու:

Պղինձի ոքսիտ (oxide de cuivre) սա մի շատ հարուստ պղինձի հանք է, փորձառաբար գիտեմ թէ 100 մասին առնուալն 70

մասն պղինձ է, որոյ մէջ կը գտնուին նաև ոսկւոյ աննշմարելի հետքեր: Սորա հանքն քաղաքէն 18 ժամ հեռի է. խումբ մը մարդիկ ընկերութիւն մը կազմելով սորա արտօնագիրն առած են և պիտի սկսին գործել. ուրախալի զուգարդիպութեամբ մը, սոյն հանքին քով կը գտնուի վերոյիշեալ հանքածուխն որ մեծապէս կը նպաստէ պղինձն հալեցնելու .քիչ ծախքով, նաև բնութիւնն պարզեւած է այդ վայրին առատ ջուր, որ զիւրութեամբ կրնայ ձուլարանի փուքն դարձնել, այժմ ընկերութիւնն մտադիր է հանքին քովն կառուցանել ձուլարան մը: Բնկերութեան անդամոց մեծ մասն թուրք են, որոց մէջ կը գտնուի բարեկեցիկ հայ վաճառական մը, որու յանձնած են ամբողջ մատակարարութիւնն: Արտուի թէ այդ հանքին քով վաղոյ ջուրին մէջ կայ Գալի-ըլ ըստ վկայութեան Սեբաստիոյ հանքաց երկրաչափին. ևս դեռ չը տեսայ և չեմ գիտեր թէ ինչ քանակութեամբ կը գտնուի, միայն թէ քարիւղ զտելու գործողութիւնն այնքան բազադրեալ է որ կարելի չէ յաջողցնել զայն այս կողմերն:

Վերոյիշեալ հանքերու ցանկն մեր փորձառութեան արդիւնք են, ո՛վ գիտէ տակաւին ռըքան կարևորագոյն հանքեր կը գտնուին դաւառաց մէջ, որոց վրայ ո՛չ ոք ծանօթութիւն ունի. ո՛վ գիտէ ռըքան հարստութիւններ հողերու ներքև պահուած են: Ար խոստանամ Մարտի ընթացողաց գրել ասկէ վերջն ալ եթէ երբէք պատեհութիւն ունենանք տեսնելու կամ լսելու հանքաց վրայ:

Ուսումնասէլ



ՄԻ ՀԱՅԱՐՆԱԿ ԳԻՒԳ ԶԱՐԻՐՈՒՄ

Արևանի նահանգի Շարուր անուանեալ գաշտավայրի վերայ բազմաթիւ գիւղերի կարգում այս և այն տեղ ցիր ու ցան գտնվում են մօտ եօթը հայաբնակ գիւղեր, որոնց բնակիչները գաղթել են Պարսկաստանից վերջին ռուս-պարսկական պատերազմից յետոյ: Այդ գիւղերի թվումն է և Աորաշէն գիւղը, որի մասին և կամենում եմ մի քանի խօսք ասել: Աս կոչվում է և Ուլիայ-Աորաշէն կամ Հայի-Աորաշէն, որ ընկած է Շարուրի հիւ-

սիսային կողմումը, Վալարագեազի լեռների հարաւային ստորոտում, Արփա-չայ գետի աջ ափի մօտ և այն լեռնապատ կիրճի բերանում, որի միջով անցնում են Արփա-չայը իւր օձապտոյտ օղակներով և Վարալագեազի քարքարոտ ճանապարհը: Այս գիւղը կարծեօք պէտք է ունենայ պատմական ծագում, ըստ որում Խորենացու աշխարհագրութեան մէջ Շարուրայ դաշտում յիշվում է Վորչէն անունով գիւղ: Սակայն այժմ այդ գիւղը չէ ներկայացնում ոչ մի պատմական ապացոյց, որով նա լինէր պատմական Վորչէնը:

Գիւղը սփռվում է մի բերդի մնացորդներով ծածկուած փայռապատ բլուրի ստորոտում և շրջապատուած է կանաչադարձ լայնածաւալ այգիներով և սօսնի անտառներով, որոնք անկասկած արտադրել են երբեմն ամայի դաշտի վերայ նոյն իսկ գաղթական ժողովրդի ճլոտ ձեռները: Այգիները տալիս են գիւղացոց բաւականին խաղող և գինի, բայց նոքա չեն կազմում մի առանձին վաճառանիւթ. իսկ անտառները գործադրվում են շինութեանց համար: Այժմ անծանօթ ճանապարհորդը աչքի անցնէր Շարուրի գիւղերը, նա այգիներից անշուշտ կարող էր եզրակացնել, որ դոքա հայաբնակ գիւղեր են, ըստ որում տաճիկ բնակիչները, որքան և սիրելիս լինեն խաղող գոդանալ հայերի այգիներից, բայց այնու ամենայնիւ նոքա խորշելով խորշում են այգեպանութիւնից: Վորչէնի բնակիչներից իւրաքանչիւրը ունի իրան համար առանձին այգի և անտառիկ: Վորաչէնցիք բացի այգեպանութիւնը զբաղուած են առաւելապէս բամբակի, չալթուկի (բրինձ) և մասամբ ցորենի ցանքով, որոնք լինում են նրանց ապրուստի միակ միջոցը: Գիւղացիք չալթուկի և բամբակի աւելորդ մասը ծախում են նոյն իսկ գիւղի մէջ մի երկու համագիւղացի հարուստ վաճառականների վերայ, որոնք վաճառականական յարաբերութիւն ունեն անմիջապէս Արևանի և Թիֆլիզի հետ: Բամբակը և չալթուկը մաքրելու համար գիւղի մէջը կան մի քանի գործիքներ, առաջինի համար գործ է ածվում նախապէս չխրեխը և ապա բամբակի մեքենան, իսկ չալթուկը ծեծում են դինկով և ջրադացով: Վաշտային մշակութեան ծանրութիւնը առանց բացառութեան ընկնում է բնակիչների արական մասի վերայ, այն ինչ կանայքը ապատ են այդպիսի ծանր աշխատութիւնից և նոքա մասունակցում են միայն բամբակ ժողովելուն: Գիւղի տները, ինչպէս

սովորութիւն է բոլոր Շարուրի մէջ, շինած են ցետից, բարձր պարիսպներով, նեղ ոլոր մոլոր և բաւականին աղտոտ փողոցներով: Բոլոր տները սեղմուած են միմեանց մօտ, այնպէս որ տանիքների վերայով կարելի է պտըտել ամբողջ գիւղը: Այսպիսի սեղմուած գրութիւնը իմ կարծիքով յառաջացել է անակնկալ գողութիւնից և երկիւղից: Բնակիչները ամենքն էլ գուտ լուսաւորչական հայեր են: Տղամարդիկ ըստ մեծի մասին գունատ են, թաւկացած և ուռած փսրերով: Սորա պատճառը գուցէ լինի չալթուկի և բամբակի մարգերի ճահիճների մէջ շարունակ մշակութիւնը արեգակի այրող ճառագայթների տակ: Ընկէ նոյնպիսի անյաջող ներգործութեան ենթարկուած են և այլ գիւղերի բնակիչները, բայց յիշեալ երեոյթը առաւել նկատվում է Կորաշէնցոց մէջ: Ընդհակառակը կանայք ևս առաւել գեղեցկատես են, սեւաչեայ և սիգաձեւ հասակով, բայց տարաբաղաբար մի անձուների սովորութիւն, որ նոքա անկասկած ժառանգել են իւրեանց երբեմն գրացի քրդերից, անչքացնում է նրանց վայելուէ գէմքը: Յանկարծ կը տեսնէք, որ այդ գեղեցիկ օրիորդի կամ նազելի հարսի քիթը ծակած և անցրած է արծաթեայ օղակ և կամ փիրուզէ ակնով արծաթէ բեւեռ «միսակ» կամ «խման» անունով: Ըստ սերը երեսները ծածկում են կարմիր թափանցիկ թաշկինակով, իսկ աղջկունք գլխներին ծածկում են արախչին, ճակատի կողմից կախ տուած վանդակաձև ուլունքների շարքեր ծայրերը գրամներով զարդարած, իսկ շականակագոյն մաղերը, որ ծածանվում են ուսերի վերայ, զարդարուած են խայտաճամուկ ժապաւէններով:

Օ՛րուարձալի է տեսնել այս օրիորդներին խումբ խումբ գընալիս դէպի եկեղեցի, ձեռները խաչաձև կուրծքին գրած, այս կողմ և այն կողմ հեղ հայեացք արձակելիս: Դուք այդ խմբի մէջ անշուշտ կը նկատէք մի երեոյթ ևս, որի մասին մոռացայ յիշել վերևը, այն է՝ որ այդ սևորակ աչերը շրջապատող թերթեւունքները ներկած են սև գոյնով: Այդ ներկը պատրաստում են բոված սիւրմայի (antimonium) փոշիից, որ այստեղ կոչվում է ուսուխտ: Այս սովորութեան նպատակն է գեղեցկատեսիլ երեւալ փորը ուռած տղերանց առաջ, այն ինչ այդ քնքոյշ արարածները չեն նկատում անգամ, որ այսօրուայ գեղեցկացնող ներկը վաղուան օրը կարող է այլակերպել այդ դիւթական աչքերը:

Աստուծոյ տաճարը, ուր ժողովւում է այդ խումբը՝ շինած

է նոյնպէս ցեխից, փոքրիկ մուժը պատուհաններով և գտնվում է աղքատ վիճակի մէջ: Աորա մէջ ժամասացութիւնը կատարվում է երկու քահանայների ձեռքով, որոնք նոյն գիւղացի են: Յիշելով քահանայներին, չէ կարելի չասել և այն, որ դրանցից մէկը պարտական է համարում իրան դասելու բաքոսի երկրպագունների շարքում: Այդ քահանայն, հետու չէ անգամ սպորինի պըսակներ կատարելուց, որպիսի գործերի պատճառաւ նա մի քանի անգամ ստացած է հոգևոր կառավարութիւնից հարկաւոր պատիժը:

Եկեղեցու պարսպի մէջ կանգնած է մի շինութիւն, որի մէջ ստանում են իւրեանց մտաւոր կրթութիւնը մի քանի տասնեակ երեխայներ:

Սերջացնելով խօսքս աւելորդ չեմ համարում մի հարեանցի ակնարկ քցել այդ գիւղի բնակիչների առհասարակ աւօրեայ կեանքի վերայ: Արբեցողութիւնը սաստիկ տարածուած է այդ գիւղում: Պինին և օղին գործ է ածում և տղամարդը և կինարմատը: Շատ անգամ պատահում է, որ ջահիլ կինը օղի կամ գինի ձեռք բերելու համար ձեռնարկում է հետեւեալ միջոցին. վեր առնելով իւր հետ կուժը, որը նախապէս լցրած է ցորենով դուրս է գալիս նա տնից և գնում է իբր ջուր բերելու: Ղանապարհի վերայ նա ծածուկ մտնում է գինետունը, որոնց թիւը հասնում է այստեղ 6—7, և այնտեղ տալով ցորենը միկիտանին ստանում է վերջինից ցորենի արժողութեան փոխարէն օղի կամ գինի, որը կոնծելուց յետոյ դուրս է գալիս գինետնից և գնում իւր գործին: Այդ արբեցողութիւնն է միակ պատճառը, որ գիւղում այժմ բաւականին վայր է ընկած բարոյականութիւնը: Այդպիսի կեանքը առաջ է բերում բնակիչների մէջ աւագակութիւն, լրբութիւն և երբեմն էլ մարդասպանութիւն: Շարուրի հայաբնակ գիւղերից Աորաչէն գիւղը իւր այդ յատկութիւններով կատարելապէս զանազանվում է միւսներից: Պատահում է նաև երբեմն որ երեխաները անգամ շրջում են փողոցներում հարբած և ծխախոտը բերաններում:

Արք. Շամ.



ԶԵՅԹՈՒՆԻ ԱՆՑԵԱԼԻՑ ԵՒ ՆԵՐԿԱՅԻՑ

Չէյթունի հիմնարկութիւնը մօտ կապ ունի Ռուբինեանց գահի վերանալու հետ: Աւսն վեցերորդի տխուր արկածից յետոյ, մի խումբ քաջասիրտ հայեր, չկամենալով հպատակել թուրքերին՝ ապաստանում են Աւերին Տաւրոս լեռան խորշերում, ուր և վերջը ձեռնարկում են Չէյթուն գիւղաքաղաքի շինութեանը, որը Մարաշ քաղաքից 20—25 մղոն հեռաւորութեան վերայ է գտնվում:

Այս հայկական գիւղաքաղաքը, որի տարածութիւն ընդարձակ լինելուց շատ հեռու է, չըջապատուած է բարձրագագաթ հսկայ լեռներով: Չէյթունն և նորա չըջապայքն այն աստիճան լեռնոտ երկիր են ներկայացնում, որ երեսուն մղոն տարածութեան վերայ գծուարին է գտնել գէթ մէկ արտավար, տափարակ տեղ: Ուղիները կամ աւելի լաւն է ասել հետքերը, որոնք տանում են Չէյթուն, այնպիսի ապառաժոտ դահապէժների և անձուկ, գծուարակոխ մուժ ձորերի միջով են անցնում, որ բաւական է մի քանի մարդ, ինչ ամենայն դիւրութեամբ դիմադրի ամբողջ բանակների: Ահա՛ բնութեան այս վայրի դիրքի շնորհիւն է, որ այդ մի խումբ անվեհեր հայ մարդիկ մի քանի դարեր շարունակ ընդիմադրելով արտաքին յարձակումներին՝ կարողացել են վերջապէս մեծ արիւնութեամբ պահպանել իրենց անկախութեան հետ հանդերձ՝ և իրենց ազգային ոգին ու քաջ և աշխոյժ բնաւորութիւնը:

Ամեն մի տարիքոտ ղէյթունցի, այսպէս է սկսում իր գրութիւնը մի ամերիկացի միսիոնար, կարող է ձեռք պատմել, որ յաջորդաբար վեց անգամ բանակներ են եկել ապստամբ քաղաքը ջախջախելու ու տիրապետելու, սակայն բոլոր ժողովուրդը միանալով, չախմախու հրացանով զինուած՝ քշել է նոցա լեռների անցքերը և յարձակողների դիակներով ծածկել:

Աղատութեան համար մղուած կռուի մէջ, քաղաքը չըջապատող բարձր ապառաժները հանդիսատես են եղած շատ թերմոպոլիներու. և այսպէս ամեն մի ձոր, ամեն մի բլուր

ունի իր արիւնոռուշտ ճակատամարտների պատմութիւնը: Բաղում սերունդներէ ի վեր այսպիսի պատերազմական մարզանք ստանալով և բնաւ մտաւորական ու բարոյական ազդեցութիւններ թակ չ'գտնուելով՝ զէյթունցիների մէջ աճել ու կազմուել է մի անսակ բնաւորութիւն, որը մեզ շատ կենդանի յիշեցնում է Վիլհելմ Թէլը և Ռոպին Հուտը:

«Նրբ կծուժ ստրկութիւնն ընդհանուր կերպարանք է առած երկրի մէջ, խիստ կաղզուրիչ է տեսնել այս լեռնականների աղատ, անկախ և սէզ դէմքն ու դիրքը»:

Չէյթունցիք, Տաւրոսի խորշերում ապաստանելուց ի վեր մինչ ներկայ տարու սկզբները՝ եթէ ոչ բոլորովին, գեթ շատ քիչ էին ծանօթ Հայ ժողովրդի մի շատ փոքրագոյն մասին: Սոքա փոքր ի շատ է մօտից յայտնի կղան Հայ ժողովրդի մեծամասնութեանը, նոյն և Նւրուպային՝ միայն յիսնական թուականների սկզբներին, այն էլ շնորհիւ Հայասէր Վիլհոր Լանկլուա Փրանսիացուն, որը 1852 թ. ճանապարհորդելով ամբողջ Վիլիկիան և մասնաւորապէս նորա Հայկական մասը՝ մեծ լոյս սփռեց Վիլիկիոյ և այդ մի խումբ Հայ մարդկանց առօրեայ և պատմական վիճակի վերայ իր բազմաթիւ լուրջ և յոյժ հետաքրքիր մի կարգ պատկերազարդ Հրատարակութիւններով և զանազան լրագրական յօդուածներով:

Թէև մինչև այժմ, ոչ միայն Չէյթունի, այլ նա և Տաւրոսի լեռներում ապաստանող այլ Հայերի վերայ վերջին չորս-հինգ դարերի միջոցում բացօրոշ ոչ մի Հաստատ տեղեկութիւն չունինք, բայց և այնու ամենայնիւ այսքանը պարզ յայտնի է, որ Տաւրոսի լեռներում բացի զէյթունցիներից՝ եղել են և այլ մի կարգ Հայ մարդկանց խումբեր, ինչպէս և հաճընցիք, որոնք նոյնպէս իրենց իշխանների Հեա միասին ապաստանելով դարձեալ լեռների խորշերի մէջ՝ նոյնչափ զօրււոր կերպիւ պահպանած են եղել իրենց անկախութիւնը և շարունակ կռիւներ վարած զանազան մահմետական ցեղերի դէմ:

Սոքա արտաքին մեծ յարձակումներին դիմադրելուս՝ միշտ յարաբերութիւններ են ունեցած թուրք տիրապետներու Հեա

և այգալիսով միայն երկար ժամանակ կարողացել են պահպանել իրենց անկախութիւնը. և իսկապէս ասելով, եթէ չ'ընէր սոցա փոխադարձ օգնութիւնները, անկասկած, սոքա որպէս առանձին անկախ մարմիններ, չէին կարող երկար ժամանակ գոյութիւն էլ ունենալ:

Գալով ղէյթունցիներին, պէտք է ասել, որ դոքա մօտ դրացի լինելով յայտնի Խօզան օղուի թուրքմէններին, յաճախ վէճեր և մեծ կռիւներ են ունեցել դոցա Հատ և թէև շատ անգամ կռիւները յաջող հեռեանք են ունեցել ղէյթունցոց համար, սակայն և այնպէս երկարատեւ թշնամութիւններից և կռիւներից յետոյ, ղէյթունցիք սախաբուսած են եղել մի տեսակ հարկ տալու Խօզան-օղու պետերին և նոցա զլիսաւորութիւնը ճանաչել:

Եւ այսպէս, մինչ վերջերս՝ երբ ղէյթունցիք վերջնականապէս այլ ևս անկարող լինելով ապահովել իրենց անկախութիւնը բոլորովին ենթարկուեցան սուլթանի տիրապետութեանը, մի տեսակ հանրապետութիւն էին կազմում. երկրի կառավարութիւնը՝ համայն ժողովրդի հաճութեամբ յանձնուած էր չորս հայ իշխանների, որոնք ենթարկվում էին Սոյ կաթողիկոսների հոգևոր իրաւանցը: Չէյթուն ունէր տասը հայ զիւղեր, որոնցից միայն վեցն են զուտ հայաբնակ, իսկ մնացեալ չորսը թրքաբնակ: Եյս զիւղերը Չէյթունի զլիսաւորութեամբ կազմում էին մի դաշնակցութիւն: Եյս դաշնակցութիւնն է, որ ընտրած էր մի հանրապետական կառավարութիւն, որը վարում էին չորս իշխաններ և մի կառավարիչ, որոնք միշտ Չէյթունումն էին գտնվում: Սոցա ժողովին միշտ նախագահում էր Չէյթունի եպիսկոպոսը:

Սոքա էին կառավարում Չէյթունը իր շրջակայքով, դատեր տեսնում ու վճռում, երկրի բարօրութեան ու պաշտպանութեան միջոցները հոգում և բանակցութիւնների մէջ մտնում հարևան տիրապետողների հետ, եթէ դոցա մասնակցութիւնը պահանջվում էր արտաքին յարձակումների դէմ: Եւմեն տարի ժողոված հարկից, իշխանները մի մասն էլ ուղարկում էին Սոյ կաթողիկոսին, որի կողմից Չէյթունում միշտ մի եպիսկոպոս է նստում:

Չէյթունը, ինչպէս յիշեցինք՝ շրջապատուած է ամեն

կողմից դահավէժ բարձր լեռներով. այս լեռների անուններն են՝ Վօշ տաղ, Վանտիլ տաղ և Վրզըլ տաղ: Տները մինչ քան հրդեհ՝ շինուած էին հողից. միմիանց խիստ կից՝ լեռան կողքի վերայ բարձրանալով՝ զանազան յարկեր էին կազմուած, այնպէս որ մէկի առաստաղը դրացու դուռն էր դուրս գալիս: Չէյթունի հիւսիսակողմը գտնուած է Պրիտ կամ Պիրիզ լեռը, որը յայտնի է իր առատ արտադրութիւններով, մանաւանդ երկաթահանքով. անկասկած, երկրի բնութեան այս նշանաւոր բերքը—երկաթը—երկար ժամանակներէ ի վեր զէյթունացոց ապրուստի և ազատութեան զլխաւոր միջոցն է եղած, ըստ որում այս երկաթահանքից ոչ միայն երկաթը հանելով, մաքրելով ծախու են հանում, այլ նաև իւրենց բոլոր զէնքերը այս հանքի երկաթից են շինում, որոնցով ընդհանրապէս ղինվում են բոլոր արու զէյթունցիք 16 տարեկան հասակից սկսած մինչև 60 տարեկան հասակը: Չէյթուն քաղաքի արևմտեան կողմը ընկած լեռան ստորոտում գտնվում են զէյթունցիների հարիւրաւոր խաղողի այգիները. սոքա խաղողից ընտիր զինի և ընտիր տեսակ շաճիկ են շինում, որը և ամեն տարի մեծ քանակութեամբ ծախում են: Չէյթունցիք նկատուած են լաւ պարտիզաններ և հողագործներ. ջնայելով երկրի լեռնոտ զերքին, զէյթունցին այնու ամենայնիւ նոյնչափ ճարտար մշակում է իր արտերը, որչափ և իր պտղատու պարտէղները և այգիները. զէյթունացոց հարստութեան մի ազբիւրը կազմում է և բամբակը և մետաքսը՝ աբրշում, որը պատրաստում են կանայք:

Այս լեռնականները խիստ կրօնասէր են. սոցա մէջ մինչև այժմ տիրում է կատարեալ նահապետական կեանք ու նախնի սովորութիւններ, նոքա պատվում են իրենց մեծերին, հոգեւորականներին, հպատակվում են իրենց օրէնքներին, և միշտ կարողացել են պատուով պահել զրացի օտար ցեղերի մէջ իւրենց ազգի ու եկեղեցու պատիւը և յարգը:

Չէյթունի բոլոր բնակիչները զուտ հայեր են թուով մօտ 2,000 առն. պատերազմի ժամանակ զինեալ զէյթունացոց թիւը հասնում էր մինչև 7—8,000-ի. երկրի օրէնքի համաձայն իւրաքանչիւրը իր հաշուով պարտաւոր էր զինուելը: Միակ Չէյթունի մէջ կանգնած կային մինչ վերջին սոսկալի

հրդեհը եփեղեցի, որոնք բոլորն էլ զոհ զնացին անգուժ հրդեհի բոցերին:

Չէյթուն քաղաքաւանից դուրս մօտ երկու ժամի չափ հեռու, դէպի հարաւ-արեւելք, Ելճէ հովտի մէջ գտնվում է հոյակապ Ս. Փրկիչ կամ Ամենափրկիչ յայտնի վանքն, որը 1862-ի կռվում Մարաշու Աղիզ փաշան իր անգլթուօթիւն-ների տեսարանը դարձրեց:

Այս վանքն աւանդութեամբ հիմնած է Ս. Բարթուղիմէոս առաքեալը, որին և վերագրվում է տաճարի մէջ սեղանի տակից դուրս բղխող ցուրտ ջուրը:

Փոքր ինչ վերեւում մենք յիշեցինք, որ զէյթունցիք միայն ներկայ դարուս սկզբներում ստիպուած են եղել հարկատու լինել Խօզան-օղլու թիւրքմէն ցեղի գլխաւորներին, երբ սոքա այլ թիւրքմէն և աֆշար ցեղերի հետ մարտնչելով այդ ժամանակները տուանձնապէս զօրաւոր դիրք են բռնել Միլիկիոյ փոքրիկ տիրապետողների մէջ: Այստեղ կարևոր է յիշել, որ Միլիկիոյ փաշաները, անտարակոյս սուլթանների հրահանգներով, բազում անգամներ և զանազան ժամանակներում փորձեր են փորձել տիրապետել միւս լեռնաբնակ ցեղերի, վայրերի հետ միասին և Չէյթունին, այդ մի խումբ հայ լեռնականներով, սակայն շատ անգամ վարած կռիւների մէջ, թուրքաց զօրքերը շատ քիչ անգամ են փոքր յաջողութիւն ունեցել, որի շնորհիւ զէյթունցիք ժամանակ առ ժամանակ հարկ են վճարել թրքաց կառավարութեան և այնուհետև մերժել, որի պատճառաւ և յաճախ արշաւանքներ են արած այս լեռնաբնակ ժողովրդի դէմ զանազան փաշաներ:

Այսպիսի մի արշաւանք տեղի է ունեցել և ներկայ դարու սկզբներում: Այդ ժամանակում թրքերը իրենց բազմութիւ զօրքերով յարձակուելով զէյթունցոց դէմ և անկարող լինելով կատարելալ յաղթութիւն ձեռք բերել՝ հաշտութիւն են կնքում հայ լեռնականների հետ, որի հիման վերայ զէյթունցիք պարտաւորվում են հարկ տալ օսմանեան տէրութեանը տարին մօտաւորապէս 5,000 բուբլի, որը և մի երկու տարուց յետոյ յանձնառու չեն լինում վճարելու, և այդպիսով դարձեալ ապստամբում են տէրութեան դէմ 1819 թուականին: Թէև այսպէս երբեմն զէյթունցիք անկարող լինելով ղեմադրել զօրա-

ւոր արտաքին թշնամիներին, ստիպուած են եղել ժամանակաւորապէս հարկ տալ՝ բայց ի պատիւ սոցա հարկ է յիշել, որ պատերազմաւ մինչ ցայժմ՝ 5—6 դարերի ընթացքում ոչ մի օտար բանակ չի կարողացել մտնել Օւէյթուն: Օւէյթունցոց աւելի նշանաւոր ապստամբութիւնն և կռիւնները այնուհետեւ տեղի ունեցան ներկայ դարուս երեսնական թուականներին, որ ժամանակ իրար զլուխ անցան և բոլոր Արլիկիոյ ախրապետները: Այս ժամանակներն էր (1835), որ Եբրահիմ փաշան, Մէհէմմէդ Ալի Նզիպտօսի բռնաւորի որդին, մեծ ոյժ և ջանք դորձ դրեց նուաձէրու հայ լեռնականներին ու տիրելու Օւէյթունին. սակայն սորա մի քանի տարի մղած պատերազմներն էլ նոյն նոյն հետեանքն ունեցան, ինչ որ և շատերինը: Այնուհետեւ մի փոքր հանգիստ ժամանակ անցնելուց յետոյ, զէյթունցիք նորից ստիպուած արիւնձուշա պատերազմ ունեցան օսմանեան զօրաց հետ: Տաւրիկեան պատերազմից յետոյ, երբ տաճկաց կառավարութիւնը Ռուսաստանից դադարած մահմետականներին բնակեցնելու համար տեղ էր փնտռում իր տէրութեան մէջ, Մարաշու Խուրշիտ փաշան 1859 թուին պատերազմ բացեց զէյթունցիների դէմ, որպէս զի հայ լեռնականներին բնաջինջ անելուց յետոյ, նոցա տեղ թուրք գաղթականներին բնակեցնէ:

Այս աղետալի վտանգի առաջն առնելու համար, այդ ժամանակուայ Օւէյթունի չորս իշխանները՝ Աստուածատուր Նէնի-տիւնեան, Սուրէնեան, Շորփայեան, Նազուբեան և նոցա տեղակալ Արապեար՝ ժողով անելուց յետոյ մի քանի հազար զէյթունցիների զլուխ անցած մի փառաւոր կռիւ տուին, որի հետեանքը Խուրշիտ փաշայի փախուսան եղաւ: Ամենավերջին նշանաւոր պատերազմը որ զէյթունցիք մղեցին օսմանեան զօրաց դէմ՝ տեղի ունեցաւ 1862 թուի յուլիս և օգոստոս ամիսներում: Այս պատերազմի սկզբնապատճառը որքան մի չնչին, կարևորութիւնից զուրկ բանից առաջացաւ, այնքան էլ, հակառակ զէյթունցոց յաղթութեանը՝ աղետաբեր հետեանք ունեցաւ այդ հայ լեռնականների ներկայի և ապագայի նկատմամբ:

Ահա ինչպէս. մինչ քան այդ պատերազմը, զէյթունցիք միանգամայն անկախ կեանք էին վարում. թուրք կառավարու-

Թիւնը բաւականանում էր միմիայն և եթ նրանով, որ ժամանակ առ ժամանակ տուրք էր առնում այս Հայ լեռնականներից և չէր խառնվում նոցա ներքին ու արտաքին զործերի մէջ, սակայն այս պատերազմը վատ հետեւանք առնելուն համար պատճառ եղաւ, որ օսմանեան կառավարութիւնն սկսեց զբականապէս միջամտել դոցա զործերին և իր կառավարիչը հաստատել Չէյթունի մէջ:

Այդ նշանաւոր պատերազմի սկզբնապատճառը սա է. Չէյթունի մօտակայ կրկու տաճիկ զիւզացիներ հողի և հունձի վէճ, թշնամութիւն ունենալով՝ կռուք են բռնվում և երկու կողմից կոտորածքեր են լինում: Առուողների մի կողմի հրաւիրմամբ՝ մի քանի զէյթունցիք կամենալով հաշտութիւն կայացնել երկու կողմի մէջ, անսպասելի կերպիւ հակառակ կուսակցութեան կողմից թշնամանքների և նախաստիճների են հանդիպում: Ուստի նպատաւոր են գտնվում մի կուսակցութեան և օղնում նորան, որով և այդ կուսակցութիւնն յաղթող է հանգիստանում. յաղթուած կուսակցութիւնն կամենալով իր վրէժը առնել զէյթունցիներից, պատգամաւոր է ուղարկում Վարաչ Ազիզ փաշային և զործի էութիւնն բոլորովին հակառակ ցոյց տալով և զէյթունցիների միջամտութեանն ապստամբութեան գոյն տալով՝ տաճիկ փաշայի մոլեռանդութիւնն ու կատաղութիւնն է դրդում, որի պատճառաւ և իր վաղուցուան քէն ու վրէժն առնելու համար՝ 35,000 կանոնաւոր և անկանան զօրքով կատաղի արշաւանք է անում խեղճ Հայ լեռնականների վերայ:

Մինչ քան Չէյթուն զիւզաքաղաքը հասնելն, Ազիզ փաշան ճանապարհին հայերից մեծ կոտորածք է անում, մանաւանդ Ալապաշ կոչուած հայաբնակ զիւղը տալն ու վերայ է անում. այնուհետև Ս. Փրկչի վանքում մի քանի հոգեւորականներ սպանելով ու աւերումներ պատճառելով՝ իր արշաւանքը շարունակում է դէպի Չէյթուն և պաշարում այդ հայկական զիւզաքաղաքը:

Օգոստոս ամսի 14ին տեղի է ունենում հայերի և թուրքերի մէջ մի ճակատամարտ, որով և Ազիզ փաշայն վճռած է եղել միանգամայն վերջ տալ զէյթունցոց անկախութեանը և բնաջինջ անել նոցա. սակայն զէյթունցիները մահիրը աչքը

առնելով այնպիսի մի յարձակում են անում թուրքաց զօրաց վերայ և փառաւոր ջարդ տալիս նոցա, որ Ազիլ փաշան փախուստ տալով մերայնոց է թողնում իր զօրաց կողպատած աւարը, դրօշակները և մի քանի թնգանօթները:

Եւ այսպէս 1862 թուի անսպասելի պատերազմին, հայերը մեծամեծ փասաներ կրելուց յետոյ, վերջ ի վերջոյ յաղթող հանդիսացան: Այս կազմում զէյթունցիները կորուստ ունեցան ընդ ամենն 5—600 հոգի. այն ինչ թուրքաց կորուստը հասնում էր 7,000 մարդի:

Այս ցաւալի անցքերի մասին Մարաշու փաշան իսկոյն տեղեկութիւն է հաղորդում Պօլիս Բ. Գրան, որը և յոյժ զժողհ մնալով իրերի վիճակից և Ազիլ փաշայի վարմունքից, սորան անյապաղ պաշտօնանկ է անում և նորա տեղը նշանակում մի նոր կուսակալ, Աշրք փաշայ անունով: Միևնոյն ժամանակ Պօլսից նոր կուսակալին հրահանգներ է ուղարկվում պաշարման վիճակի մէջ գնել Օւէյթունն, որ և իսկոյն կատարվում է: Այս անակնկալ կարգադրութիւնների հիման վերայ Օւէյթունը սկսում է զիջանիլ. մօտ 2,000 լուբլի տուրք են վճարում կառավարութեան. Օւէյթունի առաջնորդ Սարգիս եպիսկոպոսը այս անցքերի մասին՝ Պօլսի հայոց պատրիարքարանին մի քահանայի միջոցաւ տեղեկութիւն հաղորդելոց յետոյ՝ մի քանի մարդով ուղևորվում է Մարաշ կուսակալի մօտ՝ պաշարման բարձումը խնդրելու. փաշան համաձայնում է կատարելու Սարգիս եպիսկոպոսի միջնորդութիւնը միայն այս պայմանաւ, որ Օւէյթունի չօրս իշխանները անձամբ գան ու ներկայանան իրեն՝ փաշային: Փաշայի այս պահանջը թէև ոչ լիովին, գէթ մասամբ կատարվում է: Օւէյթունի իշխաններից երկուսը գնում են Մարաշ, գնում են փաշայի մօտ նոյնպէս Օւէյթունի տեղակալ Արապետը և Ալապաշ զիւզի քէհեան, որոնք և բանտարկվում են իբր կռուի սկզբնապատճառի գլխաւոր յանցապարտներ:

Ահա այս ժամանակներից թուրք կառավարիչները ամեն միջոց գործ են գնում զէյթունցիներին յանցաւոր ցոյց տալու, և ըստ այնմ նոցա դատին փնասկու: Երբ զէյթունցիք մի կարգ խնդիրների առթիւ յանձնառու չեն լինում կատարելու փաշայի առաջարկութիւնները ինպատտ կառավարու-

Թեան, այն ժամանակ Աշրը վաշան սպառնում է ղէյթունցի իշխաններին մի նոր արշաւանքով: Այս բոլորը տեղի են ունենում 1862-ի վերջերք:

Բ. Գուռը՝ սկզբներում ուշադրութիւն անգամ չէ ուղել դարձնել պատրիարքարանի յայտազրիւրի վերայ հայ լեռնականների խնդրի առթիւ, նոյն և Չէյթունից եկած պատգամաւորների ազերսի վերայ, որոնք Բ. Գրան արգարագատութիւնն էին խնդրում. բայց յետոյ երկիւղ կրելով խնդրի սուր կերպարանք առնելուց՝ զիջանում է պատրիարքարանի զրութիւններին և մի մասնաժողով է կազմում ղէյթունցոց խնդրի քննելու համար: Այս միջոցներում Չէյթունից Պօլիս են հասնում մի քանի հոգևորականներ ու աշխարհականներ նորանոր տեղեկութիւններով տխուր անցքերի ու երկրի վիճակի նկատմամբ:

Մինչդեռ Պօլսից մասնաժողովի կողմից կառավարչական



ԶԷՅԹՈՒՆՑԻ

մի երկու անձինք են ղնում Չէյթուն տրխուր անցքերի պատճառը ու հետևանքը ստուգելու՝ ղէյթունցոց կողմից ևս զաղտնի մի երկու պատգամաւորներ են ուղևորվում Փարիզ՝ Նապոլէոն կայսեր ղթութիւնն ու օղնութիւնն հայցելու:

Չէյթուն գնացող քննիչներից մինը պատրիարքարանի յայտազրի վերայ լինում է հայադղի: Ռէպրերի բերմամբ քննիչնշանակվում է Ներսէս վարդապետ Վարժապատեանը (յետոյ պատրիարք), որը այդ

ժամանակ Ադանա էր գտնվում և որը այդտեղից դիմում է Մարաշ: Օւէյթունցիները քննիչներին հետ յարաբերութեան մանկիս՝ պահանջելիս են եղել որ իրենք ընդ միշտ պլատուն Սիլիկիոյ փաշաների իրաւասութիւնից և նկատուն որպէս անկախ ժողովուրդ: Անտարակոյս սոցա այս պայմանը անուշազիր է մնում կառավարութիւնից և տեղի են ունենում այլ դէպքեր, բոլորովին աննպաստ զէյթունցիներին:

Փրանսիայի միջամտութեանը և օգնութեանը դիմող պատգամաւորները լինում են Օւէյթունի հոգևորական Պր. վ. Ա. և զմիւռնացի Յովհաննէս Սավալան խանը, որոնք 1862-ի նոյեմբեր ամսին արժանացիշատակ Վարապետ վարդապետ Շահնազարեանցի աջակցութեամբ դիմելով Սապուլէոն կայսեր՝ խնդրած են՝ զէյթունցիների յարուցած խնդրի առթիւ Ազիզ փաշայի հետ՝ հայ լեռնայանների նախնական իրաւունքները պաշտպանել և դոցա հասարակ պայմաններէ մէջ դնել որպէի ունեցած պարէրադէ հերեւանքին նպաստել յօգուտ զէյթունցիներէ:

Յիշելի երևոյթ է, որ այդ ժամանակ Վիկտոր Լանգրուա հայադէտը բարոյական մեծ օգուտ է ցոյց տուած պատգամաւորութեանը, նոյնպէս և բաւականին նպաստած է եղել թարգմանութիւններին:

Արտաքին գործոց պաշտօնայ Պրուէս դը Լուի տուած է Վ. -ին. զբաւոր պատասխան, որը մեծ արժէք ունէր որպէս զէյթունցոց պահանջներին համապատասխանող մի որոշում, և բերանացի ևս խոստացած է եղել մեծ խոստումներ:

Այդ ժամանակ Փարիզի թրքաց դեսպանատան հայ պաշտօնականերից մինը Ա., ամեն ճիշդ գործ է դրած պաշտօնական շրջաններում յայտարարելու, թէ Վ. -ը զէյթունցոց խնդրի մասին չէ եկած, և հետևապէս աշխատած է եղել ամեն կերպ սկսած գործողութիւնքը դադարեցնելու, յետ զըցելու. սակայն հաստատամիտ զէյթունցի եկեղեցականը ամեն սպառնալիք յանձն աւնելով, և միևնոյն ժամանակ զանց առնելով մեծ պատիւներ՝ ընդգլխմանում է, առարկելով թէ ըսկըտուած գործը անկարելի է կիսատ թողնել:

Երբ դեսպանատան պաշտօնայք տեսնում են որ Վ. -ը գործին մեծ կարևորութիւն է տալիս և շարունակում՝ գաղտ-

նի խորհուրդ են յղանում. այսինքն երբ Վ.-ը ձևքը եղած անցազրով պատրաստվում է Թուրքիա վերադառնալ՝ դեպանատան քարտուղարը անցազրի վերայ ըստ օրինի ձևք քաշելու՝ դադանապէս գրում է, թէ այդ կիեղեցականը թրքաց ծախսով պէտք է վերադառնայ Թուրքիա: Այս որոգայթը հայազրի Պ. Պ. Պ. իմանալով և տեսնելով, որ ծանր հետևանք պիտի առաջադրէ՝ մեղադրում է դեպանատան պաշտօնեային, և հրաւիրում է Վ.-ին զբոյշ մնալ:

Անցազրի վտանգը աչքի առաջ ունենալով, երբ Վ.-ը մնաս բարեաւի է դիմում արտաքին գործոց բարձրաստիճան պաշտօնեային՝ վերջինս հարցնում է, թէ պատգամաւորութիւնը ճանապարհածախս չունի՞ արդեօք որ թրքաց հաշուով է վերադառնում: Առ այս Վ.-ը պատասխանում է, թէ ընդհակառակն այդպիսի մի բան խնդրած չունին, ըստ որում ծախսի համար բաւարար ստակ ունին: Այն ժամանակ արտաքին գործոց նախարարը տալիս է դադղեական անցազիր, որով և Վ.-ը վերադառնում է: Այս պատգամաւորութեան ծախսը լիովին հոգացած է Յովհաննէս Սափալան խան զմիւռնացին:

Այս պատգամաւորութեան ձեռնարկութեանց հիման վերայ Ֆրանսիական կառավարութիւնը իսկոյն հեռագիր է խփում Պօլսի Ֆրանսիական դեսպանին որ Ջէյթուն գնալու համար մարդ ուղարկէ: Խիստ ձմեռ ժամանակ Ֆրանսիական դեսպանատան կողմից մի պաշտօնատար անմիջապէս գնում է Ջէյթուն. չորս հինգ ամիս պարտում, անդեկութիւններ է ժողովում պատերազմի պատճառների մասին և վերադառնում է Պօլս:

Վերադարձին, շատ հաւանական է, որ պաշտօնատարը կաշառուելով, զէյթունցոց անկարողութիւնը յայտնած է, որպէս բէյութեան անարժան մի հասարակութիւն. ըստ որում նորա ուղևորութիւնն ու քննութիւնը մի նշանաւոր արդիւնք չունեցան և եղածն էլ անցաւ. միայն սորա հետևանքն այն եղաւ, որ մի քանի բանտարկեալներ ազատուցան, նոր տուգանք չտուին թրքաց, և Ջէյթունի վերայ տաճկաց նոր զօրք ուղարկելուն արդելք եղաւ, որովհետև տաճկական զօրքի յողթուելուն համար, կառավարութիւնը վրէժ

առնելու նպատակով մտադիր էր նոր զօրք հանել Օւէյթունի վերայ, և զէյթունցիները հեռացնելով իրենց երկրից՝ զոցս փոխարէն չէրքէղներ բնակեցնել: պատերազմի պատճառ եղողներից մի քանիսին պէտք է գլխատէին, այս բոլորը չեղաւ, ինչպէս չեղաւ չորս իշխանների Օւէյթունից խապառ արտաքսումը:

Սորանից փոքր ինչ յետոյ 1863 թուի վերջերը թրքաց կառավարութիւնը նորից կոմիսէրներ ուղարկեց՝ հայ լիւնականների խնդիրը տեղն ու տեղը վճռելու. կոմիսէրները երեք անձինք էին, մինը հայազգի Սարգիս էֆ. Աղաբէկեան, միւսը հայ հռոմէական Տավուա էֆ. և երրորդը մի տաճիկ Շահին պէյ անունով:

Վննութեան ձեռնարկեցին և դարձեալ աննպաստ զէյթունցոց համար. ի միջի այլոց Օւէյթունի վրայ ծանր հարկեր դրին. այսինքն մինչ քան 1862-ի կոիւր ամբողջ երկրի վերայ տարեկան 24,000 դահեկան տուրք էր դրուած կառավարութիւնից, այն ինչ կոմիսէրների շնորհիւ այդ տուրքը բարձրացաւ 150,000 դահեկանի: Այս բարձրացումը գլխաւոր պատճառն եղաւ, որ սորանից ինը տարի առաջ զէյթունցիք կրկին ապստամբեցան:

Այս ապստամբութեան պատճառաւ մի քանի հարիւր մարդիկ (2—300) թէ Պօլիս, թէ Հալէպ և թէ Մարաշ բանտարկուեցան:

Մարաշ գնացած երկու իշխանները հարցաքննութեան համար ուղարկվում են Պօլիս, ուր փոքր ինչ մնալուց յետոյ նորից թոյլավութիւն են ստանում վերագառնալու իրենց երկիրը: Անցնում է մի քանի ամիս: Բ. Վուռը, Մարաշու փաշայի չար ոգևով հաղորդած տեղեկութիւնների հիման վերայ, հրահանգ է ուղարկում Մարաշ Օւէյթունի չորս իշխաններին, որպէս բռնաւոր և ժողովուրդը կեղեքող անձինքների անմիջապէս Պօլիս ուղարկել: Սոքա ոստիկանների հսկողութեամբ հասնում են Պօլիս, նախնապէս քննվում և վերջը բանտարկվում են մահապարտ անձինքների գրեթէ քթերի տակ: Հայոց պատրիարքարանը սոցա խնդրում խիստ թոյլ է վարվում, մանաւանդ որ բանտարկեալները իրենց յանցանքը պարզած չ'տեսնելով, բողբոք են ներկայացնում և դատաստան խնդրում:

պատրիարքարանի հէնց այս թոյլ վարուելու պատճառաւ էր որ իշխանները բանտից ազատ չ'մնացին:

Նրեւակացիլ պէտք է, թէ ինչ սոսկալն Հարուած և տաժանելի պատիժ էր բանտը, այն էլ մահապարտների բանտը՝ հսկայ դահապէժների մէջ ազատ ապրող այս հայ իշխանների համար: Սոքա դառն կսկծից, բանտի ազդեցութեան սարսափից, ինչպէս որ և շատ բնական էր՝ շուտով հիւանդացան:

Բաւական ժամանակ այս դառն վիճակի մէջ մնալով և անուշադիր մնալով հայոց պատրիարքարանի ազդեցութիւնից Բ. Պրան մօտ նոցա ազատութեան խնդրում՝ յուսահատեցան հայ քաջագնէրը:

Այս յուսահատութիւնն էր, որ դիւթական անուն կրող այս ղէյթունցիք հայ կաթողիկ պատրիարքի անպատուէր ջանքերի միջոցաւ՝ ծունը խոնարհած վատիկանի երերուն դահի առաջ իրենց բարոյական ստրկութեան առաջին սարսափեցուցիչ քայլը արեցին. սակայն այս անակնկալ կրօնափոխութիւնն, որի միայն լուրը Պօլսի համայն հայերին շանթահարեց՝ ներքին համոզմունքի ծնունդ չէր, այլ իշխանների կարծիքով, սա իրենց անձնական ազատութեան քայլն էր:

Սոքա վերջ ի վերջոյ բանտից արձակուելուց յետոյ պատրիարքարան դարձան և այնտեղ մնացին, մինչև որ կառավարութիւնը՝ ղէյթունցիներին խնդիրը վճռելով՝ տեսաւ, որ հայ լեռնականներին գրգռող եղիլութիւնները և հետեւապէս կոտորածի պատճառները երկիւղմնակի յանցանքներ են եղած՝ ազատութիւն շնորհեց իշխաններին և միևնոյն ժամանակ ցանկանալով լեռնական հայ ժողովրդի վիճակը մօտիկից քննէ, կրեք քննիչն ուղարկեց Օւէյթուն, որոնց մասին վերևը արդէն յիշած ենք:

Օւէյթունցիք, իրենց վիճակը խաղաղ և հանդիստ պայմանների մէջ դնելու համար, կառավարութեանը ի միջի այլոց հետեւալ առաջարկութիւնները ներկայացրին.

Օւէյթունի մէջ հայ քաղաքապետ նշանակել,

Հարկերը թեթեւացնել,

Չորս իշխանների ինչպէս և նոցա զերդաստանների վերադարձը Օւէյթուն. (պէտք է իմանալ, որ 1862ի կռուից յետոյ, կառավարութիւնն չորս իշխանների զերդաստանները տեղափոխած էր Մարաշ):

Սորա հակառակ, կառավարութիւնն պահանջում էր Օլնտորական տուրք տարեկան 100,000 զուրուշ:

Եյծերի տուրք 50,000 զուրուշ:

Վառավարական տուրք, որ երկար ժամանակներ է ի վեր չէին վճարած, տարեկան 25,000 զուրուշ իսկ որ ամենակարևորն էր՝ դա ղէյթունցոց անդափոխութեան խնդիրն էր, որ կառավարութիւնն պահանջում էր հայ լեռնականներէց:

Աւելի չգողուելու համար ղէյթունցիներին և ցանկանալով վերջ տալ Ահոնային Վիլիկիոյ ապստամբութիւններին, մանաւանդ որ մասամբ եւրոպական դեսպաններն էլ միջամտեցին ղէյթունցիների գործին մէջ յօգուտ վերջինների՝ սկսեց զինդութիւններ անել և այդպիսով Օւէյթունն շրջապատող դահավէժների մէջ նորից սկսեց տիրել խաղաղութիւն:

Անցնում են մի քանի տարիներ: Տուրքերի ծանրութեան պատճառաւ, 1872 թուին Ուլնիոյ լեռների խորշերում դարձեալ սկսում է կատարեալ շփոթութիւն, որի հետևանքը այն է լինում, որ կառավարութիւնը կալանաւորում է բաւականին թուով ղէյթունցիք և երկար ժամանակ հայ լեռնականները զեզերում են Մարաշու բանդում: Այս շփոթութիւնը մեծ կերպարանք չառաւ և այնպէս շուտով խաղաղութիւնն տիրեց Օւէյթունում:

Այս ապստամբութիւնից մի վեց տարի հաքը, այն է 1878 թուին օգոստոս ամսին հայ լեռնականները նորից անկարող լինելով տոկալ կառավարութեան մեծամեծ տուրքերին ու պաշտօնական անձանց բռնութիւններին՝ դուրս բարձրացրին և ղէյքերը ձեռքերին ապստամբութեան զրօշակը պարզեցին:

Օւէյթունցիների հետ ի միասին ապստամբեցին սկզբները և հաճընցիք և այլ թիւրքմէն ցեղերը՝ Խօզանցի Ահմէդ փաշայի առաջնորդութեամբ, որը հայերի հետ գործում էր մեծ սիրով և որի զլխաւորութիւնը ճանաչում էին հայ լեռնականները: Ահոնային Վիլիկիոյ այս ընդհանուր ապստամբութիւնը, անկասկած, մեծ յուզմունք էր պատճառում օսմ. պետութեան: Մարաշի փաշան ապստամբութեան լուրը տանելուն պէս՝ իր ձեռքի տակ ունեցած բոլոր զօրքով աճապարում է ապստամբութեան վայրը և իսկոյն պատերազմական

գործողութիւններ է սկսում Ահմէդ փաշայի և զէյթուն-
ցիների դէմ:

Փոքր առ փոքր պատերազմի շփոթութիւնները տարած-
վում են բոլոր լեռնականների մէջ, որոնք զէնք ու վառօդ
ձեռքերը առած կռուի դաշան են իջնում՝ պաշտպանելու ի-
րենց դարաւոր անկախութիւնը: Մարաշի փաշայի ձեռքին
տակ զանուող զօրքը անբաւարար է համարվում զսպելու
ամեն տեղ շնչող ապստամբութիւնները, ուստի և օրոստոսի
վերջին մօտ 12 վաշտ զօրք է ուղարկվում Մարաշի փաշայ-
ին օգնութիւն:

Լեռնային Ալլիկիոյ տիրապետողների և թուրքաց զօր-
քերի այս իրարանցումների մէջ, երբ լեռնականների վերայ
շարունակ նոր ոյժեր են աւելանում՝ զէյթունցիների կող-
մից երեք պատգամաւոր են գնում Պօլիս և հայոց պատրի-
արքարանի միջնորդութիւնն ու օգնութիւնն են խնդրում
Բ. Վրան մօտ:

Ի Տէր Հանգուցեալ՝ Սերսէս պատրիարք ընդունում է
պատգամաւորութիւնը և մանրամասնօրէն տեղեկութիւն առ-
նելուց յետոյ, պիմում է մեծ եպարքոսին և խնդրում՝ զէյ-
թունցիների հարկերը թեթեւացնել և հայ քաղաքապետ նշա-
նակել Չէյթունում, քանի որ այդ գիւղաքաղաքը զուտ հայ-
աբնակ է, սակայն հակառակ պատրիարքի աշխատանայ յօ-
գուա զէյթունցիների՝ Պօլսի հայերը հաւատ չէին ընծայ-
ում պատգամաւորների պատմածներին, ուստի սոցա վերա-
դառնալու ժամանակ՝ հետները ուղևորվում է Չէյթուն և
մի վարդապետ, որի պաշածնը պէտք է լինէր տեղեկութիւն
հաղորդել Չէյթունի նկատմամբ:

Խօզանը Ահմէդ փաշան, իր ժողովրդի անկախութիւնը
պահպանելու նպատակաւ՝ երկար ժամանակ օսմանեան զօր-
քերի դէմ մաքառելուց յետոյ, յաղթվում է և այգալիսով
զօրա ժողովուրդը ընդ միշտ հպատակվում է տաճիկ կռօա-
վարութեանը, սակայն այստեղ յիշելի երևոյթ է, որ այս
թուրքմէն ցեղի տիրապետողի պարտութեան զլիւսաւոր պատ-
ճառը լինում են մի քանի վատահոգի հայեր, որոնք սարկա-
ցած՝ այս քաջադն լեռնականին մատնում են թուրք զօրքերին:

Երբ Ահմէս փաշան վերջնականապէս յաղթվում է, Արս

քաղաքից Օւիա և Ճէվտէթ փաշաների հրամանաւ, Հաճրնի առաջնորդ Պետրոս եպիսկոպոսը և Պուլյումճեան Պրիգոր անունով անձը գնում են Օւէյթուն՝ համոզելու հայ լեռնականներին վերջ տալ իրենց ապստամբութեանն և որ մի քանի յայտնի զէյթունցիք դնան տաճիկաց բանակատեղին իրենց հնազանդութիւնն ու հաւատարմութիւնն յայտնելու:

Սակայն մինչ այս մինչ այն՝ թուրքերը վերջապէս յաղթում են զէյթունցիներին, կառավարութիւնը Օւէյթունը ապստամբ գաւառ նկատելով, մեծ խտտութիւններ է դործ դնում: ձերբակալում են նշանաւոր անձինք և ամենայն խրատութեամբ տուրքերը պահանջում:

Յաւօք սրտի ահա այս ժամանակները միայն, երբ հայ լեռնականները յաղթվում են թուրքերից, Օւէյթունի խրնդիրը զրաւում է բոլոր հայերի մտքերը, մանաւանդ երբ պատրիարքարանին յայտնի է գտնում այն քստմնեկի զէպքը, որը թուրքերը կատարած են եղել աւելի քան հարիւր լեռնականների և Փրնուզի եպիսկոպոսի վերայ:

Մէկը միւսին հեռեւոյ այս տխուր արկածների պատճառաւ, պատրիարքը փոխադարձաբար տեսակցութիւն է ունենում Պրանսիայի զեսպան Պուրնիէի հետ և նորա անմիջական միջամտութիւնն է խնդրում Բ. Պրան մօտ: Եյս վերջին տխուր զէպքի վերայ աւելորդ չենք համարում Մասիս լրագրից քաղել հետեւեալ տխրալի կտորը:

«Հոկտեմբերի 29ի օրն Մարաշի քրիստոնէսայ ժողովրդի համար սոց և արտասուեաց օր մը եղաւ: Նոյն օրն երեկոյին ուշ ատեն Ախր լեռներէն զինուորական փողի շախնդն լսուեցաւ. ժողովուրդը կը դիմէ կառավարութեան պալատն իմանալու համար թէ ի՞նչ կայ. և ահա երկու դռնն զինեալ թուրք զօրականներ կ'երևին և նոցա մէջէն երկայնահասակ, ձերմակ մօրուքով եպիսկոպոս մը, ձիու վրայ նստած. այդ եպիսկոպոսը Փրնուզի վանուց առաջնորդ Նիկողոս եպիսկոպոսն էր. եպիսկոպոսին հետէն 120 զէյթունցիներ կուղային: Յիշեալ կորիճ հայերն կը մտցնեն կառավարութեան պալատը և բակը կը կայացնեն. յետոյ նոցա կէսը զինուորանոց կը խրոկեն: Ար մերկացնեն եպիսկոպոսն ալ իւր զգեստներէն, լոկ շապիկ մը կը թողուն վրան և շղթայակապ կը խրկեն ի բանտ:

«Ահաւասիկ ինչ որ կը պատմեն կառավարութեան պալատը այս գէպքին վրայ. հոկտեմբերի 26-ին Չօլագ Արթին վարժապետն խուճի մը հայոց հետ կանուխ թիւք զօրաց վրայ յարձակելու կը պատրաստուի: Մարաշն կառավարիչ Վէյսի փաշայ նախորդ օրէն այս եղելութիւնը իմացած ըլլալով քանի մը գունտեր կը խրկի հայոց վերայ. հայք իրենց հրացաններն կը պարզին զօրաց վրայ. զօրապետը կը հրամայէ հայոց անձնատուր լինել, հայերը կը դիմադրին, պատերազմը կսկսի: Չէյթունէն մի քանի ժամ հետո Միքայէլ զիւղի հայք կը պաշարուին, և թշնամեաց ստուար թւոյն չը կարենալով դիմադրել կը ձերբակալուին: Այսօր Մարաշու բանտերու մէջ 200 կարիճ գէյթունցի հայեր շղթայակապ են, սոցա մէջն են Ֆրնուզի առաջնորդ Նիկողայոս կախիկոպոսը և Արթին վարժապետը»:

1878 թ. նոյեմբերի 23ին մեծ կարգքօսը դրաւոր կերպիւ պատրիարքարանին յայտնում է, թէ ձերբակալուած Նիկողոս կախիկոպոսն, Յարութիւն Չաքրեան և մօտաւորապէս 200 հայ զինուորներ, իբր ապստամբներ, կրելու են իրենց արժանի պատիժը: Ներսէս պատրիարք այս գիրը ստանալով հարկ եղած պատասխանը տալիս է և միևնոյն ժամանակ պատրիարքարանի պաշտօնեայնորից մինին անմիջապէս ուղարկում է անզղիական դեսպանի մօտ ունկնդրութիւն խնդրելու: Աէյարտ, ժամանակը երեկոյեան դէմ նկատելով, առաջարկում է ունկնդրութիւնը թողնել միւս օրուան, սակայն հայ պաշտօնեայն ունկնդրութեան յոյժ կարեւորութիւնը բացատրելուց յետոյ՝ դեսպանն յօժարում է ընդունել պատրիարքը և ժամի ծին, Ներսէս պատրիարք երկար տեսակցութիւն է ունենում Աէյարտի հետ: Այս ունկնդրութեան հետեանքը այն է լինում, որ Աէյարտ և Փրանսիական դեսպան Ֆուռնիէ համոզում են մեծ կարգքօսին յետ կենալ բանտարկուած գէյթունցիների զլխաւորներին հրացան բռնելու որոշումից:

Երբ պատերազմը սպասածից աւելի երկար է տևում և թուրքերը չեն կարողանում յաղթել գէյթունցիներին՝ այն ժամանակ օսմանեան զօրապետները չար խորհուրդ են յղանում. սոքա իբր բանակցելու համար, մի քանի հոգի են խնդրում գէյթունցիներից, որոնք յարգելով պատերազմական օրէնքները՝

30 Հողի կն ուղարկում օսմանեան զօրքերի բանակասեղին, որոնցից և ոչ մինն չի վերագառնում:

Չէյթունի վերջին յեղափոխութեան պարագլուխները՝ Նիկողոս կպիսկոպոս, Յարութիւն Չաքրեան և Աւուկաս Փափազեան նոյեմբերի վերջերին ոստիկանութեան Հսկողութեան տակ Պօլիս կն ուղարկվում և մահապարաների բանտում բանտարկվում: Սոցա Պօլիս Հասնեղուն պէս, Նիսիս պատրիարք կառավարութիւնից խնդրում է, որ Նիկողոս եպիսկոպոսը պատրիարքարանին յանձնուի մինչ քան քննութեան սկսելը:

Պատրիարքի այս խնդիրը թէև խտրութեամբ չի կատարվում, սակայն երեք բանտարկուածներին էլ մահապարաների բանտից տեղափոխում կն մի առանձին սենեակ, ու նոցա թոյլտվութիւն է լինում այցելուներ ընդունելու: Միևնոյն ժամանակ Միքայէլ գիւղի յարձակման միջոցին բռնուած 200 Հայերից միայն 30 թողնում բանտում, իսկ մնացեալներին արձակում կն:

Մի ժամանակից յետոյ ազատվում կն և մնացեալները, ինչպէս ազատութիւն կն ստանում Պօլսում և Չէյթունի յեղափոխութեան պարագլուխները:

Սորանով ահա վերջանում կն զէյթունցիների նշանաւոր ապստամբութիւնները: Եյս ժամանակից է դադարում և Խօզան օղու թուրքմէն ցեղի անկախութիւնն, որով և փոխվում է Լեռնային Արևիկոյ վարչութեան կզանակը:

Աւերջին անգամ, այս պատերազմից վեց հօթը ամիս յետոյ 1879 թ. դարձեալ կոմիսէրներ ուղարկուեցան Չէյթուն. նախ Մազար փաշա և յետոյ Սայիա փաշա և Յովհաննէս Նուրեան էֆէնտի, որոնց վերայ պարտաւորութիւն էր դրուած և Հարէպի կուսակալութեան ընդհանուր քննութիւնը: Սոքա Չէյթունի վերջին անցքերը մանրամասնորէն քննելուց յետոյ, նոյն և այս լեռնականների նիւթական կարողութիւնը և եղած վնասները, նոցա կարողութեան Համաձայն 22,500 դահեկան տուրք որոշեցին որ և կայսերական Հրամանն էլ Հաստատեց, թող որ վերջերը աւելին պահանջում կն:

Եյս 22,500 դահեկան տուրքի որոշելու ժամանակ՝ Չէյթունի ապագայ վիճակը հօթ յօդուածներով կն վերջացնում: Եյստեղ Հարկ է յիշել, որ Յովհաննէս էֆ. Նուրեանի առա-

ջարկութեամբ այդ ժամանակուանից է գոյութիւն առել Օւէյթունի վերայ իշխող մի բարձրութեան վերայ տաճիկ զօրքերի զօրանոցը:

Վերոյիշեալ եօթ յօդուածներից նշանաւորերը սքա են.

1. Հայ գայմադամ քաղաքապետ նշանակել Օւէյթունում.
2. Ոստիկանութիւնը հայերից կազմել.
3. Օւէյթունի հողերը ընդարձակել.
4. Օւէյթունում հայոց զպրոց բանալ և ին: Տէրութեան այս խոստումներն էլ խօսք չկայ որ անկատար ֆայցին:

1884 թուի ամառուան սկզբները տուրքերի մասին նորից վէճեր ծաղեցին կառավարութեան և զէյթունցիներին մէջ և դարձեալ շիթութիւններ սկսեցին աեղի ունենալ Օւէյթունում: Պապիկ իշխանի առաջնորդութեամբ հայ լեռնականները նորից զէնք են ձևք առնում: Յուլիս ամսին այս ապստամբական ցոյցերի վրայ, քաղաքի պահապան զօրաց թիւը բարձրանում է 800ի: Առավարութեան կողմից Մարաշի կառավարիչ Վազա փաշայ գալիս է Օւէյթուն բարեկարգութիւն հաստատելու որը լեազօր իրաւունք է ունենում. Օւէյթուն քանդելու և տակնուվերայ տնելու, եթէ սաստիկ ընդդիմադրութիւն դանի լեռնականներից: Վազա փաշայ տեսնելով որ խոստութիւնով բան չի կարող անել, խաղաղական միջոցների է դիմում զէյթունցիների ապստամբութիւնը բառնալու համար:

Առավարիչը զէյթունցիներին պնդում է տուրքերի հաւաքման մասին և ապստամբ լեռնականներին ներում խոստանալով, հրաւիրում է նոցա անձնատուր լինել: Առավարիչ գթութեանն ապաւինելով, գրեթէ բոլոր զէնք բարձրացնողները մի առ մի գալիս են փաշայի մօտ: Սոցանից կառավարիչը 15 հօգի յանցաւոր է գտնում և ուղարկում է Մարաշու բանտը:

Սորանից յետոյ կառավարիչը միջոցներ սահմանեց տուրքերը հաւաքելու համար. տեղական կառավարութիւնն վերահաղմեց և զանազան զեղծումներ ուղղելով՝ դնաց Մարաշ:

Եհա մեր օրերում սորանով վերջանում է Օւէյթունի այս վերջին ապստամբութիւնը:

ԶԵՅԹՈՒՆ^{*)}

Այս օր է և կանցնինք Ռիհան գետը. ի՞նչ հաւատարիմ ընկեր կուղեկցի մեզ իւր փրփրադէզ ալիքներով երկու ժամի չափ: Մնա՛ բարեաւ Ռիհուն: Ահաւասիկ լեռներ որք անցք չեն տար օտարի. զէյթունցի չեմ, ի՞նչպէս պիտի կրնամ քալել Օւէյթունի լեռանց ապառաժներու վրայէն. բարեբաղաբար ընկերս զէյթունցի է. կ'օղնէ ինձ՝ որ զիտէ այժմնիկի նման ցաակել սուր ապառաժներու վրայէն. և կրնայի ուրիշ ընկերով երթալ այն յիւրզակաց քաղաքը առանց հրաժեշտ ապու ձիուս, քսակիս և այլ զոյքերուս, արդէն Տօք. Միւնիի օրինակը բաւական դաս մ'էր ինձ. որ Սեբաստիայէն դէպի Այնթապ ճանապարհորդած ժամանակի շրջապատուելով մի քանի զէյթունցի պարտններէ, ամենայն վեհանձնութեամբ ութսուն լիրայի փոխատուութիւն մ'ըրաւ փոխարէնը ի հանդերձելու մն առնելու պայմանաւ, ըստ որում պատերազմ ունէին և ստակի կը կարօտէին. ահաւասիկ անձինք, որ մարդուս բռնի բարեգործութիւն ընել կուտուցանին: Աը յառաջանանք և ահա կը տեսնուի Ս. Փրկչի վանքը. ընկերս ստէպ կը խաչակնքէ, չմոռնալով նաև քննել զիս. հետևեցայ օրինակին և աւելի ջերմեռանդ երևալու համար ամէն ճիւղ թափեցի. որովհետև զիտէի թէ անոնց սիրելի բլլալու համար պէտք էր ջերմեռանդ բլլալ: Առնագաշտի մը մէջ կնք, ի հետուսա կը նշմարենք Տօրոսի ամպածրար գաղաթները, ուր ձմեռը մշտատև է. օրը կիրեկոյանայ և մենք կը հասնիքն

*) Աերջերս Զէյթունում պատահած սոսկալի հրդեհի պատճառաւ, որի հրոյ ճարակներին համարեա ամբողջապէս գոհ դնաց հայու նուիրական վայրերից մինը, աւելի քան երբ և իցէ կարեւորութիւն է զգացվում այդ քաջակորով հայ մարդկանց ու նոցա վայրի վերայ մի ամիտի, պարզ ու ճշգրիտ պատկերը ներկայացնելու հայ ժողովրդին: Այս տեսակետից, մենք յանպատրաստից նպատակադրմար դռանք արտասուել այստեղ «Նոր-Ծարի» մը նորերս երևան եկող Զէյթունից գրուած մի երկու թղթակցութիւններից միմեայն և եթ այն մի հետաքրքիր մասը, որը բուականին կենդանի՝ Զէյթունի և նորա բնակիչների առօրեայ պատկերն է ներկայացնում:

այնպիսի տեղ մը, զոր քանի յիշեմ այնչափ երկիւղ կը զգամ։
Ոտիցս տակ դէպ ի վար գահավէժ անդունդներ և գլխուս
վրայ ցցուած ժայռակոյտերէ լեռներ, այնչափ նեղ և այնչափ
վտանգաւոր ուղի մը որ բաւական յողնեցնելէ յետոյ կը տա-
նի զմեզ դէպի նեղ անցք մը, — այս է Չէյթուհի միակ
մուտքը, որ դրեթէ միշտ անառիկ դիրք մը շնորհած է նմա։

Չինեալ խուճը մը մացառներու ետեւն ելլելով կը դի-
մաւորեն զմեզ, վէճը մեծ է. ոմանք կը պնդեն թէ «բիւրեա»
է, այլք թէ «Ֆիրէնի» է (բողոքական, կաթօլիկ ըսել կուզեն)
վերջապէս աշխոյժ երիտասարդ մը որ զլուխը Ֆէսին վերայ
ձեքմակ պլլած, պիտի որոյրած և ձեռքը մեծ դաշոյն մը կը
ձօձէր, իսկոյն կը բռնէ ձիուս սանձը և ազաւազեալ տաճիկե-
րէնով մը կը հարցնէ, թէ «բիւրի'ւս» ես։ «Այ, հայ քրիստո-
նեայ եմ», կը պատասխանեմ հայերէն լեզուաւ։ «Մենք այդ
հայերէն լեզուէն չենք խաբուիր, երեսդ խաչ հանէ», — կը ըս-
կըսեմ խաչակնքել. այս միջոցիս ընկերս ալ կաշխատի համո-
զել, որ հայ եմ, թէ ի տես Ս. Փրկչի վանուց հինգ անգամ
խաչակնքեցի և այլն և այլն. սակայն անհնար կը լինի, որով-
հետեւ լաթերս ու ձեւերս անպատճառ կը մատնէին զիս, որ
բողոքական քարոզիչ մը եղած լինիմ, որմէ յանչափս զգուած
են. վէճը կը տաքնայ և կսկսին պնդել որ ետ դառնամ, եթէ
ոչ... Բողոքս յաջող է, մէջերնուն տարիքոս մէկը «կեցիք լա
տղօք», պօռայ և թթմամանով մը զինի բերելով մացառի մը
ետեւն ներկայացուց ինձ. հաւատաքնութեան ատենին առ-
ջիւն եմ. վերջին փորձն է այս. ամենուն աչքը բերանս է
կրօնքս վճռելու համար. վայ է ինձ, եթէ մերժեմ. իսկ ես
որ չէի երազեր իսկ այսպիսի պահու մը զինի ձեռք անցնել
մանաւանդ Չէյթուհի ընտիր զինին։ Թթմամանը ձեռքէն
առնելով «Ձեզի պէս քաջերուն կենացը» ըսի և մի քանի ումպ
խմեցի. այս տեսարանը ամենքն ալ գէներնկեց ըրաւ և երբ
վերջնական համոզում մը գոյացաւ թէ արդարեւ հայ եմ,
սկսան բիւր ներողութիւններ հայցել, առարկելով որ շատ մը
բողոքականներ հայութիւն կեղծելով մտած և ժողովրդեան
մէջ կրկառակութիւններ սերմանած են և այլն և այլն։ Ար
շարունակեմք ընթացքնիս և տեսարանը կը փոխուի. իւրա-
քանչիւր կը փափաքի իւր տունը հիւրընկալել զիս. ահ, որ-

չափ կը զգացուի մարդ այսպիսի տեսարանէ մը. էբբէն օրաց
կը վաճառէն, էբբէն եղբայր ամեն ինչ կը գտնեն. ամենուն ալ շնորհա-
կալիքս յայտնելէ յետոյ կը խնդրեմ, որ Ա*** ազային տունը
տաննն զմեզ ըստ որում Վեհափառէն*) յատուկ օրհնու-
թեան նամակաւ հոն եմ յանձնարարուած. այս յայտնու-
թիւնն ևս առաւել սիրելի կընէ զիս և կսկսին պատկառա-
նօք վարուել հետս:

* * *

Չէյթուն ենք. անառիկ լիրան մը կողին վրայ շինուած
մի քաղաք, առններ տուներու վրայ, մէկուն տանիքը միշտ
միւսին բակն է աստիճանաբար շինուած: Ա*** աղան մեծ
պատուով կը հիւրընկալէ. հազած է բողեայ շալվար և կարճ
թեւերով երկնագոյն մի ապա՝ ճագերի ձեռով, վրան կը կրէ
Մարգարէ խիստ ծանրազին ճաշակ մը. մէջքն է կապած Վիւ-
րինի մեծ շալ մը, որոյ վրայէն կը փայլին զոյգ մը արծա-
թապատ ատրճանակներու զլուխներ. ապային տակէն կայ
կախուած մի դաշոյն և թեւը կապուած մի բազպան. ոտքը
սև կօշիկ և զլուխը մեծ Բիւսկիլով մի Ֆէս որոյ վրայ մի քա-
նի տեսակ Էսպանիեր ոլորուած ու կապուած են. ինքն քա-
ղաքին չորս իշխաններէն մէկն է և կուսակցութեան մը պե-
տը (զժբարգբար կուսակցութիւնը հոս ալ մուտ գտած է
և չորս թաղի բաժանուած լինելով, չորս ալ կուսակցութեանց
են բաժանուած, սակայն միշտ կը միանան արտաքին յարձա-
կմանց դէմ): Ետն պատերը ամեն տեսակ հրացաններով, դա-
նակներով և սուրերով զարդարուած աւելի զօրանոցի մը ե-
րևոյթն ունին քան թէ տան, և այս ոչ թէ մէկ երկու ան-
ձանց մենաշնորհ մ'է, այլ ամբողջ հասարակութեան. քաղա-
քին մէջ զինեալ կը շրջին և տասը տարեկան հասակէն սկը-
սեալ, թէ այր և թէ կին կրնայ գործածել ամեն տեսակ հը-
րազէն: Տանտիկինը հազած է մի կարմիր դըմնէ էնթարի ո-
րոյ քղանցքները ետ առնելով առաջէն կը կապէ, ոսկեթել չու-
խայէ, զոգնոց և ստանցը վրայ կերպասէ կրծանոց, զլուխը
լաչակ և երեսը այնչափ զգուշութեամբ ծածկուած, զոր ան-
հնար է տեսնալ. նոյն ձեռով են հազուած բոլոր գրացի տիկ-
նայք իրարմէ տարբեր տարազներով. իսկ օրիորդք, որոց մե-

*) Վիւրինոյ Մկրտիչ Վաթոյեկոսից:

Ճամանակութիւնը անմահ գեղով մը օժտած է Նախախնամութիւնը՝ չին այնչափ նախանձոտ իրենց կայտառ երեսներն ու սևորակ աչքերը ծածկելու. ճիշտ կը հագուելն արհեստն ձեռով, միմիայն սա տարբերութեամբ որ գլուխնին քէ՞ ու քէ-սկէ-լ կը գնին և լաչակ չին առնելու. իբրև զարդ հարուստ արհեստք և օրիորդք ճակատնին և վիզերնին ոսկիներ կը կապեն, աղքատք ալ արծաթ դրամներ: Տանտէրս ունի սպասուորներ, որք հասարակ ժողովրդեան նման կարճ թևերով բրդեայ ապա, երկայն շապիկ և սև կօշիկ հաղնելով կը շրջին. և ամեն ժամանակ չին հեռացներ իրենց քովէն դամակն ու ատրճանակը: Ա*** աղան քանի որ իշխան է ունի իւր տան մէջ երկու երկք սենեակներ, որոց միոյն մէջ ամեն օր կը ժողովին թաղեցիք և կը խօսեն զանազան նիւթերու վրայ:

* * *

Յաջորդ օրը կիրակի էր. կանուխէկ զնացինք կիկեցի, ժողովուրդը լեցուած է. կը պատարագէ մի ծեր երէց խիստ պարզ զգեստներով: Նախ քան զԱւետարան՝ կը կարդացուի Արևիկոյ կաթողիկոսի կոնդակը, որ կը յորդորէ կանոնաւոր կերպիւ վճարել տէրութեան տուրքերը. ժողովրդեան անհասկանալի է կոնդակի լեզուն. մի քահանայ կը պարզաբանէ այնպիսի լեզուաւ մը որ նա ևս ինձ անհասկանալի է. Ծրքան օրինաւոր էր կոնդակի յորդորը. սակայն ընդհանուր յուզում կը տիրէ կիկեցւոյն մէջ, երիտասարդք կը զրգռուին, ծերունիք գէշ զաղափարներ կը տածեն, այլք կը զայրանան հասկանալ չկարողանալով թէ ամեն տարի տուրք կըլլայ. վերջապէս մեր տանտիրոջ հրամայողական ձայնով խաղաղութիւնը կը վերահաստատուի: Յաւարտ Ա. Պատարագին կելլենք կիկեցիէն. հեռաբերութեամբ կը գիտնեն զիս ամեն կողմէ. կուզին հետս խօսել, որուն ոչ նուազ կը փափաքիմ և ես, բայց տանուտէրս ինձ զաղտուկ կարծելով նոցա ընկերութենէն միշտ կը մեկուսացնէ զիս, յետոյ ըստ փափաքանացս կը թոյլատրէ. օրն ի բուն անխտիր ամենուն հետ տարբեր նիւթերու վրայ կը խօսակցինք. շատերուն տունը կը պորտախմ պարզ տուններ, ուր աւելի քաջեր կան քան թէ կարասիք. յետոյ կը տանն քաղաքէն մի քիչ հեռու տեղ մը, ուր մի քանի տա-


րի յառաջ քառասուն հազար չէրքէսներու դէմ մղած պատերազմին պատմելով, յիշատակութեան արժանի տեղեր կը ցուցնեն. ի վերջոյ կը պատմեն, որ մի մարդ պատերազմին տաք ժամանակը, մինչդեռ չէրքէս բանակին հրամանատարը վրանին մէջ սուրճ կը խմէր, ի հեռուստ նշանի կառնէ վրանը և դիտմամբ խնայելով փաշային, այնպիսի ճշտութեամբ մը կուղղէ դնգակը, որ սահելով հրամանատարին ձեռաց մօտէն կերթայ կտոր կտոր կրնէ ձեռքի գաւաթը, որոյ վրայ ամբողջ բանակը ահ ու դողով պաշարուած՝ խիղջն ցիր ու ցան կը լըն տասն և հինգ հազար կորուստ և մեծ աւար թողլով ղէյթունցոց. և այսպիսի շատ մը պատմութիւններ, որոյ սակայն ամենուն նիւթը **Կարմիր խաչն է:** Ամենքն ալ վիրաբոյժ են, շատ ծանր վէրքեր կրնան դարմանել, մանաւանդ «Ռէրաճ օղլուի» գերդաստանը, որ նշանաւոր է բոլոր այս կողմերը բժիշկ չունին, և հարկ ալ չկայ, ըստ որում երկրի օդը ինքնին շատ առողջարար է:

Անկերակցութեամբ ասպնջականիս դնացինք **Ս. Մկրտչի վանքը**, որ քաղաքէն մէկ ժամ հեռի լեռան մը վրայ շինուած անդարար օդով, զով ջրով գեղեցիկ դիրք մը և կոկիկ եկեղեցի մը ունի. մեծ ուխտատեղի է շրջակայ հայոց. հանգուցեալ **Միքայէլ կաթողիկոսի** օրով **Սիլիկիոյ աթոռը** **Գօլան օղլուի** բռնութիւններէն ազատելով, **Սիսէն** փոխադրելու համար՝ թեմական ժողով մը գումարուեցաւ, սակայն յետոյ չիրադործուեցաւ: **Այցելեցինք նաև Ս. Աստուածածնի վանքը**, որ քաղաքին մօտ մեծ հիւրանոցներով գեղեցիկ դիրք մը ունի. յետոյ քաղաքին չորս թաղերու (կուսակցութեանց) չորս եկեղեցիները և դպրոցները պտրտեցանք, որք լաւ վիճակի մը մէջ չէին, և բնականաբար ալ չէին կրնար ըլլալ, ըստ որում դժուար է դիրք տալ մի ժողովրդի ձեռքը, որ աւելի վարժ է և կը սիրէ գիւցազնական կեանք վարել: Սակայն որչափ շուրհակալեաց և դրուատեաց արժանի են Հայոց **Միացեալ-Անկերութեանց** ջանքեր, որ 180-ի մօտ երկսեռ աշակերտներէ բաղկացեալ դպրոցներ կը կառավարեն և լաւ ալ յոյս կուտան ապագային ուսեալ ղէյթունցիներ պատրաստելու. ի վերջոյ քաղաքէն կէս ժամ հեռի եղած **Ջերմունիները** գնացինք, որք ժողովրդեան բաղանեաց տեղ կը ծառայեն և խիստ



Հաջին քաղաք





ւզատւէա կն. առատ ալ երկաթի հանք ունին, զոր ժամանակաւ բանելով մօտակայ քաղաքները կը ծախեն եղեր, սակայն Աւրոպա ինչպէս շատ բաներու, նոյնպէս ալ այս մասին տեղի չտար մրցման. հիմով դարձեալ լաւ պայտ կը շինեն որ մինչև Հալէպ և այլուր կը դրկուի. կը շինուին նաև լաւ վառօդ տեղական պիտոյից համար, շատ խաղողի այգիներ ունենալով առհասարակ ամեն տուն այր և կին ջրոյ հաւասար զինի կը գործածեն: Անտիր ջրփններ ունին որոցմով ջրեպանութիւն ընելով ապրուստնին կը ճարեն մեծաւ մասամբ. անուանական կառավարութիւն մը կայ որ միշտ դատարկ է, որովհետև տեղւոյս դատերը կամ իշխանաց ձեռքով կը տեսնուին և կամ հրազինուց: Վսանի չափ բազմութիւն տանիքի մը վրայ ժողովուած կը խօսակցէինք. հրացանի ձայն մը լսուեցաւ, ոչ ոք կարևորութիւն տուաւ այս ընտանի ձայնին. երիտասարդ մը եկաւ քիչ մը վերջը, պատճառն հարցուցի, «բան մը չէ» ըսաւ ամենայն պարզութեամբ, «Աւազ վուսը Մ***ը սպանեց», սարսեցայ, անձ մը սպանուի և ոչ ոք կարևորութիւն տայ:

Լ՛նաշաւան

ԿԻԼԻԿԵՏԻՑ*)

1886 Նարեկ 15:—Միտալ

Տեարք

Պարտ է անհատի մը կամ ժողովրդեան մը որ իւր վիճակն իմացունէ իւր ազգին պատուաւոր անձին կամ բարեջան ընկերութեանը. ուստի մեք ևս մինչ ցայժմ չ'կարենալով ծանօթացնել մեր ազետալի և դառն ստաւպանքը, մեր հայրն դանտուղ ազգիս օգտաւէտ ընկերութեանց կամ մեծ Տեարց, որ կարելի է մեր խոտորեալ և քայքայեալ շաւիղն բարեկարգելու միջոց մի գտնեն. միշտ նեղութիւն, տանջանք վիշաք անպակաս կն մեր շրջակայքէն: Մոյն մեր վիճակի պատճառն կն ազքատութիւն և ազիտութիւն, և ազքատու-

*) Ընցեալ տարի Պօլիս գտնուելիս՝ մեր ձեռքը ընկաւ այս գրութիւնը, որը և մենք կարևոր գտանք տպագրութեամբ ներկայացնել հայ հասարակութեանն, ինչպէս որ և այդ է գրութեան նպատակն:

Ս. Կ

Թեան անյատակ ովկիանոսին մէջ խզղուէնուս արգասիքն ստորագրեալքն են:

Ինչպէս որ նախորդ նամակնուս մէջ նկարագրեցինք, սակայն աստ ևս աւելորդ չեմք սեպեր համառօտիւ կրկնելու: **Մենք Օւէյթունի** գիւղօրէից մին լինելով, **Աւագիալու** (**Մի. խալու**) ժողովուրդքս որ 120 տունէ բաղկացեալ ամենքս, **Հայ** եմք: 1878-ին, **Մարաշու** կուսակալ **Ազիզ** փաշայի և **Օւէյթունի** պատերազմին ատեն, նորա անկանոն զօրքերն յարձակելով ի մեր գիւղ, յափշտակեցին համայն կահկարասիք և կենդանիք, բոլոր գիւղն հրդեհի աալով, բուռի աւերակ մը դարձուցին. աղքատ ժողովրդեան ունեցած սակաւ ինչ հասոյթն որք պարտատերաց պիտի տային, այրելով, կտորելով ոչնչացուցին. վերջապէս ամեն կողմանէ աղքատութեան անտանելի շղթայով պարփակեցին զմեզ: **Ա. և Հ. Սուլթանն** մեզ համար զրկած **Գօմիաթնին** տեղեկութեամբն զթալով մեր ազետալի վիճակին վրայ 560,000 զրուշ գումար մը մեզ վճարուելու համար իսկոյն հրաման մի զրկեց **Մարաշու** կառավարութեան. սակայն կառավարութեան պաշտօնէից միջնորդութեամբ յիշեալ գումարն անվճարելի մնաց. և մեր անկարողութեան պատճառաւ կառավարութեան տուրքն վրանիս ծանրացած, և շրջակայ օտար ազգացմէ առած և չկարեցած տուած պարսքն ևս, ամենքն միասին հարիւր հարարներով զրուշի հասած է, որք միշտ կը պահանջուին մեզմէ, և այս է մեր յետին աստիճան աղքատութեան պատճառն: **Տգիտութեան** խաւարամած անդունդին մէջ ընկղմած ազգային մանկտիքն ի լոյս առաջնորդող Հայոց **Մ. Ընկերութիւնը** իմանալով մեր թշուառութիւնն, և մեր մանկտիքն տանջանաց պողպատեայ ժանիքէն ազատելու համար այս տարի վարժարան մը կառոյց մեր գիւղին մէջ, և ամեն պիտոյք առատօրէն կը ծախուի: **Ուստի** ողբալի աղերսանքով կը պաղատիմք ձերդ ազգախնամ անդամոց որ մեր սոյն տառապանաց փոքր ինչ դարման մը գտնելու միջոց մի խորհիք, զմեզ ևս ազգիս անդամոց մին դասելով:

Մնամք հարազատ որդիք ազգիս

Համայն Ժողովուրդ

Աւագիալու Ս. Սարգիս Եկեղեցոյ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌ ԳԵՏՍ ԲԱՔԵԼԱՅԻՈՑ

Սաղմս 136:

Բաբելացւոց զեօի ափում
Նրստել էինք ու լալիս.
Նրուսաղէմն էինք յիշում,
Սիօն մեր միտն էր զալիս:

Սախել էինք մեր տաւիղներ
Նոցա ուռի ծառերից:
Նհա եկան մեր գերիչներ,
Նրգ պահանջում մեզանից:

Ուրախ երգեր մեր թրշնամիք
Ուզում էին որ երգենք.
«Ձեր Սիօնի երգեր զողարիկ
Նուազեցէք մէկ լըսենք»:

Մե՛նք, տասնաղի մեր տաւիղներ
Լըսել տանք մեր թրշնամո՛ւն.
Նստուածային մեր նուազներ
Նրգենք օտար աշխարհում:

Նրուսաղէ՛մ, թէ քեզ մոռնամ՝
Թող ինձ աջ ձեռքս ուրանայ,
Սընամարդի ու վատ դառնամ.
Թող իմ լիզու չորանայ՝


Նթէ ես քեզ նախ չք դովեմ
Նւ չք յիշեմ անդադար
Վեզ, ո՞վ իմ կեանք, Նրուսաղէ՛մ,
Ո՞վ ցընծութեանս իմ. պատճառ:

Պիտի յիշես դու, Տէր Աստուած,
Բաբելացւոց արարքներ —
Երուսաղէմը մեր քանդուած,
Սիօնն անտէր և աւեր:

Ո՛վ մեզ գերող բաբելացի,
Ար գայ, անշուշտ կը գայ օր,
Որ մեր բոլոր լաց ու կոծի
Վարէժը տուժես բիւրաւոր:

Ար գայ մի մարդ, որ քո որդիք
Մարց ըստինքից դուրս քաշէ,
Նոցա գլուխներն անմազ կրնաիկ
Քարին զարնէ ջախջախէ:

Ս. Մ.



ՁՄԵՌԱՅԻՆ ԳԻՇԵՐ

Սպիտակ սաւանով ծածկուել է գեան,
Գառնաշունչ քամին փչում է կատաղած.
Նայում եմ վերև — չե փայլում լուսին.
Մառախուղով է երկինքը պատած:

Նայում եմ շուրջս — վշտայլն՝ պատկեր.
Մեն ինչ ճնշուած ձմեռն ճանկերում՝
Տնքում, հեծում է և խուլ միմունջներ
Մեզերջ հնչում են իմ ականջներում...

Մերթ ևս լսում եմ մի դառն հեծեծանք,
Մերթ խորին հառաչ չարատանջ սրտի...
Մերթ իմ ականջին զարնվում են արագ
Լաց, կոծի ձայներ սնմեղ զոհերի...

Ճնշվում է սիրտս... Եւ ահա յանկարծ
Ինձ պաշարում են զառնալից մտքեր...
Եւ ի՞նչ եմ տեսնում աչքիս նկարուած,
Օհ, Տէր իմ, որքան փոքր պատկերներ:

Եհն մերկանդամ, հարստահարուած
Մի ծեր մուրացիան՝ զուրկ օթեանից՝
Օտնր անքում է ձիւնի մէջ թաղուած
Եւ աղի արցունք թափում աչքերից:

Եհն մի այլ տեղ՝ մի խուլ անկիւնում
Սրտամերկ որբը խեղճ, անտիրական,
Յրաից փետացած՝ «վոյ, մայր» է կանչում
Եւ գողում, որպէս տերւը աշնան:

Եհն գեանափոր մութ կացարանում,
Ուր օդն է խոնաւ, սառը, մահաշունչ
Քաղցած ու անտէր հեծում է մահճում
Մայրը որդոց հետ հիւանդ, կիսաշունչ...

Եւ չկայ անկիւն, ուր հանգիստ տիրէր՝ —
Մեն տեղ տանջանք, ամեն տեղ սո՛ւգ, լաց,
Մեն տեղ անգութ աշխարհի զոհեր
Չար մարդկութիւնից ճնշուած, հալածուած...

Յուզվում է հոգիս սիրտս կտրատվում,
Եւ պղտորվում է իմ տեսութիւն.
Եւ ես վրդովուած անէծք եմ թափում —
Ես անիծում եմ մարդկանց չարութիւն:

Ես անիծում եմ ողին բռնութեան —
Նրա մարգատեաց չար զաւակներին.
Ես անիծում եմ մարգասիրութեան
Անսիրտ, կուրացած ռսերիմներին...

Եւ Օտարութեան



ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

«Եզգային առաջարկութիւն մը» Լինճիկեճեան Գրեգոր Վարդապետի:
Պօլիս. տպ. Ներքեպէյի 1862. 8^o. 11 էր. 10 փարս:

Եյս սիրուն գրքցիկի մէջ հեղինակը մասնաւորապէս խօսում է Տիգրանակերտի սքանչելի դիրքի, բարեբեր հողի մասին: Տիգրանակերտը այժմ Հայաստանի ընտրելագոյն մասը և ազգային յառաջագիմութեան էլ աւելի ընդունակ և յարմար տեղը ու կենդրոնն է համարում հանգուցեալ Լէնճիկեճեանը՝ թէ երկրի բարեբեր արգասաւորութեան, թէ օդի և ջրի պերազանցութեան և թէ ամենակերպ բերքի ու վաճառականութեան կողմից ունեցած ազնիւ յատկութիւնների համար: Յետոյ բաւականին գողտրիկ զրչով յիշում է թէ ինչպէս եւրոպացի, մասնաւորապէս բողոքական քարոզիչներից «մեր հայազգի երեսի վերայ ձգուած անտերունչ ժողովուրդները կ'որսացունեն և պիտի որսացունեն, թէ որ ազգայինք հեղ մը աչքերնին աս հայրենեաց ընտիր դաւառին վերայ չ'դարձնեն և դարման մը չընին»:

Եյնուհետև ցոյց է տալիս տեղի քարոզիչների շացուցիչ արարմունքները, թէ ինչպէս նոքա «կերպ կերպ խոսամունքներով և պարզեօք իրենց գլուխը ժողոված են մեր ազգին որդիքը, ուր մենք չունինք բարեկարգ դպրոց մը: Եհա աս բարեկարգ դպրոցաց պակասութիւնն է մեր խեղճ ազգը յետին թշուառութեան մէջ ձգողը»: Մի առ մի բացատրելով հայ մարդի համար տեղացող վտանգը ամեն կողմից՝ զանազան եւրոպացի ազգերից՝ ասում է պարտաճանանչ հեղինակը «ես չարեացս ոչ միայն առջևը առնելու համար, այլ և ազգը վաճառականութեան մէջ մեծաքայլ յառաջացնելու համար, ինձի միայն մի դարման կերկնայ, որ համազգի եղբարք, մենք հիմնաօրց կանխենք, գէթ մէկ երևելի և բարեկարգ դպրոց հաստատել Տիգրանակերտի մէջ, որ ինչպէս ըսինք կենտրոն կ'սեպուրի բոլոր Հայաստանի, որուն մէջ անխտիր դաստիարակուին ազգային մանկունք և նաև օտարազգի տղայք և

աղջկունք և աս կերպով նորազանգից սերմանելք ապահանութեանց առջև կառնուի անշուշտ»:

«Թէ որ իրաց վիճակը ասանկ մնալիք ըլլայ նէ, անշուշտ պէտք է զիտնայ ազգը, որ քիչ ժամանակէ ետքը Հայութեան անուն անգամ պիտի ջնջուի աս երկրէս, և ահա ան ատեն ազգը ամենամեծ և անգարմանելի կորուստ մը պիտոր ընէ»:

Ի վերջոյ Անդղիոյ տերութեան Հաստատելիք երկաթուղիից պատճառելիք ֆնասի առաջն առնելու Համար՝ Օսմանեան կառավարութեան ուշադրութիւն է հրաւիրում Տիգրիս և Եփրատ գետերի միաւորութիւնը Տիգրամակերտի վերի կողմերը Մատէնի մօտերը, «որով այս քաղաքը՝ Տիգրամակերտ ու շիտակը ասկու Համար բոլոր Հայաստանը կը լլայ կեդրոն և միջոց Հաղորդակցութեանց բոլոր Աւրոպայի, Հնդկաստանի և Արևելքի ուրիշ քաղաքաց հետ: Աս կերպով թէ Ազգին և թէ Օսմանեան մեծագոր տերութեան անսպառ և Հաստատուն Հարստութեան ազգիւր մը կ'բացուի. ազգը կ'ծաղկի և կ'յառաջանայ յամենայն»:

«Ա երջապէս աս ալ կարևոր կ'Համարինք ծանուցանել, որ ինչ որ ցարգ գրեցինք նէ ոչ եթէ ի լըոյ կամ պարզ երևակայութեամբ գրեցինք, այլ անյամբ ականապէս ելած և Հայաստանի շատ կողմերը պտտած և գործնական տեղեկութիւններ ստացած գրեցինք»:

Յոցակ Գրոց Կոպտիբեւոյ է Ա Էնեպին, է Կոպտանի Ո. Աւարտ. 1887:

Գրքերի ցուցակները, որոնք յաճախ ղանազան զիրքով գուրս են թողնվում յայանի գրափաճառների կողմից՝ անտարակոյս ունին իրենց նշանակութիւնն. այդ ցուցակները բաւականին նպաստում են գրքերի արագ փաճառմանը մանաւանդ գրատունների կենդրոնից հեռու գտնուող տեղերում, ուր հարուստ գրափաճառների բացակայութիւնից, այդ կողմերի ընթերցող դասակարգը շնորհիւ այդ ցուցակների պատուիրում է իրեն համար այս կամ այն ցանկացած գիրքը: Այս տեսակէտից, որքան պարզ և մանրամասնորէն է կազմուած լինում ցուցակը, այնքան էլ նա աւելի է ծառայում իր նպատակին: Այսպէս է մեծ ազգերի և մեծ պետութիւն-

ների մէջ, ուր ամեն մի քաղաքում նոյն խակ գիւղաքաղաքում կարելի է լինում ցանկացած զիրքը մեծ զիւրութեամբ ձեռք բերել. ապա ուրեմն ի՞նչպէս պէտք է լինի ցուցակների վիճակը հայերի մէջ, որտեղ զրականութիւնն և առհասարակ ընթերցանութիւնը դեռ աննախանձելի վիճակում են գտնվում: Այս յիշելով, մենք ուզում ենք ասել, որ արդէն հայերի մէջ աւելի ծոխ ու մանրամասնօրէն կազմուած ցուցակներ են սպասելի: Մեզ այս խօսքերը գրելու առիթ տուեց Վենետիկի Միսիթարեան Միաբանութիւնից լոյս բնծայած ցուցակը, որի վերնագիրը տպուած է վերևում: Հարկ է ասել, որ այս ցուցակը բնաւ ցուցակ կոչուելու արժանիք չունի, որը և մեզ շատ տխրեցնում է: Աւելի լաւ է, այստեղ մի առ մի յիշել այդ ցուցակի պակասութիւնն և այնու ցոյց տալ դորա աննպատակ լինելը. նախ Միսիթարեան հայրերի հրատարակած այդ ցուցակի մէջ բնաւ ցոյց չէ տուած հրատարակութիւնների զիրքը, ցոյց չէ տուած և ոչ մի զրբիտպադրութեան տարին, որ կրէք պատիւ չէ բերում ցուցակ խմբադրողներին. կրկնորդ, այս այն պատմագիրը ի՞նչ օրինակից է արտատպած և կազմած է թէ ո՞չ ոչինչ չէ ասուած. ինքնուրոյն և թարգմանական հրատարակութիւնների հեղինակների և թարգմանիչների անունները չեն յիշուած. օրինակ մի թէ կարևոր և հետաքրքրական չէ իմանալ արդեօք «Աստմութիւն Անույ կամ ճանապարհորդութիւն ի Ահաստան» որի՞ գրածն է, մեծահատո՞ր է թէ չէ, ո՞ր թուին է տպուած. «Աստմութիւն Նիկողեցոյ» արդեօք ո՞ւմ գրածն է և ե՞րբ է տպուած, թարգմանութիւն է թէ ինքնուրոյն. Ազգասէջ ի՞նչ բան է, պատմութիւն, թատրերգութիւն և վերջապէս ո՞վ է հեղինակը և զրականութեան ո՞ր ձիւղին է պատկանում. նոյնը կարելի է ասել բոլոր զրբերի մասին:

Մի թէ Միսիթարեան հարք այնչափ զբաղուած են կամ նիւթական միջոցից սղմվում են, որ անտես են արել կատարելու մի պարտականութիւն, որը աւելի քան անհրաժեշտ մի կարիք է լոյս թողած ցուցակի համար, առանց որին այժմ այդ ցուցակը մի նշանակութիւն չունի ու դորա տպադրութիւնը ժամանակի և դրամի կորուստ է:

Տպադրութեան տարիները նշանակելը ամեն կողմից մեծ

նշանակութիւն ունի. օր. մենք գիտենք մի գրադէտ Հայ անձ, որը ամենայն ուրախութեամբ ժողովում է զանազան զրքեր, ինչ իմաստի և զիրքի էլ լինին, միայն թէ Հրատարակութեան տպագրութիւնը համեմատաբար հին թուական կրի իր վերայ:

Օրացոյց 1887 թ. Էրաստրակո-Նի-ն Յովհաննէս Նազարեանցի:

Այս տարի Հայերէն լեզուով լոյս տեսաւ և մի նոր օրացոյց: Պա Պ. Յ. Նազարեանցի Հրատարակութիւն է: Օրացոյցը երկու մասից է բաղկացած. առաջին մասը կազմում է օրացոյցը, իսկ երկրորդը «Յաւելուածը»:

Յաւելուածի վերջում, մի «երկու խօսք» վերնադրի տակ Պ. Նազարեանցը հեռուէն տողերն է գրում՝ «Օրացոյցս մի օրտակար զրքոյի դարձնելու մտքով ևս աւելորդ համարեցի լցնել նորա մէջ ժողովրդին ըստ ամենայնի անպէտք նշ-Ներ. այլ օգուտ քաղելով հանդամանքից՝ կցեցի նորան մի փոքրիկ ՅԱՒԵԼՈՒԹԵ՛Ց, որ պարունակում է իւր մէջ մի քանի այնպիսի տեղեկութիւններ, որոնք անօգուտ չանցնելուց զստ՝ կարող են նա՛ն ժողովրդի ընթերցանութեանը մասամբ իւրի նպաստեր»:

Սակայն հարկաւոր է նկատել Պ. Նազարեանցին, որ նա իր սիրուն նպատակը առաջ տանելու համար խիստ սխալ ճանապարհի վերայ է կանգնած. որովհետեւ իր այդ նպատակը իրագործելու համար՝ նա բնաւ պէտք չէր ձեռնարկել Հայ ժողովրդի մէջ անապագո-Նի-ն տարածելու կամ թէ կղած անապաշտութեանն նպաստելով զօրացնէր նորան: Սարծում ենք Պ. Նազարեանց հասկանում է, թէ մենք յաւելուածի ի՛նչ գրութիւնների վերայ ենք մատնացոյց անում: Վոքա Երազանան և Իջնապետից աչաքեալ Տարժնախաղաց փոյնի գրութիւններն են, որոնք համարեա ամբողջ յաւելուածն են կազմում:

Ուտոի Պ. Նազարեանցի այդ ծառայութիւնն աւելի շուտ ուղղուած է դէպ ի վնաս Հայ ժողովրդի մտաւոր դրական զարգացմանը և ոչ բնաւ յօգուտ: Այս իմանալու է:

Սակայն ցաւօք սրտի յիշելու է, որ այդ բացասական ծառայութիւնը Հայ ժողովրդին և նրա գրականութեան արած

են վերջին տարիներս և հետեւեալ անձինք իրանց ճօխ երազահաններով. Պ. Լ. Տէր Գրիգորեանց, Պ. Յովհաննէս Տէր Աբրահամեանց, Գրիգոր քահանայ Մանգակունի և կարծեօք մի հին գրավաճառ Թիֆլիսում: Այս վերջինի հրատարակութիւնն փոքրագիր է 32^o.

Անտարակցս լուսաւորութեանն հետամուտ ամեն մի մարդ, ինչ ազգի էլ չ'պատկանի նա, այնու ամենայնիւ խիստ մնաստիար կ'գտնէ ներկայումս այդպիսի հրատարակութիւնների երևան դալը, որովհետև ինչպէս արդէն ասացինք, այդ տեսակ զրքերի միակ և եթ նպատակը ժողովրդի մէջ սնուպաշտութիւն տարածելն է, որի պատճառաւ ժողովրդի լուսաւորութեան դործը մեծամեծ խոչընդոտների է հանդիպում:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Անցեալ տարի մեզ յաջողեցաւ տեսնել մի տաճկահայ վարդապետի ձեռքում ձերունի Գարբիէլ աւագ քահ. Պատկանեանցի քսանական թուականներում հրատարակած մի օրացոյցը, որի միջից կարևոր գտանք արտասուել հետեւեալ հետաքրքիր կտորը.

«Յազգոս նախկին և այժմեան վիճակաց ազգի և լեզուի և գրականութեան հայոց»:

«Ազգ և լեզու հայոց են կամ առաջին և կամ մի ի նախկին և ի հին ազգաց և լեզուաց, որք ի ժամանակի կործանման աշտարակի և բաբելոնեան խառնակութեան բաժանեցան 70 և երկու նահապետութիւնս»:

«Ոչ հայելով յայս՝ այժմ ազգ և լեզուն հայոց այնչափ արհամարհեալ են, զի ոչ եթէ օտար ազգք, այլ և բազումք իսկ ի հայոց ոչ ինդրելով զպայծառութիւն նորա ոչ կամին խօսիլ յայն լեզու, ուսանել զայն լեզու և ընթեռնուլ զգրեանս, որք գտանին ի լոյս ածեալք ի նոյն. մինչ տեսանեմք զի նոր լեզուք նոր ազգաց այնքան ճոխացեալ են մինչև փոքր միւս ևս և ունին լինել համաշխարհական լեզու»:

«Մեք այժմ կամելով ցուցանել զպատճառ այսպիսի անկման ազգի և լեզուի մերոյ, ոչ անտեղի համարիմք տալ ինչ ինչ ծա-

նօթութիւն վասն ծագման և լեզուի նորա և գրականութեան և վասն նախկին և այժմեան վիճակի որ կարէ լինել հայելի հին և նոր որպիսութեան Հայաստան աշխարհի և հայկեան գրոհի»):

Ընթերցող հասարակութեանը թերևս յայտնի լինի, որ Վերիկա գաղթած բաղդախնդիի հայերի մէջ մի յարգելի պարօն, Վչիհնեան մականուամբ, ձեռնարկելու է մի հայ թերթի հրատարակութեան, Բլեֆակ անունով: Եւս լուրը արտասպուեցաւ համարեա բոլոր հայ մամուլի մէջ, թէ արտասահման և թէ Սուսստան: Հայ մամուլը Բլեֆակի հրատարակութեան լուրը հաղորդելուց յետոյ, փոխանակ մի երկու խօսք ասելու Վերիկայում ձեռնարկուելի հայ թերթի անպատակ ու ֆնասակար լինելու մասին՝ սորա հակառակ գեռ դանուեցան թերթեր, որոնք ուրախութեամբ իրենց ընթերցողներին մանրամասնօրէն տեղեկութիւններ հաղորդեցին այդ լրագրի հրատարակութեան մասին: Շշմարիտ ասած, համարեա բովանդակ հայ մամուլի այս վարմունքը մեզ միանգամայն զարմացրեց: Բնկասկած սա մի հանելուկ է, որ մենք դժուարանում ենք լուծել. սակայն այսքան պէտք է ասել, որ Բլեֆակ թէ սկզբունքով և թէ զանազան տեսակէտներով վնասակար է համարում տաճկահայերի համար Բլեֆակի հրատարակութիւնը: Հարկ չենք տեսնում այս առթիւ երկար խօսելու, միայն այսքանը կասենք, որ լաւ կլինէր Վերիկա անունը որքան կարելի էր տաճկահայերի ականջից հեռու պահել:

«Սանկալարժանոցի» մէջ մենք առաջին անգամ հաղորդած էինք թէ հրապիղծնի արևելեան և հարաւային կողմերում ընկած երկրում, որը Վաղխտան անունն է կրում, ապրում են մի քանի գիւղերում կիսով չափ թրքացած հայեր, որոնց տեղացիք անուանում են կէսիկա հայեր:

Սոքա մինչ 1858 թիւը երկու կրօն էին դաւանում՝ հայ ուղղափառ և մահմետական. ծածուկ մկրտվում, հաղորդվում, պըսակվում էին հայ քահանայի ձեռքով, իսկ առ երեսս նոցա նիֆեահը—տաճկական ամուսնութեան խորհուրդը—կատարում էր մողլան, նոյնը տեղի էր ունենում և թաղմանը, նախ մողլան էր հանգուեցեալին թաղում, իսկ յետոյ ծածուկ քահանայն իր հերթին օրհնում գերեզմանը: Ախտէաների այսպիսի անբնական վի-

ճակը շարունակուեց մինչև 1857 թ., երբ բարեյիշատակ սուլ-
թան Մէջիտի օրով նոցա ազատութիւն տրուեց դաւանելու ի-
րենց քրիստոնէական կրօնը, սակայն առանց անուաները փոխելու:

Մեր գրագէտ բարեկամներից մինը, որը այժմ բնակութիւն
հաստատած ունի ի թուրքիա, կարդալով կէսկէսների մասին մեր
գրութիւնն, հաղորդում է և հետեւեալ տեղեկութիւնը, որը մեզ
յայտնի չ'լինելով՝ չէինք յիշած մեր նախկին գրութեան մէջ:

«Կէսկէս հայերի մասին, յուսով եմ, չէք դադարիլ շարու-
նակելու: Համէն գիւղը ամենաբազմամարդն է, և նորա միջից
է գուրս եկել սուլթան Մէջիտի քեռայր անուանի Վարտան
Մէհմէտ Ալի փաշան, որի կինը Ատիլէ սուլթանը գեռ մինչև
այսօր կենդանի է: Յիշեալ փաշան, որ 15 տարեկան ժամանակն
է թուրքացած՝ եղել է ծովային և զինուորական նախարար, նը-
մանապէս մեծ վեզիր: Հանրածանօթ Մկրտիչ ամիրայ Չէզայիր-
ցին նորա շնորհիւն է յառաջացել իր ժամանակ և ամբողջ թուր-
քիայի մաքսատանց անօրէնը եղած: Խասքէօյցիք (Պօլսոյ թա-
ղերից միոյն բնակիչք), ուր եղել է Չէզայիրցու ապարանքը,
պատմում են, որ Մկրտիչ ամիրան կարողացաւ մօտենալ Վարտան
Մէհմէտ Ալի փաշային հայերէնի շնորհիւ, որը միշտ խօսում էր
սուլթան Մէջիտի հօր փեսայն, բայց... դժբաղդաբար նոյն հա-
յերէն խօսքը եղաւ ևս պատճառը կամ աւելի ճիշտը ասած՝ հայ-
կական անմիաբան հոգին, որով գժտուեցաւ Մէհմէտ Ալին Չէ-
զայիրցիի հետ և նորա կործանման պատճառը եղաւ: Համշէնցի
մահմետական կէսկէսներից հիմա ևս կան մի քանի փաշաներ, ո-
րոնց մէջ յայտնի են Մէմիշ և Խալիլ փաշաները»): Ս. Գ.

Պետերբուրգում հրատարակուող ամենատարածուած «СВѢТЪ»
ուուս օրագիրը հայոց ընդհանուր թիւը հետեւեալ կերպիւ է ցոյց
տալիս:

Ասիական և եւրոպական տէրութիւնների մէջ ցրուած հա-
յերի ընդհանուր թիւը հասնում է մինչև 4,016,305 հոգու,
որոնցից ստուար մեծամասնութիւնը կազմում են պարզ երկրա-
բորձները, որոնք արդէն բաւական երկար դարերէ ի վեր ապ-
քում են Հայաստանում, որը այժմ գտնվում է հաճկաստանի,
Պոլսաստանի Պարսկաստանի և տիրապետութեան տակ:

Հայ ժողովրդի մեծամասնութիւնը՝ թուով 2,516,525 մարդ

ապրում է օսմանեան կայսրութեան սահմաններում: Տաճկաստանի հայերից յետոյ մեծամասնութիւն կազմում են Ուսաստանում ապրող հայերը. նոցա թիւը հասնում է մինչև 1,391,620 հոգու. այնուհետև երրորդ տեղը բռնում են Պարսկաստանում ապրող հայերը, որոնց թիւը հասնում է 54,685 հոգու: Ըստ ըրիայում ապրող հայերի թիւը 23,475 է. իսկ Բուլղարիայում (9,250), Ռումինիայում (13,200), Հնդկաստանում, Իրմանիայում, Բնգալիայում, Բրազիլիայում, Բարնաբիայում, Իտալիայում, Բնգալիայում և վերջապէս Բմերիկայում ցրուած բոլոր հայերի թիւը հաշվւում է մինչև 30,000:

«ЗВЕЗДА» անունով ռուս պատկերազարդ շաբաթաթերթի ներկայ տարուայ 7 համարում թարգմանօրէն տպուած է պ. Բաֆֆիի («Լսենք») վիպասանութիւնից մի պատկեր, որ է «Լայազիտի պաշարումն»:

«Новое Время» ամենօրեայ թերթի 4096 թվում Պ. Լ. դամեանի («Համլէտ և նորա ողբերգութեան աղբիւրը») գրքի մասին հաղորդուած է մատենագրտկան հակիրճ մի տեղեկութիւն:

Նոյնպէս նոյն թերթի անցեալ տարուայ ապրիլ ամսի թուահամարում աւելի մանրամասնօրէն տեղեկութիւն է հաղորդուած Հայր Լևիշանի «Սիսուան» գրքի մասին: Ընդտեղ բաւականին համակրութեամբ է խօսվում մեծանուն հօր պատկառելի գործի մասին:

Կրօնափոխութեան առաջն առնելու համար Պօլսոյ պատրիարքարանի կողմից որոշուած է շրջուն պաշտօնով եկեղեցական պյցելուններ ուղարկել վտանգ սպառնացող դաւառները:

Կ. Պօլսում տասն և ութ տարի շարունակ հրատարակուող «Հայրենիք» օրաթերթը բաժանորդների սակաւութեան և նիւթական միջոցի սղութեան պատճառաւ վերածուած է շաբաթաթերթի: «Հայրենիքը» հրատարակվում էր փոքր դիրքով պ. Ս. Սեւիբեանցի խմբագրութեամբ:

Եւսօ օրերս տպագրութեան համար տեղւոյս հայկական տըպարանին յանձնուեցաւ մեր ազգային պատմութեան հօր՝ Մովսէս Խորենացու պատմութեան աշխարհաբար թարգմանութիւնը, որի վերայ հայր Խորէն ծայրագոյն վարդապետ Ստեփանէն աշխատում էր երկար տարիներ ամենայն սիրով ու եռանդով: Ուրախ ենք ի բոլոր սրտէ, որ վերջապէս հայերը կունենան Մովսէս Խորենացու պատմութիւնն և աշխարհաբառ, գիւրամատչելի լեզուով: Ինչպէս լսում ենք հաստատ աղբիւրից, տպագրութեան ծախսը ամբողջովին յանձն է առել շատ բարիքներ անող մոսկովաբնակ պ. Յովհաննէս Յովնանեանը:

1887 թուականի յունվար ամսից մինչև այժմ Պետերբուրգում լոյս են տեսել հետեւեալ հայերէն հրատարակութիւնները. «Մանկավարժանոցի» մարտ ամսի գիրքը, «Թովմայ Լործունի», «Սոխակի» Ե. գիրքը և հետեւեալ բրոշիւրները. «Ուրիշի գերեզմանի վրայ առանց արտասուքի են լաց լինում», «Բուլղար աւագակապետ», «Եաննա տ'Լըք, Գաղղիայի ազատող», «Նեղա» (Տատիս պատմածը), «Դօնչօ» (Բուլղար աւագակապետի պատմածը):

Եւսօ օրերս տպագրութեան յանձնուեցաւ «Ա իլհէլմ Տէլ» անունով գրքոյկը:

(Սմանեան պետութեան մէջ գործ են ածվում երեք տեսակ գրամներ՝ ոսկի, արծաթ և պղինձ:

Սեփ գին ունեցող ոսկի գրամը լիբան է:

Լիբան ռուսական գրամով խաղաղ ժամանակը արժէ մօտ 9 ռուբլի, իսկ այժմ 10 ռուբլուց բարձրէ: Եւսնուհետև ոսկի գրամները կազմում են լիբայի մասերը՝ կէս լիբայ և քառորդ լիբայ: Մի լիբան ունի 108 զուրուշ, ուրեմն կէս լիբանոցը 54 զուրուշ, իսկ քառորդը 27 զուրուշ: Գ ուրուշ, դահեկան և պիաստր՝ միևնոյն արժէք ունեցող գրամներն են, միայն թէ առաջինը տաճկերէն, և երկրորդը հայերէն անունն է, իսկ երրորդը աւստրիացոց նոյն արժէք ունեցող գրամի անունն է:

Գ ուրուշի արժէքը նոյնպէս համաձայն պորսայի վիճակին փոփոխվում է, բայց և այնպէս նա խաղաղ ժամանակը հաւասար է ռուսական 8 $\frac{1}{2}$ կոպէկին, իսկ այժմ 10 կոպէկից մի բան բարձր:

Ըրծածեայ գրամներն են. մէջիտ, կէս մէջիտ, քաւորդ մէջիտ, $2\frac{1}{2}$ զուրուշանոց, երկու զուրուշանոց, $1\frac{1}{4}$ զուրուշանոց, մի զուրուշանոց և կէս զուրուշանոց:

Սէջիտը ունի 20 զուրուշ, ուստի այժմեան հաշուով աժէ 2 ոււրուց բարձր: Ըյսպէս և կէս մէջիտը ունի 10 զուրուշ և աժէ 1 ոււրուց բարձր ևն:

Պղնձէ գրամներն են՝ փարայ կոշուածը:

Քառասուն փարան մի զուրուշ է: Ըյս հաշուով $2\frac{1}{2}$ զուրուշանոց գրամին գործածութեան մէջ 100 փարանոց են անուանում, $1\frac{1}{4}$ զուրուշանոցին 50 փարանոց $\frac{1}{2}$ զուրուշանոցին 20 փարանոց, $\frac{1}{4}$ զուրուշանոցին 10 փարանոց և $\frac{1}{8}$ զուրուշանոցին 5 փարանոց, որ տաճկաց ամենափոքր արժէք ունեցող գրամն է: Ըյս հաշուով այժմ 5 փարանոցը աժէ $1\frac{1}{3}$ հպ. 10 փարանոցը $2\frac{2}{3}$ կպ. 20 փարանոցը $5\frac{1}{3}$ կպ. ևն:

ԼՐԱԳՐԱՑ ԾՈՒՐԶԸ

Այլերջերս մեծ յուզմունք և մտատանջութիւն պատճառեց թէ՛ հայ մամուլին և թէ՛ հասարակութեանը այն մի տխուր լուրը, որ իբր թէ Տիգրանակերտի բնակիչներին մեծ մասը կրօնափոխութեան կը դիմէ: Ապունացող վտանգի առաջը առնելու համար՝ Պօլսոյ հայոց պատրիարքարանը անգործ չմնաց և մեծ տուկունութիւն ցոյց տուեց. այն ինչ ազգից սիրեցեալ շայրիկը պատրաստութիւն էր տեսնում անձամբ գնալ Տիգրանակերտ կրօնափոխութիւնը կանգնեցնելու իր հայրենակիցներին մէջ՝ Բարձրագոյն Դուռը արգելում է սրբազանի այդ ուղևորութիւնը: «Ըրեւելքի» 18 սեպտ. թուահամարում Տիգրանակերտից գրուած մի թղթակցութեան մէջ, կրօնափոխութեան դիմելու միտումները այսպէս է բացատրվում.

Կրօնափոխութիւնը հաւատքէ կամ թէ կրօնական զգացումէ առաջ եկած բան չեն, և այս մասին կրօնափոխութեան դիմողներ քանիցս իրենց ցաւերն յայտնելով գրաւոր կերպով խոստովանած են թէ հայութեան մէջ պակասութիւն մը տեսնելով չէ որ կրօնափոխ կ'ըլլան, այլ իրենց ինքզինքնակրօն համար. հացի ինդիրն է որ կը մղէ զիրենք ի կրօնափոխութիւն:

Այս բանում, անտարակոյս, ոչ ոք էլ չի կասկածում, միայն թէ ամեն կերպ աշխատելու է վերացնել այն բոլոր արգելքներն, որոնք առաջ են բերում կրօնափոխութիւնը. միւսնոյն ժամանակ մենք կարծում ենք, որ կրօնափոխութեան դիմելու պատճառը միակ և եթ Տացի խնդիրն չէ, որքան էլ որ դա զգալի լինի տեղացիների կամ վիլայէթի գիւղացիների համար, այլ գործահաս մտ կապ ունի շարունակ օրն ի բուն այդտեղ դժբաղդաբար դաստիարակչի դեր խաղացող գիշատիչ եզուլիթների և այլ միսիօնարների ազդամաս գործունէութիւնը. և ընդհանրապէս մեր հոգեւորականների անտարբերութիւնները դէպի իրենց հօտի մըտաւոր ու բարոյական խնդիրները: Չարմանալի մարդիկ և պարմանալի բնակորութիւններ. հայ առաջնորդը՝ որը կրօնական մեծամեծ իրաւունքների հետ միասին օգտւում է և մի կարգ քաղաքական իրաւունքներով, որոնց պատճառաւ նա գաւառում մի երկրորդ փաշայ է հանդիսանում ու բացառիկ պատուաւոր դիրք է ստանում նոյն իսկ օտարների առաջ, նա՛ այդ հայ առաջնորդը, զարմանալի է միայն, որ չի կարողանում անգամ իր հօտին սպառնացող վտանգներից զերծ պահել գիշատիչ եզուլիթների ճանկերից, որոնց դժբ միակ և եթ ոսկու վերայ հիմնուած դպրոցի մէջ է կայանում:

Այն թղթակցի ասելով, կրօնափոխութիւնը աւելի արագ տարածվում է վիլայէթի վիճակներում, այն պատճառաւ որ այդ վիճակները Տիգրանակերտի թեմը չկաղմելով, անուշադիր են մըտում առաջնորդի վերահասութիւնից և հետեւապէս վիճակը խեղճութեան է մատնվում:

Այս թշուառ վիճակի դարման կ'առաջարկեմք հետեւեալն. Տիգրանակերտ գտնող առաջնորդի ապրուստն հայթայթելու համար, վիլայէթին մէջ գտնուած Արշի, Զըբուշ և Մակաբայեցւոց վանուց վանահայրութիւնները կցել Տիգրանակերտի առաջնորդութեան հետ. առաջնորդն ունենայ փոխանորդներ և երբեմն պցելէ նոյն տեղերն:

Եթէ այսքան զիւրիւն միջոցով իսկապէս կարելի է մասամբ սպառնացող վտանգից զերծ պահել հայ ժողովուրդը, կարծում ենք, որ Պօլսի պատրիարքութեան պարտականութիւնն է ուշադրութիւն դարձնել այդ առաջարկութեան վերայ և իսկոյն գործի սկսել:



ԶԷՅԹՈՒՆԻ ՀՐԴԵՂ

Յուլիսի 27-ին գիշերուայ ժամի 11-ին Վերին Տաւրոսի խորշերում սոսկալի հրդեհի բոցերին զոհ է դնում մի խումբ հայ լեռնականների բնակավայրը:

Չէյթունն այրվում է, բնակարանների հետ միասին ինն ժամի ընթացքում աւերակների կոյտ են դառնում և այդ լեռնականների եկեղեցիները, վարժարանները և ամեն կահ ու կարասիք:

Այդ փոքր ժամանակամիջոցում սարսափելի հրդեհը լափելով մօտ 1000 տուն, անպատասպար է թողնում բաց օդի մէջ և անձրևի տակ 8,000 զէյթունցիներ:

Միթէ հարկաւոր է այստեղ յիշեցնել ընթերցող հասարակութեանն, որ նա ինչպէս և իցէ, զէթ մարդասիրական ղգացմունքից, պարտաւոր է օգնութեան հասնել իր եղբայրակիցներին, որոնք այսօր մոխրի վերայ նստած՝ իրենց անլուր թշուառութեան վերայ են սգում:

Թշուառ հրկիզելոց այս դժբաղդութիւնն այժմ աւելի ևս խոր վիշտ ու սարսափ է պատճառում ամեն մի մարդի, երբ նա ի նկատի է առնում, որ անողջք հրդեհի զօհերին հիմայ մի կողմից էլ չարաչար սպառնում է սովը, որն արդէն սկսել է տարածուել Ադանայի, Սիսի, և Հայ-Վեփն կողմերը, ուր տասնեակ հազարաւոր հայ մարդիկ օրական մի կտոր հացի կարօտ են մնացած:

Այստեղ այլ ևս չերկարացնելով մեր խօսքը՝ յոյժ կարևոր և նպատակայարմար ենք գտնում մէջ բերել Ամենապատիւ սրբազան Հայրիկի մի նամակը, որը նա այս առթիւ ուղղած է մեզ:

Միրելի . . .

Միրեմ զքեզ զու խօ գիտես ու տեսար Հայրիկի ղբաղմունք, որ թողլով կենդանիները մեռել կ'թաղեմ, զի մեր աշխարհ մեռելոց աշխարհ է: Ուրախ եմ շատ որ ձեռնարկած էք մի թերթ հրատարակել և անունը «Երասխ» մկրտած էք:

Ո՛հ, հայու տարագիր որդիքներ, Նեվա գետէն Նրասի կ'յիշէն: Մօրհիւս՝ ձեր այդ ձեռնարկ որ յաջողեք արդիւնաշատ դործել:

Ասեցիր անշուշտ, լսեցիր ու տխրեցար անշուշտ, զի Օւէյթուն վառեցաւ. ո՛հ, և իսպառ վառեցաւ եօթն եկեղեցիներով հանդերձ: Որչափ սիրահար էիր տեսնել Սիլվիա, տեսնել Օւէյթուն՝ այդ հինաւուրց մնացորդ նշխար, որ վեց հարիւր տարիներէ ի վեր տակաւին կապրէր իւր կենդանի և քաջագօտի հայերով: Իսկ այսօր դոցա բնակավայր աւերակ դարձաւ. և անբախտ ժողովուրդ մոխրակոյտին վերայ նստած Նրեմիայի ձայնով կ'օղբայ:

Ի՞նչ կասես, սիրեմ զքեզ, թողունք արգիօք, որ Օւէյթուն ևս իբրև աւերակաց յիշատակ մնայ, ինչպէս օղբացեալն Անին: Աւ այդ ինքնապաշտպան ժողովուրդ զազթի վայրավատին լինի և ցրուելով այդ փոքրիկ ոյժը, անբախտ հայն ուժասպառ լինի:

Ո՛չ ո՛չ, պէտք է վերաշինենք Օւէյթուն. «Արևելք» լրագրէն կ'իմանար, որ յանուն Օւէյթունի մի յանձնաժողով կազմուեցաւ ի Պօլիս Պատի-զիւղի պատուաւոր և եռանդուն անձինքներէ, որ փութաց մի հանդանակութեան տումար բանալ և բաւական զբամաէր բարեպաշտ անձինք հաղարական մանէթ ստորագրեցին. յանձնաժողովը պիտի ձեռնարկէ թրջթակցիլ բոլոր արտասահմանի հայերուն հետ:


Աշխատիր ուրեմն դու ևս քո անձնանուիրութեանդ պարտքդ կատարել: «Նրասիիդ» գետով ջուր հասուր ջուր, որ մարենք Օւէյթունին կրակ և վերստին կանաչեն Օւէյթունին խանձոցած մարդատունկ անտառներ:

Աղօթարար

ԽՐԻՍՏԵԱՆ ՀԱՅՐԻԿ

1887 սեպտ. 12

Պօլիս







ՀԱՅԱՉԳԻ ՄԻՐՉԱՅ ՄԵԼՔՈՒՄ ԽԱՆ

Վարսից դեսպան Կոնդոնում.

ՀԱՅԱԶԳԻ ՄԻՐԶԱՅ ՄԵԼՔՈՒՄ ԽԱՆ

ՊԱՐՍԻՑ ԳԵՍՊԱՆ ԼՈՆԳՈՆՈՐՈՄ

Միրզայ Մելքում խանը այսօր Պարսկաստանի պետական անձինքների մէջ փայլուն տեղ է բռնում: Նրա արևելեան գործերի մէջ Հմուտթիւնը, նուրբ քաղաքագիտական տաղանդը, ու պարսիկ լեզուն ցոյց տուած բեղմնաւոր ծառայութիւնը՝ յոյժ սիրելի են դարձրած նրան Վ. Շահին: Որչափ այսօր Միրզայ Մելքում խանը դնահատուած է Իրանի իշխողից՝ այնչափ աւելի ևս նա մեծ յարգ ու պատիւ է վայելում Եւրոպոյ քաղաքագէտների մէջ:

Միրզայ Մելքում խանը մեր ժամանակակից անուանի Հայերի դասակարգին է պատկանում: Նա գիտէ Հայ ժողովուրդը, և նորա Հայեցակէտը Հայ ժողովրդի մտաւոր յառաջադիմութեան վերայ բաւականին յուսալից է:

Միրզայ Մելքում խանը՝ Հայերի, պարսիկների և քուրդերի մէջ, շնորհիւ նոցա ցեղակցութեան՝ աւելի խաղաղ և բարեկամական յարաբերութիւնների յոյսեր է տածում և շատ բնական է Համարում այս երևոյթը. յայտնի է, որ այդ երեք սողերի հիթանոսական կրօնը մի էր: Միրզայ Մելքում խանը այս երեք ժողովրդի լեզուների մէջ խիստ մօտիկ կապակցութիւն է տեսնում, ուստի նա պարսկերէն խօսքեր փնտռելիս՝ միշտ դիմում է Հայերէնին:

Պէտք է ասել, որ նոյն ինքն Վահ. Նասրէտօին Շահը ևս այսպէս է կարծում, որի հիման վերայ նա միշտ հոգածութեամբ է վերաբերվում դէպի Հայերը: Անկասկած, նա այս ցեղակցական տեսակէտից աւելի սիրում է Հայերին, քան արաբներին, որոնց հետ պարսիկները թէև կրօնով մէկ են, բայց ցեղակցութեամբ անջատ:

Միրզայ Մելքում խանը ծնուել է Պարսկաստանում 1831 թուին: Առաջին կրթութիւնը մայրենի լեզուի մէջ նա ստացել է Թէհրանում, յետոյ նա տասներկու տարեկան Հասակում ուղարկվուել է Փարիզ Հայկազեան վարժարանը:

Հինգ տարի այս վարժարանում մնալուց յետոյ, ուր յաջող սովորել է Ֆրանսերէն լեզուն, մաթեմատիկայ՝ վերադառնում է Պարսկաստան և նշանակւում է Նասրէտտին Շահի անձնական թարգմանը և թիկնապահը:

Իր պաշտօնավարութեան առաջին շրջ, Հինգ տարուայ ժամանակամիջոցում, Միրզայ Մելքում խանը այնչափ յաջողում է Սէհ, Շահի և մեծ եպարքոսի կատարեալ վրստահութեանն արժանանալ՝ որ Շահը նորան մի կարևոր պատուիրակութեան պաշտօնով ուղարկում է եւրոպական բոլոր արքունիքների և Միացեալ Նահանգների կառավարութեան մօտ: Միրզայ Մելքում խանը իր այս դժուարին և փափուկ պաշտօնը բարեկամական դաշնադրութիւններով կնքելով՝ բազմաթիւ շքանշաններով զարդարուած վերադառնում է Թէհրան:

Վերադառնալով Պարսկաստան՝ նա յղացաւ բարի միտք երկրի մէջ ընտիր բարեկորուստներ մտցնելու: Այս բարեկորուստները մասամբ բացատրուած են սորա ներքեւ մեր աշխատակցի հետաքրքրական գրութեան մէջ:



Մելքում խանի հայրը ուսաց հպատակ էր և ծառայում էր Թէհրանում ուսական գեսպանատան մէջ թարգմանչի պաշտօնով:

Մելքում խանը Եւրոպայի մէջ ուսումն աւարտելուց յետոյ, երբ վերադարձաւ Թէհրան, պարսից հպատակութիւնն ընդունեց. այդ ժամանակ նա ծառայութեան մանելով՝ արտաքին գործոց նախարարութեան մէջ պաշտօն ստացաւ:

Պետական ծառայութիւնը սկզբում Մելքում խանի համար երկրորդական զբաղմունք էր կազմում. նա գլխաւորապէս բերանայի և զրաւոր կերպիւ պարապած էր պարսիկ բարձր դասակարգի զարգացման և լուսաւորութեան գործով: Մելքում խանը Թէհրանում հաստատեց առաջին որմնադրական (մասոնական) ընկերութիւնը, որակց երիտասարդ պարսիկները խօսում էին եւրոպական քաղաքակրթութեան ներմուծելու անհրաժեշտութեան մասին և վիճարանում էին

Պուրանի մութ կէտերի մասին ի նպաստ Պարսկաստանում քաղաքակրթութիւնը տարածելու: Արմնագրութիւնն (մասոնականութիւնը), ըստ իւր էութեան, կրթական համընկերութիւն է առանց գաղտնիքների. նա արտաքին կողմից պահպանում էր եւրոպական երկիրների օրմնագրական ընկերութիւնների սովորութիւնները ու յատկանիշները: Այս ընկերութեան անդամները, ի միջի այլոց, միմեանց կգրայր էին անուանում:

Նասրէտօին Շահը այն ժամանակ դեռ երիտասարդ՝ այնպէս յափշտակուեց օրմնագրութեամբ, որ ինքն էլ մտաւ այդ ընկերութեան մէջ և հետեւապէս իր հպատակներին կգրայրակից դարձաւ: Իրանի իշխողն այս ուշադրութեամբը դէպի Մեկքում խանի ձեռնարկութիւնը, այս վերջին պատիւը հասարակութեան առաջ խիստ բարձրացաւ:

Մեկքում խանը զխաւորապէս զրում էր քաղաքական երգիծաբանութիւններ, նա իր կծու և սրամիտ հեգնութիւններով անխնայ հարուածում էր պետական անձանց տգիտութիւնը: Մեկքում խանը, որ կատարելապէս զիտէ պարսիկ լեզուն, ապացուցեց, որ պարսիկ լեզուն այնքան լաւ յարմարվում է վրպական և քնարերգական բանաստեղծութիւններին, որ նա գիրաւ կարող է ծառայել և զրօականութեան միւս ծիւղերի համար:

Պարսիկ պետական անձինքներից շատերը տաղանդաւոր Մեկքում խանի զրութիւնների մէջ իրենց կենդանի պտուիւրն էին տեսնում ազէտ կառավարիչների դերում: Մեկքում խանի դէմ տածած նախանձի վերայ նրա ունեցած յաջողութեան մասին օրմնագրական վարդապետութեան մէջ, աւելացաւ և այն պետական անձանց թշնամութիւնն, որոնց վերայ չարաչար յարձակվում էր Մեկքում խանը: Վսեցին հալածել Մեկքում խանին ու վերջապէս նորան տապալեցին:

Արմնագիրներին (մասոններին) սկզբումը անուանում էին Ֆարմասոն՝ Ֆրանսերէն franc-maçon խօսքից, իսկ օրմնագրական ընկերութեանը՝ Ֆարմասոն-խանէ, այն է Ֆարմասոնների տուն: Մեկքում խանի նախանձողները և թշնամիները, ձայնակցելով լուսաւորութեան նախանձախնդիր երիտասարդի ներմուծական փորձերը ատող մոլեռանգ ամբօխին,

Համոզեցին Շահին, որ որմնագրական ընկերութեան մէջ Պարսկաստանի լուսաւորութեան և յառաջադիմութեան մասին խօսած ճառերը մի տեսակ դիմակ են, որի տակ ծածկվում է այս ընկերութեան գլխաւոր անդամների քաղաքական փառասիրութիւնը, որոնք չար խորհուրդ են յղացել Շահին գահից ձգել և իրենց ձեռքն առնել կառավարական բարձրագոյն իշխանութիւնը:

Այս ընկերութիւնը Փարմասօն-խանէ չէ, պնդում էին Հահառակորդները, այլ Փիրամօշ-խանէ, այն է մոռացման ընկերութիւն: Այս անունը ընկերութեանը տրվում է այն պատճառաւ, որ ամեն միւր, որը զրվում էր այդ ընկերութեանն անդամ, ուխտում է մոռանալ թէ կրօնը և թէ բոլոր Հասարակական և մասնաւոր պարտականութիւնները սոսկ ընկերութեան նպատակին ծառայելու համար, որը իսկապէս կայանում է կառավարութեան ներկայ գրութիւնը սապաւելու մէջ:

Փիրամօշ-խանէն փակուեցաւ. նորա գլխաւոր անդամներից երկուսը սպանուեցան կառավարութեան ձեռքով. իսկ Մելքում խանը յաջողեցաւ իր կեանքը ազատել Թուրքիա փախչելով: Այնուհը նա ապրեց 15 տարի որպէս սոսկ մարդ և յաճախ ճանապարհորդում էր Աւրոպայում: Թուրքիայում Մելքում խանը պարսպում էր արևելեան գրականութեան ուսումնասիրութեամբ և միջոյններ էր փնտռում բարեօրելու արաբական տառերը, որոնք գործ են ածվում ամբողջ մահաձեռական աշխարհում: Նա հրատարակեց իր բարեօրած տառերով Մաստիի յայտնի Պիւլիստան բանաստեղծութիւնը: Թուրքիայում այն ժամանակ պարսից դեսպանը Հաջի Միրզայ Հիւսէյին խանն էր, որը մի լուսաւորուած մարդ էր և մօտ բարեկամ Միրզայ Մելքում խանին: Նրան յաջողեցաւ արգարացնել իր բարեկամ Մելքում խանին Շահի առաջ և կրթ 1875 թուին Հաջի Միրզայ Հիւսէյին խանը զարձաւ Պարսկաստանի առաջին նախարարը, նա Մելքում խանին հրաւիրեց Թէհրան և Շահի հաճութեամբ նշանակեց ներքին գործոց նախարար:

Այս պաշտօնի մէջ Շահը ուղարկեց նրան Բերլին 1878 թուին վեհաժողովում պաշտպանելու պարսից շահերը: Մել

բում խանի աշխատութեան շնորհիւ Աողուրը անցաւ պարսից ձեռքն, որը սակայն մինչև այժմ դանձում է թուրքաց ձեռքում:

Աողուրի մասին նորա այս աշխատութեան համար Շահը նրան պէնջ տիազօսը շնորհեց, որը գործ չէ անձվում պարսիկների մէջ. բայց այնու ամենայնիւ սա ցոյց է տալիս, որ Շահը իր այս օտարոտի պարգևով կամեցաւ իր քաղաքագէտին միջազգային նշանակութիւն տալ:

Ահհատողովի վերջանալուց յետոյ, Մեկբում խանը նըշանակուեց Անդոնի և Ռերլինի դեսպան, սակայն մշտական բնակութիւնը հաստատելով Անդոնում: Այս պաշտօնների մէջ է դանձում նա այժմ:

Մեկբում խանը արևելեան գործերի մասին շատ հմուտ և խելացի յօդուածներ է դրած «Times» և «Revue des deux Mondes» պարբերականների մէջ:

Մէհէմէդ Բէկ Շախախախինալի



Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Պետերբուրգում հայերի թիւը անցեալ դարու սկզբից ըսկըսած օր ըստ օրէ աւելանալով՝ բնականաբար կարիք է գգացուել մի հայ եկեղեցու շինութեան Աուսիոյ մայրաքաղաքի մէջ:

Այդ ժամանակուայ վաճառական հայերից մինը, Սառաֆեան ազգանունով, ցանկանալով ձեռնարկել այս անհրաժեշտ նուիրական ձեռնարկութեան՝ իր սեպհական գրամով հող է առնում Պետերբուրգի Աստիլեան կոչուած կղզու երրորդ գծի վերայ և մի փայտեայ մատուռ է շինել տալիս: Անցնում է բաւականին ժամանակ: Յովսէփ արքեպիսկոպոս Արկայնաբազուկ Պետերբուրգում ապրելով և տեսնելով մատուռի անյարմարութիւնը՝ միտք է յղանում կառուցանել մի հոյակապ հայ եկեղեցի. մանաւանդ որ այդ ժամանակները այդպիսի մի նուիրական հիմնարկութեան համար նիւթական միջոցի կողմից արգելք չէր կարող լինել: Այս պատճառով Յովսէփ արքեպիսկոպոսը մտադրվում է կառուցանել

եկեղեցին և այն էլ մատուռի շինութեան վերայ. սակայն Վազարեանները ինչ ինչ նպատակներով յաջողում են շնորհիւ արհի Մրդութեանի եկեղեցու համար կառավարութիւնից ձրի հող ստանալ Վեփսկի պողոտայի վերայ և այդտեղ կանգնեցնել հայ եկեղեցին: Մ. յոգէս էլ լինում է: Վազարեանք այս գործի մէջ կամենալով յայտնի դեր խաղալ, իրենք են ձեռնամուխ լինում այս սուրբ գործին. սակայն այդ ժամանակուայ հայ ժողովուրդը իր առատ նուէրներով բաւականին նպաստած է եղել եկեղեցու շինութեանը:



ՊԵՏԵՐՐՈՒՐԳԻ ՀԱՅՈՑ Ս. ԿԱՏԱՐԻՆԷ ԵԿԵՂԵՑԻՆ

Այսպէս Պետերբուրգի հայոց առաջին եկեղեցին յանուն սուրբ կոյս Կատարինէի, ուր այժմ լինում է ամենօրեայ ժամասացութիւն, շինվում է 1779 թուին. սա դնվում է Վեփսկի կոչուած պողոտայի յայտնի մասի վերայ: Այս եկեղեցու հոյակապ շինուածքը այն ժամանակուայ Երևելի Ճարտարապետ Պիլտինգայի գործն է:

Եկեղեցու և նորա շրջապատ շինութիւնների երկարութիւնն է մեծ պողոտայի կողմից՝ 31 սաժէն, իսկ լայնութիւնը դէպի թիկունքը՝ 45 սաժէն, որով բովանդակ տարածութիւնն լինում է 1395 քառակուսի սաժէն:

Երկրորդ եկեղեցին, յանուն Ս. Յարութեան, շինուած է մայրաքաղաքի Ս. ասիլեան կղզում գերեզմանատան մէջ 1791 թուին: Այս երկրորդ եկեղեցու և նորան կից պարտիզի տարածութիւնն է 10,000 քառակուսի սաժէն:

Ուսաց տէրութեան խորհրդական Յովհաննէս Ազարեանցը 1784 և 1789 թուականներում առաջին եկեղեցու երկու կողմերում շինել է տալիս երկու քառայարկ քարաշէն տներ, որոնց հասոյթը նուիրում է երկու եկեղեցիներին: Սորա մահուանից յետոյ, 1806 թուին շինվում է առաջին եկեղեցու թիկունքի կողմից ևս երկու քառայարկ տներ, իսկ 1535, 1836 և 1837 թուականներում աջակողմեան և յետին կողմի շինութիւնները, որոնց վերայ աւելացրած է մի յարկ ևս, որով այդ շինութիւնը դարձաւ հինգյարկանի:

Այժմ մեր սրբերում Պետերբուրգի հայ եկեղեցիների կալուածներից ստացվում է մօտաւորապէս 70,000 ռուբլ, իսկ ծախսը՝ նոյնպէս մօտաւորապէս հասնում է 50,000 ռուբլու:

Այս չորրորդ տարին է, որ Պետերբուրգի եկեղեցիների կալուածքները կառավարվում է մի ժողովով, որի անդամները ընտրվում են ծխականների միջից:

Այս ժողովի նախագահի պաշտօնը վարում է իշխան Սիմեօն Աբամելիք Ապրեշլը, սորա մահուանից յետոյ, նախագահի պաշտօնն անցնելու է յաջորդաբար իշխանի արու սերունդներին, եթէ միայն սօքա դաւանեն Հայաստանեայց առաքելական Ս. Եկեղեցին. հակառակ դէպքում, իշխան Աբամելիք Ազարեանցի շառաւիղը զրկվում է միանգամ ընդ միշտ նախագահի պաշտօնից և եկեղեցական գործերին մասնակցելուց:

Եկեղեցական կալուածները կառավարող ժողովի անդամները թուով վեց են և ընտրվում են ծխականներից երեք տարի ժամանակ: Այս ընտրութիւնները կատարվում են տարին մի անգամ տեղի ունեցող ծխականների ընդհանուր ժողովում: Քսանեհինգ տարին հասած ամեն մի հայ անհատ, որ երկու տարիի չափ գլտնվում է Պետերբուրգում՝ եկեղեցու ծուխ է համարվում և հետևապէս իրաւունք է ունենում ներկայ գտնուիլ ծխականների ժողովին ընտրութեան ժամանակ:

Գալով Պետերբուրգի հայ եկեղեցու կալուածներին՝ հարկ է ասել, որ նոքա այժմ կարօտ են վերաշինութեան, ուստի հաւանական է թուում, որ պատուարժան ժողովը այս բանի վերայ ուշադրութիւն դարձնէ:

Ս. Գ.



Այստեղ այս անգամ տպագրում ենք Միացեալ—Ընկերութեանց հսկողութեան տակ զտնուող զպրօցների վերջին պաշտօնական ցուցակը, որն ամենայն շնորհակալութեամբ նորերս ստացանք յիշեալ ընկերութիւնից:

ԳՈՒՄԱՐԸ		Քիւ. արեւմտ. վարժարանաց:	Քիւ. իգական վարժարանաց:	Համագումար վարժարանաց:	Քիւ. պաշտօնական:	Քիւ. աշակերտաց:	Քիւ. աշակերտաց տուհեաց:	Համագումար վարժարանաց և աշակերտաց:	Ընուանք գիւղօրէից կամ քաղաքաց ուր են վարժարանք:
1	ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆ	12	2	14	42	613	197	810	1) Մուշ (Ար.): 2) Մուշ (Իգ.): 3) Դատուան: 4) Սղերդ (Ար.): 5) Սղերդ (Իգ.): 6) Տէհ: 7) Հազզօ: 8) Պարիկի: 9) Ռընօ գիւմն: 10) Արշէն: 11) Ահարօնք: 12) Ջիլարէթ: 13) Օղնուտ 14) Մալաֆան:
2	ՎԼՍՊՈՒՐԵՎԱՆ	2	—	2	5	145	—	145	1) Խարահօնիս: 2) Կէմ:
3	ՏԱՒՐՈՍ	4	3	7	32	643	286	929	1) Բըլի (Ար.): 2) Բըլի (Իգ.): 3) Խուփս (Ար.): 4) Խուփս (Իգ.): 5) Բերրի (Ար.): 6) Բերրի (Իգ.): 2 մշկածագ:
4	ԲԱԳՐԵՒԱՆԴ	4	—	4	12	250	—	250	1) Ալաշկերտ: 2) Պայաղիս: 3) Գարաֆիլիսէ: 4) Խոստուր:
5	ՄԱԼՔՈՒՆ	1	—	1	1	16	—	16	1) Կեռկեռ:
6	ԵԿԵՂԵԱՅ	2	—	2	17	270	—	270	1) Նրիզա: 2) Խնձորէք:
7	ԳԻԼԻԿԻՆ	4	2	6	20	313	162	475	1) Սիս: 2) Զէյթուն (Ար.): 3) Զէյթուն (Իգ.): 4) Համըն (Ար.): 5) Համըն (Իգ.): 6) Միկալ:
ՀԱՄԱԳՈՒՄԱՐ		29	7	36 *)	129 **)	2,250	645	2,895	

*) Ծանօթ: Այս թուոյն մէջ չեն 3 վարժարանք, որք այս օրերս նոր պիտի բացուին: 1 Ալիբ. 2 Գարման: 3 Բազառիմ:
 **) Այս թուոյն մէջ չեն տեսչական մարմինը և կենդրոնի պաշտօնեայք:

The first part of the document discusses the importance of maintaining accurate records of all transactions. It emphasizes that every entry should be supported by a valid receipt or invoice. This not only helps in tracking expenses but also ensures compliance with tax regulations.

In the second section, the author provides a detailed breakdown of the monthly budget. It includes categories for housing, utilities, food, and entertainment. Each category is further divided into sub-items, such as rent, electricity, groceries, and dining out. This level of detail allows for a clear understanding of where the money is being spent.

The third section focuses on the overall financial health of the individual. It includes a summary of income sources, such as salary and investments, and compares them against total expenses. The goal is to identify areas where spending can be reduced without compromising quality of life.

Finally, the document concludes with a series of recommendations for long-term financial planning. It suggests setting aside a portion of income for savings and investments, and advises on how to manage debt effectively. The author stresses the importance of staying disciplined and consistent in these financial practices.

ԱԶԳԱՅԻՆ ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ըյս բաժնում՝ բացի մեր հանդիսում գործօն մասնակցողների յիշատակարաններից, տպագրուելու են նաև Երասխի խմբագրութեանն ուղղուած զանազան անձինքների գրութիւնները, նամակները, եթէ միայն դոցա բովանդակութիւնը հասարակական կամ գրականական որ և է մի խնդրի լուսաբանելուն նուիրուած լինին: Ըյս անգամ այստեղ տպագրում ենք մի կարգ նամակներ, որոնցից մի քանիսը մեր հանդիսի վերնագրի հարցին նուիրուած լինելով, իրենց հետաքրքրութեամբ հանդերձ՝ զուրկ չեն կարևորութիւնից:

Պօլիս, 6 օգոստ. 87

Յարգելի բարեկամ:

Ինչո՞ւ Երասխ չէք զնում հանդիսի անունը, այլ Երասխ: Ի՞նչ պէտք կայ նուազ ակտորժահնչիւնը զնել, երբ Երասխ աւելի ևս ժողովրդական է և նոյնչափ հայացած... Իմ հաստատ կարծիքս է, որ ամեն կերպով աւելի լաւ է Երասխ ասէք, այլ ոչ Երասխ. որ օտար թարգմանութեան մէջ ևս աւելի դիւրահնչիւն է և արդէն ամենքին յայտնի: Պէտք չէ մտեալ անուններ վերականգնեցնել, երբ ժողովրդի բանաստեղծը Երասխ բառը արդէն նուիրագործել է. ուրեմն էլ ի՞նչ պէտք կայ գնալ... Մովսէս Խորենացիի կոչումը վեր առնել, որը զուրկ է այն կենդանութիւնից՝ որ ունէ Երասխ բառը:

ԳՐԻԳՈՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

Ըղնիւ բարեկամ:

Որ իմանայիք թէ որչափ բերկրանք պատճառեց ինձ Ձեր Երասխի ձեռնարկելը, մի խօսքով ի սրտէ յաջողութիւն եմ մաղթում: Յուսով եմ, որ Երասխը անպատճառ յաջողութիւն կունենայ, որովհետև ամենաառաջին շանսը՝ գնի էժանութիւնն է...:

Երասխ թէ Երասխ. վերջինը աւելի սրտի մօտ է հնչում: դուցէ նրանից է, որ յաճախ ենք լսել այդ անունը: Ձը կարծէք թէ քննադատութիւն եմ անում: չէ՛. այնպէս միայն: Հայ սրտի համար թանկագին անուն. շատ լաւ անուն էք ընտրած. ցանկանում եմ նրան անմահ կեանք:

Ն. Ն.

Մոսկուա, 27 օգոստ. 87

Սիրելի բարեկամ:

Արքայի անունը փոխելու առթիւ՝ ես յարմարագոյն եմ տեսնում Արքայը, բաւական է Չեզ, որ հայոց բանաստեղծական գրականութեան աղանդը՝ Արքայի արտասուք է կոչվում: մնացեալ ապացոյցները՝ պատմական, աշխարհագրական, հայրենասիրական—թողնում եմ մի կողմ: Ուրեմն ողջունում եմ Արքային՝ իրականաբար յաջողութիւն մաղթելով:

Այստես որ խմբագրութեան հասցէն «до востребования» է*): այդ անխորժ տպաւորութիւն է գործում լսողի վերայ: Այլ իրաւ, միթէ Պետերբուրգում մի անկիւն չկար, ուր նշանակէիք Չեր հասցէն, կամ որ և է ծանօթի, բարեկամի հասցէով առայժմ նշանակէիք. ինչ և իցէ:

ԳՐԻԳՈՐ ԽԱԼԹԵԱՆՑ
Բէրն, 4 օգոստ. 87


Պատ. հայրենակից իմ:

Չեր 18 յուլիս թուագրեալ գիրն ինձ շատ ուրախացրեց, որոյ մասին փութամ խորին շնորհակալութիւնս նուիրել:

Ճառիս**)) նիւթը յերաւի հետաքրքիր է. բայց ախտոս, որ իսկ ճառն իւր նիւթոյ արժանի կատարելութիւնը չունի: Արկար ժամանակէ ի վեր ուշադրութիւնս գարձրի հայոց եկեղեցւոյ ի միւս եկեղեցեաց բաժանման վերայ, և որքան այս բանի մասին կարդացի, այնքան ուսումնասիրելու առարկայք աւելացան, և կաթողիկ կրօնամով հեղինակութիւնք, որք հայերէնից զուրկ եւրոպացի գիտուններին սխալ և զրպարտական տեղեկութիւն էին տուած, հարկաւոր եղան ուսումնասիրել, որպէս զի իւրեանց սլալութիւններն ուղղեմ:

*) «До востребования» նշանակելու միակ պատճառը նա էր, որ լրագիրներին յայտարարութիւններն ուղարկելուս, մենք Պետերբուրգի հեռուոր ամարանոցներից մկուռն էինք ապրում, ուր բնաւ միտք չունէր հասցէն ցոյց տալ: նոյնն պէտք է ասել և մեր մօտ բարեկամների նկատմամբ, ուստի նպատակայարմարն և ամենագիրն հասցէն նշանակելու համար ստիպուած էինք «ցպահանջ» ցոյց տալ: Այժմ «Արարս»-ի խմբագրատան հասցէն հետեւեալն է. Петербургъ. Графскій переулокъ, домъ № 7. кв. № 22.

**) Մեր ազգակից պարսկահայ պ. Թորոս Տէր-Իսահակեանցը անցեալ յուլիսի 7 ին աստուածաբանական գիտութիւնից խիստ յաջողակ քննութիւն բռնելով Զուլիցի-րիոյ Բէրն քաղաքի համուլարանում արժանացած է «աստուածաբանութեան վարդապետ»-ի տիտղոսի: Խօսած ճառի նիւթն է եղել՝ «Historical evidences fee the orthodoxe of the armenian church».



ՏԵՍԱՐԱՆ ԿՐԼԿԻՈՅ



Ծովային բերդ Կոստանտնուպոլսի շրջանի մոտ:



Տեսնելով որ ճառիս նիւթն ի կարծեցելոյս շատ մեծ էր և դժուարին՝ և ներկայ ուսմանցս մէջ անկարելի էր կատարել, մա նաւանդ որ քննութեան համար շատ առարկայք ունէի պատրաստելու, այս պատճառաւ միայն մի մասն կատարեցի և ի քննութեան ներկայացրի, որ է լոկ պատմութիւնն՝ թէ ինչպէս հայոց եկեղեցին յայլ եկեղեցեաց բաժանուեց: Քանզի մտադիր եմ Մատուծով սոյն գործն ի կատար հասուցանել՝ ճառի տպագրութիւնն թողի: Երբ լոյս տեսնի՝ գուք ևս մի օրինակ ստանալու էք:

Սնամ Չերդ հաւաստի

ԹՈՐՈՍ ՏԵՐ-ԻՍԱՀԱԿԵԱՆՑ

Աստուածաբանութեան վարդապետ



ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Աղանա քաղաքն գտնվում է դաշտային Արիկիոյ մէջ: Քաղաքի միջով անցնում է Սէյհուն գետը, որի վերայ ձգուած է բազմաշքանի մի հոյակապ կամուրջ, որի շինութեանը ձեռնարկուած է սորանից մի քանի դարեր առաջ:

Վետի գիմացի կողմը գտնվում են մի ընդարձակ անտառ և դանազան հնութիւններ:

Աղանան Արիկիոյ վաճառաշահ քաղաքներից մինն է և շրջակայ քաղաքների և գաւառների հետ շարունակ առևտրական յարաբերութիւններ ունի: Առևտուրի արտահանութեան գլխաւոր նիւթերը կաղմում են. բամբակ, ցորեն, գարի, գինի, պտուղ, որոնք անուանի են Արիկիոյ մէջ, մանաւանդ բամբակը:

Հնումը, Ռուբինեանց տիրապետութեան ժամանակը, ինչպէս յայտնի է, Աղանան եպիսկոպոսանիստ քաղաք էր: Աղանայի բնակիչների թիւը հասնում է մօտաւորապէս 9,000 տան, որի մեծամասնութիւնը կաղմում են թուրքերը և ֆէլլահները, թուով 6,000 տուն: Առևտրական, բողոքական և կաթոլիկ հայերի թիւը հասնում է 2,600 տան, իսկ յոյներինը 460:

Հայերը իրենց մայրենի լեզուն չգիտեն և խօսում են տաճկերէն: Աղանայի մէջ կան 29 գաղոցներ, որոնցից 7-ը Առևտրական հայոցն են, 4-ը բողոքականներինը, 2-ը յունացը, 2-ը կաթոլիկ հայերինը, 1-ը լատինացը, 1-ը եզուիտներինը, 1-ը արար-

ներինը և 12-ը թրքացը, որոնց մէջ ամենայայտնին Ռիւշտիէ դպրոցն է: Վաղաքի միւս բարձրագոյն կրթական հաստատութիւնը բողոքականների դպրոցն է:

Հաճին գիւղաքաղաքը գտնվում է Վրանա նահանգի մէջ. քաղաքի հիւսիս-արեւմտեան կողմը բարձրանում է հսկայ Չամլըզ լեռը: Վաղաքի տեսքն որչափ դրսի կողմից գեղեցիկ և սքանչելի է, այնչափ էլ նորա ներսի կողմը քարքարոտ ու դարուկոտ է: Բուսաբերութիւնը բաւականին աւատ մէջ է. պտղատու և վայրենի ծառեր լի են քաղաքում, ինչպէս նաև բազմաթիւ են սյգիները:

Հաճընցիք միւսնոյն տիպարն են ներկայացնում, ինչ և զէյթունցիք. սակայն հաճընցիք զէյթունցիների նման իրենց անկախութիւնը պահպանելու համար զօրեղ միջոցների սակաւ են դիմած անձնուիրութեամբ:

Հաճինը ունի մօտաւորապէս 2,000 տուն բնակիչ, սոքա պարապում են երկրագործութեամբ, երկաթագործութեամբ և մասամբ էլ վաճառականութեամբ:

Վոռիկոսի անուանի ծովային բերդը ընկնում է Սիջերկրական ծովի ափի մօտ, ուր թափվում է լճաթլուսու կոչուած գետակը, սա ներկայացնում է մի գահալէժ խայռ, որ ժխտ հաւանական է, բնութիւնից կանդնած մի ամրութիւն լինի: Չը նայելով իր քարքարոտ վիճակին, այս տեղը զարգարուած է մշտադալար և մշակելի բոյսերով:

Վոռիկոսի ծովային բերդը Խաչակիրներից յետոյ անցնում է հայոց ձեռքը և մնում է Սուբինեանց տիրապետութեան տակ մինչ հայոց վերջին հարստութեան անկումը:

Ծովային բերդի շինութիւնների վերայ շատ արձանագրութիւններ կան հայոց և յունաց լեզուներով. մի հայերէն արձանագրութիւնից երևում է, որ Հայոց Վ. Լոն թագաւորը 1206 թուականին ձեռնարկած է եղել այս բերդի թէ նորոգութեան և թէ նորանոր շինութեանց: 1210—12 թուին Ս. Կարամ մարաջախան էր Վոռիկոսի տէրը, երբ բերդը 1250 թուականի սկզբում անցաւ արքայեղբայր Օշինի ձեռքը: Մ. յստեղ մենք աւելորդ ենք համարում մանրամասնօրէն կանգ առնել Վոռիկոսի պատմական անցեալի վերայ, ըստ որում դա մեզ շատ հեռուն կ'տանէր:

Բերդի գլխաւոր դրան առջև գտնվում է մի հրապարակ, իսկ հորքը ինչ հեռու բարձրանում է մի յոյժ բարձր ապառաժոտ լեռան:



«ԱՐԱՔՍԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

«Արաքսի» մէջ չեն տպագրուիլ հետեւեալ անձինքների ուղարկած բանաստեղծութիւնները. Աղէքսարդրօպօլ. Պ. Յ. Կ-ի. Աստրախանից. Պ. Յ. Ս-ի. Թիֆլիսից. Պ. Ս-ի, Սողգոկից. Խ. Ք. Շ-ի Խարկովից. Գ. Չ-ի արձակ գրուածքը, բայց ոչ վէպը:

Խարկով. Գ. Չ. Ուղարկեցէք Ձեր գրութիւնը:

Ենա. Ի. Բ. Ուղարկեցէք Ձեր յօդուածը. եթէ գրուածքը յաջող լինի, անշուշտ կ'տպենք:

Կիլիկիա. Ար. Չեզնից չ'ստացանք թէ «Կիլիկիցի հովիւ» ոտանաւորը և թէ այն մի կարգ նկարները, որոնք Պուք սորանից երկու ամսէն ի վեր պէտք է որ ուղարկած լինէիք:

Փարիզ. *** Շնորհակալութեամբ ստացանք «Revue de droit international et de législation comparée XIX հատորի 3 գիրքը: Այստեղ տպուած հայերի մասին գրուած ընդարձակ գրութեան հետ կաշխատենք միւս գրքի մէջ ծանօթացնել մեր ընթերցողներին:

Շնորհակալութեամբ ստացանք «Երասխայիքի» առաջին և երկրորդ գրքերը:

ՅԱՅՏԱՐՈՒԹԻՒՆ

ԳՈՐԾԱԴԻՐ ՄՆԱՅՈՒՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ

ՅՈՎՍԵՓԱՅ ԻԶՄԻՐԵԱՆՑ ԿՏԱԿԻՆ

Սահակ—Մեսրոպեան գրական մրցանակաբաշխութիւնն՝ զոր բարեյեշատակ Յովսեփ Իզմիրեանց հաստատած է, պիտի կատարի յառաջիկայ 1888 տարւոյ Սրբոյ Թարգմանչաց տօնի օրն: Ատեապէս գործադիր—Մնայուն Յանձնաժողովս կը փութայ այսու Տայտարարութեամբ վերստին հրահրել այն հեղինակներն ու բանասէրներն որ ունին Ազգային Եղբուքնութեան և Պատմութեան վերաբերեալ երկասիրութիւններ, ձեռագիր կամ տպագիր, և կը փափագին մանակցիլ մրցանակաբաշխութեան, փութան յուղարկել զայն առ Ամեն. Սրբազան Պատրիարք Հայրն, ի կ. Պոլիս, մինչև յառաջիկայ տարւոյ յունվարի սկիզբն:

Տպագիր երկասիրութիւնք հարկ է որ երեք օրինակ յուղարկուին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԸՄԵՆՕՐԵԸՅ ԹԵՐԹՐ

ԹԻՖԼԻՍՈՒԼ

ԱՌԱՋԻԿԱՅ 1888 ԹՈՒԱԿԱՆԻՆ

(ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակուի նոյն դիւրով և ծրագրով

Խմբագրութիւնը կը ստանայ և սեպհական հեռագիրներ

Տարեկան գինն է 10 ռուբլի, վեց ամսուան՝ 6 ռուբլի, հատով՝ 5 կոպ.

Եւրոպայի, թիւրքիայի, Ամերիկայի և այլ հեռաւոր երկր-
ների բաժանորդները վճարում են տարեկան 30 ֆրանկ:

Բաժանորդ են գրվում իւրաքանչիւր ամսի 1-ից միայն:

Թիֆլիսում բաժանորդ են գրվում միայն («Նոր-Դար») ի
խմբագրատանը:

() Թար քաղաքներից գիմում են խմբագրութեան՝ Тифлисъ,
въ Редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis (Caucase)
Rédaction du journal «Nor-Dar».

Խմբագիր-հրատարակիչ՝ ՍՊԱՆԿԱՐ ՍՊԱՆԿԱՐԵԱՆ

ԵՎՈՂ 1888 ԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի թիֆլիսում, նոյն դիւրով և նոյն պրօգրա-
մայով: Մենք կը ստանանք սեփական հեռագիրներ:

«Մշակ» տարեկան գինը 10 ռուբլի է, վեց ամսվանը 6 ռուբլի:

Գրվել «Մշակ» կարելի է խմբագրատանը (Բարօնսկայա և
Բաղարնայա փողոցների անկիւնում, թամամչեվի տանը):

Կայսերութեան ուրիշ քաղաքներից «Մշակ» գրվելու հա-
մար պէտք է գիմել հետևեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакция га-
зеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du journal
arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակիչ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

1888-ի՛ն,

(ԵՍԹԵՐՈՐԳ ՏԱՐԻ)

ԱՐՁԱԳԱՆՔ

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ Ը

Կ Ը Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Ի

ՄԻԵՒՆՈՑՆ ԴԻՐԲՈՎ ԵՒ ՄԻԵՒՆՈՑՆ ԳՐՕԳՐԱՄԱՅՈՎ.

«Արշադանիկ»: 1888 թ. կաշխատակցեն բոլոր ներկայ աշխատակիցները.

Տարեկան բաժանորդագինն է. 5 ռ.

Կէս տարուանը 3 »

Թիֆլիսում ստորագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «Վեներոնական գրովաձառանոցում»:

(Օտարաքաղաքացիք գիմնում են՝ Тифлисъ, въ Редакцію «АР-ЦАГАНКЪ». Արտասահմանից՝ Tiflis. Rédaction du journal «ARZAGANG».)

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Խմբագիր-հրատարակիչ ԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԱՐԵՒԵԼՔ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

Օրագիր

(Օտար երկիրների համար տարեկան բաժանորդագինն է 56 ֆրանք

վեցամսեայ 28 »

Ղուրս զրկուած լրագրաց ճամբու ծախսը անօրէնութեան վրայ է:

Հասցէն. Direction du journal «Arevêk». Noradounghian Han, Galata, Constantinople.

Լ Ե Զ Ո Ւ

ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ ԱՍՍՕՐԵԱՅ

Ամսօրեայ ուսումնաթերթիս տարեգինն է կանխիկ կէս (Օսմանեան ոսկի): Թղթատարի ծախիւք վաթսուն արծաթի դահեկան: Առանձինն կը վաճառուի հինգ դահեկանի:

Բաժանորդ գրուիլ ուղղոյները գիմելու են առ Ա. Պիպէոն-ճեան. Պոլիս՝ Յակոբեան խան, թիւ 14:

Խմբագիր-Տէր Հ. ՍԵՐՈՎԻՍ ՏԵՐՎԻՇԵԱՆ



ԳՐԻԳՈՐ ԱՐԻՍԱՎԵՍԵԱՆ



Կանանց գերձակ Պետերբուրգում
ընդունում է իր գործարանում զանազան սեսակ առաջին կարգի
կանանց հագուստներ եւրոպական շքեղ ձևերով: Знаменская улица,
домъ № 15.

ՄԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որը առևտրական հիմնարկութիւններում
երկար տարիներ ագէնտի պաշտօններ է վարած, այժմ ցանկանում է
պաշտօն ստանալ զիւրամատչելի պայմաններով: Հասցէն
իմանալ «Արաքսի» խմբագրատանը:

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՐԱՇԻՆՋԱԳԵԱՆԻ կանանց և տղայոց պատրաստի
հագուստների խանութը իւրաքանչիւր եղանակի համար ունենում է
ամեն սեսակ նորաձեւ հագուստներ, որոնք պատրաստվում են
արտատահմանի օրինակով նորա սեփական գործատան մէջ:

Նոյնպէս կարելի է ամեն ժամանակ ստանալ պատրաստի
թաւշեայ (պլիւշովի) իրեր, մուշտակներ, վատերպրուֆներ, կէս
շրջագգեստներ, բաճկոններ (ժակետներ), սոսնդներ և լէն:

Սանկական հագուստներ փոքրիկ տղայոց և աղջկերանց հա-
մար ունենում է ամեն եղանակի և 5 տարեկանից սկսած ամեն
հասակի համար:

Վերոյիշեալ իրերը ընդունվում են և պատուէրով: Հասցէն.
Гостинный дворъ, верхняя галлерей, по Невскому проспекту,
противъ Армянской церкви, магазинъ № 7.

«ԱՐԱՔՍԻ» խմբագրատանը ծախվում է «Սանկավարժանոց»
ամսագրի Սարա գիրքը, որը հրատարակուել է Պետերբուրգում:
Գինն է 30 կոպէկ (սակաւաթիւ):

ПОЛИТИЧЕСКАЯ СУДЬБА КОНСТАНТИНОПОЛЯ,
балканскихъ народовъ и отношеніе ихъ къ Россіи и западно-европей-
скимъ государствамъ. Доктора И. Тамашева. 1887 г. Цѣна 90 коп.
Սորա գերմաներէնը հրատարակուած է աւելի մանրամասնօ-
րէն Վեննայում: 450 երեսից: Նոյնպէս լոյս կ'տեսնի ֆրանսե-
րէն և անգլիերէն լեզուներով:

Дозволено цензурою. С.-Петербургъ, 24 ноября 1887 года.
Типографія И. Н. Скороходова (Надеждинская, № 39).